

ԱՐՄԱՆԵՆԻ ՄԻՐՕՂԱՌ
ՄՈՒՔԹԱՐԵԱՆ

ՊՈԼՍԱԿԱՅԵՐԸ
(1923-1939)

ԵՐԵՎԱՆ
2016

1014325 947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A102439

ԱՐՄԱԻԵՆԻ ՄԻՐՕՂԼՈՒ ՄՈՒՀԹԱՐԵԱՆ
ՊՈԼՍԱՀԱՅԵՐԸ (1923-1939)

ՍԵՄՐՈՊ ԱՐՁ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
145



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
145

Signature

ԵՐԵՎԱՆ 2016



ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 967

Խմբագիր՝ պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ալբերտ Ա. Խառատյան

Արմաւենի Միքօղու Մուկթարեան

Մ 967 Պոլսահայերը (1923-1939). – Եր., Պատմության ինստիտուտ,
2016, 299 էջ, + 67 նկար:

Աշխատութիւնը նուիրուած է Կ.Պոլսոյ Հայ համայնքի ազգային կեանքի եւ իրականութեան (1923-1939)՝ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն մինչեւ Բ. Համաշխարհային պատերազմ, որ արդիական նշանակութիւն ունի սոյն համայնքի պատմութեան բացայայտման համար:

Աշխատութեան թեման կը բնութագրէ՝ ազգային վտարմասնութիւններու, անոնց կարգին նաեւ Պոլսահայ համայնքի նկատմամբ Թուրքիոյ Հանրապետական կառավարութեան վարած քաղաքականութիւնը, համայնքի գոյատեւման համար Կ. Պոլսոյ Պատրիարքարանի նշանակութիւնն ու կարեւորութիւնը, ազգային սեփականութիւններու պահպանման կապուած խնդիրները, Պոլսահայ համայնքի քաղաքացիական կացութիւնը, կրթական, մշակութային, տնտեսական եւ այլ խնդիրներ:

Աշխատութիւնը կրնայ նպաստել՝ Արտաքին Գործոց եւ Սփիւռքի Նախարարութիւններու գործունէութիւններուն, օգտակար հանդիսանալ՝ քաղաքագէտներուն, Պոլսահայ պատմութեամբ զբաղող մասնագէտներուն եւ ուսանողներուն, ինչպէս նաեւ սոյն պատմութիւնով հետաքրքրուող ընթերցող հասարակութեան:

ՀՏԴ 93/ 94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-30-5

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք հեղինակեն	7
Առաջարան	9
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	24
Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ու համայնքը՝ Հանրապետութեան հոշակումէն առաջ (1453-1923)	24
Թուրքիոյ Հանրապետութիւնն ու Ազգային Փոքրամասնութիւնները	54
Թուրք-Յոյն փոխանակութիւնը	56
Թուրք-Հայ Բարձրացման Միութիւնը	61
Թրքացման քաղաքականութիւն	64
Հրօսիքայի դատը	72
Շէյխ Սայիտի եւ Տէրսիմի ապստամբութիւնները	76
Էլզա Նիէկոյի դէպքը	79
Գաղթականներու եւ Ապաստանեալներու Բնակեցման Օրէնքն ու Թրակիոյ դէպքերը	81
Մուսա լերան քառասուն օրերը	84
Եւ այլ օրէնքներ	86
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	88
Պատրիարքութիւնն ու համայնքը Հանրապետութեան հոշակումէն վերջ	88
Հայ հասարակութեան գործերու աշխարհականացումը	99
Հայ Կաթողիկէ հասարակութեան գործերու աշխարհականացումը	102
Փոքր Ասիա գտնուող Հայերու Պոլիս արքարուիլը	107
Հաթայը (Ալէքսանդրէի Սանճակ)	109

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	110
Հայկական վագրֆներն ու ազգապատկան կալուածները	110
Պոլսահայ Համայնքի տնտեսական կեանքը	119
Արհեստներ	123
Օսմանեան Առետրական Դրամատուն (Հայ Պանքա)	126
Հայոց «Լքեալ Գոյքեր»ը	128
Սանասարեան Վարժարանն ու Սանասարեան Խանը	155
Բանկայթիի Հայոց Գերեզմանատունը	166
 ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ	 180
Համայնքն ու բարեսիրական հաստատութիւնները	180
Կ.Պոլսոյ Ազգային Խնամատարութիւնը	180
Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոց	191
Գալֆաեան Որբանոց	199
Գարակեօզեան Ազգային Արհեստանոց-Որբանոց	203
Ուսուցչաց Օգնութեան Սնտուկ	207
Թոգատլեան Պանդոկը	211
Սուրբ Յակոբ Հիւանդանոց	213
 ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ	 214
Եկեղեցիներն ու գերեզմանատուները	214
Եկեղեցիներ	214
Գերեզմանատուներ	220
 ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ	 224
Կրթական եւ մշակութային կեանք	224
Կրթական կեանք	224
Մշակութային ընկերութիւններ	242

Պոլսահայ բարբառը եւ աշխարհաբարի կազմութիւնը	244
Գրականութիւնը, գրատպութիւնն ու մամուլը	245
Թատրոն	252
Երաժշտութիւն	254
Ճարտարապետութիւն	257
Նկարչութիւն	258
Վերջաբան	259
Օգտագործուած աղբիւրներու եւ գրականութեան ցանկ	264
Յաւելուածներ	279
Անուանացանկ	286



Ն.Ա.Տ. ՄԵՍՐՈՊ Բ.
ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԹԻՈՅ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԵՂԻՆԱԿԷՆ

Այս աշխատութիւնը, որուն նպատակն է ծանօթացնել Թուրքիոյ Հանրապետութեան 1923-1939 թուականներուն Պոլսոյ Հայ Համայնքի կացութիւնը, կարեւորութիւն կը ստանայ այն բանով, որ ան կուգայ ըլլալ իր բովանդակութեամբ՝ Քեմալական Թուրքիոյ ազգային պետութեան կատարած յեղաշրջումներու, վարած փոքրամասնութեանց քաղաքականութեան հետեւանքով Պոլսահայ համայնքին ապրած ցնցիչ փոփոխութիւնները, ինչպէս նաեւ Պետութիւն-Պոլսահայ համայնք փոխյարաբերութիւնները ներկայացնող ուսումնասիրութիւններու առաջինը:

Յայտնի իրողութիւն է, որ մինչեւ այսօր Հանրապետութեան շրջանի Արեւմտահայութեան եւ մասնաւորաբար Պոլսահայ համայնքային կեանքին նուիրուած ո՛չ մէկ ուսումնասիրութիւն չէ հրատարակուած. այս պատճառաւ բաւական կը դժուարանայ այդ շրջանը ուսումնասիրելու ձեռնարկողին գործը: Խնդիրը աւելի կը բարդանայ երբ նկատի ունենանք, որ շրջանի Պոլսահայ մամուլը յայտնի պատճառներով ճշգրիտ ու բաւարար սկզբնաղբիւր չի հանդիսանար նման ուսումնասիրութեան մը համար:

Այսպէս, քանի որ Պոլսահայ ազգային կեանքի ընդհանուր պատկերը ամբողջացնելու համար բաւարար չէին Պոլսահայ մամուլը, բարեգործական հաստատութեանց, եկեղեցիներու կամ վարժարաններու նուիրուած յուշամատենաները, «Շողակաթ» հանդէսը (աւելի ուշ տարեգիրք) եւ այլ տարեցոյցներ, մեր աշխատութեան աւելի ընդարձակ եւ հիմնական տեղեկութիւններ աւելցնելու, ինչպէս նաեւ իրադարձութիւններն ու դէպքերը անա-

չառ լուսաբանելու համար, յարմար գտանք զայն կատարել նաեւ «սփիւոքահայ մամուլի գնահատմամբ»:

Այս աշխատութեամբ ջանացինք լուսաբանել Թուրքիոյ Հանրապետութեան օրէնսդրական քաղաքականութիւնը եւ այդ օրէնքներու հետեւողական կերպով գործադրման հետեւանքով Պոլսահայութեան ստուար մէկ հատուածին երկրէն հեռացումը, մնացողներուն կանգուն մնալու, ինչպէս նաեւ լեզուն, մշակոյթն ու բարեսիրական հաստատութիւնները ամէն զինով կանգուն պահելու մեծ ջանքերը, բայց հակառակ բոլոր ջանքերուն կործանական, մշակութային եւ տնտեսական կեանքին ապրած անկումը:

Անժխտելի փաստերու հիման վրայ ջանացինք ցոյց տալ Թուրքիոյ Հանրապետական վարչութեան թրքացման քաղաքականութիւնը՝ օգտագործելով հայկական, թրքական եւ օտար արխիւային վաւերագրեր:

Միսլ մեկնաբանութիւններէ զերծ մնալու համար ուզեցինք բացատրել, թէ յղումներու մէջ Պոլսոյ անունը տարբեր տարիներուն հրատարակուած գիրքերու եւ տարեցոյցներու վրայ գրուած է զանազան ձեւերով հեղինակներու եւ տպարաններու կողմէ. ինչպէս՝ Պոլիս, Կ. Պոլիս, Ստամպուլ, Ստանպուլ եւ Իսթանպուլ: Մենք մեր աշխատութեան մէջ գործածած ենք Կ. Պոլիս եւ Պոլիս անունները, բայց յղումներու մէջ գրած ենք այն մէկը, ինչպէս հեղինակներն ու հրատարակչատուները գրած են:

ԱՌԱՋԱԲԱՆ

Բիւզանդական Կայսրութեան հնադարեան մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիս կամ նախկին անունով Բիւզանդիոն կամ Պիզանս հիմնուած է Ն. Ք. 658 թուականին Մէկարացի Պիզասի կողմէ¹: Իսթամպօլ կամ Իսթամպուլ անուանումը՝ գոր Թուրքերը կ'որոյեգրեն Բիւզանդիոնի փոխարէն, աղաւաղումն է յունարէն Իսթանպուլիին²: Իսկ Հայ ժողովուրդի Բիւզանդիոնի հետ դարաւոր կապը կը սկսի հայկական հողին վրայ 384 թուականէն յետոյ, երբ Հայ ժողովուրդի երկու դրացիները՝ Բիւզանդական կայսրութիւնն ու Պարսկաստանը, իրենց միջեւ կը բաժնեն Հայաստանը:

Կ. Պոլսոյ մէջ բնակութիւն հաստատող առաջին հայերը կ'ըլլան վաճառականներ, ճարտարապետներ, զինուորականներ եւ ուսանողներ:

Պոլսոյ Հայ համայնքի ազգային կեանքի ու իրականութեան ուսումնասիրութիւնը, Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն մինչեւ 1939 (Բ. Համաշխարհային պատերազմ), սոյն համայնքի պարամութեան բացայայտման համար այժմեական նշանակութիւն ունի: Այսօր, երբ շատ աւելի լայն շփումներ եւ փոխադարձ կապեր կը հաստատուին Հայաստանի եւ Սփիւրքի հանրութիւններու միջեւ, մասնաւորաբար համազգային-մշակութային ձեռնարկներով, կարեւոր նշանակութիւն կ'ունենայ արեւմտահայ երբեմնի մեծագոյն գաղթօճախի հայութեան ազգային, իրաւական, տնտեսական եւ մշակութային կեանքին զիտական եւ գործնական կերպով ծանօթանալը: Պոլսահայ համայնքը, Թուրքիոյ

¹ Տրք. Գ. Գ., Պատմութեան համար ակնարկ մը Իսթանպուլի եւ Մամաթիոյ թաղի նախկին շրջաններուն եւ ի մասնաւորի վերջին 25 տարուայ համայնքային իրողութեանց վրայ, Իսթանպուլ, 1957, էջ 8:

² Միքունի Յ., Պոլիս եւ Իր Դերը, Ա. Հատոր, Պէլյութ, 1965, էջ 99:

Հանրապետության քաղաքական ու տնտեսական իրականութեան հետ կապուած, կ'ապրի թէ՛ երկրի ազգային փոքրամասնութեանց յատուկ եւ թէ՛ իրեն իւրայատուկ զարգացումներ: Ուստի, անոր ազգային դիմագիծի պահպանումն ու յարատեւումը կ'ընթանայ Քեմալական Թուրքիոյ փոքրամասնութիւններու նկատմամբ վարած թրքացման քաղաքականութեան դէմ ջանք գործադրելով՝ Հայ համայնքի մշակութային ու բարեսիրական հաստատութիւններուն պահպանման ու զարգացման համար:

Ուսումնասիրութեան թեման որոշ չափով կը բնութագրէ Պոլսահայ համայնքի հասարակական կացութիւնը, անոր Քեմալական պետութեան հետ ունեցած իրաւական փոխյարաբերութիւններուն տեսանկիւնէն: Պոլսահայ հանրութեան համար կարեւորագոյն նշանակութիւն կ'ունենան եւ այսօր եւս ունին, իր ազգային սեփականութիւններու պահպանումն ու անոր կապուած խնդիրները: Այս շրջանակի մէջ շատ կարեւոր նշանակութիւն կը ստանայ ազգային եկեղեցիին, տուեալ պարագային Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին դերը, որ իր շուրջ համախմբելով Հայ հանրութիւնը, հանդէս կուգայ որպէս միջնորդ համայնքի ու Պետութեան միջեւ: Ուրեմն՝ նոյնպէս այժմեական ու ճանաչողական լուրջ նշանակութիւն ունին Հայոց Պատրիարքարանի ձեռնարկութիւնները, համայնքի գոյատեւման համար անոր նշանակութեան եւ կարեւորութեան բացայայտումը, որ մինչեւ այսօր միայն հպանցիկ ներկայացուած է: Այս առումով Պոլսահայ համայնքի քաղաքացիական վիճակը հաւանաբար պէտք է դիտարկել իր ուշագրաւ կարգավիճակին մէջ. թէ՛ որպէս Թուրքիոյ քաղաքացիներու հաւաքականութիւն եւ թէ՛ որպէս իր ինքնավարութեան յատկանիշներով՝ ազգային, հոգեւոր, մշակութային եւ այլ

յատկութիւններով Պետութեան կողմէ ընդունուած կրօնա-մշակութային փոքրամասնութիւն:

Այժմեական ու ճանաչողական լուրջ նշանակութիւն ունինաւ. Պոլսահայերու եկեղեցական կանոնագրութեան արդի վիճակը, որ ձեւով մը շարունակութիւնը կրնայ ընդունուիլ արեւմտահայերու 1863-ի Ազգային Սահմանադրութեան՝ մինչեւ 1934, երբ Երկրի քաղաքային վիճակի բերմամբ կը ջնջուին անոր վերջին մնացորդները եւ Հայ համայնքը կրօնական ու բարոյական կապը պահելով հանդերձ Ազգային Պատրիարքարանին հետ՝ ըստ «5404 Համար Օրէնք»ի տրամադրութիւններուն, մատակարարական տեսակէտէ կ'ենթարկուի Վազըֆներու Վարչութեան հակակշռին: Այդ թուականէն վերջ համայնքը մինչեւ այսօր չ'ունենար ներքին կանոնագրութիւն մը եւ հետեւաբար այսօր կը յայտնուի բարդ ու գուցէ պառակտուած վիճակի մը մէջ՝ յատկապէս Պատրիարքական ընտրութեան առթիւ:

Վերոյիշեալ պարագաներով պայմանաւորուած է Հայ ժողովուրդի արեւմտեան հատուածի խարիսխը հանդիսացող Պոլսահայերու մասին կատարուած այս աշխատութեան կարեւորութիւնն ու այժմեականութիւնը:

Ուսումնասիրութեան ընթացքին մեր առջեւ դրած ենք հետեւեալ խնդիրները.

• Անդրադառնալ Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան ու համայնքի անցեալին Կ.Պոլսոյ գրաւումէն (1453) մինչեւ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումը (1923):

• Ներկայացնել ու բացայայտել ազգային փոքրամասնութիւններու, անոնց կարգին Հայ հանրութեան նկատմամբ Թուրքիոյ Քեմալական Հանրապետութեան վարած քաղաքականութիւնը.

ինչպես նաև այս քաղաքականության հետևանք՝ սոյն փոքրամասնություններու 1923-1939 տարիներու իրաւական կացութիւնը:

- Պոլսահայութեան եւ Կ.Պոլսոյ Պատրիարքութեան ազգային ու քաղաքական կացութիւնը՝ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն յետոյ:

- Բացայայտել Պոլսահայերու տնտեսական կեանքը: Բացայայտել նաև Հայոց «Լքեալ Գոյքեր»ու կնճիղը: Որպէս «Լքեալ Գոյք» ներկայացնել՝ Սանասարեան Խանն ու Բանկալթիի Հայոց Գերեզմանատունը:

- Ներկայացնել Հայկական Վազըֆներն ու ազգապատկան կալուածները: «Վազըֆներու Օրէնք»ն ու անոր բնութագիրը իբրև գործօն՝ ազգային հաստատութիւններու պահպանման:

- Բնութագրել համայնքային հաստատութիւններու նշանակութիւնը համայնքային կեանքի մէջ, անոր աւանդական ու բարեսիրական հիմնարկները՝ Ազգային Խնամատարութիւնը, Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը, որբանոցները, եկեղեցիներն ու գերեզմանատուները, ինչպէս նաև անոնց մատակարարման միջոցները:

- Ներկայացնել խնդրոյ առարկայ ժամանակաշրջանին Պոլսահայ կրթական կեանքը ու անոր նշանակութիւնը հետագայ տասնամեակներու Հայ հանրութեան համար:

- Բնութագրել Պոլսահայ մշակութային ընկերութիւններն ու անոնց գործունէութեան շրջանակները:

- Բացայայտել Պոլսահայութեան նշուած ժամանակաշրջանի մշակութային կեանքը՝ գրականութիւնը, գրատպութիւնը, մամուլը, թատրոնն ու երաժշտութիւնը, ճարտարապետութիւնը ինչպէս նաև անոնց նշանակութիւնը ազգապահպանման գործին մէջ:

Այս ուսումնասիրութեամբ առաջին անգամն է, որ գիտական քննարկումի առարկայ կը դառնայ Պոլսահայ համայնքի 1923-1939 թուականներու պատմութիւնը:

Ուսումնասիրութիւնը կը բովանդակէ Պոլսահայ պատմութեան այն իւրայատուկ եւ դժուար ժամանակահատուածներէն մէկը, երբ Կ.Պոլսոյ Պատրիարքութիւնն ու ազգային վարչութիւնները երբեմն օրինական իսկ արելի յաճախ ապօրինի ստիպումով կը համակերպին կարգադրութիւններու, որոնց ժխտական ազդեցութիւնը այսօր էս զգալի է համայնքային կեանքէն ներս:

Ուստի նորութիւն պէտք է համարել Հանրապետական Թուրքիոյ գրեթէ առաջին երկու տասնամեակներու ընթացքին համայնքի, Պատրիարքութեան եւ ազգային հաստատութիւններու ազգապահպանման ուղղուած ջանքերուն բնութագիրն ու գնահատականը: Նորութիւն է նոյնպէս Պոլսահայ համայնքի տնտեսական կեանքի եւ Հայոց «Լքեալ Գոյքերու» հարցին այժմեական վերլուծութիւնը, ինչպէս եւ այն որ համայնքի ազգային-հոգեւոր, մշակութային ու տնտեսական կացութեան վերաբերող հարցերը կը հետազօտուին ոչ թէ մեկուսի, այլ իրենց ներքին միասնութեան մէջ, Թուրքիոյ հասարակական եւ տնտեսական իրականութեան ընդհանուր խորքին վրայ:

Ուսումնասիրութեան այս հանգամանքը հնարաւորութիւն կ'ընձեռէ պատկերացնելու Պոլսահայ համայնքի տեղն ու նշանակութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան 1920-1930-ական տարիներու եւ հայկական Սփիւռքի բարդ ու հակասական պատմութեան մէջ:

Ուսումնասիրութիւնը շարադրուած է անտիպ եւ հրապարակուած հայերէն եւ օտարալեզու արխիւային նիւթերու, վաւերագիրներու, մամուլի հրապարակումներու, ինչպէս նաեւ համա-

պատասխան գրականութեան տուեալներու պատմահամեմատական քննարկումի մէջոտով: Խնդրոյ առարկայ հիմնահարցերը վերլուծութեան ենթարկուած են փաստագրական ու վիճակագրական տուեալներու համադրմամբ եւ վերլուծութեամբ՝ հիմք ընդունելով անկողմնակալութիւնը:

Հայկական պատմագիտութեան մէջ գոյութիւն չունին Պոլսահայ համայնքի 1923-1939 տարիներու պատմութեան նուիրուած գիտական ուսումնասիրութիւններ: Սակայն այս նիւթի առանձին հարցերուն իրենց աշխատութիւններուն մէջ առաւել կամ նուազ չափով անդրադարձած են հայ եւ օտար պատմաբաններ, ինչպէս նաեւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններու հեղինակներ:

Այս աշխատանքին համար հետազօտուած են արխիւային նիւթեր, որոնք հաւաքուած են ՀՀ Ազգային Արխիւի ֆոնտերէն³, Մ.Մաշտոցի անուան Մատենադարանի⁴ եւ Ե. Չարենցի անուան Գրականութեան ու Արուեստի Թանգարանի արխիւներու ֆոնտերէն⁵, Գարակէօզեան Ազգային Որբանոցի⁶ եւ Արաս Հրատա-

³ ՀՀ Ազգային Արխիւ, Ֆոնտ 409, ցուցակ 1, գործ 3928, էջ 25: ՀՀ Ազգային Արխիւ, ֆոնտ 409, ցուցակ 1, գործ 3928, էջ 24-25: ՀՀ Ազգային Արխիւ, ֆոնտ 193, ցուցակ 1, գործ 351, էջ 2:

⁴ ՀՀ Մ.Մաշտոցի անուան Մատենադարանի Արխիւ, Թղթապանակ 6 – 12/40:

⁵ ՀՀ Ե. Չարենցի անուան Գրականութեան ու Արուեստի Թանգարանի արխիւ, Գեորգ Բամպուրճեանի ֆոնտ 47: Յուշամատեն 3. Կոլոտ Պատրիարքի ծննդեան 300 ամեակին առթիւ, էջ 6:

⁶ Գարակէօզեան Ազգային Որբանոցի անմշակ արխիւ, Կրթական տնօրէնութեան 5 Յունիս 1934 թ. եւ 67160/2780 համար գրութիւնը (Յաւելուած 5):

րակչատան Արխիւային հաւաքածոյէ⁷, ինչպէս նաեւ փաստաթուղթեր օտար պետական⁸ ու անհատական⁹ արխիւներէ:

Մեր աշխատութեան համար պատմաճանաչողական մեծ արժէք կը ներկայացնեն հետեւեալ երկերը.

- Ե. Չ. Քեօմիւրճեանի տեղագրական բնոյթ ունեցող «Ստամպուլայ Պատմութիւն»ը¹⁰,

- Մ. Օրմանեանի¹¹ «Ազգապատում»ի Բ. Հատորը, ուր հեղինակը կուտայ Կ. Պոլսոյ զաղթօճախի պատմագրութիւնը,

- Հ. Պէրպէրեանի¹² աշխատութիւնը, ուր հեղինակը հարուստ տեղեկութիւններ կուտայ Կ. Պոլսոյ Հայ Պատմութեան մասին,

- Ա. Ալպօյաճեանի¹³ Պալաթ Թաղի կազմութեան եւ Պետրոս Կարապետեանի¹⁴ Սամաթիայի Ս. Գեորգ Եկեղեցւոյ ձօնուած յիշատակարանները,

- Հ. Ս. Անասեանի¹⁵ գիրքը, ուր հրատարակուած են Բիւզանդիոնի անկման նուիրուած Ա. Անկիւրացիի, Ա. Բաղիշեցիի ինչպէս նաեւ Ե. Չ. Քեօմիւրճեանի երկերը,

⁷ Արսաւ Հրատարակչութեան արխիւ, Այվազ Յ., Վերյիշումներ եւ Բեմընկերներս (անտիպ):

⁸ Başbakanlık Cumhuriyet Arşivi, B.C.A. 030.18.01.02.84798 (Յանկում 3):

⁹ Սախո Չլթինօղլուի անմշակ արխիւ, «Յակոբ Հանճեանի 19.07.1924 թուակիր անցագիրը (Յանկում 1):

¹⁰ Քեօմիւրճեան Ե.Չ., Ստամպուլայ Պատմութիւն, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1909, ԻԳ տարի, թիւ 4:

¹¹ Օրմանեան Մ., Ազգապատում, Բ. Հատոր, Կ. Պոլիս, 1914:

¹² Պէրպէրեան Հ., Նիւթեր Կ. Պոլսոյ Հայ Պատմութեան Համար, Վիեննա, 1965:

¹³ Ալպօյաճեան Ա., Պալաթու Թաղի Կազմութիւնը, Երեք Դարեան Պատմութիւն Պալաթու Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1931:

¹⁴ Կարապետեան Պ., Հնդդարեան Յիշատակարան Սամաթիոյ Ս. Գեորգ Եկեղեցւոյ, Իսթանպուլ, 1935:

¹⁵ Անասեան Հ. Ս., Հայկական Աղբիւրները Բիւզանդիայի Անկման Մասին, Երևան, 1957:

- Յ. Սիրունի¹⁶ Կ. Պոլսոյ գաղթավայրի պատմագրութեան նուիրում չորս հատորնոց ծաւալուն մենագրութիւնները,

- Լ. Գոյումճեանի¹⁷ ուսումնասիրութիւնները, որոնք կը լուսաբանեն Թուրքիոյ հանրապետական շրջանի օրէնսդրական կացութիւնը,

- Ա. Խառատեանի¹⁸ Կ. Պոլսոյ ԺԵ.-ԺԸ. դարերու նիւթերով հարուստ, հանգամանալից աշխատութիւնը, ուր հեղինակը կը միանայ Հ. Պերպերեանի տեսութեան, թէ ԺԵ. դարու ձեռագրերու եւ յիշատակարաններու մէջ Կ. Պոլսոյ Հայերու հոգեւոր պետը ընդհանրապէս կը յիշատակուի «հայրապետ», «եպիսկոպոս» եւ «արհիեպիսկոպոս» յորջորջումներով եւ ո՛չ «պատրիարք»,

- Տքթ. Գ. Գըրըքճեանի¹⁹, Մ. Երամեանի²⁰, Յ. Շահնագարի²¹, Յ. Քօսեանի²² եւ Գ. Ատիլ - Հ. Խտշեան - Տ. Գասպարեան խմբակի²³ ինչպէս նաեւ Տ. Պալեան - Ա. Էօզէր-Ա. Եանըգեան - Յ. Քիրքճեան խմբակի²⁴ ուսումնասիրութիւնները, որոնք եւս տեղեկութիւններ կու տան Պոլսոյ եւ պոլսահայ հաստատութեանց մասին,

¹⁶ Սիրունի Յ., Պոլիս եւ Իր Դերը, Ա.Հատոր, Պէրյութ, 1965, Բ.Հատոր Պէրյութ, 1970, Գ. Հատոր, Անթիլիաս, 1987, Դ. Հատոր, Անթիլիաս, 1988:

¹⁷ Գոյումճեան Լ., Կտակ եւ Յատուցում, Կ.Պոլիս, 1934: Հայ Համայնքային Անցուդարձեր, Ստանպուլ, 1950:

¹⁸ Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօջայիւր XV-XVII դդ., Երեւան, 2007:

¹⁹ Տքթ. Գըրըքճեան Գ., Պատմութեան Համար Ակնարկ մը Իսթանպուլի եւ Սամաթիոյ Թաղի Նախկին Շրջաններու, Իսթանպուլ, 1957:

²⁰ Ա.Քահանայ Երամեան Մ., Պատմութիւն Արմաշու, Երեւան, 1991:

²¹ Շահնագար Յ., Սանասարեան Կտակի Դատը, Իսթանպուլ, 1939:

²² Քօսեան Յ. Վրդ., Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց Կ.Պոլսոյ, Վիեննա, 1931:

²³ Ատիլ Գ., Խտշեան Հ.Գասպարեան Տ., Ազգային Գերեզմանատուն Հայոց Շիշլիի, Կ.Պոլիս, 1922:

²⁴ Պալեան Տ., Էօզէր Ա., Եանըգեան Ա., Քիրքճեան Յ., Համայնապատկեր Հանրապետական Շրջանի Իսթանպուլահայ Գրականութեան, Իսթանպուլ, 1957:

- Պոլսոյ եկեղեցիներու, վարժարաններու, ինչպէս նաեւ գաւնագան այլ հաստատութիւններու յուշամատեանները, որոնք իրենց պարունակած տեղեկութիւններով լոյս կը սփռեն Կ. Պոլսոյ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմութեան վրայ: Օգտագործուած են նաեւ Մ. Հանէւեան²⁵, Թ. Ազատեան²⁶, Վ. Քէօսեան²⁷, Յ. Չինար-Պ. Էրզեան²⁸, եւ Թ. Ազատեան-Մ. Գօշունեանի²⁹ կողմէ պատրաստուած, ինչպէս նաեւ հեղինակը անյայտ³⁰ յուշամատեաններ,

- Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի Շողակաթ³¹ տարեգիրքերը, Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի տարեցոյցները³², որոնք 1900-

²⁵ Հանէւեան Մ., Հարիւրասանեփինգամեայ Յոբելեան Ս.Երրորդութիւն Եկեղեցոյ, Կ.Պոլիս, 1932:

²⁶ Ազատեան Թ., Յուշամատեան Գարակեօզեան Վարժարանի (1913-1948), Իսթանպուլ 1949: Յիշատակարան Ուսուցչաց Օգնութեան Սնտուկի (1900-1930), Իսթանպուլ, 1930:

²⁷ Քէօսեան Վ., Յուշամատեան Սուրբ Փրկիչ Հայոց Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1994:

²⁸ Չինար Յ., Էրզեան Պ., Հարիւրամեայ Յիշատակարան Գալֆաեան Տան, Իսթանպուլ, 1966:

²⁹ Ազատեան Թ., Գօշունեան Մ., Արմաղան Թուրքիոյ Հանրապետութեան 15 Ամեակի Առթիւ, Իսթանպուլ, 1938:


³⁰ Յուշամատեան Հարիւրամեակի Հայց. Աւետարանական Եկեղեցոյ Կեօիկ-Փաշայ (նախկին Լանկա) 1850-1950, Իսթանպուլ, Ազըն Տպարան, 1950:

³¹ Շողակաթ Տարեգիրք 1954, Ստամպուլ, 1955: Շողակաթ Տարեգիրք 1962, Ստամպուլ, 1962: Շողակաթ Տարեգիրք 1971-72, Իսթանպուլ 1973:

³² Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի 1900, Կ.Պոլիս 1900: Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի 1924, Կ.Պոլիս 1924: Ընդարձակ Տարեցոյց 1925, Կ.Պոլիս, 1926: Ընդարձակ Տարեցոյց 1926, Կ.Պոլիս, 1927:

Ընդարձակ Տարեցոյց 1927, Կ.Պոլիս, 1927: Ընդարձակ Տարեցոյց 1928, Կ.Պոլիս, 1928: Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի 1930, Կ.Պոլիս, 1930: Ընդարձակ Տարեցոյց Ս.Փրկիչ Ազգային Հիւանդանոցի 1931, Կ.Պոլիս 1931: Ընդարձակ Տարեցոյց 1932, Ստամպուլ, 1932: Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի 1935, Իսթանպուլ, 1935: Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի 1936, Իսթանպուլ, 1936: Ընդարձակ Տարեգիրք Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

1702 439



1910-ին կը կազմուին՝ Հ. Ասատուր, Տրթ. Ն. Տաղաւարեան, Դ. Խաչկոնց, Տ. Արփիարեան եւ Ա. Ալլայօյաճեանի միասնական ջանքերով, 1924-1929-ին Ս. Չուհաճեանի եւ Թ. Ազատեանի, 1930-1949-ին այս պաշտօնը ստանձնող խմբագրական կազմի մը կողմէ, ինչպէս նաեւ Ս. Մխիթարեանի ժողովրդական տարեցոյցները³³, որոնք տեղեկութիւններ կը պարունակեն համայնքի տնտեսական կեանքի մասին,

- Կ. Պոլսոյ արքայապետի պատրիարք Զաւէն Արք. Տէր Եղիաեանի յուշերը³⁴, որոնք հարուստ տեղեկութիւններ կուտան իր շրջանին մասին,

- Լ. Վարդանի³⁵ ուսումնասիրութիւնը, ուր հեղինակը կը լուսաբանէ Հայոց Տեղահանութեան եւ «Լքեալ Գոյքեր»ու գրեթէ բոլոր օրէնքները,

- Ե. Բարսեղովի³⁶ եւ Վ. Տատրեանի³⁷ ուսումնասիրութիւնները, ուր Հայոց Տեղահանութեան պատմութիւնը կը ներկայանայ բաւական մանրակրկիտ ձեւով,

- Ն. Օնարանի³⁸ ուսումնասիրութիւնը, «Հայոց Լքեալ Գոյքեր»ու մասին թուրք հեղինակի մը առաջին աշխատութիւնը, որ անկողմնակալ ու արդարադատ մօտեցումով, արժէքաւոր վաւերագրերու եւ փաստաթուղթերու վերլուծութեամբ կը ներկայացնէ

³³ Ժողովրդական Տարեցոյց, Ա. Տարի, Ստանպոլ, 1935, Ստանպոլ, 1937, Ստանպոլ, 1938, Ստանպոլ, 1939:

³⁴ Տէր Եղիաեան Զաւէն Արք., Պատրիարքական Յուշերս, Վաւերագրեր եւ Վկայութիւններ, Գահիրէ, 1947:

³⁵ Վարդան Լ., Հայկական Տասնընկուորդէն եւ Հայերու Լքեալ Գոյքերը, Պէրոլ, 1970:
³⁶ Բարսեղով Ե., Հայերի Տեղասպանութեան Համար Լյուբլանի Պատասխանատւութիւնը, Երեւան, 1999:

³⁷ Dadrian V.N., Ermeni Soykırımı Tarihi, İstanbul, 2008.

³⁸ Onaran N., Emval-i Metruke Olayı- Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010.

Իթթիհատականներու, ինչպէս նաեւ նորակազմ հանրապետական Թուրքիոյ, Հայոց հանդէպ վարած թրքացման քաղաքականութիւնը,

- Մ. Պէպիրօղլույի³⁹ ուսումնասիրութիւնները, որոնցմէ առաջինին մէջ հեղինակը կուտայ ու կը մեկնաբանէ Թանզիմաթէն մինչեւ Բ. Սահմանադրութիւն Հայոց կանոնադրութիւնները, իսկ երկրորդին մէջ 1453-էն սկսեալ Օսմանեան Կայսրութեան շրջանին հրապարակուած փոքրամասնութիւններու բոլոր կանոնադրութիւնները,

- Ա. Եարմանի⁴⁰, Բ. Թուլլաճիի⁴¹, Գ. Բամպուքճեանի⁴², Ճ. Սէֆէլիի⁴³, Ճ. Ուլուի⁴⁴, Շ. Քըլըչի⁴⁵ ուսումնասիրութիւնները, Կ. Էօզտողան-Ֆ. Իսթել-Գ. Գարագաշըլը-Ֆ. Քէնթելի միասնական աշխատութիւնը⁴⁶, ինչպէս նաեւ Թուրքիոյ Հանրապետութեան 75-ամեակի կարգադիր յանձնախումբի կողմէ պատրաստուած գրքոյկը⁴⁷,

³⁹ *Bebiroğlu M., Tanzimattan II.Meşrutiyete Ermeni Nizamnameleri, İstanbul, 2003. Osmanlı Devleti'nde Gayrimüslim Nizamnameleri, İstanbul, 2008.*

⁴⁰ *Yarman A., Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve S.Pirgiç Ermeni Hastanesi Tarihi, İstanbul, 2001.*

⁴¹ *Թուլլաճեան Բ., Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները, Իսթանպուլ, 1991: Tarih Boyunca Batı Ermenileri Cilt 4 (1923-1966), İstanbul, 2009.*

⁴² *Pamukciyan K., Zamanlar, Mekanlar, İnsanlar, İstanbul, 2003.*

⁴³ *Seyfeli C., İstanbul Ermeni Patrikliği, İstanbul, 2005.*

⁴⁴ *Ulu C., Türkiye Cumhuriyeti'nde Ermeniler, Ankara, 2009.*

⁴⁵ *Kılıç Ş., Biz ve Onlar, İstanbul, 1992.*

⁴⁶ *Özdoğan G.G., Üstel F., Karakaşlı K., Kentel F., Türkiye'de Ermeniler Cemaat-Birey-Yurttaş, İstanbul, 2009.*

⁴⁷ *Türkiye Ermenileri Cemaati 75.Yıl Tertip Heyeti, 75. Yılda Türkiye Ermenileri, İstanbul, 1998.*

- 2. Մորկենթաուի յուշագրութիւնը⁴⁸, որ կը հաղորդէ բացառիկ տեղեկութիւններ Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին Հայոց ապրած աղէտի մասին,

- 2. Օրութանի⁴⁹, Է. Մաճարի⁵⁰, Ա. Ագթարի⁵¹, Է. Մահճուպեանի⁵² եւ Բ. Պալիի⁵³ աշխատութիւնները, որոնք փոքրամասնութեանց հանրապետական շրջանի կեանքին մասին հարուստ տեղեկութիւններ կը փոխանցեն,

- Ս. Չերքեզեանի⁵⁴ յուշագրութիւնը, Ե. Քեմալի⁵⁵ վեպը, Տ. Կիւվէնի⁵⁶, Պ. Օրանի⁵⁷ եւ Ք. Արըի⁵⁸ ուսումնասիրութիւնները, որոնք հանրապետական Թուրքիոյ վարած թրքացման քաղաքականութեան մասին տուեալներ կը պարունակեն,

- Յ. Արք. Չոլաքեանի⁵⁹ ուսումնասիրութիւնը, որ հարուստ տեղեկութիւններ կը փոխանցէ պոլսահայ կաթողիկէ համայնքի Ա. Յակոբ հիւանդանոցին մասին:

Առանձին յօդուածներով տարեգիրքերու, հանդէսներու եւ օրաթերթերու մէջ, ինչպէս նաեւ կայքէջերու վրայ Կ. Պոլսոյ հայութեան համայնքային, տնտեսական, կրթական եւ մշակու-

⁴⁸ Morgenthau H., Büyükelçi Morgenthau'nun Öyküsü, İstanbul, 2005.

⁴⁹ Okutan Ç., Tek Parti Döneminde Azınlık Politikaları, İstanbul, 2004.

⁵⁰ Macar E., Cumhuriyet Döneminde İstanbul Rum Patrikhanesi, İstanbul, 2004.

⁵¹ Aktar A., Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları, İstanbul, 2000.

⁵² Mahçupyan E., İçimizdeki Öteki, İstanbul, 2005.

⁵³ Bali R., Cumhuriyet Yıllarında Türkiye Yahudileri – Bir Türkleştirme Serüveni (1923-1945), İstanbul, 2005. 1934 Trakya Olayları, İstanbul, 2008. Musa'nın Evlatları Cumhuriyet'in Yurttaşları, İstanbul, 2001.

⁵⁴ Çerkezyan S., Dünya Hepimize Yeter, İstanbul, 2007.

⁵⁵ Kemal Y., Demirciler Çarşısı Cinayeti, İstanbul, 1974.

⁵⁶ Güven D., Cumhuriyet Dönemi Azınlık Politikaları ve Stratejileri Bağlamında 6-7 Eylül Olayları, İstanbul, 2006.

⁵⁷ Oran B., Türkiye'de Azınlıklar, İstanbul, 2004.

⁵⁸ An K., Büyük Mübadele, İstanbul, 2003.

⁵⁹ Չոլաքեան Յ.Արք., Մեր Պատմական Ա.Յակոբ Հիւանդանոցը Երէկ եւ Այսօր, Իւթանպոլ, 2004:

թային կեանքին անդրադարձած են Շ. Արք. Գալուստեան⁶⁰, Հ. Ե. Պօղոսեան⁶¹, Ա. Ալպոյաճեան⁶², Վ. Շատուրեան⁶³, Գ. Այաճեան⁶⁴, Դ. Խաչկոնց⁶⁵, Հ. Ասատուր⁶⁶, Գ. Բամպոյաճեան⁶⁷, Ա. Խառատյան⁶⁸, Վ. Հազրբեան⁶⁹ Լ. Գոյումճեան⁷⁰, Օ. Քէօքէր⁷¹, Բ. Պա-

⁶⁰ Գալուստեան Շ. Արք., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Պատմական Դերը, «Շողակաթ» Յուլիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 8:

⁶¹ Պօղոսեան Հ. Ե., Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, «Հանդէս Ամսօրեայ» 1950-1951, Վիեննա: Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, «Հանդէս Ամսօրեայ» 1952-1953, Վիեննա:

⁶² Ալպոյաճեան Ա., Կազմութիւն Արեւմտահայութեան, «Շողակաթ» Յուլիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 23:

⁶³ Շատուրեան Վ., Ուրուագիծ Թրքահայ ոսկերչութեան պատմութեան, Շողակաթ Տարեգիրք 1974-1976, Իսթանպուլ, 1975, էջ 18-25:

⁶⁴ Այաճեան Գ., Հայերու անուամբ կազմուած առաջին թաղեր եւ Իսթանպուլահայ բնակչութիւնը գրաման յաջորդող տարիներուն մէջ, «Շողակաթ», Ստամպուլ, 1954, էջ 71:

⁶⁵ Խաչկոնց Դ., Կ.Պոլսոյ հայ գաղութին ծագումը, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1902, էջ 201:

⁶⁶ Ասատուր Հ., Կ.Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1901, էջ 94-95:

⁶⁷ Բամպոյաճեան Գ., Մատենագիտութիւն՝ Հանրապետական յիսնամեայ շրջանի, «Շողակաթ» 1978, Իսթանպուլ, 1977, էջ 31:

⁶⁸ Խառատյան Ա., Արեւմտահայերի Ազգային Սահմանադրութիւնը, «Պատմաբանասիրական հանդէս», Երեւան, 1992, 2-3, էջ 55-61:

⁶⁹ Հազրբեան Վ., Թրքահայ Ակարչութիւնը եւ նկարիչները, Շողակաթ Տարեգիրք 1973, Իսթանպուլ, էջ 58:

⁷⁰ Գոյումճեան Լ., Երթեւեկի նոր հրահանգին շուրջ, «Արեւելք», 29.II.1932: Լքեալ գոյբերու հարցը, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ. Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1931, էջ 87: Օրենսդրական եւ վարչական խնդիրներ, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ. Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1933, էջ 143: Լքեալ Գոյբերու հարցեր, Ընդարձակ Տարեգիրք Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1940, էջ 37: վազֆներու օրենքը եւ գործադրութեան ձեւը, Ընդարձակ Տարեգիրք Ս.Փրկիչ Հիւանդանոցի, Ստամպուլ, 1948, էջ 211: վազֆներու Օրենքը, Ընդարձակ Տարեգիրք Ս.Փրկիչ Հիւանդանոցի, Ստամպուլ, 1937, էջ 50: վազֆներու մատակարարութիւնը (Գ), «Ազդարար» 4.VI.1936:

⁷¹ Köker O., Kürt isyanlarının liderleri nasıl yargılandı, nasıl asıldı, Toplumsal Tarih, Sayı 67, Temmuz 1999, s. 4-5.

լի⁷², Ս. Չեթինօղլու⁷³, Ա. Աստոյան⁷⁴, Ա. Հիր⁷⁵, Վ. Կոմիկեան⁷⁶, Է. Մաճար⁷⁷, Վ. Տեր Յակոբեան⁷⁸, Գ. Ատիլ-Հ. Խտշեան- Տ. Գասպարեան⁷⁹, Յ. Հինդլեան⁸⁰, Մ. Թեօլէլեան⁸¹ եւ Վ. Սերոբեան⁸²:

Մեր ուսումնասիրութեան համար արժեքաւոր աղբիւրներ եղան նաեւ Պոլսոյ Ազգային Խնամատարութեան⁸³ եւ Սանասարեան Վարժարանի⁸⁴ տեղեկագիրները, Հայկական Հարց եւ Հայ Սփյուռք հանրագիտարանները, Հայրենիք եւ Վեմ հանդէսները, ինչպէս նաեւ ժամանակաշրջանի Պոլսոյ եւ սփիւրքահայ մամուլը՝ Արեւելք, Ազդարար, Նոր Լուր, Մարմարա, Ժամանակ, Առաւօտ, Բանբեր, Վերջին Լուր, Յառաջ, Պայքար, Արեւ, Մշակ, Յուսաբեր, Արաքս եւ Հայաստանի Կոչնակ:

⁷² Bali R., Musa Dağda kırk gün'ün hikayesi, Tarih ve Toplum, Şubat 1998, s. 21-23.

⁷³ Çetinoğlu S., Ermeni Emval-i Metrukeleri üzerine, www.birikimdergisi.com/birikim/makale, s.12.

⁷⁴ Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան Կայսրությունում 1915-1923թթ., «ՎԷՆ» համահայկական հանդէս, Երեւան, 2010, թիւ 3 (31), հոլիս-սեպտեմբեր, էջ X: Կարնո Սանասարյան վարժարանը, «Հայություն» շաբաթաթերթ, Երեւան, 1997, Մարտ, թիւ 3:

⁷⁵ Hür A., Ermeni Mallarına Kim Kondu, Taraf Gazetesi, , 2 III.2008.

⁷⁶ Կոմիկեան Վ., Կեդրոնականը՝ Հանրապետական Շրջանին, «Շողակաթ» 1971-1972, Բարձրագույն, 1972, էջ 28:

⁷⁷ Macar E., Başbakanlık Cumhuriyet Arşivi Belgelerine Göre Tek Parti Döneminde Cemaat Vakıflarının Sorunları, www.bolsohays.com, Makale köşesi.

⁷⁸ Տեր Յակոբեան Վ., Բարձրագույնի Հայ եկեղեցիները հայ ոճի հանդէպ, Ընդարձակ Տարեցոյց Ա.Փ. ազգ. Հիւանդանոցի 1943, Բարձրագույն, 1943, էջ 112-115:

⁷⁹ Ատիլ Գ., Խտշեան Հ., Գասպարեան Տ., Ազգային Գերեզմանատուն Հայոց Շիշլիի, Կ.Պոլիս, 1922, էջ 14-31:

⁸⁰ Հինդլեան Յ., Բարձրագույնի հայ վարժարաններուն յատուկ միօրինակ կանոնադիրը եւ ուսմանց ծրագիրը, Ընդարձակ Տարեցոյց Ա. Փոլիչ Ազգ. Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1938, էջ 127:

⁸¹ Թեօլէլեան Մ., Գրական Տարին Դ. Պոլիս, «Ազդարար», 8.I.1934:

⁸² Seropyan V., Ermeni Basmevleri, İstanbul Ansiklopedisi Cilt III, İstanbul, 1994, s. 181-183.

⁸³ Ազգային Խնամատարություն, Ընդհանուր Տեղեկագիր Առաջին վեցամսեայ (1 Մայիս 1919- 31 Հոկտեմբեր 1919), Կ.Պոլիս, 1920:

⁸⁴ Քսանամայ Տեղեկագիր Սանասարեան Վարժարանի (1881-1901), Կ. Պոլիս, 1903:

Այսպես՝ վերոյիշեալ սկզբնաղբիւրներու եւ ուսումնասիրութիւններու հիման վրայ այս աշխատութիւնով կը փորձենք ընթերցողին ծանօթացնել Կ.Պոլսոյ Հայ համայնքի վաղ Հանրապետական շրջանի (1923-1939) պատմութիւնը եւ լուսաբանել նաեւ անոր նոյն շրջանի հարցերն ու դժուարութիւնները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Կ.ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆ ՌԻ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԷՆ ԱՌԱՋ (1453-1923)

Հայ տարրը Կ. Պոլսոյ առումէն եւ Հայոց Պատրիարքութեան հաստատումէն շատ առաջ, Բիզանդական կայսրութեան օրով արդէն գոյութիւն ունեցած է Կ. Պոլսոյ՝ մասնաւորաբար Բիզանդիոնի ճենովական թաղին մէջ, ուր կ'ունենայ իր հոգեւոր առաջնորդ եպիսկոպոսը, առանձին թաղն ու ճարտար առեւտրականներէ բաղկացած համայնքը: Ղալաթիա՝ մինչեւ Բերա 1303-1453 թուականներուն Յոյն կայսրերէն անկախ, կը կառավարուի ճենովացիներու կողմէ⁸⁵: 1360-ին Ղալաթիա թաղին մէջ Աստուածատուր Աբեղայի ձեռամբ կը կառուցուի Ս.Սարգիս Եկեղեցին, որ անհետ կը կորսուի⁸⁶: 1391-ին Կաֆայէն Կ.Պոլիս եկող Հայ մը՝ Կոմս (կամ Կոզմաս) կը շինէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, զոր 1436-ին Կաֆացի Հայ վաճառականներ կը վերաշինեն⁸⁷: Ահա այս եկեղեցիներու գոյութիւնը փաստն է գաղութի գոյութեան, քանի որ եկեղեցիներու շուրջ է, որ դիմագիծ կը ստանային Հայ գաղութները: Սակայն որպէս իսկական գաղութ կը կազմուի Կ. Պոլսոյ գրաւումէն յետոյ⁸⁸:

Սէհմէտ Բ.ի (Ֆաթիհ) Կ. Պոլիս մուտքը (29 Մայիս 1453), որ կ'ըլլայ համաշխարհային նշանակութիւն ունեցող իրադարձու-

⁸⁵ Միրունի Յ., Պոլիս եւ իր Դերը, Ա. Հատոր, Պէյրութ, 1965, էջ 176:

⁸⁶ Ասատուր Հ., Կ.Պոլսոյ Հայերը եւ իրենց Պատրիարքները, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Կոստանդնուպոլիս, 1901, էջ 78:

⁸⁷ Նոյն տեղէն, նոյն էջէն:

⁸⁸ Նոյն տեղէն, էջ 89:

թիւն մը, դեր կը խաղայ Եւրոպայի եւ Մերձատր Արեւելքի ժողովուրդներուն, ինչպէս նաեւ Հայերուն ճակատագրին վրայ:

1453-ին, գրաման օրերուն Կ. Պոլսոյ մէջ չի յիշատակուիր ոեւէ եպիսկոպոս: Հայ փոքրիկ հօտի հոգեւոր հովիւները կ'ըլլան երկու վարդապետներ՝ Աբրահամ Անկիւրացի (հեղինակը «Ողբ ի վերայ սուման Կոստանդինուպոլսոյ»⁸⁹ պատմական ոտանաւորին) եւ Առաքել Բաղիշեցի (հեղինակը «Ողբ մայրաքաղաքին Ստրմալայ»⁹⁰ երկին), որոնք այս ողբերուն մէջ կը նկարագրեն Կ. Պոլսոյ այդ աղետալի օրերը⁹¹:

Մեհմետ Բ. քաղաքակիրթ ու քաղաքագէտ պետութիւն մը կազմակերպելու ձգտումը կ'ունենայ: Ուստի, պատերազմին սպաննուած Յունաց Աթանաս Պատրիարքին տեղ, իր հրամանով 1453 Յունիս 1-ին մեծաշուք արարողութեամբ տեղի կ'ունենայ աթոռակալութիւնը Յունաց Գեննատիոս Բ. Պատրիարքին: Ս. Սօֆիան արդէն մզկիթի վերածուած ըլլալով Ս. Առաքելոց Եկեղեցին կը նշանակուի որպէս Պատրիարքական Աթոռ⁹² ու Յունաց Պատրիարքը կը ստանայ իր կրօնակիցներուն կենցաղական կացութիւնը տնօրինող իշխանութիւններ՝ ամուսնական խնդիրներ, ընդհանուր դաստիարակութիւն, կրօնապատկան գործերու եւ բարեսիրական հաստատութիւններու կառավարում եւլն⁹³:

Մեհմետ Բ. (Ֆաթիհ), Կ. Պոլիսը Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքը կը դարձնէ ու կը սկսի իրականացնել զայն վերա-

⁸⁹ Անասյան Հ. Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 35-55:

⁹⁰ Նոյն տեղէն, էջ 64-77:

⁹¹ Միրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Ա. հատոր, Պէյրութ, 1965, էջ 115:

⁹² Յունաց Պատրիարքարանը 1465-ին կը տեղափոխուի Ֆէնէր թաղամասը եւ հոն է մինչեւ այսօր:

⁹³ Միրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Ա. հատոր, էջ 207-209:

շինելու եւ վերաբնակեցնելու ծրագիրը, հետապնդելով թե՛ տնտեսական եւ թե՛ կրօնաքաղաքական նպատակներ: Կ. Պոլիս փոխադրել կուտայ իր հպատակներէն առետրականները եւ նաեւ անոնք, որոնք իրենց սեփականութիւններով, հարստութեամբ, մասնագիտութեամբ ինչպէս նաեւ ուրիշ յատկութիւններով առաջնակարգ դիրքի տէր են:

Մայրաքաղաքի առաջին Հայ գաղթականները կ'ըլլան Անկիւրացի Հայերը, որոնց 1453 Չոկտեմբեր 28-ին Կ. Պոլիս բերուելուն մասին կը վկայէ Աբրահամ Անկիւրացին իր «Ղոբ»ին մեջ⁹⁴: Հայ արհեստաւորներ եւ առետրականներ կը բերուին նաեւ Կեսարիայէն, Պրոսայէն, Ատրիանապոլիսէն, Սամսունէն, Թորքատէն, Ակնէն եւ այլ վայրերէ⁹⁵:

Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան հիմերը կը դրուին 1461-ին, երբ Ֆաթիհի նախաձեռնութեամբ ու հրահանգով Պրոսայի Հայերը՝ իրենց առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոսին հետ կը փոխադրուին նոր մայրաքաղաքը՝ Կ.Պոլիս:

Մեհմետ Բ. (Ֆաթիհ) Յովակիմ Եպիսկոպոսին կուտայ Արեւմտահայաստանի եւ Փոքր Ասիական շրջաններու Հայերուն հոգետր իշխանութիւնը⁹⁶, զոր Եպիսկոպոսը կը կատարէ մինչեւ 1478, Յունաց Պատրիարքի հաւասար իշխանական իրաւունքներով:

⁹⁴ Խառատյան Ա., Կ.Պոլսի հայ գաղթօջախը, XV-XVII դդ., Երեւան, 2007, էջ 53: Սիրունի Յ., նշծ. աշխ. Ա. հատոր, էջ 178:

⁹⁵ Խառատյան Ա., նշծ. աշխ. էջ 54:

⁹⁶ Փաստերը անբաւարար կը մնան, որպէսզի տրուի ճիշտ որոշում, թէ Յովակիմ Եպիսկոպոսն է Պոլսոյ առաջին Պատրիարքը, թէ ո՛չ: Ռոմիլիտեւ 1461 -1543թթ. «մարհասա»ի նման տիտղոսներով յիշուող Պոլսոյ Եպիսկոպոսին, Աստուածատուր Ա.էն (1537-1548) սկսեալ է որ «պատրիարք» անականը կը տրուի: Բայց եւ այնպէս Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, ըստ արանդութեան որպէս Հայոց Ա. Պատրիարք կ'ընդունի Իրեն եւ կազմած է նաեւ «Յովակիմ Պատրիարքի հիմնադրամ» մը:

Թե՛ պետական եւ թե՛ պատրիարքական դիւաններու հրդեհները, ուրիշ շատ կարեւոր գիրքերու եւ փաստաթուղթերու կարգին, պատճառ կը դառնան նաեւ ոչնչացման այն սկզբնական արտօնագրին, որով Ֆաթիհ կը վճռէ պատրիարքական իշխանութեան ձեռնհասութիւնը⁹⁷:

Այսպէս՝ ԺԵ. դարուն, Էջմիածնի եւ Սիսի Կաթողիկոսութիւններուն եւ Երուսաղէմի Պատրիարքութեան առընթեր, Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքին մէջ նոր Պատրիարքութիւն մը կը հիմնադրուի:

Յովակիմ Եպիսկոպոս իր Պատրիարքարանը կը հաստատէ Սամաթիա՝ Ս. Կոյս Մարիամի եւ «Բէրիլէթոս» կոչուած բիւզանդական վանքին մէջ, որ քանդուած ու աներուած վիճակի մէջ կը գտնուի այդ շրջանին⁹⁸:

Մինչեւ Պատրիարքութեան հաստատումը Օսմանեան Պետութեան սահմաններուն մէջ ապրող հայ համայնքները ընդգրկուած են երեք թեմերու շուրջ.

ա. - Սվազի թեմ (կեդրոնը Ս.Նշան վանք)

բ. - Անգարայի թեմ (կեդրոնը Ս.Աստուածածին եկեղեցի կամ Կարմիր վանք)

գ. - Պրուսա-Կոտինա-Գարամանի թեմ (կեդրոնը Պրուսա)

Այս թեմերը⁹⁹, ինչպէս նաեւ Ֆաթիհի օրով գրաւուած Տրապիզոնի (1461) եւ Ղրիմի (1479) առաջնորդութիւնները, Ֆաթիհի շնոր-

⁹⁷ Օրմանեան Մ., Ազգապատում Բ. հատոր, Կ.Պոլիս, 1914, սիւն 2153:

⁹⁸ Տքթ. Գ.Գ., Պատմութեան համար ակնարկ մը Իսթանպուլի եւ Սամաթիոյ թաղի նախկին շրջաններու եւ ի մասնաւորի վերջին 25 տարուայ համայնքային իրողութեանց վրայ, Իսթանպուլ, 1957, էջ 36:

⁹⁹ Չայ Սիյուրթ հանրագիտարան, Երեւան, 2003, էջ 183:

հաճ հրովարտակով իբրև ուրոյն առաջնորդարաններ կը կցուին Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան: 1612-էն սկսեալ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը իրեն ստորադաս կ'ունենայ ուրիշ առաջնորդութիւններ եւս, որոնց առաջնորդական հանգամանքը կարավարութեան առջեւ պաշտօնապէս կը ճշդուի Կ. Պոլսոյ Պատրիարքին միջնորդութեամբ¹⁰⁰:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան առաջին եւ գլխաւոր դերը կ'ըլլայ որպէս միութեան կեդրոն ծառայել Փոքր Ասիոյ մէջ ցրուած Հայ համայնքներուն, քանի որ Օսմանեան երկիրներու բոլոր Հայերը՝ Պալքանեան լեռներէն մինչեւ Կեդրոնական Փոքր Ասիա կը խմբուին այս Աթոռին շուրջ¹⁰¹:

Յովակիմ Եպիսկոպոսի առաջնորդութեամբ, Սամաթիա թաղին մէջ է, որ կը հաստատուի Հայ ժողովուրդը առաջին անգամ եւ կը կառուցուի Կ.Պոլսոյ առաջին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին¹⁰², Ս. Գեորգը¹⁰³:

Այդ թուականէն սկսեալ Հայ բնակչութիւնը հետզհետէ կը բազմանայ եւ Ֆաթիհ գանոնք կը զետեղէ քաղաքին պարիսպներուն ներքեւ՝ կարեւոր դռներուն մօտ, թէ՛ Մարմարայի ծովեզերքին, թէ՛ աւելի ներքին շրջանին մէջ եւ թէ՛ Ոսկեղջիւրի ամբարտնալիցէսէն, ինչ որ ռազմագիտական եւ ապահովութեան տեսակետով մեծ կարեւորութիւն կ'ունենայ, քանի որ յարմար չի եկատ-

¹⁰⁰ Ալլայօյաճեան Ա., Կազմութիւն արեւմտահայութեան, «Շողակաթ» Յովիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 23:

¹⁰¹ Գալուստեան Շ. Արք., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան պատմական դերը, «Շողակաթ» Յովիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 8:

¹⁰² Բացառութիւն է Ս.Գրիգոր Լուսատրիչ Եկեղեցին, որ արդէն գոյութիւն կ'ունենայ Բիզանդական շրջանին Ղալաթիոյ մէջ:

¹⁰³ Տրթ.Գ.Գ., նշծ. աշխ., էջ 36:

վիր սյո վայրերուն մէջ Յոյն տարրին բնակութիւնը¹⁰⁴: Այսպէս սկիզբը կը դրուի Պոլսոյ Հայ գաղութին, որ արդէն կորիզ մը ունէր հինէն, նոր մայրաքաղաքին մէջ:

Բիւզանդական Կայսրութեան շրջանին Հայերը ենթակայ կ'ըլլան մշտական հալածանքի, իբրեւ հակաքաղկեդոնական տարր, իսկ Մեհմետ Բ. (Ֆաթիհ) կը հռչակէ կրօնքի ազատութիւն իր բոլոր ոչ-իսլամ հայատակներուն համար եւ իրենց կրօնական պետին իրաւասութեան կ'ենթարկէ անոնց կրօնական կենցաղին առնչուած խնդիրները՝ ամուսնութիւն, կրթութիւն, կազմակերպեալ բարեսիրութիւն, եկեղեցապատկան կալուածներու մատակարարութիւն, հոգեւոր պաշտօնեաներու կարգապահական հարցեր եւլն¹⁰⁵: Օսմանեան Կայսրութեան շրջանին Հայ համայնքը Պատրիարքարանին հետ զօդուած կ'ըլլայ թէ՛ զգացական եւ հոգեկան եւ թէ՛ վարչական կապերով: Պատրիարքներ, պետական հովանաւորութեամբ եւ պաշտպանութեամբ զօրացած՝ իրենց իշխանութիւնը կը տարածեն թէ՛ իրենց անմիջական շրջանակին, թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ հոգեւորականութեան վրայ:

Իւրաքանչիւր համայնք ռայան (հպատակը) կ'ըլլայ մզկիթի մը: Հրովարտակներէն ու զանազան արձանագրութիւններէն ստուգուած է, թէ Հայ համայնքը ռայան էր Ֆաթիհի մզկիթին եւ Ֆաթիհէն տեսած բարիքներուն փոխարէն կ'աշխատէր օգտակար ըլլալ անոր¹⁰⁶:

¹⁰⁴ Օրմանեան Մ., Ազգապատում Բ. հատոր, Կ.Պոլիս, 1914, էջ 2154:

¹⁰⁵ Գալուստեան Շ.Արք., նշծ. աշխ., էջ 6:

¹⁰⁶ Աւլաճեան Գ., Հայերու անուամբ կազմուած առաջին թաղեր եւ Իսթանպուլահայ բնակչութիւնը գրաման յաջորդող տարիներուն մէջ, «Շողակաթ» 1954, էջ 71:

Մեհմետ Բ. (Ֆաթիհ) թեև կրօնքի ազատութիւն կը հռչակէ, բայց թոյլ չի տար որ քրիստոնէաները որեւէ նոր եկեղեցի կառուցեն իր մայրաքաղաքին մէջ: Յոյներուն կը թողու անոնց նախապէս ունեցած եկեղեցիներէն մէկ մասը, իսկ Հայերուն կը տրամադրէ Յոյներէն գրաւած եկեղեցիներէն քանի մը հատը: Ֆաթիհի շրջանին Հայերը կ'ունենան չորս աղօթատեղիներ, որոնցմէ Ղալաթիոյ Ս.Գրիգոր Լուսաւորիչը գոյութիւն ունէր արդէն իսկ Բիւզանդիոնի դիմացի ափին վրայ Կ.Պոլսոյ գրաւումէն առաջ ալ: Երկրորդ եկեղեցին ինչպէս տեսանք վերոյիշեալ տողերուն մէջ, Սամաթիոյ Ս. Գեորգ Եկեղեցին է, երրորդը Էտիրնէգարուի Ս. Նիկողայոսը, որ հաւասարապէս կը պատկանէր Հայերուն եւ Լատիններուն եւ 1629-ին կը վերածուի մզկիթի, ստանալով Քէֆէլի Ճամի անունը¹⁰⁷: Չորրորդ հայկական եկեղեցին, որ Ֆաթիհի ժամանակէն կը յիշուի Կ. Պոլսոյ մէջ՝ Գումգարուի Ս. Աստուածածինն է:

Մեհմետ Բ. 1464-ին կը գրաւէ Գարամանը եւ բռնագաղթի կ'ենթարկէ տեղւոյն Հայերը, որոնք 1466-1474 կը տեղաւորուին Սամաթիա¹⁰⁸: 1475-ին, երբ Թուրքերը կը գրաւեն Կաֆան, նոյնպէս բռնագաղթի կ'ենթարկուին Ղրիմահայերը, որոնք եւս կը կազմեն Կ. Պոլսոյ Հայ բնակչութեան ստուար մէկ հատուածը, ԺԵ. դարու վերջին քառորդին:

Այսպէս բռնագաղթերով (Հայեր, Յոյներ, Հրեաներ, Սերպեր, Պուլղարներ) Օսմանեան կայսրութեան մէջ կը ստեղծուի «միլլէթներու»¹⁰⁹ համակարգը:

¹⁰⁷ Հայերը Ս. Նիկողայոս (Մբանչէլագործ) անուն եկեղեցի մը կ'ունենան նաեւ Վլանկա թաղին մէջ:

¹⁰⁸ Սամաթիայի հայաբնակ թաղը մինչեւ 1805 կը կոչուի Գարաման մահալլէսի:

¹⁰⁹ Միլլէթ կը նշանակէ կրօնական-ազգային հանրութիւն:

Գրաւումներէ վերջ Կ.Պոլիս բերուած գաղթականները կը գետեղուին Յոյներէ պարպուած շէնքերու. կամ պետական եւ անհատական ձեռնարկներով շինուած «օտալար» կոչուող խեղճուկրակ խրճիթներու մէջ¹¹⁰:

Կ. Պոլսոյ մէջ Հայերու անունով կազմուած առաջին թաղերը, որոնք թիւով վեց հատ են, կը յիշուին Մեհմետ Բ.ի (Ֆաթիհ) իր անունին շինել տուած մզկիթին «վագֆիյե» ներուն մէջ, հետեւեալներն են¹¹¹.

- Էրմէնի Պագմէնօ Մահալլէսի
- Էրմէնի Էքմէքճի Անտրէա Մահալլէսի
- Էրմէնի Հաճէկէր Մահալլէսի
- Էրմէնի Ճատիպէյ Մահալլէսի
- Էրմէնի Ֆէնավիշ Մահալլէսի
- Էրմէնիեան Մահալլէսի

Հ. Ղուկաս Ինճիճեան կը յիշէ նաեւ Կալաթա Օտալարը իսկ Պետրոս Կարապետեան որպէս ութներորդ՝ Բերայի Տուտու Օտալարը¹¹²: Մինչեւ ԺԸ. Դարու վերջերը, նոյնիսկ անկէ յետոյ, Հայ համայնք ըսելով կը հասկցուին այն վեց հասարակութիւնները (Ալթըր ճեմաթ):

Ըստ Ա.Ալպոյաճեանին մինչեւ ԺԶ. դարուն երկրորդ կէտը եւ ԺԷ. դարուն սկիզբը Կ. Պոլսոյ մէջ Սամաթիայէ եւ Էտիրնէգարուի շրջանէն դուրս Հայ բնակչութիւն գրեթէ գոյութիւն չ'ունենար կամ

¹¹⁰ Միրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Ա. հատոր, Պէյրութ, 1965, էջ 199:

¹¹¹ Ապաճեան Գ., Հայերու անուամբ կազմուած առաջին թաղեր եւ Իսթանպուլահայ բնակչութիւնը գրաւման յաջորդող տարիներուն մէջ, «Շողակաթ» 1954, էջ 70:

¹¹² Կարապետեան Պ., Ղևադարեան Յիշատակարան Սամաթիոյ Ա. Գևորգ Եկեղեցւոյ. Իսթանպուլ, 1935, էջ 30-31:

շատ ցանցառ կ'ըլլայ¹¹³: Գրաւումէն 25 տարի ետք կատարուած մարդահամարին համաձայն, հին քաղաքին մէջ գոյութիւն կ'ունենայ 372 եւ Ղալաթիայի մէջ 62 տուն Հայ¹¹⁴: Իսկ ԺԵ. դարի աւարտին Կ. Պոլսոյ Հայ բնակչութեան թիւը կը հասնի 25000-ի¹¹⁵:

Ֆաթիհի յաջորդներէն Սուլթան Սելիմ Ա. (1512-1520) կը հրամայէ, որ գրաւուին ու մզկիթի վերածուին բոլոր քարաշէն եկեղեցիները, քրիստոնեաներուն իրաւունք տրուելով պահել եւ նորոգել փայտաշէնները միայն¹¹⁶:

ԺԶ. դարուն երբ Երոպացիները իրենց բնակութիւնը Ղալաթիայէն հետզհետէ կը փոխադրեն Բերա, Հայերն ալ որպէս դեսպանատուներու մէջ ծառայող խոհարար, դոնապան, սպասաւոր եւլն. բնակութիւն կը հաստատեն Բերայի մէջ: Այդ ժամանակներէն սկսեալ Բերայի Հայերուն թիւը հետզհետէ կը շատնայ, որոնք ընդհանրապէս գաւառացիներ կ'ըլլան, կը բնակին գլխաւորաբար «Օտալար» կոչուած տնակներու կամ խաներու մէջ եւ կ'աշխատին իբր ջրկիր, պահապան, մշակ, դարբին, բեռնակիր եւլն¹¹⁷:

Սելիմ Ա. 1514-ին Շահ Իսմայիլի դէմ տարած յաղթանակէն վերջ, քաղաքին արհեստաւոր բնակիչները, որոնք մեծամասնութեամբ Հայեր էին, բռնագաղթի ենթարկելով կը բերէ Փոքր Ասիա եւ մանաւանդ Կ. Պոլիս: Իսկ Սուլթանը երբ Եգիպտոսը կը գրաւէ Օսմանեան Սուլթաններու քաղաքական հանգամանքին կը կցէ

¹¹³ Ալպոյաճեան Ա., Պալաթու թաղի կազմութիւնը, Երեք դարեան պատմութիւն Պալաթու Ս. Հրեշտակապետ Եկեղեցոյ, Կ.Պոլիս, 1931, էջ 167:

¹¹⁴ Պէրպլէեան Հ., Նիւթեր Կ.Պոլսոյ հայոց պատմութեան համար, Վիլննա, 1965, էջ 105:

¹¹⁵ Yarmen A., Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve S.P. Ermeni Hastanesi Tarihi, İstanbul, 2001. S.22.

¹¹⁶ Միրունի Յ., նշծ.աշխ. Ա. հատոր, էջ 216:

¹¹⁷ Հանէսեան Ս., Հարիւրքսաննեհինգամեայ յոբելեան Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ, Կ.Պոլիս, 1932, էջ 17:

նաեւ խալիֆայութիւնը: Այսպէս՝ Պատրիարքներն ալ իրենց կարգին իբր Քրիստոնէաներու կրօնապետ, կը ստանան կարգ մը առանձնաշնորհումներ եւ իրենց իրաւասութիւնը միանգամայն կ'ընդգրկէ քաղաքային եւ կրօնական հանգամանք, ինչ որ կը ճշտուի Օսմանեան կառավարութեան կողմէ Պատրիարքներու տրուած պէրաթներով¹¹⁸:

Պետութեան մայրաքաղաքը բռնի բնակչութիւն կը փոխադրէ նաեւ Քանունի Սուլթան Սիւլէյման (1520-1566), երբ 1534-ին կը գրաւէ Վասպուրականը: Ան՝ 1548-ին ու 1554-ին Արարատէն եւ Վասպուրականէն, Երեւանէն եւ Նախիջեւանէն, ինչպէս նաեւ Արցախի նահանգէն բազմաթիւ Հայեր կը բերէ Կ. Պոլիս ու Փոքր Ասիա¹¹⁹: Հայեր նման բռնի գաղթերէն զատ, կը խուժեն կայսրութեան մայրաքաղաքը երբ ԺԷ. դարու Ա. քառորդին, ամբողջ տասնամեակ մը Փոքր Ասիոյ մէջ տեղի կ'ունենան Ջալալիներու արշաւանքները¹²⁰: Ջալալի ասպատակներու կողմէ գործուող նախաճիրներու պատճառաւ Հայեր խուճապահար փախուստի կը դիմեն՝ Եւրոկիա, Թորքատ, Եղեսիա, Սեբաստիա, Ջեյթուն, Կեսարիա, Անկուրիա (Անգարա), Պինկեօլ, Կամախ եւլն. քաղաքներէն¹²¹ եւ կը սկսին ապաստան փնտռել Կ.Պոլիս եւ շրջակայքը, նոյնիսկ աւելի հեռուները՝ Պալքանեան երկիրները եւ մինչեւ նոյնիսկ Լեհաստան¹²²:

¹¹⁸ Ալպոյաճեան Ա., Կազմութիւն արեւմտահայութեան, «Շողակաթ» 1962, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 23:

¹¹⁹ Միրունի Յ., նշծ.աշխ. Ա. հատոր, էջ 314:

¹²⁰ Ջալալի արշաւանքներն են. ա- Քարա Եազիճիի եւ Տէլի Հասանի ասպատակութիւնը (1597-1603), բ-Քալէնտէրօղլուի վարած ըմբոստութիւնը (1606), գ. Ճանապուհատօղլուի հրամանով տեղի ունեցած խլրտումը (1607):

¹²¹ Միրունի Յ., նշծ.աշխ. Ա. հատոր, էջ 319-322:

¹²² Նոյն տեղէն, էջ 329:

Թէեւ 1609-ին վեզիր Գույուճու Մուրատ Փաշայի հրամանով, ինչպէս նաեւ 1635-ին Մուլթան Մուրատ Դ-ի հրահանգով Փոքր Ասիայէն Կ. Պոլիս գաղթողները ետ կ'ուղարկուին, բայց ետ գացողներուն թիւը աւելի նուազ կ'ըլլայ քան եկողները¹²³: Կ. Պոլիսը իր տնտեսական ու ընկերային հնարաւորութիւններու շնորհիւ միշտ դէպի իրեն կը քաշէ գաւառական բազմութիւններ:

Կ. Պոլսոյ Հայ գաղութի ստուարացման մէջ մեծ դեր կը կատարեն նաեւ տնտեսական ազդակները: Ամէն սովի հետ դէպի մայրաքաղաք տեղաշարժ մը զգալի կ'ըլլայ, որուն պատճառաւ կը ստուարանայ Պոլսահայութիւնը: Չանագան շրջաններէ խուժող այս Հայերով Կ. Պոլիս կը վերածուի խճանկարի մը, ուր զանազան թաղերու մէջ խմբաւորուած կ'ապրին զանազան գաւառներէ եկած Հայեր: Անոնք կը զանազանուին նաեւ իրենց արհեստներով: Օրինակ՝ Խասգիւղի Հայերը կ'ըլլան մեծ մասամբ կղմինտրագործ¹²⁴:

Գաղթերու հոսանքները, որոնք ԺԵ. եւ ԺԶ. դարերուն կը միտին դէպի մայրաքաղաք, կ'աճեցնեն անոր հայութեան համրանքը բայց նաեւ կ'այլափոխեն դիմագիծը: Գաւառէն եկողներէն անոնք, որոնք խմբուած կ'ապրին եւ կը պահպանեն գաւառէն բերուած սովորութիւնները, ասանդութիւններն ու բարբառը, երկարատեւ կը մնան գաւառացի: Այս պատճառաւ մայրաքաղաքին մէջ կը շարունակուի զանազանութիւնը երկու տեսակ Հայերու՝ պոլսեցիին ու գաւառացիին, որոնց միջեւ վեճերը կը տեսնեն նաեւ յաջորդ դարերուն ալ: Բնիկները, դրսեցի (կամ գաւառացի) նկատելով անբարեացակամութիւն կ'արտայայտեն Վանէն, Կեսարիայէն, Նոր Զուղայէն եւ Զմիւռնիայէն եկած ու սեփականութեան տիրացած արե-

¹²³ Նոյն տեղէն, էջ 334:

¹²⁴ Նոյն տեղէն, էջ 341:

ւելահայ վաճառականներուն դէմ, որոնք նոյնպէս միջամուխ կ'ըլլան պատրիարքական իշխանութեան համար մղուող պայքարներուն եւ իրենց ազդեցութիւնը կը թողուն համայնքը յուզող խնդիրներուն վրայ¹²⁵:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը ԺԷ. դարու առաջին կեսին շուրջ 50 տարի հրդեհներու պատճառաւ քանի մը անգամ կը տեղափոխուի Գումգաբուի եւ Սամաթիայի միջեւ եւ 1641-ին վերջնակա՛նապէս կը հաստատուի Գումգաբու:

1718-ին մեծ հրդեհի հետեանքով աներուող պատրիարքարանի շէնքը եւ եկեղեցին արքունի ճարտարապետ Յովհաննէ Ամիրա Սերվերեանի կողմէ հիմնովին կը վերակառուցուին եւ 19 Փետրուար 1820-ին կը սկսին գործածուիլ: 18 Օգոստոս 1826-ի հրդեհին կրկին հրոյ ճարակ կ'ըլլան շէնքերը, որոնք 1828-ին արքունի ճարտարապետներ Գրիգոր Պալեան եւ Տեվլէթ Ամիրայի ծրագրով կը վերակառուցուին: Օրմանեան Պատրիարքի շրջանին (1896-1908) նորոգուած շէնքը 1913-ին հիմնովին կը փլցուի եւ այսօրուան ձեւով կը վերակառուցուի, որուն ճարտարապետն է Գրիգոր Գալֆա Մելիտոսեան¹²⁶:

Կ. Պոլիսը, ազգային եւ կրօնական ճնշումներու համեմատական մեղմութեամբ Հայերուն համար միշտ նախընտրելի կ'ըլլայ քան գաւառը: ԺԷ. դարուն եւս խումբերով կամ անհատաբար Կ. Պոլիս կը գաղթեն ծանր ապօրինի հարկերու տակ կքած Հայեր: ԺԷ. դարու երկրորդ կեսին Հայերու մեծագոյն համախումբը հաս-

¹²⁵ Խառատյան Ա., նշձ. աշխ., էջ 271:

¹²⁶ Seropyan V., *Ermeni Patrikliği, İstanbul Ansiklopedisi Cilt III*, İstanbul, 1994, s. 188.

տատուած կ'ըլլայ Սամաթիոյ մէջ եւ ըստ Երեմիա Քեօմիւրճեանի հազար տունէ կը բաղկանայ¹²⁷:

1640-1651 Կ. Պոլիս բնակող Հայերուն միջեւ վէճեր կը ծագին ազգային վարչական գործերու շուրջ, որոնք մինչ այդ ստանձնած կ'ըլլան բնիկները եւ չեն ուզեր որպէս վարչական տեսնել գաղթականները: Այսպէս բնիկներու եւ գաղթականներու փոխադարձ ատելութեան հետեւանքով այդ տարիներու ընթացքին եօթն անգամ Պատրիարքական փոփոխութիւն կը կատարուի եւ այդ պատճառաւ կը գոյանայ 40.000 դրուշ ազգային պարտք, որ հանգանակութեամբ կը վճարէ Փիլիպպոս Կաթողիկոս վերջ տալու համար պոլսեցի-դրսեցի անդրանիկ խնդրին¹²⁸:

Կ. Պոլսոյ Հայ գաղութը կ'ունենայ զանազան խաւեր ու հոսանքներ, որոնցմէ կարեւորագոյնները կ'ըլլան՝ «խոճա»ները, «չէլէպիէները եւ «մահտեսի»ները: ԺԷ. դարուն, որ պատմութեան կ'անցնի որպէս տազնապներու դար, Կ. Պոլսոյ Հայ կեանքին մէջ բացառիկ դեր կը կատարեն «խոճա»ները, որոնք կ'ըլլան առեւտրական գործերու մէջ հարստացած Հայեր, հետզհետէ կը դատնան սեղանաւորներ, օժանդակելով օրուան Թուրք երեւելիներու վերելքին, իրենց կարգին օգտուելով յետոյ անոնցմէ:

Հայ «խոճա»ները, պետութեան մէջ իրենց ստեղծած դիրքին շնորհիւ հեղինակութիւն կը դատնան նաեւ ազգային գործերու մէջ եւ իրենց կամքը կը պարտադրեն ժողովուրդին, սակայն օգնութեան ալ կը հասնին անոնց, մեծ աղէտներու եւ հասարակական կարիքներու ժամանակ, ինչպէս նաեւ երբ տեղական ճնշումներու

¹²⁷ Քեօմիւրճեան Ե. Չէլէպի, Ստամպոլայ Պատմութիւն, Հանդէս Ամսօրեայ 1909, թիւ 4, էջ 99:

¹²⁸ Խաչկունց Դ., Կ.Պոլսոյ Հայ գաղութին ծագումը, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1902, էջ 201:

չափն ու սահմանը կ'անցնի: Նոյն դարու անուանի Հայ խոճան էր Վանեցի Խոճա Ռուհիճան (որ քիւրքճիւպաշին էր մեծ եպարքոսին ու դարը ալեկոծող տազնապներու ընթացքին բացառիկ դեր կատարեց)¹²⁹:

«Չէլէպի»ները, Հայ երեւելիներու ուրիշ խումբ մը, միջնորդ հանդիսանալով արտադրողի եւ պաշտօնէութեան միջեւ եւ վարկ տրամադրելով Օսմանեան պաշտօնէութեան, դիրք կ'ունենան պետութեան մօտ եւ այս պատճառաւ նաեւ առաւել չափով Հայ կեանքին մէջ: Օսմանեան կայսրութեան մէջ այս տիտղոսը կը կրեն մտաւորական դասի նշանաւոր ներկայացուցիչներ:

Հայ չէլէպիները առհասարակ պետական զանազան ձեռնարկութիւններու հայթայթիչներ կամ յանձնառուներ կ'ըլլան եւ կամ աչքառու սեղանաւորներ, որոնք կը գործակցին Թուրք պաշտօնատարներու հետ: Ասոնց գլխաւոր ասպարեզը կ'ըլլայ սարքաֆութիւնը կամ սեղանաւորութիւնը: Չէլէպիներուն իրատունքը կ'ըլլայ սզգային-եկեղեցական գործերու ղեկավարումը, հոգեւոր-մշակութային խնդիրներու տնօրինումը, Հայ ժողովուրդի եւ Օսմանեան պետութեան յարաբերութիւններու կարգաւորումը: ԺԷ. դարու անուանի Հայ չէլէպիներ են՝ Աբրահամ Չէլէպին (Ապրօ Չէլէպի, որ պետական իշխանութիւններու մօտ իր վայելած հեղինակութեան շնորհիւ յաճախ միջամտած է սզգային գործերու կարգադրութեան համար), Երեմիա Չէլէպին (իր մտաւորական բացառիկ ձիրքերուն շնորհիւ շահած է այդ տիտղոսը), Մաղաքիա Չէլէպին (մեծ եպարքոս Մելիք Ահմետ փաշայի մօտ ունեցած ազդեցութեան շնորհիւ 1649-ին կը յաջողի նուազեցնել թիավարական տուրքը, զոր կը վճարէին Կ.Պոլսոյ Հայ եկեղեցիները) եւ: Չէլէպի տիտղո-

¹²⁹ Միրունի Յ., նշծ. աշխ., Ա. հատոր, էջ 479:

սը կրողներուն մէջ յայտնի են նաեւ Տիւզեանները, որոնց վերջին Չէլէպիին կ'ըլլայ Յակոբ Տիւզեանը (1793-1847), որմէ յետոյ գեյրդաստանին պետերը կը ճանչցուին «պէյ» տիտղոսով¹³⁰:

Կ. Պոլսոյ պատրիարքութեան պատմութեան մէջ բացառիկ դէպք կ'ըլլայ 1679-ին պատրիարքական պաշտօնի կոչուիլը աշխարհական անձի մը՝ Օսմանեան բանակի հացի մատակարար Սարգիս Էքմէքճիին, որ նիւթական հնարաւորութիւններու շնորհիւ Պատրիարք նշանակուելէ վերջ կը ձեռնադրուի քահանայ¹³¹:

Արեւմտահայութեան մտաւորական վերածնունդը կը սկսի Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի Պատրիարքով, որ դեռ վարդապետ եւ հազիւ 37 տարեկան կը բարձրանայ Պատրիարքական Աթոռ:

Յովհաննէս Կոլոտ(1715-1741), Յակոբ Նալեան(1741-1748, 1752-1764) եւ Ջաքարիա Փոքրուզեան Կաղզուանցի (1773-1781, 1782-1799) Պատրիարքները կարեւոր դեր կը կատարեն Պոլսահայոց մտաւոր եւ բարոյական զարգացման մէջ: ԺԸ. դարու առաջին քառորդին կը թարգմանուին գիտական, գրական եւ այլ երկեր: Այս դարէն սկսեալ եկեղեցիներու կողքին կը սկսին կազմուիլ «Դպրաց դասերը», որոնք կը շարունակեն գործել մինչեւ մեր օրերը¹³²: Պոլսահայ առաջին ընծայարան-դպրոցը կը հիմնուի 1715-ին Սկիւտարի մէջ, Կոլոտ Պատրիարքի կողմէ, որ 1741-ին իր յաջորդը՝ Նալեան Պատրիարք կը փոխադրէ Գումգաբու, Մայր Եկեղեցիին մօտ¹³³: Առաջին ծանօթ եւ մեծ մատենադարանն ալ նոյնպէս կը կազմուի Կոլոտ Պատրիարքի կողմէ, Գումգաբուի Մայր Եկեղեցոյ

¹³⁰ Միրունի Յ., նշծ.աշխ., Ա. հատոր, էջ 483-490:

¹³¹ Խառատյան Ա., Կ. Պոլսի Հայ Գաղթօջախը, Երևան, 2007, էջ 241:

¹³² Միրունի Յ., Պոլիս եւ իր դերը Բ. հատոր, Պէյրութ, 1970, էջ 108:

¹³³ Գալուստեան Շ.Արք., նշծ. աշխ., էջ 15:

կից: Կոլոտ Պատրիարքի շնորհիւ կ'ամրանան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան խարխլուած հիմքերը¹³⁴:

ԺԸ. դարու կէսերուն, Հայ ամիրաները ասպարէզ կուգան երբեմնի չէլէպիներուն, խոճաներուն եւ մահտեսիներուն տեղ եւ հեղինակութիւն կը դառնան ազգային կեանքի մէջ:

Մինչեւ ԺԸ. դարու վերջին քառորդը Կ. Պոլսոյ մէջ Հայերու եւ Յոյներու արտօնուած չ'ըլլար հանրային նախակրթարաններ ունենալ: Դպրոցները կ'ըլլան վանքերու կից հաստատութիւններ, ուր կը դասուանդեն զարգացած հոգեւորականներ:

Սուլթան Սելիմ Գ. (1789-1807) կը փորձէ ձեռնարկել «Նիզամը Ճէտիտ» անունով ծանօթ բարենորոգումներու, որոնք կը ձախողին ենիչէրիներու ծայրայեղութիւններու պատճառաւ: Սուլթանը իր փրկութիւնը Արեւմուտքէն սպասելով բարեացակամ կը վարուի իր քրիստոնէայ հպատակներուն հետ: Ան է, որ կ'արտօնէ հպատակ ազգերու պաշտօնապէս ծաղկոցներ ու ուսումնարաններ հաստատել: Այդ շրջանին է, որ Հայերը իրաւունք կը ստանան՝ եկեղեցիներու բակին մէջ դպրոցներ ունենալու (1790), հիւանդանոց մը կառուցանելու Նառլըզարուի մէջ (1803) եւ եկեղեցիներ նորոգելու: ԺԸ. դարու վերջերուն կը գրուին հայատառ թրքերէնով գիրքեր, գոհացում տալու համար թրքախօս հայութեան, որ թրքերէն խօսելով հանդերձ գրելու համար հայ տառերը կը գործածէ:

Կ. Պոլսոյ մէջ զարկ կը ստանայ նաեւ հայատառ թրքերէն մամուլը¹³⁵: Ջարթօնքը, որ կը սկսի Կոլոտով, կը շարունակուի եւ ԺԹ.

¹³⁴ ՀՀ Ե.Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարանի արխիւ, Գեորգ Բամպուքճեանի ֆոնտ 47, Գալուստեան Շ. Արք., Յովհաննէս Կոլոտ Պատրիարք արեւմտահայ պատմութեան մէջ, Յուշամատեն 3.Կոլոտ Պատրիարքի ծննդեան 300-ամեակին առթիւ, էջ 6:

¹³⁵ Միքումի 3., նշծ.աշխ. Բ. հատոր, էջ 414:

դարը արեւմտահայութեան համար կ'ըլլայ զարթօնքի եւ վերելքի դար: Կ. Պոլիս Հայ ժողովուրդին համար կը դառնայ ազգային եւ մշակութային կեդրոն: Այսպէս՝ 1805-ին «Քիթապճի Մարգար» կը հիմնէ Կ. Պոլսոյ առաջին Հայ գրատունը, Կ. Պոլիս կ'ունենայ դպրոցներու առաջին ցանցը¹³⁶, հայ տպագրութիւնը Կ. Պոլիսը կ'ունենայ օրբան, հայ մամուլը հոն կը ստանայ իր երոպական իմաստը, ինչպէս նաեւ հայ բեմը կը կազմաւորուի հոն¹³⁷:

Կ. Պոլսոյ Հայոց մէջ հռոմէադաւանութեան առաջին փորձը կը կատարուի 1641-1643 տարիներուն Կղեմէս Գալստոս Լատին կրօնաւորի կողմէ, որ 1641-ին օգտուելով Կիրակոս Երեւանցի Պատրիարքի Կ. Պոլսէն բացակայութենէն, Պատրիարքի փոխանորդ Յովհաննէս Ուռհայեցիի հաւանութեամբ, Հայ վարդապետի հագուստ հագած կը դասախօսէ Պատրիարքարանի մէջ՝ զայթակղեցնելով Կ. Պոլսոյ Հայերը ու հազիւ Դաւիթ Արեւելցի Պատրիարքն է (1643-1644), որ կը հեռացնէ զինք Պատրիարքարանէն ու քիչ ետք ան կը ստիպուի մեկնիլ Երոպա¹³⁸:

Յովհաննէս Բաբերդցի Պատրիարքի (1802-1813) օրով, 1811-ին առաքելական եւ կաթողիկէ Հայերու միջեւ՝ փոխադարձ զիջումներու զինով, մերձեցման փորձեր կը կատարուին, որոնք կը մնան ապարդիւն: Տիւզեան տոհմին պատահած աղէտէն¹³⁹ վերջ (1819), Բարձր Դուռը՝ որուն շահերուն համապատասխան չ'ըլլար դէո

¹³⁶ Պոլիս 1850-ական թուականներուն կ'ունենայ 25, իսկ 1860-ական թուականներուն՝ 42 վարժարաններ:

¹³⁷ Գալուստեան Շ.Արք., նշծ. աշխ., էջ 78:

¹³⁸ Ասատուր Հ., Կ.Պոլսոյ հայերը ու իրենց պատրիարքները, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի 1901, Կ.Պոլիս, 1901, էջ 94-95:

¹³⁹ Թուրք կառավարութիւնը կը պատուհասէ զանոնք, մեղապարտ ընդունելով թէ՛ փողերանոցի հետ կապուած խնդիրներու համար եւ կէ կաթողիկոսութեան հետ կապերուն համար:

այն ատեն կաթողիկէութեան ծագումը Հայոց մէջ, հրաման կուտայ Հայոց Պատրիարքին իր ծոցը բերել Հայ հատուածը:

Կաթողիկէները սակայն իրենց թիկունքին ունենալով Ֆրանսան, կը յաջողին թափանցել Հայ զանգուածներէն ներս եւ կը վտանգուի Հայ ժողովուրդին ներքին խաղաղութիւնը: Կաթողիկէ արշաւանքը իր կողքին կ'ունենայ նաեւ ամիրաներու բաւական ստուար խումբ մը, որ կը յարի հռոմէական դաւանանքին: Այսպէս՝ ԺԹ. դարու սկիզբը, Կ. Պոլսոյ մէջ գոյութիւն կ'ունենայ կաթողիկէ դարձած հայութիւն մը, թէւ զուրկ պաշտօնական կազմակերպութենէ մը:

Օսմանեան կայսրութիւնը 14 Սեպտեմբեր 1829-ին Հայ Կաթողիկէները կը ճանչնայ, որպէս Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութենէն անկախ ու առանձին կրօնական համայնք, բայց անոնք զուրկ կ'ըլլան հոգեւոր եւ վարչական վերին իշխանութենէ մը, որուն ենթակայ ըլլային բոլոր Հայ Կաթողիկէները: Թուրքիոյ հարաւային ու միջին շրջանները ենթակայ կ'ըլլան Հայ Կաթողիկէ Կաթողիկոսութեան, իսկ Կ. Պոլսոյ, Պրուսայի, Էնկլիւրիի, Տրապիզոնի, Կարինի եւ Արթւիկի շրջանները՝ Ազգապետութեան, զոր 1831-ին Յակոբ Պէյ Տիւզեանի ջանքերով Սուլթան Մահմուտ Բ. կը ճանչնայ իբրեւ ուրոյն Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւն¹⁴⁰:

Բայց անզիջող եւ անհաշտ պայքար մը կը մղուի հայ աւանդոյթներու, հայ լեզուին հաւատարիմ հատուածին եւ լատինամետ Պատրիարք Անտոն Հասունեանի¹⁴¹ կողմնակիցներու միջեւ: Հայ Կաթողիկէ համայնքի պատմութեան մէջ նշանաւոր Հասունեան-հակահասունեան այս պայքարի ընթացքին, ծագումով ասորի Ան-

¹⁴⁰ Սիրունի Յ., նշծ.աշխ., Բ.հատոր, էջ 329-330:

¹⁴¹ Անտոն Հասուն, եղած է փոխանորդ Կաթողիկէ Պատրիարքներ Անտոն Նուրիճեան եւ ապա Պողոս Մարուշի օրով, իսկ յետոյ Պատրիարք:

տոն Հասունեան, քաջալերուելով Հռոմի կողմէ ու ծառայելով փոքր եկեղեցիները իրեն ենթարկելու անոր նախաձեռնութեան, կը փորձէ Հայ Կաթողիկէ եկեղեցիներուն մէջ հայկական ծեսին վերջ տալ եւ խեղդել զանգուածներու մէջ մնացած ազգային ոգին: Այս պայքարին մէջ ազգային ուղղութեան պաշտպան կը հանդիսանան Վենետիկի Միաբանութիւնը, Համազգեաց ընկերութեան անդամները ինչպէս նաեւ Անտոնեան Միաբանութիւնը: Հասուն թէեւ կ'ընկճէ իր ընդդիմադիրները, բայց հայ ոգիով տոգորուած տարր մը կը շարունակէ գոյութիւն ունենալ Հայ Կաթողիկէ համայնքին մէջ:

ԺԹ. դարու առաջին քառասնամեակին եւս, գաւառներու տէրէպէյի (աւատապետ) եւ վաշխառուներու զարհուրանքէն փախչող աղքատ գիւղացիներ, արհեստատուներ, մշակներ կը դիմեն պանդխտութեան եւ կը խուժեն Կ. Պոլիս, աշխատանք ճարելու, որոնք կ'ապրին ընդհանրապէս խաներու կամ մութ ու խոնարակուղներու մէջ: Ասոնցմէ զատ բռնի կերպով մայրաքաղաք կը բերուին Հայ պատանիներ եւ երիտասարդներ, միայն զգեստի ու սնունդի փոխարէն աշխատելու համար արքունի նաւարանի կամ իփլիք-խան կոչուած առագաստ պատրաստող գործարանին մէջ¹⁴²:

Ինչպէս նախորդ դարուն, ԺԹ. դարու առաջին կէսին եւս ամիրաները կը տնօրինեն ամեն բան, կը շարունակեն մնալ ազգին միակ տէրերը, յենած Թուրք երեւելիի մը¹⁴³:

Դաւանական վեճերը կը շարունակեն խռովել Հայ կեանքը եւ կազմալուծել զայն: 1834-ին Ստեփանոս Աղաւնի Պատրիարքի

¹⁴² Միրունի Յ., նշծ.աշխ., Բ.հատոր, էջ 301-302:

¹⁴³ Ամեն եկեղեցի կ'ունենայ 4-12 անձերէ բաղկացած իր մատակարար մարմինը, որ կ'ընտրուի ամիրաներու կողմէ իբրեւ Պատրիարքի փոխանորդներ եւ կը վաւերացուի Կառավարութեան կողմէ, երբ Պատրիարքարանի ձեռքով կը ներկայացուի իրենց:

օրով, ժողով կը գումարուի ամիրաներու եւ արհեստաւորներու (Լսնաֆ) զլխատութեամբ եւ ազգային գործերը վարելու համար կ'ընտրուին 10 ամիրաներ: Իսկ 1840-ին Յակոբոս Պատրիարք կը հաստատէ 24 արհեստաւորներէ կազմուած հոգաբարձութիւն մը, մատակարարելու համար ազգային հաստատութիւններու ինչպէս նաեւ Պատրիարքարանին ընթացիկ ծախսերը: Չորս տարի վերջ, 1844-ին իրաւախոհութեամբ կ'ընտրուի նոր մարմին մը 30 անձերէ բաղկացած (16 ամիրաներ եւ 14 արհեստաւորներ), որ կը ստանձնէ Պատրիարքարանի եւ ազգային հաստատութիւններու մատակարարութիւնը:

Օրուան զլխաւոր ամիրաները 1836-ին Երուսաղէմի նիւթական աջակցութեամբ Կ. Պոլսոյ մէջ կը նախաձեռնեն ճեմարանի մը բացումին, երբ Երուսաղէմէն Կ. Պոլիս կուգայ Կիրակոս Եպսկ. Մնացականեան ու կուտայ նպաստաւոր տեղեկութիւններ Սուրբ Յակոբայ վանքին նիւթական կացութեան մասին:

Այսպէս երկու տարի տեւող պատրաստութենէ վերջ 9 Դէկտեմբեր 1838-ին 50 աշակերտներով Սկիւտարի մէջ Երուսաղէմապատկան գետնի մը վրայ որպէս գիշերօթիկ վարժարան կը բացւի «Ճեմարան Ս. Երուսաղէմի» վարժարանը, որ սակայն պատճառ կ'ըլլայ ամիրաներու երկու ճակատի բաժանման: Ճարտարապետ ամիրաներու (Պալեաններ, Սերվերեաններ) եւ վառօդապետ ամիրաներու (Տատեաններ) միջեւ ծայր կ'առնէ խուլ պայքար մը (սեղանաւոր ամիրաներն ալ Տատեաններու նման բացասական դիրք կը բռնեն), որ կը սպառնայ ճեմարանի գոյութեան: Պայքարը յուզում կը ստեղծէ ժողովրդական զանգուածներու մէջ, որոնք ճեմարանը կը վերածեն սեփական դատի, ցոյցերու կ'անցնին եւ կը փորձեն ոտք կոխել Պատրիարքարան, որոնց նպատակը կ'ըլլայ ամիրաներու ձեռքէն առնել պատրիարքարանի հակակշիռը եւ զայն

յանձնել Յակոբոս Պատրիարքի կողմէ ստեղծուած հոգաբարձութեան: Ամիրաներու սաղրանքով Յակոբոս Պատրիարք կը ստիպուի քաշուիլ Պատրիարքական Աթոռէն (1840), ժողովրդական ցոյցերու պատճառաւ կ'աքսորուին բազմաթիւ արհեստաւորներ եւ հոգեւորականներ, Ճեմարանի նիւթական վիճակը կը ծանրանայ: 19 Սեպտեմբեր 1841-ին նման դէպքերու պատճառաւ պաշտօնէ կը քաշուի նաեւ Ստեփաննոս Աղանի Պատրիարք: Ի վերջոյ, Ճեմարանը կը փակուի 1841 Հոկտեմբեր 3-ին եւ չորս տարի փակ կը մնայ, իսկ 1843-ին կը վերածուի զինուորական հիւանդանոցի¹⁴⁴:

1847-ին «Առաջնորդ»ներու փոփոխութեան հարցին շուրջ վեճ կը ծագի օրուան Պատրիարք՝ Մատթէոս Չուխաճեանի եւ զինքը ընտրող ամիրաներու միջեւ, վեճը աստիճանաբար կը վերածուի հոգեւոր եւ աշխարհական դասերու միջեւ գօտեմարտի¹⁴⁵:

Պետական Հայ գործիչ Յակոբ Կրճիկեանի շնորհիւ ամիրաներու ի նպաստ ձեռք ձգուած Սուլթան Մէճիտի կայսերական հրովարտակով 20 Մայիս 1847-ին փոփոխութեան կ'ենթարկուի «միութեւ վէլլիութեան (կտակակատար) դրութիւնը»¹⁴⁶ եւ կառավարութենէն արտօնութիւն կը խնդրուի, Հայ համայնքը օժտելու համար երկու ժողովներով՝ աշխարհիկ եւ հոգեւոր, երկուքն ալ Պատրիարքի նախագահութեան ներքեւ:

¹⁴⁴ Միրունի Յ., նշծ.աշխ. Բ. հատոր, էջ 310-324:

¹⁴⁵ Նոյն տեղէն, էջ 327:

¹⁴⁶ Յովակիմ Պատրիարքի օրէն սկսեալ, պաշտօնապէս Թուրքիոյ Հայոց ընդհանուր «միութեւ վէլլի» կը ճանչցուին Պատրիարքները յաջորդաբար, որոնք իրենց փոխանորդ կը ներկայացնեն «Ամիրաներու Ժողով»էն ընտրուած, կառավարութենէն վաւերացուած ու պաշտօնաթուղթի (հեօճէթ կամ պէրաթ) տիրացած անձեր: Այս փոխանորդներն ալ կ'ընտրեն իրենց ժամանակաւոր փոխանորդները, 4-12 անձեր (Եկեղեցյան), որոնք կը վարեն Եկեղեցւոյ առօրեայ գործերը:

Մատթեոս Չուխաճեան Պատրիարքի նախագահութեամբ կը գումարուի Ընդհանուր ժողով, կը կատարուի ընտրութիւնը՝ 20 աշխարհականներէ (9 ամիրա եւ 11 արհեստաւոր) բաղկացած Գերագոյն ժողովին եւ 14 հոգեւորականներէ (5 վեղարաւոր եւ 9 աւագ քահանայ) բաղկացած Հոգեւոր ժողովին: Այս երկու ժողովները, որոնք երկու տարին անգամ մը կ'ընտրուին եւ կը վաւերացուին կայսերական հրովարտակով, կը վարեն ազգային գործերը, առանց կապտելու Պատրիարքին ասանդական իրաւասութիւնները, մինչեւ Ազգային Սահմանադրութեան վերջնական հաստատումը, որմէ յետոյ Կրօնական եւ Քաղաքական կոչեցեալ ժողովներով վերջ կը գտնէ Պատրիարքական մենատիրութիւնը եւ Ամիրայական ազնուապետութիւնը¹⁴⁷:

Սուլթանները, որոնք գահը կը բազմին ԺԹ. դարու առաջին կէսին, կ'ունենան իրենց Հայ «բարեկամները», որոնք ծառայութիւններ կը մատուցեն Թուրք պետութեան: Պալեանները մայրաքաղաքը կը զարդարեն շքեղ շէնքերով, Տիւզեանները կը ծառայեն իբրեւ ոսկերչապետ եւ փողերանոցի վարիչ, իսկ Տատեանները՝ իբրեւ վառօդապետ¹⁴⁸:

Սուլթան Մահմուտ (1808-1839) եւս բարեացակամ վերաբերում կ'ունենայ Հայոց հանդէպ, որուն փաստն է 4 Յունուար 1813 թուակիր հրովարտակը, որով կը վճռէ Յունաց փոխարէն Հայերուն ի նպաստ: Հրովարտակ, որ վերջ կուտայ Յունաց եւ Հայերուն միջեւ Երուսաղէմի Սուրբ տեղերուն սեփականութեանց եւ տիրութեան շուրջ տիրող դարաւոր վէճին¹⁴⁹:

¹⁴⁷ Գալուստեան Շ. Արք., նշծ. աշխ., էջ 90: Կարապետեան Պ., Հնգադարեան յիշատակարան Սամաթիոյ Ս.Գեորգ Եկեղեցւոյ, Իսթանպուլ 1935, էջ 79-80:

¹⁴⁸ Միրունի Յ., նշծ. աշխ., Բ. հատոր, էջ 64:

¹⁴⁹ Նոյն տեղէն, էջ 62:

Կ. Պոլսոյ Հայ ժողովուրդի ներքին խաղաղութեան սպառնացող վտանգ մը կ'ըլլայ նաեւ բողոքականներու քարոզչութեամբ ստեղծուած գայթակղութիւնները: Բողոքականները, յենելով Ամերիկային ու իրենց զօրավիգ ունենալով անգլիացի ու բրուսիացի դեսպանները, նպաստ կը բաշխեն կարօտեալներուն, շահելով անոնց համակրութիւնը: 1839-ին Իզմիտի մէջ երկու Հայ քահանաներ կրօնափոխ կ'ըլլան¹⁵⁰: Բերայի եւ Պէպէքի մէջ դպրոցներ կը բանան, ուր ուսում տալու պատրուակով կը ձեռնարկեն տղոց միտքը թունաւորելով խզելու զանոնք պապենական աստուծութիւններէն: 1841-ին Կ. Պոլսոյ մէջ հազարներու կը հասնին միսիոնարներու ճանկը ինկած Հայերը¹⁵¹: Քարոզչական փորձերը ապա կը տարածուին Չմիւռնիա եւ աւելի վերջ նաեւ գաւառական ուրիշ քաղաքներ: Միսիոնարներն ու բողոքական միսիոնարները, իրենց քարոզչութիւնը ժողովրդական խաւերու մատչելի դարձնելու բաղձանքով, ռամկօրէնով կը շարադրեն գիրք եւ պարբերական¹⁵²:

Հայ Աւետարանական Եկեղեցին, որ Հայ բողոքական համայնքի եկեղեցին է, կը կազմաւորուի 1 Յուլիս 1846-ին: 27 Նոյեմբեր 1850-ին, Օսմանեան կառավարութիւնը պետականօրէն կը ճանչնայ Աւետարանական Հայերը՝ որպէս Հայոց Պատրիարքութենէն անջատ կրօնական համայնք (միլլէթ), որ պետական բոլոր ատեաններուն առանձին ազգապետով ներկայանալու իրաւունք կը ստանայ: Հայ աւետարանական համայնքի առաջին ազգապետը կ'ըլլայ Ստեփան Սերոբեան (Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Յակոբոս Սերոբեանի եղբայրը):

¹⁵⁰ Նոյն տեղէն, էջ 347:

¹⁵¹ Միրունի Յ., նշծ. աշխ., Բ. հատոր, էջ 351:

¹⁵² Նոյն տեղէն, էջ 259:

ԺԹ. դարու 30-50-ական տարիներուն, երբ Օսմանեան կայսրութիւնը կ'ապրի տնտեսական եւ քաղաքական ճգնաժամ, եւրոպական տէրութիւններ կ'առաջարկեն եւ կը պահանջեն բարենորոգումներ իրականացնել հաստատելով անխտիր բոլոր հպատակներուն հաւասար իրաւունքներ, որ կը յայտարարուի 3 Նոյեմբեր 1839-ին Սուլթան Ապտիլվեճիտի հրահանգով, Արտաքին Գործոց Նախարար Մուսթաֆա Ռեշիտ Փաշայի կողմէ Կիւլիանէի պարտեզին մէջ եւ այդ պատճառաւ ալ կ'անուանուի «Կիւլիանէ ի Հաթըր Հիւմայուն»: Հրովարտակիւն սկզբունքները կ'ըլլան բոլոր հպատակներուն ապահովել՝ կեանքի, կայքի եւ պատուի անձեռնմխելիութիւն, օրէնքի առջեւ հաւասարութիւն (անկախ դաւանանքէ), հարկերու բաշխման եւ գանձման եղանակներու արդարութիւն եւլն:

Թանգիմաթի բարենորոգումները, որոնց ջատագով կը հանդիսանան Հայերը Եւրոպայի առջեւ, յուսալով որ բարգաւաճ կեանք մը կը սկսի իրենց համար, մեծ մասամբ գործնական կ'իրատում չեն գտներ: Թուղթի վրայ կը մնան հպատակներու խոստացուած բարիքները, բայց եւ այնպէս շօշափելի հետք կը թողուն երկրի քաղաքական, տնտեսական, հասարակական եւ գաղափարական կողմնորոշումներուն վրայ: Գերագոյն ժողովը 29 Հոկտեմբեր 1853-ին Սերովբէ Վիչէնեանի նախագահութեամբ կը կազմէ 14 անդամներէ բաղկացած Ուսումնական Խորհուրդը, որ կ'ըլլայ Հայ մտաւոր վերելքը հաւաքական գործակցութեան մը հունին մէջ դնելու առաջին քայլը: Ապա 1856-ին կը ստեղծէ երկու օժանդակ մարմիններ՝ «Դատաստանական Ժողով»ը եւ առեւտրական եւ արհեստաւոր դասակարգէն 22 անձերու անդամակցութեամբ «Տնտեսական Ժո-

ղով»ը, որուն կը յանձնուին Պատրիարքարանի անտուկը, հիւանդանոցն ու տնանկաց մատակարարութիւնը¹⁵³:

Օսմանեան Կայսրութիւնը երոպական տէրութիւններու յամառ թելադրանքով կը հարկադրուի 28 Փետրուար 1856-ին յայտարարել՝ անգլիացի եւ ֆրանսացի դեսպաններու անմիջական մասնակցութեամբ Ֆուատ եւ Ալի Փաշաներու կողմէ պատրաստուած բարենորոգումներու երկրորդ հրովարտակը՝ «Իսլահաթ Ֆերմանը», որ ոչ-իսլամ հպատակներու քաղաքացիական իրաւունքները կ'ընդլայնէ, զանոնք կ'ընդգրկէ պետական, ռազմական ու քաղաքական ծառայութեան մէջ: Այս ֆերմանով ոչ-իսլամ հպատակներ կը տիրանան իսլամներու հաւասար կրթական իրաւունքի, Պատրիարքներուն կը տրուի ժառանգութեան հարցերը լուծելու իրաւունք, ինչպէս նաեւ հոգեւոր հարկերը վերցնելով կը սահմանափակէ կղերի իրաւունքները, անոնց սահմանելով ամսաթոշակ:

Այս երկրորդ բարենորոգումներու իրագործումն ալ կը ձախողի բայց Օսմանեան բարեփոխումներու մշակման ու գործադրման ջանքերը կ'առթեն որոշակի փոփոխութիւններ՝ Պոլսահայ հասարակական կեանքի մէջ: 1856 Դեկտեմբերին Գերագոյն ժողովը կը ձեռնարկէ կազմել Մահմանադրական յանձնաժողով մը, մշակելու համար Ազգային վարչութեան կանոնագրութիւն, որ Բարձր Դրան ընդունած պարտաւորութիւններէն մէկն էր: Յանձնաժողովը 22 Մարտ 1857-ին կանոնագրութեան նախագիծը կը ներկայացնէ Ընդհանուր ժողովի քննարկման, որ կը հաստատէ զայն: Գեորգ Քերեսթե-

¹⁵³ Սիրունի Յ., նշծ.աշխ., Բ. հատոր, էջ 397-398:

ճեան Պատրիարք, որ ընդդիմութիւն ցոյց կու տայ կանոնագրութեան, կը հրաժարի իսկ Բարձր Դուռը կը հրաժարի վաւերացնելէ¹⁵⁴:

Ազգային Սահմանադրութիւնը՝ Արեւմտահայերու ներքին կեանքին վերաբերող այս կանոնագրութիւնը, կ'ապահովէ բոլոր դասակարգերու մուտքը Պատրիարքարանէն ներս: Հայ ազգը Սահմանադրութեան սաղմային վիճակը կը պարտի Յ. Կրճիկեան, Ս. Վիչէնեան, Ն. Պալեան անուններուն, որոնք իրենց շուրջ ունենալով Ն. Ռուսինեանն ու Գ. Օտեանը կը յօրինեն կանոնագրութեան նախագիծը¹⁵⁵: Իսկ իբրեւ Ազգային Սահմանադրութեան իսկական հիմնադիրներ կը հռչակուին՝ Գ. Օտեան, Ն. Ռուսինեան եւ Ս. Վիչէնեան, որոնց իր խորհուրդներով եւ քաջալերանքով կ'աջակցի Ն. Պալեան, մնալով միշտ ստուերի մէջ¹⁵⁶:

Պատրաստուած այս Սահմանադրութիւնը, որ կ'ընդունուի Մարգրիտ Գույումճեան Պատրիարքի օրով, 24 Մայիս 1860-ին Կ. Պոլսոյ մէջ, կը բաղկանայ 150 յօդուածներէ: Երբ Բարձր Դուռնէն կ'ուշանայ վաւերացումը, 1 Օգոստոս 1862-ին ժողովուրդը Պատրիարքարան խնուելով կը յայտարարէ, թէ «եթէ սահմանադրութիւնը պիտի չվաւերացուի, կարելորութիւն չունին Տեղապահ եւ Պատրիարքարան»: Անոնք դուրս կը հանեն Տեղապահ՝ Ստեփաննոս Արք. Մաղաքեանն ու պաշտօնեաները եւ բանալիները առնելով կը հեռանան: Կառավարութեան զինուորները հասնելով հազիւ կը բանան դռները¹⁵⁷: Այս դէպքէն վերջ Բարձր Դուռը էական փոփոխութիւններով կը հաստատէ ու կը յանձնէ զայն 17

¹⁵⁴ Խառատյան Ա., Արեւմտահայերի Ազգային Սահմանադրութիւնը, «Պատմաբանաւիրական հանդէս», Երեւան, 1992, թիւ 2-3, էջ 55-61:

¹⁵⁵ Միրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Գ. Հատոր, Անթիլիաս, 1987, էջ 45:

¹⁵⁶ Նոյն տեղէն, էջ 52:

¹⁵⁷ Երամեան Մ.Ա.Քահանայ, Պատմութիւն Արմաշու, Երեւան, 1991, էջ 63:

Մարտ 1863-ին «Հայոց Ազգային Կանոնագրութիւն» (Նիզամնամէ-ի Միլլէթ-ի Էրմէնիէան) անունով եւ 99 յօդուածներով¹⁵⁸:

Ազգային Սահմանադրութեան շնորհիւ ժողովուրդին մէջ կ'արթննայ հաւաքական գիտակցութիւնը, ազգը կը ձերբազատուի մեծամեծներու կամայական տնօրինութենէն, Թրքահայ համայնքին գերագոյն եւ համարառու միակ իրաւասու մարմինը կ'ըլլայ «Ընդհանուր ժողով»ը: Ան կ'ընտրէ ու կը հրաժարեցնէ Կ. Պոլսոյ Պատրիարքը, ինչպէս նաեւ՝ վարչական մարմինները¹⁵⁹: Իսկ մատակարարները, որոնք կը կոչուին Թաղային Խորհուրդ, ժողովուրդը ինք կ'ընտրէ քուէարկութեամբ:

Ազգային Սահմանադրութիւնը Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը կը ճանչնայ որպէս «ազգի ղեկավար» եւ միջնորդ՝ պետութեան եւ Հայ ժողովուրդի միջեւ ու իբրեւ հիմնական սկզբունք կը նշէ, որ Հայ ազգի իւրաքանչիւր անդամ պարտականութիւններ ունի ազգի հանդէպ, իսկ ազգը՝ իւրաքանչիւր անդամի: Ազգի պարտականութիւնն է հոգալ ազգի կարիքները, պահպանել Հայ Եկեղեցիի անաղարտութիւնն ու աւանդոյթները, կրթութիւն ստանալու հնարաւորութիւն տալ՝ երկու սեռի երախաներուն հաւասար կերպով, հայրական հոգատարութիւն ցոյց տալ կարիքաւորներու:

Սահմանադրութեան 57. յօդուածին համաձայն Ընդհանուր ժողովը (Ազգային ժողով) կը բաղկանայ 140 անդամներէ, որոնց 20-ը կրօնական իսկ մնացեալը համայնքին կողմէ ընտրուած ¹⁶⁰ երեսփոխաններ կ'ըլլան¹⁶¹:

¹⁵⁸ Հայկական Հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 16:

¹⁵⁹ Գույումճեան Լ., Հայ համայնքային անցուղարձէր, Ստանպուլ, 1950, էջ 5:

¹⁶⁰ 40-ը գաւառներու եւ 80-ը Կ.Պոլսոյ երեսփոխաններ կ'ըլլան:

¹⁶¹ Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, 75. Yılda Türkiye Ermenileri, İstanbul, 1998, s. 3-5.

Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան պատմութեան մէջ կարեւոր երեւոյթ մը կ'ըլլայ Արմաշի վանքը, որ 1611-էն սկսեալ 150 տարիներ որպէս Նիկոմիդիոյ Թեմին Առաջնորդանիստ եւ ուխտավայր ծառայելէ վերջ, ԺՇ. Դարու վերջին քառորդին կը ձեռնարկէ նաեւ ազգային եւ հոգեւոր կրթութիւն տալու:

Վանքին համար բարգաւաճման շրջան մը կը սկսի Բարթողիմէոս Եպսկ. Կապուտիկեանի Արմաշի Առաջնորդութեամբ, երբ կը կազմուի միաբանութիւն, կը հաստատուի ուսումնարան, կը նորոգուի Չարխափան Սուրբ Աստուածածին տաճարը, կը կառուցուին միաբանական եւ ուխտատրական յարկաբաժիններ եւ մատենադարան: Բայց դժբախտութիւն կը պատահի եւ այս բոլորը հրոյ ճարակ կը դառնան: 1810-ին կը վերանորոգուի վանքը եւ կը վերահաստատուի ուսումնարանը, Արմաշի նորակարգ առաջնորդ՝ Պօղոս Եպսկ. Ղարախոջեանի կողմէ, որուն յաջորդը Ստեփանոս Արք. Մաղաքեան եւս կը շարունակէ անոր գործը կատարեալ ձեռնհասութեամբ: 1866-ին Արմաշ կ'անջատուի Նիկոմիդիոյ Առաջնորդութենէն եւ կը նուիրուի ընդհանուր ազգային ծառայութեան գաղափարին, որ կը շարունակուի մինչեւ 1887 Թուրք-Ռուսական պատերազմին պատճառած տնտեսական տագնապի հետեւանքով Վանքի անշքացման օրերը: 1889-ին Խորէն Աշըգեան Պատրիարքի հովանաւորութեամբ եւ Մաղաքիա Օրմանեան Եպսկ.ի վերատեսչութեամբ կը վերաբացուի Արմաշի Դպրեվանքը, որ մինչեւ 1915¹⁶², ազգին կուտայ պատրաստուած եկեղեցական սերունդ մը: Աշըգեան Պատրիարքի նոր տնօրինութեամբ Արմաշի Վանքը ուղղակի կը կապուի Կ. Պոլսոյ Պատրիարքարանին եւ

¹⁶² Ա. Աշխարհամարտին Վանքը կ'աւերուի բոլոր միասնեւուն նման. ապա սեփականութիւնը կը դառնայ պատմութեան թանգարանին:

օրուան Պատրիարքը կ'ըլլայ տիտղոսաւոր Վանահայրը, իսկ Դպրեվանքի վերատեսուչը կ'ըլլայ Փոխ-Վանահայր: Օրմանեան Սրբազանի Վերատեսչութեան եօթը տարիները կ'ըլլան Դպրեվանքի ամենէն արդիւնաւոր շրջանը:

Արմաշի Դպրեվանքի այս նոր շրջանի ընթացաւարտներէն Բաբգէն Արք. Կիւլէտրեան կ'ըլլայ Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Թորգոմ Արք. Գուշակեան՝ Երուսաղէմի Պատրիարք, Զաւէն Տէր Եղիայեան, Մեսրոպ Նարոյեան եւ Գարեգին Խաչատուրեան Արքեպիսկոպոսներ՝ Թուրքիոյ Հայոց Պատրիարք: Արտասահմանի այսօրուան մեր երեք Ընծայարաններէն Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը կը հիմնուի 1923-ին Դուրեան Պատրիարքի կողմէ, որ կը ճանչցուի որպէս Արմաշի ոգին, գործակցութեամբ Արմաշի անդրանիկ սան Բաբգէն Արք. Կիւլէտրեանի: Վարժարանն ու վանքը իրենց արդիւնաւորութեան գագաթնակէտին կը հասնին Թորգոմ Պատրիարքի օրով: Անթիլիասի Դպրեվանքը կը հիմնուի Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսի կողմէ 1930-ին իսկ Թուրքիոյ Հայոց Սուրբ Խաչ Դպրեվանքը ձեռակերտն է Գարեգին Խաչատուրեան Պատրիարքին, որ կը հիմնուի 1953-ին¹⁶³:

Ազգային Սահմանադրութիւնը կը ջնջուի կառավարութեան կողմէ 19 Յուլիս 1332-ի (1916) կանոնագրով, որ կը հրապարակուի 10 Օգոստոս 1916-ին «Թաքվիմ-ի Վաքայի» թերթին մէջ, ստանց նոյնիսկ գաղափարը հարցնելու Հայ հայատակներուն: Այս կանոնագրութիւնը, որ կ'ըլլայ հակազդող օրէնք մը Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսաստանի 24 Մայիս 1915-ին հրապարակած ազդարարա-

¹⁶³ Գալուստեան Շ.Արք., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Պատմական Դերը, Շողակաթ, Իսթանպուլ, 1962, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 96-98:

գիրին դեմ¹⁶⁴, ա. յօդուածով կ'ըսէ. «Միսի (Կիլիկիոյ) եւ Աղթամարի Հայ Կաթողիկոսութիւնները միացած են, Պոլսոյ եւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնները բարդուած են այս Կաթողիկոսութեան. իրենց կապն ու յարաբերութիւնները բոլորովին խզուած է Էջմիածնի Կաթողիկոսութեան հետ»: Այս կանոնագրով կը փակուի Կ.Պոլսոյ Պատրիարքարանը եւ Պաղտատ կ'աքսորուի Ջաւէն Պատրիարք, ինչպէս նաեւ Երուսաղէմ կը դրկուի Կ. Պոլսոյ Պատրիարքութեան արխիւներուն մեծ մասը: Երկու տարի յետոյ Մոնտրոսի Դաշնագրէն (30 Հոկտեմբեր 1918) վերջ, առանց գործադրութեան դրուելու կը ջնջուի այս կանոնագրութիւնը, փոխարինուելով նորով մը, որ կը հրապարակուի 18 Նոյեմբեր 1334-ին (1918): Այս կանոնագրով կրկին ոյժի մէջ կ'ըլլայ Ազգային Սահմանադրութիւնը, կը վերաբացուի Կ. Պոլսոյ Պատրիարքարանը եւ Ջաւէն Պատրիարք կը վերադառնայ իր պաշտօնին¹⁶⁵:

¹⁶⁴ Bebi:oğlu M., 'Tanzimat'tan II. Meşrutiyet'e Ermeni Nizamnameleri, İstanbul, 2003, s. 214-215.

¹⁶⁵ Նոյն տեղէն, էջ 158:

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՒՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՒՆՆԵՐԸ

Թուրքիոյ Հանրապետութեան մեջ պաշտօնապէս որպէս «փոքրամասնութիւն» կ'ընդունուին միայն ոչ-իսլամ քաղաքացիներ, մասնաւորաբար Հայեր, Յոյներ եւ Հրեաներ: Իսլամ քաղաքացիներ, զանազան տեսակէտներէ (ազգային, կրօնական) տարբեր իսկ ըլլան, չեն ընդունուիր որպէս «փոքրամասնութիւն»: Քեմալականները իսլամ փոքրամասնութիւնները թրքական հովանոցի տակ «մենք» ըլլալով կը հաւաքեն, իսկ ոչ-իսլամները անխուսափելի կերպով կը նկատեն «միւսները»: Այս կացութեան պատճառները կարելի է ամփոփել հետեւեալ կերպով.

1. - Պատմական պատճառներ- Թուրքիոյ Հանրապետութիւնը շարունակութիւնն է Օսմանեան կայսրութեան, ուր կը տիրապետէր «Միլլէթներու (համայնք) համակարգ»ը՝ յենարան ընդունելով կրօնքը: Ըստ այս համակարգին, որ սկսելով 1454-էն պաշտօնապէս կը տեսէ մինչեւ Թանզիմաթ (1839), իսլամները առաջին կարգի իսկ ոչ-իսլամները երկրորդ կարգի քաղաքացիներ կը համարուին:

2. - Քաղաքական պատճառներ- Ի նպաստ Թուրքիոյ քրիստոնէայ փոքրամասնութիւններուն, եւրոպական պետութիւններու միջամտութիւններուն ընդարձակումը պատճառ կը հանդիսանայ, որ իսլամ հասարակութիւնը քրիստոնէայ փոքրամասնութիւնները ընդունի որպէս «միւսները»:

3. - Գաղափարական պատճառներ- Անցեալին երեք ցամաքամասերու վրայ տարածուած կայսրութեան տիրանալէ վերջ, Ի. ոչարու սկիզբին միայն Փոքր Ասիոյ տարածքով գոհանալու պարտադրանքը ու նոր հանրապետութեան կործանման վախը ազդակներ կ'ըլլան որ Թուրք հասարակութեան մօտ տիրէ «Թուրքէն ուրիշ մշա-

կութային ինքնութիւններու դէմ անհանդուրժողականութեան» մտայնութիւնը¹⁶⁶:

Եւրոպացիները Լօզանի առաջին խորհրդաժողովին տեղի տալով Թուրքերուն գլխաւոր մէկ պահանջին, կը հրաժարին Թուրքիոյ ոչ-խլամ փոքրամասնութիւններուն ի նպաստ երկրին ներքին գործերուն միջամտելու իրաւունքէն եւ այսպէս՝ դէմ առ դէմ կը թողուն պետութիւնն ու ոչ-խլամ տարրերը:

Քէնալական ազգայնականութիւնը թէեւ իր մշակութային արտաքին քաղաքականութեան գծով կ'ունենայ ոչ-յարձակողական երեսակ մը, բայց ներքին քաղաքականութեան գծով կ'ունենայ փոքրամասնութիւններու մշակոյթը ընկճող երկրորդ երեսակ մը: Այս ազգայնականութիւնը, դէմ ըլլալով Օսմանեան կայսրութեան «ոսյա»ի (հպատակ) մօտեցման, կը պահանջէ որ բոլոր ոչ-խլամ տարրերը լքելով իրենց ազգային ինքնութիւնը, միաձուլուին թուրք լեզուի, մշակոյթի եւ գաղափարի շուրջ: Ուստի ամէն ջանք կը գործադրէ, որպէսզի այդ տարրերը խմբէ թրքական ինքնութեան տակ¹⁶⁷:

Թուրքիոյ Ազգային Մեծ ժողովի 27 Դեկտեմբեր 1922 թուականի դրոսփակ նիստին, Իսմայիլ Սուփիի Պէյ կուտայ գրաւոր առաջարկ մը, ուր կը թելադրէ Կ. Պոլսոյ Յոյներն ու Հայերը փոխանակել եւ Կ. Պոլիսէն հեռացնել բոլոր Պատրիարքարանները¹⁶⁸:

Լօզան գտնուող Թուրք պատուիրակութիւնը գրաւոր եւ բանաւոր կէրպով զանազան դիմումներ կը կատարէ, որպէսզի Յունաց Պատրիարքարանը Թուրքիայէն փոխադրուի, սակայն ԱՄՆ-ու, Անգլիոյ եւ այլ պատուիրակութիւններ չեն ընդունիր եւ կ'որոշուի, որ Պատրիարքարանը մնայ Կ. Պոլիս, բայց հրաժարի քաղաքական եւ աշխարհիկ գործունէութիւններէն:

¹⁶⁶ Oran B., Türkiye'de Azınlıklar, İstanbul, 2004, s.47-49.

¹⁶⁷ Bali R., Yahudilerin Türk Milliyetçiliği, Birikim Dergisi Sayı 102, Ekim 1997, s.47.

¹⁶⁸ Macar E., Cumhuriyet Döneminde İstanbul Rum Patrikhanesi, İstanbul, 2003, s.107.

ԹՈՒՐԹ-ՅՈՅՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

30 Յունուար 1923-ին, երբ Լոզան քաղաքին մեջ դեռ կը շարունակուի Վեհաժողովը, Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ կը ստորագրուի «Թուրք-Յոյն փոխանակութեան վերաբերեալ պայմանագիր եւ փրոթոզով»: Այս պայմանագրին համաձայն կ'իրագործուի պարտադիր փոխանակութիւնը Փոքր Ասիա ապրող շուրջ 1200000 ուղղափառ թրքահպատակներու եւ Բումելի ապրող 400000 մահմետական յունահպատակներու: Այս փոխանակութենէն դուրս կը մնան Պոլսոյ Քաղաքապետութեան սահմաններուն մեջ 30 Հոկտեմբեր 1918-էն (Մոնտրոս) առաջ հաստատուած յոյներն (էթաբլի) ու Արեւմտեան Թրակիայի իսլամները¹⁶⁹:

Փոխանակութեամբ Յունաստան գացողները ընդհանրապէս արհեստաւոր ու վաճառական քաղաքացիներ, իսկ Թուրքիա եկողները գիւղացիներ կ'ըլլան: Ուստի Յունաստան տնտեսական վերելք կ'ունենայ իսկ Թուրքիա վայրէջք կ'ապրի: Փոքրամասնութիւններու (Հայեր ու Յոյներ) Փոքր Ասիայէն հեռացումով կը տկարանայ տեղացի արտադրողի եւ օտար մեծաքանակ գնորդի միջեւ հաղորդակցութեան կապը եւ կը նուազին արտաքին առեւտրական ձեռնարկները, ինչ որ մեծ հարուած կ'ըլլայ երկրի տնտեսական կեանքին համար¹⁷⁰: Իսկ 1923-ի այս փոխանակութեան նախափորձը կը կատարուի Պալքանեան պատերազմէն անմիջապէս վերջ՝ 1914-ին: Բումելիի մահմետականները, որոնք Օսմանեան բանակի պարտութեան եւ Պուլկարական բանակին մինչեւ Չաթալճա հասնելուն պատճառաւ շատ դժուար կացութեան կը մատնուին եւ քանի մը օրուան մեջ իրենց ծննդավայրը լքելով կը փա-

¹⁶⁹ Նոյն տեղէն, էջ 98:

¹⁷⁰ Aktar A., Varlık Vergisi ve "Türkleştirme" Politikaları, İstanbul, 2000, s. 51.

խին դեպի Կայսրութեան մայրաքաղաքը, հոնկէ կ'անցնին Փոքր Ասիա, կը գործակցին իրթօհատականներուն հետ, որոնք կը ճնշեն տեղոյն Յոյներուն: Այսպէս Փոքր Ասիոյ Յոյն Օրթոտոքսները կը պարտաւորուին Թուրքիոյ արեւմտեան ծովափներէն փախուստի դիմել դեպի Էգէական կղզիներ¹⁷¹:

Հակառակ որ Ազգային Մեծ Ժողովը Նոյեմբեր 1922-ին կ'որոշէ նաեւ Թուրքիոյ Հայոց եւ Հայաստանի Թուրքերուն փոխանակումը, Լոզանի Թուրք պատուիրակութեան նախագահ Իսմէթ Ինժօնիւ անկարելի կը նկատէ այս պարագան, քանի որ Հայաստանի պետութեան հետ այս նիւթի շուրջ բանակցիլ կը նշանակէ ճանչնալ երկրին արեւելեան սահմաններն ու Մոսկուայի Դաշնագիրը, իսկ նոյն նիւթի շուրջ Ռուսերուն հետ բանակցիլը առիթ կուտայ Մոսկուայի Դաշնագրին (16 Մարտ 1921) այժմեականացման¹⁷²:

Աֆիոնի երեսփոխան Իզգէտ Ուլվի 17 Դեկտեմբեր 1923-ին առաջարկ մը կը բերէ Ազգային Մեծ Ժողովի նախագահութեան, ուր կ'ըսէ. «Քանի որ վերցուած են Պատրիարքներու քաղաքական եւ վարչական իրաւունքներն ու առանձնաշնորհումները, պէտք է անոնք Արդարադատութեան նախարարութեան կողմէ կոչուին «պաշտօնափազ» այսինքն «աւագերէց»: Քեմալական կառավարութիւնը 26 Դեկտեմբեր 1923-էն սկսեալ Պատրիարքական Աթոռի գահակալները կը կոչէ «Պաշտօնափազ» (աւագերէց) եւ ոչ թէ «Պատրիարք»: Ասիկա մեծ հաւանականութեամբ կ'ունենայ երկու նպատակ՝ արգելք ըլլալ Յունաց Պատրիարքի էգումէնիք (տիեզերական) կարգավիճակին, ինչպէս նաեւ վերջ տալ Յոյներու աշխար-

¹⁷¹ Նոյն տեղէն, էջ 26:

¹⁷² Okutan Ç., Tek Parti Döneminde Azınlık Politikaları, İstanbul, 2004, s.72.

հիկ հեղինակութեան, որ մնացած է Օսմանեան Կայսրութեան շրջանէն¹⁷³:

Երբ 3 Մարտ 1924-ին կը ջնջուի Խալիֆայութիւնը, Թուրք մամուլի մէջ ծայր կուտան վեճեր՝ Պատրիարքարաններու եւ Խախամապետարանի եւս ջնջումին շուրջ: Հանրապետութեան Նախագահ Մուսթաֆա Քէմալ 4 Մայիս 1924-ին հետեւեալ կերպով կ'արտայայտուի «Նիւ Եորք Հերըլտ» թերթի թղթակիցին. «Խալիֆայութեան հետ պետք է վերցնել նաեւ Թուրքիոյ Յունաց եւ Հայոց Պատրիարքութիւններն ու Խախամապետութիւնը: Պետք է հարց տալ, թէ նման կացութեան որքա՞ն կը հանդուրժեն Անգլիան, Ֆրանսսան, Ամերիկան կամ ուրիշ ոեւէ ազգ»¹⁷⁴:

1928-29 տարեշրջանի Պետական Ալմանակի մէջ եւս կը նշուի «Ֆէնէրի Յունաց Աւագերեցութիւն», բայց Հանրապետութեան Նախագահ Մուսթաֆա Քէմալ Յունաց Ֆօթիոս Պատրիարքին հետ իր թղթակցութիւններուն մէջ կը սկսի գործածել «Պատրիարք» տիտղոսը¹⁷⁵: Բայց ինչպէս կը հասկցուի յունարէն Ավի թերթի 25 Փետրուար 1931 օրուան 442 համար օրինակին պետական թարգմանութենէն ալ, այդ թուականին եւս Կուսակալութեան կողմէ Յունաց Պատրիարքարանին ուղարկուած գրութեան մէջ կը նշուի «Աւագերեցութիւն» եւ ո՛չ թէ «Պատրիարքութիւն»¹⁷⁶:

Թուրքիոյ Հանրապետութիւնը «Զուիցերիոյ Քաղաքացիական Օրէնքը» ընդունելով կը ջնջէ նախորդ օրէնքները եւ սկզբունքով կը վերցնէ իսլամներու եւ ոչ-իսլամներու միջեւ եղած կրօնական

¹⁷³ Macar E., նշծ.աշխ., էջ 125:

¹⁷⁴ Նոյն տեղէն, էջ 125:

¹⁷⁵ Նոյն տեղէն, էջ 149:

¹⁷⁶ B.C.A. 030.10.00.00.109.72692 (Մալիտ Զեթինօղլուի անձնական արխիւ)

խորութիւնները, որով 4 Հոկտեմբեր 1926-էն սկսեալ քաղաքակրթութեան նոր դարագլուխ մը կը բացուի Թուրքիոյ համար:

«Թուրքիոյ Հանրապետութեան Քաղաքացիական Օրէնք»ի ընդունմամբ վերջ կը գտնէ Օսմանեան շրջանի կառավարման ձեւը, ուր համայնքները կը կառավարուէին իրենց կրօնական օրէնքներուն համաձայն: Պատրիարքները հոգեւոր հսկիչ կը կարգուին համայնքի կրօնական ու ընկերային հաստատութիւններուն: Օսմանեան Կայսրութեան ընդունած «բազմազգ համակարգը» իր տեղը կը թողու «ազգ-պետութեան»: Հայերը, ինչպէս նաեւ Յոյներն ու Հրեաները, պաշտօնապէս կ'ընդունուին որպէս «փոքրամասնութիւն»¹⁷⁷:

Լօզանի Հաշտութեան Դաշնագրով թէեւ կը պահպանուին փոքրամասնութեանց ներքին առանձնաշնորհումները, սակայն նախ Հրեաները, ապա Հայերն ու Յոյները կը հրաժարին այդ առանձնաշնորհումներէն եւ ներքին ժողովներ գումարելով կը համակերպին «Զուիցերիոյ Քաղաքացիական Օրէնք»ի տրամադրութիւններուն: Անոնք մամուլի եւ քաղաքական պաշտօնէութեանց թելադրանքով կը պարտադրուին հրաժարիլ Դաշնագրի 42. յօդուածէն, որովհետեւ նոր Հանրապետութիւնը չէր արտօներ վերոյիշեալ յօդուածով նախատեսուած առանձնաշնորհումները¹⁷⁸: Ըստ

¹⁷⁷ Seyfeli C., İstanbul Ermeni Patrikliği, İstanbul, 2005, s. 161.

¹⁷⁸ ՅՕԴՈՒԱՄ 42 - Թուրք կառավարութիւնը կը հաւանի, որ ոչ-խլամ փոքրամասնութեանց ընտանեկան իրաւունքներու եւ անհատական պայմաններու վերաբերեալ խնդիրները լուծուին այդ փոքրամասնութեանց սովորութիւններուն եւ բարքերուն համաձայն: Այս օրէնքները պիտի դրուին թուրք կառավարութեան եւ շահագրգռուող փոքրամասնութեանց իւրաքանչիւրին հաւասար թիւով ներկայացուցիչներէն կազմուած մասնաւոր յանձնաժողովներու. ձեռքով: Եթէ անհամաձայնութիւն մը ծագի, կառավարութիւնն ու Ազգերու Ընկերակցութիւնը Երոպայի իրաւագէտներուն մեջէն իրաւարար մը պիտի ընտրեն համաձայնութեամբ: Թուրք կառավարութիւնը կը ստանձնէ ամէն կերպով

Լոզանի Հաշտութեան Դաշնագրի 42. յօդուածին, 1925 Մայիսին կը կազմուին փոքրամասնութեանց յանձնաժողովներ, որոնց Յոյն, Հայ եւ Հրեայ անդամները կ'ընտրուին Թուրք կառավարութեան կողմէ: Երկար վիճաբանութիւններէ եւ կառավարական շրջանակներէ կատարուած բազում ճնշումներէ վերջ, 10 Մեպտեմբեր 1925-ին Հրեայ անդամներէ կազմուած յանձնաժողովը կը յայտարարէ, թէ Հրեայ համայնքը կը հրաժարի Լոզանի վերոյիշեալ յօդուածէն ծագում առած առանձնաշնորհումներէն, որուն կը յաջորդէ Հայ համայնքի նոյնիմաստ յայտարարութիւնը: Յոյն համայնքը բաւական կը պայքարի բայց ի վերջոյ 27 Նոյեմբերին կը պարտաւորուի ստորագրել իրենց հրաժարման փաստաթուղթը¹⁷⁹:

պաշտպանել յիշուած փոքրամասնութեանց վերաբերեալ եկեղեցիներ, սինակոկներ, գերեզմանատուներ եւ ուրիշ կրօնական հաստատութիւններ: Այդ փոքրամասնութեանց ներկայիս Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող վագըֆներուն, կրօնական եւ բարենպաստակ հաստատութեանց ամէն տեսակ դիրութիւն եւ արտօնութիւն պիտի տրուի եւ թուրք կառավարութիւնը հարկ եղած դիրութիւնները երբեք պիտի չզլանայ կրօնական եւ բարենպաստակ հաստատութիւններ հիմնելու մասին այս կարգի միւս հաստատութեանց ապահովուած դիրութիւններէն:

¹⁷⁹ Aktar A., նշծ. աշխ., էջ 113:

ԹՈՒՐՔ - ՀԱՅ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Նախահանրապետական շրջանին 24 Դեկտեմբեր 1922-ին, Հայ եւ Թուրք կարգ մը մտատրականներու կողմէ, երկու ժողովուրդներու միջեւ բարեկամական կապեր վերակենդանացնելու, միասնաբար նոր ապագայ մը կերտելու, անցեալի դառն յուշերը մոռնալով բարեկամական հին կապերը վերահաստատելու նպատակաւ կը կազմուի «Թուրք-Հայ Բարձրացման Միութիւնը», որ շարունակութիւնը կը համարուի 28 Սեպտեմբեր 1919-ին Կ. Պոլսոյ Գատըզիւղ (Քաղկեդոն) թաղամասին մէջ հիմնուած «Կարապետեան»¹⁸⁰ Սանուց Միութեան»: Այս վերջինը այդ թուականին Բերա Ասմալը Մեսճիտ 33 թիւ պանդոկին մէջ 40 անդամներու ներկայութեամբ կը կատարէ իր տարեկան ընդհանուր ժողովը, ուր անունը կը փոխէ որպէս «Թուրք-Հայ Բարձրացման Միութիւն»:

Ժողովի ընթացքին կ'որոշուի ունենալ երկու պատուոյ նախագահներ՝ մէկը Թուրք իսկ միւսը Հայ (Իսմայիլ Մուշթաք Պէ եւ Պերճ Քերեստեճեան), ինչպէս նաեւ երկու ընդհանուր քննիչներ՝ մէկը Թուրք ու մէկը Հայ: Կ'ընտրուին վարչութեան անդամներ վեց Թուրք եւ վեց Հայ¹⁸¹:

¹⁸⁰ Պետրոս Զեփ Կարապետեան, (1873-1937) կրթական գործիչ, բառարանագիր, Պերպլեան վարժարանը աւարտելէ վերջ կը նուիրուի մանկավարժական աշխատանքի: Երկար տարիներ հայկական դպրոցներու մէջ կը պաշտօնավարէ որպէս թրքերէնի ուսուցիչ: Սկիստարի մէջ կը բանայ Կարապետեան վարժարանը: Հեղինակած է «Մեծ բառարան օմաներէնէ հայերէն»ը, որ կը պարունակէ 50.000 բառ եւ արտայայտութիւն, ինչպէս նաեւ բազմաթիւ դասագրքեր թրքական դպրոցներու համար:

¹⁸¹ Մալխասեան Ս., 1922 թուականին հիմնադրուող Թուրք-Հայ Բարձրացման Միութիւնը, Ատենախօսութիւն (թրքերէն), Իսթանպուլ, 2005.

1925 Յունուարին Կ. Պոլսոյ մէջ կը սկսի հրատարակուիլ «Առաւօտ», անուն շաբաթաթերթ մը՝ իբր պաշտօնական օրկան Թուրք-Հայ Բարձրացման Միութեան, որ կը պաշտպանէ Թուրք հայրենիքի ընդհանուր շահերը¹⁸²:

Միութիւնը տակաւ առ տակաւ կը շեղի սկիզբին յայտարարած նպատակէն եւ ոչ միայն անհարկի ծախսերով բեռ կը դառնայ Հայ հասարակութեան վրայ, այլ նաեւ կը փորձէ ոտնձգութիւններ կատարել Հայ ժողովուրդի օրինական իշխանութեանց սահմաններէն ներս: Կ.Պոլսոյ Հայ համայնքի Լօզանի վերոյիշեալ յօդուածէն ծագում առած առանձնաշնորհումներէն հրաժարման մէջ կարեւոր դեր կը կատարէ այս միութիւնը: Այսպէս, կ'որոշէ Էնկիւրի (Անգարա) ղրկել հանրագրութիւն մը, որով Հայերը կը յայտարարեն իրենց հրաժարումը առանձնաշնորհումներէն, միանգամայն համամիտ Լօզանի Դաշնագրի:

Թուրք-Հայ Բարձրացման Միութեան քարտուղարը կուսակալին այցելելով կը յայտարարէ, որ Հայերը կը մտածեն հրաժարիլ Լօզանի Դաշնագրին 42. յօդուածի ա. հատուածին համաձայն իրենց տրուած իրաւունքներէն եւ կ'ուզեն որ իրենց սովորութիւններուն մասին պատրաստուելիք կանոնագիրը մշակուի ուղղակի կառավարութեան կողմէ եւ այս իմաստով խնդրագիր մը պատրաստուած է, ստորագրութիւն պիտի հաւաքուի Կ. Պոլսոյ Հայերէն¹⁸³:

Այս հանրագրութիւնը Պատրիարքարան կը բերէ Միութեան Բ. Ատենապետ Տրթ. Եաղուպեան, որպէսզի Տեղապահ Գեորգ Արք. Արպանեան եւ ուրիշ հեղինակաւոր անձեր ստորագրեն զայն,

¹⁸² Պայքար, 20.I.1925:

¹⁸³ Յառաջ, 14.VIII.1925:

որոնք կը մերժեն առարկելով թէ ազգին կողմէ խնդրագիր մատուցանելու իրաւունքը կը պատկանի ո՛չ թէ Թուրք-Հայ Բարձրացման Միութեան այլ Քաղաքական Ժողովին: Անոնք կ'ըսեն, թէ եթէ կառավարութիւնը կ'ուզէ նման բան մը պատրաստ են ընդունելու, բայց չեն ուզեր նման առաջարկ մը ընել իրենք:

Իրենց համար անհաճոյ այս պատասխանն իմանալով Միութեան անդամները կը պահանջեն ստորագրել հանրագրութիւնը, հակառակ պարագային հրաժարիլ պաշտօնէն: Միութեան եւ Քաղաքական Ժողովի այս անհամաձայնութեան յաջորդող օրերուն, երբ կը սրուի կացութիւնը Քաղաքական Ժողովի աստեալէտ՝ Պր. Մոստիչեան կը հրաժարի պաշտօնէն¹⁸⁴:

1927-ի կէսէն սկսեալ լուրերու մէջ տեղ չ'առնէր այս Միութիւնը, մեծ հաւանականութեամբ անձայն վերջ կը գտնէ: Կարելի է կարծել, որ Թուրք-Հայ բարձրացման միութիւնը հող կը յարդարէր թրքացման պետական քաղաքականութեան առջեւ, որ բացահայտ կը ծավալուէր 1920-ականի բ. կեսին:

¹⁸⁴ Մտերամասնասնութիւնը տեսնել «Պատրիարքութիւնն ու Համայնքը Հանրապետութեան Հռչակումէն Վերջ» բաժնին մէջ:

ԹՐՔԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ Հանրապետութեան առաջին տարիներէն սկսեալ միակուսակցական վարչութիւնը (Հալք կուսակցութիւն), երկրի բաղկացուցիչ ամբողջ տարրերը թրքացնելու համար, կը մշակէ ու կը գործադրէ «թրքացման քաղաքականութիւն», որ կը հետապնդուի մեթոտիկ կերպով եւ յատկանշական է ոչ-իսլամ փոքրամասնութեանց նկատմամբ իր խտրական որոշումներով¹⁸⁵: Պոլսոյ քաղաքապետութիւնը կը հրահանգէ թատրոններու եւ շարժանկարներու մէջ ծառայողներուն՝ թրքերէն խօսիլ հանդիսականներուն հետ: Թրքերէնը ընդհանրացնելու համար կը կազմուին «Թիւրք Օճաղը»¹⁸⁶ անուն յանձնաժողովներ, որոնց աշխատանքը կը տարածուի «Քաղաքացի, թրքերէն խօսէ՛» նշանախօսքով: Թուրք մամուլը անվերջ օրակարգի վրայ կը պահէ թրքերէն լեզուն ոչ-իսլամներու մէջ ընդհանրացնելու խնդիրը, քննադատութիւններու թիրախ դարձնելով զանոնք: 10 Մարտի 1926-ին Թուրքիոյ Ազգային Մեծ ժողովի մէջ ընդունուած օրէնքով ոչ-թուրք առեւտրական եւ սեղանատրական բոլոր հաստատութիւններու գործառնութիւններուն համար պարտադիր կ'ըլլայ թրքերէնը¹⁸⁷, մասնաւոր զարկ կը տրուի փոքրամասնութեանց եւ օտար վարժարաններու աշակերտները ուղղակի Թուրք քաղաքացիներ դարձնելու քաղաքականութեան:

¹⁸⁵ Aktar A., նշծ. աշխ., էջ 102:

¹⁸⁶ «Թիւրք Օճաղը»ները կը հաստատուին 1912 թուականին, որոնք արագօրէն կը ծաւալեն իթթիհատի շունչին տակ: Քեմալապետութեան շրջանին կ'ունենան 45-50 մասնաճիւղեր, 100.000 անդամներով: 1932-ին կը վերակոչուին «Հալք Էվի» (ժողովրդական տուն), կը զբաղին քեմալական սերունդ մը պատրաստելու գործով:

¹⁸⁷ Aktar A., Cumhuriyet'in İlk Yıllarında Uygulanan Türkleştirme Politikaları, Tarih ve Toplum Dergisi Aralık 1996, Sayı 156, İstanbul, 1996, s.33.

Թուրքիոյ Ազգային Մեծ ժողովը 24 Ապրիլ 1924-ին միաձայնութեամբ կը վաւերացնէ Թուրքիոյ Նոր Սահմանադրութիւնը, որուն 88. յօդուածին մէկ պարբերութիւնը կ'ըսէ. «Բոլոր այն փոքրամասնութիւնները, որոնք իրենց սեփական մասնաւոր վարժարաններն ունին եւ իրենց լեզուն կ'ուսուցանեն, կրնան Թուրք կոչուիլ այնքան ատեն, որքան քաղաքացի ըլլալով կ'ապրին երկրին սահմաններէն ներս»: Այս յօդուածի տրամադրութեամբ իրենց թրքահպատակութիւնը կը կորսնցնեն բոլոր այն Հայերն ու Յոյները, որոնք տարագրուած կամ փախած են Թուրքիայէն եւ չեն կրնար վերադառնալ¹⁸⁸: Թէեւ 1924-ի նոյն Սահմանադրութեան մէջ նշուած է, թէ Թուրքիոյ բոլոր քաղաքացիները հաւասար են առանց կրօնքի խտրութեան, բայց եւ այնպէս բ. յօդուածին մէջ ալ կ'ըսուի. «Թուրքիոյ Պետութեան կրօնքը՝ Իսլամն է», որ բացայայտ կերպով կը նշանակէ, թէ ոչ-իսլամները կ'ըլլան երկրին երկրորդ կարգի քաղաքացիները: 1928-ին այս յօդուածը կը վերցուի Սահմանադրութենէն, բայց կացութիւնը գործնական կերպով չի փոխուիր, քանի որ այս մէկը չ'ազդեր Հանրապետութեան «թուրք հաւասար է իսլամ» քաղաքականութեան եւ Թուրքիոյ ոչ-իսլամ հպատակները միայն այդ պատճառաւ, որ իսլամ չեն, հսկողութեան տակ կը գտնուին Ոստիկանական Տնօրէնութեան կողմէ կազմուած մասնաւոր միութեան¹⁸⁹ մը:

Թուրքիոյ Հանրապետական կառավարութիւնը կը վրդովէ այն պարագան, թէ քաղաքներու առեւտուրը կը գտնուի ընդհանրապէս ոչ-իսլամ քաղաքացիներու ձեռքը: 1920-ական թուականներէն սկսեալ հետզհետէ կը սաստկանան ոչ-իսլամ վաճառականներու

¹⁸⁸ Պայքար, 26.IV.1924:

¹⁸⁹ Այս միութիւնը, որ 19 Օգոստոս 1989ին «Փոքրամասնութեանց Մասնաճիւղ» անունը կ'առնէ, մինչեւ այսօր կը շարունակէ իր գործունէութիւնը:

եւ օտար դրամագլուխի տերերուն դեմ ճնշումները: Շրջանի կարգախօսը բացայայտ է. «Թուրքիան Թուրքերունն է»¹⁹⁰: «Ազգային վաճառական»ներու կողմէ 1922 Դեկտեմբերին կը կազմուի «Թուրք Ազգային Առեւտրական Միութիւն»ը, իսկ 1923 Օգոստոսին ոչ-իսլամ վաճառականները վարչութենէն հեռացնելով «Պոլսոյ Առեւտրական Սենեակ»ի վարչութիւնը թրքացման կ'ենթարկուի¹⁹¹:

1920-ական տարիներու կարգադրութիւնները, որոնք կ'արգիլեն Հայ վաճառականներու ելքը քաղաքի սահմաններէն դուրս կամ Հայերը կը պարտադրուին իրենց տուները բաժնել թուրք գաղթականներու հետ, կը շարունակուին Հրեաներու դեմ 1934-ին կատարուած «Թրակիոյ Աւերում»ով (բոկրոմ), 1942-ի «Ունետորութեան Տուրք»ով¹⁹² եւ 1955 թուականին «6-7 Սեպտեմբեր»ի¹⁹³ դեպքերով¹⁹⁴:

Այն Յոյներուն, որոնք փոխանակութեան ենթակայ չեն, ինչպէս նաեւ Հրեայ փախստականներուն 2 Յուլիս 1924 թուակիր «Երթելեկի Օրէնք»ով կ'արտօնուի վերադառնալ Թուրքիա: Իսկ Հայերու պարագան տարբեր կ'ըլլայ: Կ'արտօնուի Թուրքիոյ սահմաններէն ներս մտնել միայն այն Հայերուն, որոնք կանոնաւոր անցազրով մեկնած են: Բացառութիւն կը կազմեն Թուրքիա գտնուող

¹⁹⁰ Aktar A., նշծ.աշխ., էջ 55:

¹⁹¹ Նոյն տեղէն, էջ 57:

¹⁹² 11 Նոյեմբեր 1942 թուական եւ 4305 համար օրէնքով պետութիւնը Թուրքիոյ քաղաքացի ոչ-իսլամ փոքրամասնութենէն կը պահանջէ բարձր տուրք եւ անոնք, որոնք չեն կրնար վճարել զայն, կը դրկէ Ազգալէ, ծանր պայմաններու տակ աշխատելով վճարելու համար: Այս ձեւով 1229 հոգի Ազգալէ կը դրկուի 27 Յունուար-3 Յուլիս 1943-ին:

¹⁹³ 6-7 Սեպտեմբեր 1955-ին Ստանպուլ եւ Իզմիրի մէջ ոչ-իսլամ փոքրամասնութեանց դեմ կատարուած յարձակումն ու թալանը:

¹⁹⁴ Mahcupyan E., İçimizdeki Öteki, İstanbul, 2005, s.270.

այրերու արտասահման գտնուող կիներն ու 18 տարեկանէն փոքր գաւակները¹⁹⁵:

Զինադադարէն վերջ, երբ Հայեր երկրէն դուրս կ'ելլեն կամ կ'արքարուին, իրենց կը տրուին անցագրեր՝ «Վերադարձը արգիլուած» կնիքով: Չենք գիտեր թէ քանի հազարաւոր Հայեր նման անցագրով դրկուած են արտասահման, բայց Յակոբ Հանճեանի անցագիրը վառ փաստն է այդ բանին, որ այս դրութիւնը շարունակուած է մինչեւ 1924¹⁹⁶:

26 Փետրուար 1925-ին Ներքին Գործոց նախարարութիւնը կ'արգիլէ Յոյներէն գատ բոլոր փոքրամասնութեանց Փոքր Ասիա երթելէկէլ՝ առանց նախապէս արտօնութիւն ստանալու: Այս փոքրամասնութեանց ազատ երթելէկէլու իրաւունք կը տրուի միայն Կէպղէի եւ Չաթալճայի միջեւ մնացած գօտիին համար, իսկ աւելի վերջ նոյն արգելքը կը կիրարկուի նաեւ Յոյներուն: Ամէն ճամբորդութենէ առաջ պէտք կ'ըլլայ դիմումնագիր մը տալով արտօնութիւն ստանալ ոստիկանութենէն, որ կը պարունակէ երթելէկէլու նպատակն ու ժամանակամիջոցը: Հայերուն կ'արգիլուի նաեւ բնակիլ Իզմիրի մէջ¹⁹⁷: Այս արգելքը կը ջնջուի 17 Նոյեմբեր 1930-ի «Երթելէկի Նոր Հրահանգ»ով¹⁹⁸:

31 Մարտ 1926 թուակիր պաշտօնաթերթին մէջ լոյս տեսած 788 թիւ «Պաշտօնէից Օրէնք»ի 4. յօդուածի տրամադրութեան համաձայն պաշտօնէայ ըլլալու համար նախապայման կ'ըլլայ «Թուրք» ըլլալ: Նոյն օրէնքի 10. յօդուածին համաձայն, ամէն պաշ-

¹⁹⁵ Պայքար, 21.VIII. 1924:

¹⁹⁶ Սախո Չէթինօղլուի անձնական արխիւ՝ Յակոբ Հանճեանի 19.07.1924 թուակիր անցագիրը (Յաւելուած 1) :

¹⁹⁷ Macar E., նշծ.աշխ., էջ171:

¹⁹⁸ Գոյումճեան Լ., Երթելէկի նոր հրահանգին շուրջ, Արեւելք, 29.II.1932:

տօնեայ կ'ունենայ իր վարքը (կենսագրական) ցոյց տուող պահարան, ուր կ'արձանագրուի անպայման դաւանանքն ու ազգութիւնը: Վարքագրին մէջ այս կարգի բացատրութեանց գոյութիւնը կրնայ մեկնաբանուիլ, թէ տարբեր ազգութենէ եւ դաւանանքէ անձեր կ'ընդունուին որպէս պաշտօնեայ, բայց իրականութիւնը բոլորովին տարբեր կ'ըլլայ¹⁹⁹: Փոքրամասնութեանց անդամները միակուսակցական շրջանին հազուադիւս բացառութեամբ, դուրս կը ձգուին պաշտօնական ասպարէզներէ, իսկ ամբողջութեամբ սպայական պաշտօնէն²⁰⁰: Պոլսահայ լրագրող Յակոբ Սվասլեան բաղդատելով Կայսրութեան եւ Հանրապետութեան շրջանները, կ'արտայայտուի հետեւեալ կերպով. «Կը պատմուի, թէ Օսմանեան Կայսրութեան շրջանին Հայերը եղած են կառավարիչներ, փաշաներ: Կ'ուզեմ հարցնել, թէ ինչո՞ւ Հանրապետութեան շրջանին չէ եղած այսպիսի բան մը: Արդեօ՞ք Կայսրութեան շրջանի Հայերը ինչպիսի եւ ընդունակ էին, իսկ Հանրապետութեան շրջանինները՝ յիմար»²⁰¹:

Միակուսակցական շրջանին փոքրամասնութիւնները արգելքներու կը բախին նաեւ քաղաքական իրաւունքներու գործածութեան եւ հասարակական պաշտօններ ստանձնելու միջոցին, ինչպէս նաեւ հարցեր կ'ապրին իրենց զինուորական ծառայութեան ընթացքին: Փոքրամասնութեանց զինուորական ծառայութեան հարցը կը սկսի «Թանգիմաթ»ով: Մինչեւ 1839 փրկագին (ճիզլէ) վճարելով, զինուորական ծառայութենէ զերծ մնացող փոքրամասնութիւնները կը պարտաւորուին զինուորագրուիլ, երբ «Թանգիմաթ»ը կը նախատեսէ բոլոր հայատակներու միջեւ հասասարութիւն:

¹⁹⁹ Okutan Ç., նշծ.աշխ., էջ 140:

²⁰⁰ Յառաջ, 12.11.1938:

²⁰¹ Kılıç Ş., Biz ve Onlar, İstanbul, 1992, s.65.

Պետութիւնը 1861-ին «Պետէլ ի Ասգերի» անուան տակ պաշտպանութեան տուրք մը կը կիրարկէ եւ կը յայտարարուի թէ փոքրամասնութիւնները գերծ են զինուորական ծառայութենէ, որ կը շարունակուի մինչեւ 1908:

«Բ. Մէշրութիյէ»ով (Սահմանադրութեամբ) կրկին կ'որոշուի փոքրամասնութեանց համար զինուորական ծառայութիւն եւ 1909-ի աշնան ոչ-խալամներ կը սկսին զինուորագրուիլ:

Ա. Աշխարհամարտին փոքրամասնութիւնները ռազմաճակատէն հեռու կը բռնուին եւ կը գործածուին կազմուած «բանուորական գումարտակ»ներու մէջ: Քեմալական վարչակարգը փոքրամասնութեանց առջեւ կը փակէ Զինուորական Կաճառի (Ազատեմի) եւ Ռազմական դպրոցներու դռները եւ Սպայական ասպարէզը կ'արգիլուի անոնց²⁰²:

Միակուսակցական շրջանին կանոնաւոր կերպով զինուորագրուող փոքրամասնութեանց վերաբերեալ հարցը կը ծագի 1939-ին: Պետութիւնը գործադրութեան կը դնէ փոքրամասնութեանց համար անզէն զինուորութիւն: Այսպէս անոնք իրենց զինուորական ծառայութիւնը կը մատուցեն մէկ ու կէս տարի, որպէս սպաներու ծառայութեան տրուած զինուորներ: Կարելի կ'ըլլայ նաեւ փրկագին վճարելով միայն վեց ամիս ծառայութիւն կատարել²⁰³:

Միակուսակցական շրջանին կառավարութեան կողմէ քաջալերուած ճնշումներ կը կատարուին «Իրաւաբանական Ուսանողաց Միութեան» եւ անոր աջակցող «Թիւրք Օճաղը»ներուն կողմէ, որոնք «Քաղաքացի թրքերէն խօսէ» վերտառութեամբ կարմիր գոյնով

²⁰² Okutan Ç., նշծ. աշխծ, էջ 131-134:

²⁰³ Նոյն տեղէն, էջ 136: 1941-ին, նախապէս իրենց զինուորական ծառայութիւնը մատուցած փոքրամասնութիւնները կրկին զինուորական ծառայութեան կը կանչուին, որ կ'անուանուի 20 դասակարգ պահեստիներ (20 Kur'a ihtiyatlar):

նշանատախտակներ կը կախեն շոգենաներուն եւ հանրակառքերուն մէջ եւ կը յարձակին տարբեր լեզուով խօսողներուն վրայ²⁰⁴: Փոքրամասնութիւնները կը ջանան համակերպիլ այս կացութեան: 1928-ին Պոլսոյ մէջ կը կազմուի ընկերութիւն մը «Ազգային Մշակոյթի Միութիւն» անունով, որուն նպատակը կ'ըլլայ երկրին մէջ Թուրք մշակոյթին զարկ տալ եւ առողջ ձուլում մը ապահովել զանազան տարրերու միջեւ: Միութեան վարչութիւնը կը բաղկանայ 22 անձերէ, որուն նախագահը կ'ըլլայ «Ճումհուրիյէթ» օրաթերթի խմբագրապետ եւ Մենթէշէի երեսփոխան Եունուս Նատի Պէյ: Մոնիզ Գոհէն (Թէքին Ալփ), որ մօտիկ աշխատակիցն էր Զիյա Կէօքալփի²⁰⁵ եւ համաթրքական շարժման ամենահեղինակաւոր դէմքերէն մէկը, 1928-ին կը հրատարակէ «Թրքացում» անուն իր աշխատութիւնը (մշակոյթի մասին տեղեկագիր մը), որուն մէջ Թուրքիոյ Հրեայ քաղաքացիներուն կ'ուղղէ նոր տասնաբանեայ մը որպէսզի անոնք մասնակից ըլլան Թուրք ազգային միութեան հիմը նկատուած «հասարակաց խիղճ»ին:

Այս տասը պատուէրներն են.

1. - Անունդ թրքացուր,
2. - Թրքերէն խօսէ,
3. - Սինակոկներուն (հրեաներու աղօթատեղի) մէջ ալօթքներուդ գոնէ մէկ մասը թրքերէն ըրէ,
4. - Դպրոցներդ թրքացուր,
5. - Չաւակներդ պետական վարժարան դրկէ,
6. - Երկրին գործերուն մասնակցէ,

²⁰⁴ Յառաջ, 2.III.1928:

²⁰⁵ Բանթուրքիզմի եւ բանիսլամիզմի զաղափարախօս Զիյա Կէօքալփի զաղափարները տեսլական հիմք կը հանդիսանան երիտթուրքերու համար իրագործելու հայերու ցեղասպանութիւնը:

7. - Թուրքերուն հետ յարաբերութիւն հաստատել,
8. - Համայնքի հոգեբանութիւնը արմատախիլ ըրել,
9. - Ազգային տնտեսութեան ասպարէզին մէջ մասնաւոր պարտականութիւններ ստանձնել,
10. - Իրաւունքդ զիտցիր²⁰⁶:

²⁰⁶Aktar A., նշծ.աշխ., էջ 130:

ՀՐՕՆԻՔԱՅԻ ՂԱՏԸ²⁰⁷

Պոլսոյ յունական «Հրօնիքա» թերթին 24, 25, 26 եւ 27 Փետրուար 1929 թուակիր համարներուն մէջ հրատարակուած «Անատօլոյ պարտութենէն վերջ, ի՞նչպէս իրականացաւ յունական յեղափոխութիւնը եւ ի՞նչպէս յաջողեցաւ» խորագրեալ յօդուածաշարքը արձագանգ կը գտնէ թրքական թերթերուն մէջ եւ պատճառ կը հանդիսանայ մեծ հակազդեցութեան:

6 Մարտ 1929-ի «Իգտամ» թուրք թերթը, թրքերէնի կը թարգմանէ «ակրիոթերա» բառը պարունակող հետեւեալ հատուածը, նշելով որ թրքութիւնը կը նախատէ. «Պատերազմի ընթացքին, երբ մենք կը փախչէինք, Ասիայէն եկող թուրքերը վայրի գազաններու նման կը հետապնդէին մեզ: Իզմիրի մայր հայրենիք չվերադառնալը կը նշանակէ թէ քաղաքակրթութիւնը կը դիմէ դէպի Արաբական թափառիկ ցեղապետութիւն»:

«Ճումհուրիէթ» օրաթերթը քուրջ կ'որակէ «Հրօնիքա» թերթը եւ իր գրութիւններով թիրախի կը վերածէ ամբողջ Յոյն համայնքը: Ոստիկանութիւնը քննութիւն կը կատարէ ու կ'որոշէ թէ «ակրիոթերա» բառը կը նախատէ թրքութիւնը²⁰⁸: «Հրօնիքա» թերթը կը փակուի եւ կը ձերբակալուի թերթի պատասխանատու տնօրէնը՝ Տիկին Էլէնի²⁰⁹:

Թուրք թերթերը ուրախութեամբ կ'ողջունեն որոշումը եւ ազդարարութիւններ կ'ուղղեն փոքրամասնութեանց թերթերուն: Այս առթիւ «Ճումհուրիէթ» կը նշէ, որ փոքրամասնութեանց թերթերը պետք չէ երբէք մոռնան թէ լոյս կը տեսնեն Թուրքիոյ հողերուն

²⁰⁷ Okutan M.Ç., Tek Parti Döneminde Azınlık Politikaları, İstanbul, 2004, s. 243-246.

²⁰⁸ Cumhuriyet, 3.III.1929.

²⁰⁹ Son Saat, 5.III.1929, İkdam, 5.III.1929.

վրայ: «Հրօնիքա»-յի արտօնատերը Հաճօփուլօ Յոյն մըն է» եւ նման արտայայտութիւններով ամբաստանեալի կը վերածուի Յոյն փոքրամասնութիւնը, որ զգալի ազդեցութիւն կը կրէ իր վրայ եւ Յոյն համայնքը մեծ բազմութեամբ կը հետեւի Տիկիին Էլէնիի դատին²¹⁰:

«Հրօնիքա»-յի դատը կը սկսի 5 Մարտին, ուր Տիկիին Էլէնի թրքերէն չգիտնալով, թարգմանի միջնորդութեամբ կ'արտայայտէ իր գաղափարները: Ան կը յայտնէ, թէ «ակրիոթերա» բառը կը նշանակէ փառասիրութիւն եւ ոչ թէ վայրի: Կը դիմեն յունական պատմութեան փրօֆեսօր Ֆատըլ Նազմի Պելիին, որ յստակ պատասխան մը չի կրնար տալ:

Հոս պէտք է նշել, թէ Տիկիին Էլէնիին չի կրնար գտնել ռեւէ փաստաբան՝ նոյնիսկ Յոյն, որ ստանձնելու պատրաստ ըլլայ իր պաշտպանութիւնը: Այս կացութիւնն արդէն իսկ կը փաստէ, թէ այս դատը որքան բացասական ազդեցութիւն կը գործէ Յոյն համայնքի վրայ: Դատարանը որոշում կը կայացնէ, թէ Տիկիին Էլէնի յանցաւոր է²¹¹: Վճռաբեկը կը բեկանէ որոշումը եւ 17 Նոյեմբեր 1929-ին որոշում կը կայանայ, թէ Տիկիին Էլէնի յանցաւոր չէ, ուստի ազատ կ'արձակուի²¹²:

Միակուսակցական շրջանին Թուրքիոյ Հանրապետական կառավարութիւնը երբեք չէ վստահած փոքրամասնութեանց եւ հակառակ որ պաշտօնական բնագրերու մէջ կ'ընդունուին որպէս քաղաքացիներ, կարելի է ըսել թէ միշտ կը գործադրուի խտրական քաղաքականութիւն՝ զանազան մակարդակներով: Այս անվստահութիւնը կարելի է տեսնել նաեւ թերթերու սիւնակներուն մէջ: Օրինակ՝ 23 Մարտ 1929-ին «Սօն Սաաթ» օրաթերթը կը գրէ, թէ

²¹⁰ İkdam, 6.III.1929.

²¹¹ İkdam, 21.III.1929.

²¹² İkdam, 17.XI.1929.

«պետք չէ վստահիլ Ֆեների Յունաց Պատրիարքարանին, որովհետեւ ան՝ Պոնտոսական գործունէութեանց մէջ է արդէն»: 12 Փետրուար 1930-ին «Փոլիթիքա» օրաթերթը կ'ազդարարէ, թէ «Հայոց Պաշտօնականութիւնը»²¹³ կը հետաքրքրուի ոչ միայն կրօնական այլ նաեւ աշխարհիկ գործերով»²¹⁴:

«Հրօնիքայի» դատէն կարելի է եզրակացնել թէ Թուրք օրաթերթերուն անգամ մը եւս առիթ կ'ընծայուի իրենց անվստահութիւնն ու թշնամանքը արտայայտելու ազգային փոքրամասնութեանց հանդէպ: Այս արտայայտութիւններու պատճառաւ է, որ Յոյն համայնքը չի համարձակիր ամենավոքոր բացատրութիւն մը նոյնիսկ տալ այս նիւթի շուրջ եւ կը նախընտրէ լուռ մնալ:

Թրքացման քաղաքականութեան տնտեսական հանգրուաններէն մէկն ալ կ'ըլլայ 4 Յուլիս 1932-ին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին մէջ ընդունուած 2007 համար «Թուրքիոյ մէջ Թուրք Հայրենակիցներուն Յատուկ Արհեստ եւ Ծառայութիւններու մասին Օրէնք»ը: Այս օրէնքին համաձայն միայն Թուրք քաղաքացիներուն յատուկ կ'ըլլան հետեւեալ արհեստները՝ առետուրի միջնորդ, սափրիչ, նկարահան, երաժիշտ, հագուստ եւ կօշիկ արտադրող, սակարանի պաշտօնեայ, թարգմանիչ, շինարար, շարժավար, շարժավարի օգնական, անասնաբոյժ, տարրաբան, երկաթագործ, ատաղձագործ, դերձակ եւլն: Այս օրէնքին գործադրութենէն ազդուող 9000 Յոյներ 1934-ին Յունաստան կը գաղթեն²¹⁵:

Կառավարութիւնը 1933 Յունիսին, օրինագիծ մը կը պատրաստէ՝ փոքրամասնութեանց ներքին գործերը վարելու համար, որով

²¹³ Կառավարութիւնն ու Թուրք մամուլը վարչային հեղինակութենէ զրկուած Հայոց ու Յունաց Պատրիարքները այսպէս կը կոչեն երկար տարիներ:

²¹⁴ Okutan M.Ç., նշծ.աշխ., էջ 127:

²¹⁵ Okutan M.Ç., նշծ.աշխ., էջ 220-221:

աւելի կը կրճատուին այն իրաւասութիւնները, զորս կը վայելէին ոչ-իսլամ փոքրամասնութիւնները (Հայ, Յոյն եւ Հրեայ): Ըստ այս օրինագիծին հիւանդանոցներն ու դպրոցները կը կառավարուին «Բարեսիրական Ընկերութեանց Օրէնք»ին համաձայն պատկան մարմիններու ձեռքով, կը ջնջուին Ազգային եւ Քաղաքական ժողովները, Ուսումնական եւ Թաղային Խորհուրդները, դպրոցական Հոգաբարձութիւնները: Պատրիարքներն ու Խախամապետն ալ կը դառնան պարզապէս հոգեւոր հովիւներ: Ապա, ճնշում կը գործադրուի որպէսզի փոքրամասնութեանց իշխանութիւնները ինքնաբերաբար ձեռնարկեն համայնքային գործերը կառավարութեան տեսակէտին պատշաճեցնելու²¹⁶: Փոքրամասնութեանց համայնքային մարմինները իրենց բարոյական եւ կրօնական բովանդակ կապը պահելով հանդերձ Պատրիարքարաններու եւ Խախամապետարանին հետ, մատակարարական տեսակէտէ ըստ 5404 թիւ օրէնքի տրամադրութիւններուն, կ'ենթարկուին Վազըֆներու վարչութեան հակակշռին:

²¹⁶ Յառաջ, 18 .IX.1934:

ՇԷՅԻՆ ՍԱՅԻՏԻ ԵՒ ՏԷՐՍԻՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հանրապետության շրջանին Քիւրտ ազատագրական շարժման երկու կարեւորագոյն արտայայտութիւնները կ'ըլլան Շէյխ Սայիտի (1925) եւ Տէրսիմի (1937) ապստամբութիւնները, որպէս պատասխան իրենց հանդէպ կիրարկուած ձուլման եւ մշակոյթի ոչնչացման քաղաքականութեան:

1925 Փետրուար 13-ին Շէյխ Սայիտի ապստամբութեամբ կը սկսի «Քիւրտ ազատագրական շարժումը», որ ծնունդ կ'առնէ Էրկանի գաւառի Փիրան գիւղին մէջ Թուրք ժանտարմաներու եւ Շէյխ Սայիտի գործակիցներուն միջեւ բախումներով:

Ապստամբութիւնը շուտով կը տարածուի ամբողջ շրջանին մէջ եւ բանակը, որ ապստամբութեան արգելք ըլլալու պարտականութիւն ստանձնած է, 25 Փետրուարին կը պարտաւորուի ետ քաշուիլ դէպի Տիգրանակերտ եւ յաջորդ օր արդէն ապստամբողներուն ձեռք կ'անցնի Էլազըղը: Հակառակ որ 21 Փետրուարին Էլազըղ, Մուշ, Կէնչ, Էրկանի, Տէրսիմ, Տիգրանակերտ, Մարտին, Ուրֆա, Սիվերէկ, Սղերդ, Բաղէշ, Վան եւ Հաքքարիի մէջ արդէն յայտարարուած է պաշարման վիճակ, Թուրք կառավարական ոյժերը չեն յաջողիր գերակայութիւն ձեռք բերել եւ Ֆէրիի Օգեարի գլխաւորած կառավարութիւնը կը հրաժարի:

3 Մարտին վարչապետի պաշտօնը կը ստանձնէ Իսմէթ Փաշա (Ինէօնի) եւ յաջորդ օրն իսկ Խարբերդի մէջ Արեւելեան, իսկ Էնկիւրիի մէջ Արեւմտեան «Անկախութեան Դատարաններ» կը կազմուին, որոնք կախաղան կը հանեն բազմաթիւ Քիւրտեր եւ կը տեղահանեն հազարաւոր Քիւրտ ընտանիքներ: Ազգային Մեծ ժողովի մէջ կ'ընդունուի Իսմէթ Փաշայի կողմէ 21 Մարտին տրուած գրաւոր առաջարկը, ըստ որուն վճռաբեկի ճամբան կը փակուի ամ-

բաստանեալներու առջեւ եւ մահապատիժի համար բաւարար կը նկատուի ունէ հրամանատարի վաւերացումը: Ապատամբութեան ճակատագիրը կը փոխուի 7 Մարտի զիշերը, երբ Շէյխ Սայիտի ոյժերը Տիգրանակերտի յարձակումի ընթացքին պարտութիւն կը կրեն կառավարական ոյժերէն: Շէյխ Սայիտ եւ իր խումբը 14-15 Ապրիլի զիշերը Վարթօ երթալով անձնատուր կ'ըլլան: Իրենց դատը կը սկսի 26 Մայիսին եւ մահապատիժը կը գործադրուի 28-29 Յունիսի զիշերը²¹⁷:

1927-ի ամբողջ տարին Թուրք կառավարութիւնը կը զբաղի քրտական խնդիրով: Չանգուածային տեղահանութիւններ կը սկսին արեւելեան նահանգներէն դէպի Անատոլուի թրքաշատ կեդրոնները: Էնկիւրիի կառավարութիւնը կը հրատարակէ «Աւատապետութիւնը ջնջելու օրէնք» մը, որպէսզի բնաջնջելով ցեղապետները (աշիրէթապետ), արմատական կերպով վերջ տայ անջատողական շարժման: Այս օրէնքով ճորտերը կը տիրանան ցեղապետներու հողերուն:

1927-ին հակաքիւրտ քաղաքականութեան զուգընթաց իբրեւ հիմնական սկզբունք, կը հետապնդուի Արեւելեան նահանգները թրքացնելու քաղաքականութիւն երկու կերպով. արտասահմանէն Թուրքեր տեղաւորելով արեւելեան նահանգները եւ թրքացնելով տեղացի Քիւրտ բնակչութիւնը: Յունուարի վերջին օրերուն Ներքին Գործոց նախարար Ճէմիլ Պէյ մամուլի միջոցով կը յայտարարէ, թէ իրենց 1927-ի ծրագրին մէջ կը գտնուի Արեւելեան նահանգներուն մէջ 30000 Թուրք գաղթականներ զետեղելու գործը:

²¹⁷ Köker O., Kürt isyanlarının liderleri nasıl yargılandı, nasıl asıldı, Toplumsal Tarih, Sayı 67, Temmuz 1999, İstanbul, s. 4-5.

Արեւելեան Անկախութեան դատարանը երկու տարի գործելէ վերջ կը լուծարուի 28 Փետրուարին իսկ քիչ ետք նաեւ Արեւմտեանը²¹⁸:

Քիւրտ յեղափոխութիւնը որպէս կազմակերպեալ ապստամբութիւն կը ձախողի, սակայն վճռականապէս չի վերջանար: 21 Մարտ 1937-ի զիշերը Տէրսիմ (Թունճէլի)-Էրզինճան ճանապարհին վրայի Փահ գաւառակի փայտաշէն կամուրջին հրկիզմամբ՝ կը սկսի «Տէրսիմի ապստամբութիւնը»՝ Սէլիտ Բըզայի ղեկավարութեամբ: 4 Մայիս 1937-ին Նախարարական ժողովը Հանրապետութեան նախագահ Մուսթաֆա Քէմալի ալ մասնակցութեամբ կը գումարուի, ուր որոշում կ'ընդունուի ապստամբութեան շրջանի բնակիչները հաւաքաբար փոխադրել ուրիշ վայրեր եւ զիւղերէն յանկարծակի կերպով զենքերն ու մարդիկը հաւաքելով աւերել զիւղերը: Սպըստամբութեան առաջին ամիսներուն, երբ ապստամբները հարուածներ կը հասցնեն զինուորական միութիւններուն, բանակը միայն յաջողութիւն կ'արձանագրէ սաւառնորդներու օդային յարձակումներով, որոնցմէ մէկն է Մուսթաֆա Քէմալի որդեգիր գաւակը Մապի-հա Կէօքչէն²¹⁹: Յաջորդող ամիսներուն կացութիւնը կը փոխուի եւ զինուորական միութիւնները գերակայութիւն ձեռք կը ձգեն: Կատարուած խուզարկութիւններու պատճառաւ ժողովուրդը լքելով զիւղերը կ'ապաստանի քարայրներու մէջ, բայց շատեր հոն կը մահանան ոմբակոծումներու պատճառաւ: Բազմաթիւ Քիւրտ ապըստամբներ կը ձերբակալուին: Սէլիտ Բըզայի որդիներէն մէկը կը մահանայ, միւսը կը ձերբակալուի, ինքն ալ 10 Սեպտեմբերին Էրզինճանի մէջ անձնատուր կ'ըլլայ: Սէլիտ Բըզայի, ինչպէս նաեւ բազմաթիւ աշիրէթապետներու մահապատիժը կը գործադրուի 15 Նոյեմբերին Էլազըղի մէջ²²⁰:

²¹⁸ Յառաջ, 11.1.1928:

²¹⁹ Իր մահուրնէ վերջ յայտնի կը դառնայ, որ Հայկական ծագում ունի:

²²⁰ Köker O., նշծ.աշխ., էջ 6-7:

ԷԼԶԱ ՆԻԷԿՈՅԻ ԴԵՊՔԸ

Թուրքիոյ Հրեաները, որոնք շարաւիղներն են Սպանական հաւատաքննութենէն ճողոպրած տարագիրներուն, Կ. Պոլիս ապաստանած են 1492-ին: Կը խօսին հրեական սպաներէն մը (ladino), բայց կը խօսին նաեւ ֆրանսերէն, որ իրենց դպրոցներուն մէջ ընդունուած է իբրեւ ուսուցման լեզու²²¹:

Թուրքիոյ Հանրապետութեան Միակուսակցական շրջանին Թուրքիոյ Հրեաներուն համար ճակատագրական արդիւնք կ'ունենայ «Էլզա Նիէկոյի դէպքը»: Թուրք փաշայի մը 42 տարեկան տղան՝ Օսման Բաթըլայ կը սիրահարի 22 տարեկան Հրեայ աղջկան մը՝ Էլզա Նիէկոյին եւ կ'առաջարկէ ամուսնութիւն: Սակայն աղջիկը հաւանութիւն չի յայտնէր Թուրքին այս առաջարկին եւ կը նշանուի Հրեայ երիտասարդի մը հետ: 17 Օգոստոս 1927-ին, երբ Էլզա իր քրոջ հետ գործէն տուն կը վերադառնայ, Օսման զայրացած՝ կամուրջին վրայ գազանաբար կը սպաննէ Էլզա Նիէկոն ու կը վիրաւորէ քոյրը: Այս սպաննութիւնը մեծ գրգռութիւն կը յառաջացնէ Պոլսոյ Հրեաներուն մէջ եւ ցոյցեր կը կատարեն աղջկան յուղարկատրութեան օրը: Այս առթիւ կը ձեռքարկուին ու դատարան կը յանձնուին բազմաթիւ Հրեաներ եւ Թուրք թերթերը (Ճումհուրիէթ, Միլլիէթ, Սօն Մաաթ եւ Վազըթ) բուռն յարձակումի մը կը ձեռնարկեն Թուրքիոյ Հրեաներուն դէմ²²²:

29 Օգոստոս 1927-էն սկսեալ Հրեաներուն կ'արգիլուի երկրին մէջ ազատ երթելու: Այս ձեռով Հրեայ վաճառականներուն տնտեսական գործառնութիւններուն ալ արգելք դնելով նպատակ կը հետապնդուի նաեւ Յոյն, Հրեայ եւ Հայերէ պարսպուած ոլորտները լեցնել Թուրք վաճառականներով: Զ'արտօնուի քաղաք վերադառնալ որեւէ պատճառով Պոլիսէն դուրս գտնուող Հրեաներուն: Այս կիրա-

²²¹ Ռեվիլլը Լուի, Հրեաները, Յառաջ, 16.II.1938:

²²² Okutan M.Ç., նշծ.աշխ., էջ 239:

րումը թէև կարճ կը տևէ, բայց երթեւեկելու արգելքը կը շարունակուի եւ «երթեւեկելու փաստաթուղթ» առնելու պարտաւորութիւն կը բերուի, սակայն շատ դժուար կ'ըլլայ ձեռք բերել զայն:

Այս կիրարկումը, որ բոլորովին ներհակ է Լօզանի պայմանագրի 38. յօդուածին²²³ վերջ կը գտնէ միայն Հրեայ համայնքէն կազմուած յանձնախումբի մը Անգարայի պաշտօնական մարմիններու տուած այցելութենէն վերջ²²⁴:

²²³ Ոչ-իսլամ փոքրամասնութիւնները պիտի օգտուին բոլոր հպատակներուն նման ազատ երթեւեկելու եւ զաղթելու իրաւունքէն (Թուրք կառավարութեան կողմէ ազգային ինքնապաշտպանութեան նպատակով եւ կամ հասարակութեան կարգապահութեան համար երկրի ամբողջութեան կամ մէկ մասին վրայ միջոցառումներ կատարելու իրաւունքէն դուրս մնալու պայմանաւ):

²²⁴ Okutan M.Ç., նշծ.աշխ., էջ 240-241:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱՍՏԱՆԵԱԼՆԵՐՈՒ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՕՐԷՆՔՆ ՈՒ ԹՐԱԿԻՈՅ ԴԷՊՔԵՐԸ

22 Մարտ 1934 թուական եւ 2393 համար օրենքով Թրակիոյ մէջ կը կարգուի Քննիչներու Ընդհանուր յանձնախումբ մը, որմէ վերջ Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովը 14 Յունիս 1934-ին կ'ընդունի 2510 համար «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Բնակեցման Օրէնք»ը, որ 21 Յունիս 1934-ին պաշտօնաթերթին մէջ հրատարակուելով գործադրութեան կը դրուի: Այս օրէնքին համաձայն Ներքին Գործոց նախարարութեան կողմէ պատրաստուած եւ Նախարարներու Խորհուրդէն վաւերացուած քարտետով Թուրքիա բնակեցման տեսակէտէ երեք շրջանի կը բաժնուի.

Թիւ 1 շրջան. - Այն վայրերն են, ուր կը նախատեսուի խտացնել թրքական մշակոյթին տէր բնակչութիւն:

Թիւ 2 շրջան. - (ձուլման ենթարկուելիք շրջան) Այն վայրերն են, ուր կը նախատեսուի փոխադրել ու բնակեցնել այն բնակչութիւնը, որուն թրքական մշակոյթը իւրացնել տալու նպատակ կը հետապընդուի:

Թիւ 3 շրջան. - (արգիլուած գօտի) Այն վայրերն են, որոնք բնակեցման համար արգիլուած վայրեր կը նկատուին զանազան պատճառներով (տեղական, առողջապահական, տնտեսական, մշակութային, զինուորական եւ կարգապահական):

Ինչպէս կը հասկցուի այս յօդուածէն ալ «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Բնակեցման Օրէնք»ին մէջ կարեւորագոյն բանը «Թուրք մշակոյթը իւրացնել»ը կ'ըլլայ:

Օրէնքի 7. յօդուածը կը բաղկանայ հետեւեալ հատուածներէն.

ա - Թուրք ցեղէ այն գաղթականներն ու ապաստանեալները, որոնք գրաւոր կերպով կը յայտնեն թէ կառավարութենէն բնակեցման ձգնութիւն չեն ուզեր, ազատ կը ձգուին Թուրքիոյ մէջ իրենց փափաքած տեղը հաստատուելու, իսկ անոնք որոնք կառավարու-

թենէն օգնութիւն կ'ուզեն պարտաւոր են անոր ցոյց տուած տեղերը երթալու: Առանց արտօնութեան տեղափոխուողները կը գրկուին հպատակութենէ:

բ - Թուրք ցեղի չպատկանողները եթէ նոյնիսկ օգնութիւն չպահանջեն կառավարութենէն, պարտաւոր են անոր ցոյց տուած տեղը հաստատել իրենց բնակութիւնը եւ առանց կառավարութենէն արտօնութիւն առնելու չհեռանալ այդ տեղէն: Առանց արտօնութեան ուրիշ տեղ գացողները առաջին անգամուն կը վերադարձուին իրենց տեղը, իսկ կրկնութեան պարագային Նախարարներու Խորհուրդին որոշումով, թրքական հպատակութենէ կը հանուին²⁵:

9. յօդուածը Ներքին Գործոց Նախարարին լիազօրութիւն կու տայ, Թուրքիոյ հպատակ շրջուն գնչուները եւ Թուրք մշակոյթին չյարող վաչկատունները, հաւաքաբար չըլլալու պայմանաւ ցրուելու եւ բնակեցնելու գիւղաքաղաքներու եւ Թուրք մշակոյթի տէր գիւղերու մէջ, հեռացնել սահմանազուխներէն այն անձերը, որոնց լրտեսութեան մասին կասկածներ կան եւ ազգային սահմաններէն դուրս հանել օտարահպատակ թափառական գնչուները եւ այն վաչկատունները, որոնք չեն իւրացուցած Թրքական մշակոյթը:

Օրէնքի 11. յօդուածի ա. հատուածով կ'արգիլուի հաւաքաբար նոր գիւղ կամ թաղ հիմնել, աշխատատրական կամ մշակութային խումբեր կազմել կամ արհեստ մը իր ազգակիցներուն փոխանցել՝ բոլոր անոնց, որոնց մայրենի լեզուն թրքերէն չէ: Իսկ բ. հատուածով Ներքին Գործոց նախարարը պարտաւոր կ'ըլլայ զինուորական, քաղաքական, գործնական եւ կարգապահական պատճառներով, Նախարարներու Խորհուրդի որոշումով միջոցներ (հաւաքաբար չըլլալու պայմանաւ, ներառեալ է նաեւ ուրիշ բնակավայրեր փոխադրել կամ քաղաքացիութենէ հեռացնել) ձեռնարկել, այն անձերուն մասին, որոնք Թուրք մշակոյթը չեն իւրացուցած կամ Թուրք

²⁵ Նոր Լուր, 11.VII.1934:

մշակոյթը իւրացուցած ըլլալով հանդերձ թրքերէնէն տարբեր լեզուներ կը խօսին:

Այսպէս՝ Պետութեան սահմաններէն ներս ազգային-մշակութային միութեան համար փոքրամասնութեանց ձուլման առընթեր, գործադրուած տարբեր միջոց մըն ալ կ'ըլլայ գաղթի ու բնակեցման քաղաքականութիւնը: 1929-1934 տարիներուն Փոքր Ասիոյ գիւղերուն մէջ, տեղական իշխանութիւնները Հայ բնակիչներուն կը ճնշեն, որպէսզի անոնք գաղթեն կեդրոնական քաղաքներ: Հայ գիւղացիները չեն կրնար համակերպիլ քաղաքային միջավայրին, չեն յաջուիր ապահովել իրենց ապրուստը ու մեծ մասամբ պարտաւոր կ'ըլլան գաղթել Սուրիա եւ իրենց հողերը Պետութեան կողմէ կը տրամադրուին Պալքաններէն եկող Թուրքերուն²²⁶:

Գերմանիոյ մէջ 30 Յունուար 1933-ին Նացիներու գործի գլուխ գալէն յետոյ Թրակիոյ մէջ հետզհետէ կը սաստկանայ հակահրեական հոսանքը:

«Գաղթականներու եւ Ապաստանեալներու Բնակեցման Օրէնք»ի գործադրութեան թուականէն քանի մը օր վերջ, 24 Յունիս 1934-ին, Հրեայ քաղաքացիները նախ Չանաքքալէ, ապա 30 Յունիսին Էտիւրնէ, Քըրքլարէլի, Թէքիրտաղ քաղաքներուն եւ այս քաղաքներուն կապուած գիւղաքաղաքներուն, այսինքն՝ բոլոր Թրակիոյ մէջ, շրջանէն հեռացնելու նպատակով կ'ենթարկուին սպառնալիքներու, ընկերատնտեսական արգելքներու ու բռնութիւններու:

Բազմանդամ խումբերու կողմէ կը թալանուին անոնց տուներն ու գործարանները: Այս դէպքերը, որ պատմութեան մէջ կը յիշուին որպէս «Թրակիոյ դէպքեր» եւ Հրեաներուն կողմէ կ'անուանուին «Ֆորթունա», կը հակակշռուին միայն Յուլիսի 5-ին, երբ վարչապետ Իսմէթ Ինէտիւ Ազգային Մեծ ժողովի մէջ իր խօսակցութեան ընթացքին կը պախարակէ դէպքերը²²⁷:

²²⁶ Güven D., Cumhuriyet Dönemi Azınlık Politikaları ve Stratejileri Bağlamında 6-7 Eylül Olayları, İstanbul, 2005, s.131.

²²⁷ Bali R., 1934 Trakya Olayları, İstanbul, 2008, s.1.

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ

Չեխոսլավաքիոյ Փրակա քաղաքը ծնած Աւստրիացի գրող, ազգութեամբ Հրեայ Ֆրանց Վերֆելի կողմէ 1933 Նոյեմբերին Աւստրիոյ մէջ կը հրատարակուի «Մուսա Լերան Քառասուն Օրը» վեպը, որուն նիւթը 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնն է: Վեպի հրատարակութեան յաջորդող օրերուն հակահոսանք մը կը ստեղծուի՝ նախ Աւստրիոյ եւ Չուիցերիոյ, ապա Թուրքիոյ մէջ: Այս հակակրանքը գագաթնակէտին կը հասնի, երբ 1934-ին օրակարգի նիւթ կը դառնայ վեպը ֆիլմի վերածելու ծրագիրը:

Թուրք թերթերը լայն սիւնակներ կը տրամադրեն նիւթին՝ յառաջ քաշելով, թէ անհիմն են Թուրքերու դէմ կատարուած ամբաստանութիւնները²²⁸: Մամուլի արծարծմամբ նիւթը կը ներկայացուի իբրեւ «Հայ-Հրեայ միասնական դաւադրութիւն մը՝ Թուրքիոյ դէմ»: Թերթերը զանազան յօդուածներով կը դրդեն երկու փոքրամասնութիւնները, հակազդելու վեպին եւ անոր ֆիլմի վերածման գործին: «Ճումհուրիէթ» օրաթերթի խմբագիր Եունուս Նատի իր 12 Դեկտեմբեր 1935 թուակիր խմբագրականով նոյնիսկ կը յիշեցնէ Թուրքիոյ քաղաքացի Հայ եւ Հրեաներուն՝ կարգի հրաւիրել ԱՄՆ-ու կառավարութիւնը, մանաւանդ որ երկու շաբաթուան ընթացքին հոն զիրքէն 35000 օրինակ կը վաճառուի²²⁹: Չ'ուշանար Թուրք թերթերու, ինչպէս նաեւ կառավարութեան թելադրած հակազդեցութիւնները: Հրեաները զայրոյթ եւ խոր ատելութիւն կ'արտայայտեն Վերֆելի դէմ եւ կը յայտնեն, թէ ան Հրեայ հասարակութեան չի պատկանիր: Յաջորդող օրերուն, Պոլսահայոց Վարչական Ժողովը եւս կը պարտաւորուի նման որոշում մը կայացնել եւ 14 Դեկտեմբեր

²²⁸ Bali R., Musa Dağ'da 40 Gün'ün Hikayesi, Tarih ve Toplum, Şubat 1998, s.21-23.

²²⁹ Bali R., Musa'nın Evlatları Cumhuriyet'in Yurttaşları, İstanbul, 2001, s. 128.

1935-ին նիստ գումարելով կ'որոշէ Պոլսահայոց բողոքն ու ցասումը յայտնել «Մուսա Լերան Քառասուն Օրը» ֆիլմին առթիւ: Յաջորդ օրն իսկ Հայ մտաւորականներու նախաձեռնութեամբ, Ազգային երեսփոխան եւ հրապարակագիր-երգիծագիր Աշոտ Քէչեանի, Ոստմնական Խորհուրդի քարտուղար Թորոս Ազատեանի եւ նաեւ ուրիշ ազգայիններու առաջնորդութեամբ եւ Հայ բազմութեան մը ներկայութեամբ Բանկայթիի գերեզմանատան մէջ խարոյկի կը դատապարտուի գիրքը եւ հեղինակին պատկերը, ինչպէս նաեւ կը պախարակուի Հայու անունը շահարկող հեղինակը: Խարոյկը կը վառէ Ազգային երեսփոխան, «Ազդարար» եւ «Նոր Լուր»ի խմբագիրներէն Աշոտ Քէչեան, երբ Լուսաւորիչ երգչախումբը կ'երգէ Հանրապետութեան Քայլերգը: 1936-ին երբ վեպը կը թարգմանուի ֆրանսերէնի, Թուրք թերթերուն մէջ նոյնպէս կը հրատարակուին հակազդող յօդուածներ²³⁰:

Ֆրանց Վերֆելի «Մուսա Լերան Քառասուն Օրը» վեպը թրքերէնի թարգմանուելով կը հրատարակուի 1997-ին Պոլսոյ մէջ «Պէլկէ» հրատարակչութեան կողմէ:

²³⁰ Նոյն տեղէն, էջ 134:

ԵՒ ԱՅԼ ՕՐԷՆՔՆԵՐ...

Երջանի կարելորդ օրենքներին մեկն ալ 2525 թիւ «Մականուննի Օրենք»ն է, որ կը հրատարակուի 2 Յուլիս 1934-ին եւ ի գորտու կ'ըլլայ 2 Յունուար 1935-էն սկսեալ:

Այս օրենքին համաձայն Թուրքիոյ բոլոր քաղաքացիները կը պարտադրուին ընտրել մականուն մը, մինչեւ 2 Յուլիս 1936: Այս օրենքով կը ջնջուին ոչ-իսլամ քաղաքացիներու մականուններուն ազգորոշ մասնիկները (եան, եւ, ով, իս, իտիս եւլն)²³¹: Այսպէս կը նախատեսուի անոնց կապերը խզել իրենց ծագման հետ:

8 Փետրուար 1935-ի երեսփոխանական ընտրութիւններու նախընտրական ժողովը կը կատարուի Մուսթաֆա Քէմալի նախագահութեամբ Տօլմապահչէ պալատին մէջ, ուր կ'որոշուի որպէս անկախ երեսփոխան ընդունիլ փոքրամասնութեանց ներկայացուցիչներ²³²: Այսպէս, Տքթ. Ապրէ Վալա (Հրեայ) Նիյտէի, Տքթ. Թափրասս (Յոյն) Անգարայի, Մթամաթ Զիննի (Յոյն) Էսքիշէհիրի եւ Պերճ Քերէստէճեան (Թիւրքեր) Աֆիոն-Գարահիսարի երեսփոխան կ'ըլլան:

«Տարազի Օրենք»ն ալ նոյնպէս փոքրամասնութեանց իրաւունքները սահմանափակող օրենք մը կ'ըլլայ, որ գործադրութեան կը դրուի 13 Յունիս 1935-էն սկսեալ եւ որուն համաձայն ոեւէ կրօնքի եւ դաւանանքի պատկանող կղերականները կրօնական տարազ կրելու իրաւունք կ'ունենան միայն աղօթատեղիներու մէջ եւ արարողութեան ընթացքին: Կառավարութեան կողմէ սքեմ կրելու արտօնութիւն կ'ունենայ ամէն կրօնքէ եւ դաւանանքէ միայն մէկ հոգեւորական: Նախարարներու Խորհուրդը 12 Յունիս 1935-ի նիստին, օրենքին մէջ յիշուած այդ արտօնութիւնը կուտայ՝ Թուրքիոյ Կրօնական Վերատեսուչին, Յունաց, Հայոց եւ Թուրք Օրթոտոքսներու Պատրիարքներուն, Կաթողիկէ Հայոց Արքեպիսկոպոսին, Խախա-

²³¹ Յարաջ, « 9.XII.1934:

²³² Արեւելք, 4.II.1935:

մապետի Փոխանորդին, Հայ Բողոքականներու Կրօնապետին եւ Կաթողիկէ Յոյն Եպիսկոպոսին²³³: Արտօնութեան ժամանակը աւարտելէ վերջ այդ արտօնութիւնը միեւնոյն հոգեւորականին համար վերանորոգելու եւ կամ ուրիշ հոգեւորականի մը տրուելու առաջարկները կ'ըլլան Ներքին Գործոց Նախարարութեան կողմէ, իսկ որոշումը կը տրուի Նախարարներու Խորհուրդին կողմէ²³⁴:

3512 թիւ «Հաւաքականութեանց (Շնկերակցութեանց) Օրէնք»ը կը սկսի գործադրուիլ 1939 Յուլիսին, որ կ'ունենայ տրամադրութիւններ երկրին ոչ-իսլամ ժողովուրդներուն համար: Հետեւաբար փոքրամասնութիւնները կը պարտաւորուին իրենց կազմակերպութիւնները յարմարցնել այդ տրամադրութիւններուն:

Օրէնքը կը հաստատէ ապակեղրոնացման դրութիւնը, որու 39. յօդուածին տրամադրութեան համաձայն «բարեսիրական, կրօնական, ընկերային, առողջապահական, կրթական եւ մշակութային բոլոր հաստատութիւնները կը մատակարարուին աշխարհիկ անձերէ կազմուած մարմիններու կողմէ: Իսկ օրէնքին հրատարակութենէն առաջ կազմուած նոյն տեսակի մարմինները կը պարտաւորուին մէկ տարուան ընթացքին պատշաճիլ պարտադրեալ պայմաններուն²³⁵:

Հայոց Վարչական ժողովը 15 Յուլիս 1939-ին «լուծեալ» կը հռչակէ ինքզինք, իսկ միւս յարանուանութիւնները կը շարունակեն իրենց կրօնական, վարչական, տնտեսական ու մատակարարական գործերը ըստ առաջնոյն:

²³³ Macar E., նշձ.աշխ., էջ 153:

²³⁴ Նոր Լուր, 18.II.1935:

²³⁵ Գույումճեան Լ., Հայ համայնքային անցուղարձեր, Իսթանպուլ, 1950, էջ 29:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԷՆ ՎԵՐՋ

Լոզանի Դաշնագրեն (24 Յուլիս 1923) քանի մը ամիս վերջ՝ 29 Հոկտեմբեր 1923-ին Մուսթաֆա Քեմալի կողմէ կը հռչակուի Թուրքիոյ Հանրապետութիւնը: Նոր պետութիւնը կը ձեւատրէ նոր վարչական համակարգ, որ կը տարբերի Օսմանեան Կայսրութեան վարչական համակարգէն: Այս տարբերութեան պատճառաւ կրկին կը ձեւատրուի նաեւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի վարչական կազմը:

Ի. դարու սկիզբը իր իրաւասութեան ներքեւ շուրջ 20 թեմերու, 2,5 միլիոն ժողովուրդի եւ աւելի քան 2000 եկեղեցիներու տէր Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը²³⁶ Հանրապետութեան առաջին 60 տարիներուն հետզհետէ կը վերածուի միաթեմ հովուապետութեան²³⁷:

Լոզանի Դաշնագրով Հայերը կը դառնան պարզ Թուրք քաղաքացիներ, հետեւաբար ենթակայ՝ երկրին բոլոր օրէնքներուն եւ կառավարական ու ոստիկանական բոլոր տնօրինութիւններուն²³⁸:

Լոզանէն առաջ Պոլսահայ համայնքը մինչեւ «Ազգային Սահմանադրութիւն» իբրեւ ինքնուրոյն հաւաքականութիւն իր կրօնավարչական բոլոր գործերը կը վարէ աւանդական օրէնքներով, ապա՝ «Ազգային Սահմանադրութեան» համաձայն, Պատրիարքներու վերապահուած քաղաքական, վարչական ու կրօնական

²³⁶ Պոլսոյ Պատրիարքութիւնը այժմ ունի վեց վիճակներ, որոնք են՝ Հին Քաղաք, Արեւելեան Պոսֆոր, Արեւմտեան Պոսֆոր, Իշխանաց Կղզիներ, Գաւառ եւ Կրէտէ Կղզի:

²³⁷ Կրօնական կէտնքը Իսթանպուլահայութեան մէջ, Շոդակաթ 1971-1972, Իսթանպուլ, 1973, էջ 7:

²³⁸ Հայաստանի Կոչնակ, 8.IX.1923, թիւ 36:

իրաւասութիւններով, ազգային դրութեամբ որովհետեւ, Օսմանեան Կայսրութեան շրջանին Պատրիարքները պետութեան կողմէ ճանչցուած կ'ըլլան Անատօլու Գազասկերի²³⁹ աստիճանով:

Իրենց պաշտօնը կ'ենթարկուի կայսերական վաւերացման, երկրին պաշտօնէութեան մաս կը նկատուին եւ պաշտօնէ դադրելէ յետոյ կը ստանան հանգստեան թոշակ²⁴⁰: Լօզանի Դաշնագրով Թուրքիոյ հողամասէն կ'անջատուի Երուսաղէմը եւ ինքնին իրաւասու կը նկատուի ընտրելու իր Պատրիարքը եւ տնօրինելու մատակարար կազմակերպութիւնները: Այսպէս, չեղեալ կը նկատուի Ազգային Սահմանադրութեան այն յօդուածը, ըստ որուն Ընդհանուր Ժողովը կ'ընտրէր Երուսաղէմի Պատրիարքը, ինչպէս նաեւ Երուսաղէմի Միաբանութիւնը հաշուետու էր Պոլսոյ Ընդհանուր Ժողովին²⁴¹:

Ազգային Ժողովին կողմէ պատուիրակութիւն մը, երբ 8 Դեկտեմբեր 1922-ի ժողովէն վերջ հրաժարականը կը պահանջէ Զաւէն Պատրիարքէն, ան առանց հրաժարականը Ազգային Ժողովին ներկայացնելու, 9 Դեկտեմբեր 1922-ին անգլիական շոգէնաւով մը կը հեռանայ Կ.Պոլսէն ու կ'երթայ Եգիպտոս: Այս դէպքէն վերջ նոր Քաղաքական Ժողովը, զոր Յարութիւն Մոստիչեան 8 Դեկտեմբեր 1922-ի ժողովին իրեն տուած իրաւասութեամբ կը վերակազմէ, 20 Դեկտեմբեր 1922-ին Պատրիարքական Տեղապահութեան պաշտօնին կը կոչէ Գեորգ Եպսկ. Ասլանեանը:

Իսկ Ընդհանուր Ժողովը 21 Փետրուար 1923-ին կը հաստատէ Պատրիարքական Տեղապահին պաշտօնը, ինչպէս նաեւ Յարու-

²³⁹ Գազասկերը Օսմանեան Կայսրութեան շրջանին շերիի եւ աւանդական դատարանի հսկող գլխաւոր դատաւորն է:

²⁴⁰ Նոր Լուր, 9.IX.1929:

²⁴¹ Գոյումճեան Լ., Նայ համայնքային անցուդարձեր, էջ 5:

թին Մոստիչեանի ատենապետած Քաղաքական Ժողովին կազմը, որ կը պաշտօնավարէ մինչեւ 25 Մարտ 1926²⁴²:

Հանրապետութեան շրջանին Ազգային վարչութիւնը կը բաղկանայ Կրօնական եւ Քաղաքական Ժողովներէ, որոնք միանալով կը կազմեն Խառն Ժողովը (Ազգային Ժողով), որ կը գումարուի քանի մը ամիսը մէկ, երբ պէտք զգացուի: Քաղաքական Ժողովը կը բաղկանայ 10 հոգիէ, որուն անդամները երկու տարին անգամ մը նոր ընտրութեամբ կը փոխուին: Ժողովին պարտականութիւնը կ'ըլլայ ազգային կալուածները եւ եկեղեցապատկան վազըֆները մատակարարել եւ մասնաւորապէս եկեղեցական վարչութեան վերաբերեալ հաշիւներն ու գործառնութիւնները քննել եւ վաւերացնել: Եկեղեցի ունեցող իւրաքանչիւր թաղ կ'ունենայ իր Թաղային Խորհուրդը, որ Քաղաքական Ժողովին համարատու կ'ըլլայ: Իսկ Կրօնական Ժողովը, որ նոյնպէս 10 անդամներէ կը բաղկանայ, կը զբաղի եկեղեցականներու վերաբերեալ գործերով:

Քաղաքական Ժողովը կ'ունենայ Դատաստանական Խորհուրդ, Կտակաց Յանձնաժողով, Ուսումնական Խորհուրդ, Ելեւմտից Հոգաբարձութիւն, Վանօրէից Խորհուրդ եւ Տնտեսական Խորհուրդ ենթաբաժինները²⁴³: Պատրիարքը թէեւ այս ժողովներուն նախագահելու իրաւունք կ'ունենայ, բայց քուէ տալու ոչ:

Յարութիւն Մոստիչեանի Քաղաքական Ժողովը գործի կը լծէ թաղային եւ ազգային բոլոր մարմինները եւ տագնապալի վիճակէն կ'ազատէ Հիւանդանոցն ու Ազգային Խնամատարութիւնը: Մոստիչեան կը յաջողի ի դերեւ հանել «Թուրք եւ Հայ Բարձրացման Միութեան» սադրանքները, որոնք նպատակ կը հետապնդ-

²⁴² Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1924, էջ 38-39:

²⁴³ Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, նշծ.աշխ., էջ 5:

դէին Քաղաքական Ժողովը հրաժարեցնել Լօզանի Դաշնագրի 42. յօդուածէն ամբողջութեամբ եւ կազմալուծել ներքին կազմակերպութիւնն ու հաստատութիւններու մատակարարումը յանձնել պետութեան²⁴⁴: Մոստիշեանի Քաղաքական Ժողովը մերժողական պատասխան կուտայ Միութեան անդամ Տրթ. Եաղուպեանի փափաքին՝ ըսելով «Եթէ կառավարութիւնը այնպէս կ'ուզէ, պարտատր ենք ընդունելու»:

Ըստ Ազգային Սահմանադրութեան, երբ Պատրիարք մը կը վախճանի տեղապահին պարտականութիւնը կ'ըլլայ յառաջիկայ երեք ամիսներու ընթացքին ձեռնարկել Պատրիարքական ընտրութեան: Բայց այս շրջանին կարելի չ'ըլլար ձեռնարկել նոր ընտրութեան, պետք կ'ըլլայ սպասել երկար տարիներ, որպէսզի պարագաները թոյլատու ըլլան եւ Ազգային Սահմանադրութեան օրէնքներուն համաձայն տեղի ունենան վերակազմութեան աշխատութիւնները:

24 Մարտ 1926-ին, երբ Բերայի Սատենադարանին մէջ Կրօնական եւ Քաղաքական Ժողովներէն անդամներ հաւաքուած կը զբաղին Լօզանի Դաշնագրին 42. յօդուածի ա. հատուածին համաձայն փոքրամասնութեանց տրուած իրաւունքներէն հրաժարման մասին Թուրք-Հայ Բարձրացման Միութեան հանրագրութեան հակազդող գրութիւն մը պատրաստելով, չորս անձեր ներս խուժելով (Շ. Յակոբեան, Ն. Մինասեան, Մ. Մալումեան եւ Մ. Արոյեան) կը յայտարարեն, թէ իրենք ազգին կողմէ եկած են եւ կը պահանջեն որ օրուան վարչութիւնը հրաժարի: Ժողովականները կը հարկադրուին ժողովին վերջ տալ²⁴⁵:

²⁴⁴ Մշակ, 23.IV.1926:

²⁴⁵ Յառաջ, 31.III.1926:

Յաջորդ առտու «Հայերը չեն ճանչնար Պատրիարքարանը» խորագրին ներքե թրքական «Վագրթ» թերթը կը հրատարակէ հետեւեալը. «Ինչպէս յայտնի է, ժամանակէ մը ի վեր Հայոց մէջ «Քաղաքացիական Օրէնք»ին ընդունման հետեւանքով փոքրամասնութեանց իրաւունքներէն հրաժարելու հոսանք մը գոյացած էր: Պատրիարքարանը, որ չէր կրնար հրապարակաւ արգիլել այս հոսանքը, խուսափողական պատասխան կուտար ըսելով «մեր կառավարութիւնը եթէ հրամայէ, ամէն բան կ'ընենք», որպէսզի յետոյ ունենան «կառավարութեան ճնշումին տակ այսպէս ըրինք»ի նման արդարացում մը: Կացութիւնը գիտցող եւ այժմու Քաղաքական ժողովին դէմ եղող Հայերու պատուիրակութիւն մը երէկ Պատրիարքարան երթալով նիստ գումարող ժողովականներուն ըսած են, թէ պէտք է հրաժարին»²⁴⁶:

Ստեղծուած այս կացութեան առջեւ Ընդհանուր Ժողովը գործի գլուխ կը բերէ նոր Վարչութիւն մը՝ ատենապետութեամբ Արթիւր Մաղաքեանի:

Նորակազմ Վարչական Ժողովը գործի կը ձեռնարկէ 17 Մայիս 1926-ին²⁴⁷: Նշանակովի Թաղական Խորհուրդներուն տեղ ժողովրդական քուէարկութեամբ կ'ընտրուին նորեր, որոնք կը վաւերացուին Վարչական Ժողովի կողմէ: Ապա երեսփոխանական ընտրութեանց նախօրեակին խորհրդակցական ընդհանուր ժողով մը տեղի կ'ունենայ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ, ուր կ'որոշուի Պոլիսէն դուրս գտնուող երեսփոխաններն ալ ժողովական նկատել, մինչեւ անոնց ինքնաբերաբար հրաժարիլը այդ հանգամանքէն: Զանազան պատճառներով պակասած անդամներուն տեղ 33

²⁴⁶ Արեւ, 29.III.1926:

²⁴⁷ Ընդարձակ Տարեցոյց, Կ.Պոլիս, 1927, էջ 328:

աշխարհական եւ 5 եկեղեցական անդամներու ընտրութեան հրահանգ կը տրուի: Պոլսոյ մէջ եղող 30 աշխարհական եւ 12 եկեղեցական երեսփոխաններով ընդհանուր գումարը կը յանգի 80-ի (գրեթէ կէսէն քիչ աւելի 1914 թուականին):

Ազգային Ընդհանուր Ժողովի երեսփոխանական ընտրութիւնները կը կատարուին 8 թաղերու մէջ, որոնցմէ 6-ը կը վաւերացուի: Այսպէս Ժողովը Պոլսոյ մէջ կ'ունենայ 66 անդամներ:

12 Յունիս 1926-ին տեղի կ'ունենան Կրօնական եւ Քաղաքական Ժողովներու ընտրութիւնները: Կրօնական Ժողովի ատենապետութիւնը կը յանձնուի Գարեգին Եպսկ. Խաչատուրեանին, իսկ Քաղաքական Ժողովի ատենապետութեան կը կոչուի դարձեալ Արթիւր Մաղաքեան:

Ազգային Ընդհանուր Ժողովը 2 Մայիս 1927-ին իր առաջին նիստը կը գումարէ Փրօֆ. Աբրահամ Տէր Յակոբեանի ատենապետութեամբ: Կրկին ատենապետ կ'ընտրուի Փրօֆ. Աբրահամ Տէր Յակոբեանը, իսկ ատենադպիր՝ Պետրոս Ատրունին:

Պատրիարքական ընտրութեան համար Կրօնական համագումար Ժողովը թեկնածուներու ցանկը կը պատրաստէ ու կը դրկէ Ազգային Ժողովի, որ թեկնածուներուն հանգամանքը քննէ: Ապա տեղսպահը կը գումարէ Ազգային Ժողովը եւ կատարուած ընտրութիւնը կ'ենթարկուի կառավարութեան վաւերացման: Պատրիարք ընտրուելու համար նախապայաման կ'ըլլայ թրքահպատակ (իսկ աւելի առաջ Օսմանեան հպատակ) ըլլալ: Օսմանեան Կայսրութեան շրջանին Պատրիարքներ իրենց պաշտօնին մէջ կը հաստատուին օրուան Մուլթանէն տրուած ֆէրմանով, ուր ճշտուած կ'ըլլան իրենց իրաւասութիւնները:

Հանրապետութեան շրջանին գոյութիւն չ'ունենար նման հաստատում, այլ լոկ եկեղեցիէն դուրս եւս սքեմ կրելու գրաւոր

արսօնութիւնն է, որ կը շնորհուի պետութեան կողմէ, ընտրուած Պատրիարքին:

26 Յունիս 1927-ին Գումգաբու Պատրիարքանիստ Եկեղեցիին մէջ տեղի կ'ունենայ Պատրիարքի ընտրութիւնը, որուն շուրջ կը մղուի բուռն պայքար: Առաջին քուէարկութեան մէջ 61 երեսփոխաններէն 33-ը կը միանան ի նպաստ Նարոյեան Սրբազանի, իսկ 17 երեսփոխաններ ի նպաստ Արշարունի Սրբազանի: Իսկ համեմատական քուէարկութեան մէջ նոյն 33-ին դէմ կը միանան 25 երեսփոխաններ՝ ի նպաստ Արշարունի Սրբազանին:

Թրքական «Իգտամ» թերթը այս առթիւ կ'առարկէ ըսելով, թէ «ընտրութիւնը 2/3 մեծամասնութեամբ չէ եղած, ինչպէս նաեւ Նարոյեան Սրբազանի թրքերէնը տկար է, մինչդեռ Արշարունի Սրբազան քաջ է թրքերէնի մէջ»:

Ամէն պարագայի Թուրքիոյ Հայոց Պատրիարք կը հռչակուի Մեսրոպ Եպսկ. Նարոյեան: Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը 1922-1927-ի միջեւ չորս ու կէս տարի առանց Պատրիարքի մնալէ վերջ, Թուրքիոյ 80. Պատրիարքը կ'ըլլայ Մեսրոպ Արք. Նարոյեան (1927-1944)²⁴⁸:

Մեսրոպ Նարոյեան Պատրիարք (աւագանի անունով Խաչատուր) կը ծնի 1875 թուականին Սշոյ Արդերտ գիւղը: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ Սշոյ Ս. Կարապետ վանքի վարժարանին մէջ: 1895-ին կը մտնէ Արմաշի Դպրեվանքը, գոր կը վարէին երկու հոյակապ դէմքեր՝ Օրմանեան եւ Դուրեան Սրբազաններ, առաջինը իբր Կանահայր իսկ միւսը ուսումնապետ:

1899-ին կը ստանայ սարկաւագութեան աստիճան, իսկ 20 Մայիս 1901-ին, Հոգեգալստեան տօնին օրը վարդապետ կ'ըլլէ:

²⁴⁸ Ընդարձակ Տարեցոյց, Կ.Պոլիս, 1928, էջ 352-353:

նադրուի Եղիշէ Արք. Դուրեանի կողմէ, որուն հաւատարիմ աշակերտը եղած է: Ձեռնադրութենէն անմիջապէս վերջ Մենքոպ Վարդապետ ուսուցչական պաշտօնի կը կոչուի Արմաշի Դպրեվանքին մէջ, փոխ տեսուչ կ'ըլլայ եւ ներքին տեսուչի պաշտօն կը վարէ:

1909-ին Մատթէոս Կաթողիկոս Իզմիրլեանէ կը ստանայ Ծայրագոյնութեան աստիճան եւ նոյն տարուան Ապրիլին կը կոչուի Դպրեվանքի փոխ վանահայրութեան պաշտօնին, զոր կը վարէ մինչեւ Ապրիլ 1915:

1913-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Գեորգ Ե. Կաթողիկոսէն: 1916-ին Պոլիս կը հաստատուի եւ քարոզչական պաշտօններ կը վարէ նախ Պէշիկթաշ ապա Բերա եւ միեւնոյն պաշտօնին վրայ կը մնայ մինչեւ իր ընտրութեան օրը:

Նարոյեան Սրբազան երկու անգամ կը վարէ Պատրիարքական Տեղապահի պաշտօն՝ 1918-ին եւ 1919-20-ին: Կ'ըլլայ Կրօնական ժողովի անդամ, կը վարէ նաեւ ուսուցչական պաշտօն՝ Կեդրոնական, Էսսեան, Պէզազեան, Հինդլեան վարժարաններու եւ Գալֆաեան Որբանոցին մէջ, դասաւանդելով կրօնագիտութիւն, մատենագրութիւն եւ հայերէն: «Հարմակ» ծածկանունով բազմաթիւ գրական եւ կրօնա-բարոյական յօդուածներ եւ հմտալից տեսութիւններ կը գրէ օրաթերթերու եւ պարբերականներու մէջ²⁴⁹, նաեւ խմբագրութեան մաս կը կազմէ «Հայ Խօսնակ»²⁵⁰ հանդէսին:

Հանրապետական կառավարութիւնը Պատրիարքին պաշտօնը կը: հաստատէ Կուսակալութեան կողմէ Նորին Սրբազանու-

²⁴⁹ Ընդարձակ Տարեցոյց Ս. Փրկիչ Ա. Հիւանդանոցի, Ստամպուլ, 1928, էջ 354-355:

²⁵⁰ «Հայ Խօսնակ» ամսագիր(կարճ շրջան մը կիսամսեայ) Լոյս կը տեսնէ 1924-1939 թուականներուն Ստամպուլի մէջ: 1932-1934-ին կը հրատարակէ նաեւ «Հայ Խօսնակ Մանկանց» հաւելումաճը: Խմբագիրներ՝ Արտավազ Սիւրմեան, Մենքոպ Նարոյեան եւ Զարմայր Կէզիրեան:

թեան ուղղուած 14 Սեպտեմբեր 1927 թուական եւ 4608 համար պաշտօնագրով:

Քէմալական Թուրքիոյ վարիչներուն համար Պատրիարքութիւնը գուրկ կ'ըլլայ քաղաքական առանձնաշնորհումներէ եւ Հայոց Պատրիարքն ալ իր կարգին կ'ըլլայ Հայ ժողովուրդի հոգեւոր պետը: Անոր միակ պարտականութիւնը կ'ըլլայ առաջնորդել իր հօտը հաւատարմութեան դէպի Թուրք իշխանութիւնը, որ տէրն է երկրին: Ազգային իշխանութիւնները կը ջանան ստեղծել երկրին մէջ ապրող հայութեան համար տանելի վիճակ մը եւ պահպանել անոր ֆիզիքական գոյութիւնը:

Արթիւր Մաղաքեանի ատենապետած Քաղաքական ժողովը կը պաշտօնավարէ մինչեւ 3 Մայիս 1929: Ան քաւութեան նոխագի կը վերածուի, իր համարատուութիւնը Մոստիչեանի վարչութեան պարսաւանքին յաջորդելուն պատճառաւ: Այս վարչութեան դատապարտութեան գլխաւոր պատճառ ցոյց կը տրուին կալուածական խնդիրներու մէջ իրարու յաջորդող ձախողութիւններ: Այսպէս՝ «Սանասարեան» եւ «Թիճարէթ» խաներու գրաւումը կը պատահի այս վարչութեան օրով: Բայց ամէն պարագայի, իրենց յաջորդող վարչութեան կը յանձնեն վաւերացուած պիտօջէ մը: 7 Յունիս 1929-էն մինչեւ 6 Յունիս 1931 նոյն պաշտօնը կը վարէ Գէորգ Թորգոմեանի ատենապետութեամբ նոր Քաղաքական ժողովը:

Վեց հոգեւորականներ՝ Գէորգ Արք. Սալանեան, Սարգիս Եպիս. Սարգսեան, Տաճատ Եպիս. Պասմաճեան, Հմայեակ Ծ. Վրդ. Պախթիարեան, Գուսան եւ Պապաեան վարդապետներ 1929 Դեկտեմբերին Բերայի Խորհրդարանին մէջ ժողով կը գումարեն, ապա գրաւոր դիմում կը կատարեն Նարոյեան Պատրիարքին, ուր թոյլ նկատելով անոր վարչական գործունէութիւնը ինչպէս նաեւ պատճառաբանելով Քահանայական դասին նիւթական անձուկ վիճակը

անտեսելն ու Սանասարեան խանի եւ Թորատլեան պանդոկի խնդիրներուն մեջ սխալ ուղղութեան հետեւիլը, կը պահանջեն հրաժարումը²⁵¹: Գէորգ Թորգոմեանի ատենապետած Քաղաքական Ժողովը ոչ միայն զեկոյց մը կը հրատարակէ, այլ նաեւ դիմում կը կատարէ պատկան իշխանութեան, որուն հետեւանքով բացատրութեան պահանջով Ոստիկանութեան մասնաճիւղը կը հրաւիրուին վեց հոգեւորականները²⁵²: Իսկ Քահանայական Միութեան Տնօրէն Խորհուրդը 24 Դեկտեմբերին ժողով մը կը գումարէ եւ նամակով մը ազգային իշխանութեան կը հաղորդէ, որ անհիմն են վեց հոգեւորականներու ըսածները, քանի որ քահանաներուն թոշակներու հաւելումը կարգադրուած է ներկայ Պատրիարքի օրով²⁵³:

Թորգոմեանի վարչութիւնը կը քննադատուի իրենց օրով թաղային ընտրութեանց կաշկանդմամբ: Ըստ ազգային կանոններու, Թաղական խորհուրդներու ընտրութեան ատեն, ընտրողներուն դիրութիւն ընծայելու նպատակով եռակի ցանկ մը կը տրամադրուի անոնց: Սակայն ընտրողները այդ ցանկէն դուրս թեկնածուներու քուէ տալու իրաւունք ալ կ'ունենան: Թորգոմեանի վարչութեան շրջանին պատկան պաշտօնատան կողմէ Քաղաքական ժողովի կը հաղորդուի Պոլսոյ ազգային ընտրութիւններուն (Թաղական եւ Ընդհանուր Ժողովի ընտրութիւններ) ընտրելիներու եռակի ցանկը նախ եւ առաջ կառավարութեան քննութեան յանձնել եւ յետոյ ձեռնարկել ընտրութեան: Կարգիլուի նաեւ քուէ տալ ներկայացուած ցանկէն դուրս ռեւէ անձի: Ահա, Թորգոմեանի վարչութիւնը կը մեղադրուի այս կառավարական սեղմումին համակերպելուն պատճառաւ, որ դէմ է համայնքի սկզբունքներուն: Դիտել կը

²⁵¹ Ազդարար, 13.XII.1929:

²⁵² Նոր Լուր, 17.I.1930:

²⁵³ Ազդարար, 25.XII.1929:

տրուի, որ կարելի էր բողոքել ու սրբագրել տալ այդ հրահանգը, քանի որ շատ աւելի ծանր պարտադրութիւններու եւ նիւթական գրաւումներու դէմ ազգը դիմած է երկրին արդարութեան:

Այս բոլորին քով կը գնահատուի Թորգոմեանի վարչութեան Տնտեսական Խորհուրդն ու Կտակաց Յանձնաժողովը, առաջինը՝ անողոք հակակշիռ ի գործ դնելուն իսկ վերջինը՝ տարիներով թաղուած կտակները լոյս աշխարհի հանելուն եւ կրթական գործին տարեկան 3634 ոսկի յատկացնելուն համար²⁵⁴:

²⁵⁴ Ազդարար, 26.VI.1931:

ՀԱՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Թորգոմեանին կը յաջորդէ Վահան Սուրենեանի Քաղաքական Ժողովը, որ կը պաշտօնավարէ Յունիս 1931-էն մինչեւ 13 Սեպտեմբեր 1934, քանի որ չի գտնուիր նոր ընտրութիւն կատարելու հնարատրութիւն 1933-ին՝ երբ կը լրանայ Քաղաքական Ժողովի երկամեայ շրջանը:

Սուրենեանի վարչութեան շրջանին կը ձեռնարկուի գործադրել «աշխարհականացումի» օրէնք մը, որ Պոլսոյ Պատրիարքը կը գրկէ իր բոլոր իրաւասութիւններէն: Կառավարութիւնը փոքրամասնութեանց ներքին գործերը վարելու համար 1933 Յունիսին օրինագիծ մը կը պատրաստէ: Ապա, կը ճնշէ որպէսզի փոքրամասնութեանց վարչական իշխանութիւնները ձեռնարկեն համայնքային գործերը պատշաճեցնելու կառավարութեան տեսակետին²⁵⁵: Կարգ մը Թաղային խորհուրդներէ անդամներ կը մտածեն առիթէն օգտուելով բռնի կերպով տապալել Նարոյեան Պատրիարքը եւ դիմում կը կատարեն պատկան իշխանութեան, իրաւասութիւն խնդրելով մշակելու համայնքին համար վարչական նոր կանոնագիր մը, նշելով թէ Ազգային Սահմանադրութիւնը չի պատշաճիր Հանրապետական կառավարութեան սկզբունքներուն: Նման արարքները կանխելու համար, Քաղաքական ժողովի որոշումով Նարոյեան Պատրիարք եւ Քաղաքական ժողովի ատենապետ Վահան Սուրենեան խնդրագիր մը կը ներկայացնեն Պոլսոյ Կուսակալին, որպէսզի Հայ հասարակութեան գործերը աշխարհականա-

²⁵⁵ Յառաջ, 18.IX.1934:

ցուին, այսինքն Պետութեան նման «լաիք» դառնան: Խնդրագրին կը կցեն 30 հոգինոց եռակի ցանկ մը²⁵⁶:

Սուրենեանի վարչութիւնը պատմական քայլ մը առնելով 13 Սեպտեմբեր 1934-ին կը ջնջէ «Ազգային Սահմանադրութիւն»ը, հակառակ որ ան արդէն «լաիք» սկզբունքներու համաձայն պատրաստուած օրէնսդրութիւն մըն է եւ Պատրիարքին նախագահութիւնը հեռու է միջամտելէ աշխարհիկ գործերու:

Այսպէս կրօնական եւ աշխարհիկ վարչութիւնները կը լուծուին, Պատրիարքը կը դադրի աշխարհական ժողովներուն նախագահելէ, Թաղային Խորհուրդներու դիւաններէ կազմուած ժողովը կ'ընտրէ տասը հոգիէ բաղկացած «Վարչական Ժողովը», որ կը փոխարինէ Քաղաքական Ժողովի եւ կառավարութենէն կը վաւերացուի եռակի ցանկի մը վրայէն: Վարչական Ժողովին կը յղուի Ազգային Հիւանդանոցի, Ազգային Խնամատարութեան, դպրոցներու եւ ազգապատկան կալուածներու հաշուետուութիւնը²⁵⁷:

Վահան Սուրենեանի Վարչական Ժողովին կը յաջորդէ 1935-էն սկսեալ Պետրոս Խորասանճեանի վարչութիւնը՝ մինչեւ 15 Յուլիս 1939²⁵⁸:

1938-ին Պոլիս կ'ունենայ 47 քահանաներ, 4 վարդապետներ եւ մէկ եպիսկոպոս, որոնք Պատրիարքի գլխաւորութեամբ կը կատարեն իրենց վիճակած պարտականութիւնը: Գոյութիւն կ'ունենան եկեղեցիներ, որոնք բնակիչներու սակաւութեան պատճառաւ չեն ունենար մնայուն քահանաներ, որոնց սակայն ուրիշ թաղերէ քահանաներ կը զրկուին տօնական օրերուն: Պատրիարք Հայրը ամէն եկեղեցին կ'այցելէ անոր անուանակոչութեան օրը: Ան՝ տօներու, մատաղօրհնութիւններու ընթացքին համախմբուած ժողովուրդին

²⁵⁶ Արեւելք, 14.IX.1934, Cumhuriyet, 14.IX.1934:

²⁵⁷ Հայաստանի Կոչնակ, 13.X.1934, թիւ 41: Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, նշծ. աշխ., էջ 4:

²⁵⁸ Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, նշծ. աշխ., էջ 4:

կը խօսի իրենց պարտականություններուն մասին: Իսկ գաւառի եկեղեցիներէն Կեսարիա, Ֆենէսէ, Տիգրանակերտ, Անգարա եւ Օրտու կ'ունենան հոգեւոր հովիւներ²⁵⁹:

1938-ին հրատարակուած 3513 թիւ օրէնքը բարեփոխելով 2762 թիւ «Վագրֆներու Օրէնք»ի կարգ մը յօդուածները, կ'որոգեզրէ «Անհատ մատակարար»ի (թէք միւթեվէլլի) դրութիւնը, որ կը շարունակուի մինչեւ 1949-ի 5404 թիւ «Վագրֆներու Օրէնք»ը:

Համայնքային մարմինները ըստ 5404 թիւ օրէնքի տրամադրութիւններուն մատակարարական տեսակետէ կ'ենթարկուին Վագրֆներու վարչութեան հակակշռին եւ փոքրամասնութեանց հաստատութիւնները կը վերսկսին մատակարարուիլ համայնքին կողմէ ընտրուած հոգաբարձու մարմիններու կողմէ:

14 Յուլիս 1939-ին գործադրութեան կը դրուի 3512 թիւ «Հաւաքականութեանց (Ընկերակցութեանց) Օրէնքը», որ չ'արտօներ կրօնական հանգամանք ունեցող ընկերակցութեանց գոյութեան: Խորասանձեանի ատենապետած Վարչական Ժողովը մտավախութեամբ 15 Յուլիս 1939-ին «լուծեալ» կը հռչակէ ինքզինքը²⁶⁰: Կը փակուին եկեղեցիներու մատակարարման համար հիմնուած կազմակերպութիւնները: Օրէնքի գործադրութեամբ թրքացման կ'ենթարկուին նաեւ փոքրամասնութեանց մարզական ակումբներու անունները: «Էսսեան Մարզական Ակումբ»ը կ'առնէ «Շիշլի» անունը²⁶¹:

²⁵⁹ Նոր Լուր, 3.I.1939:

²⁶⁰ Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, նշծ. աշխ., էջ 4: Յառաջ, 19.VI.1939:

²⁶¹ Bali R. Cumhuriyet Yıllarında Türkiye Yahudileri, Bir Türkleştirme Serüveni, İstanbul, 2005 (7.Baskı), s. 302.

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1927-ին Պատրիարքական ընտրութեան միջոցին երկու մասի կը բաժնուին Հայ Կաթողիկէները: Խումբ մը Հայ Կաթողիկէներ կը փափաքին իրարմէ անջատել իրենց հասարակութեան կրօնական եւ աշխարհիկ գործերը, իսկ Պատրիարքական Տեղապահ Նազլեան Գերապայծառ, որ ուղղակի Պապին կողմէ ընտրուած ըլլալով՝ իրեն նախորդներուն նման, իրաւասութիւն կ'ունենայ Հայ Կաթողիկէ հասարակութեան թէ՛ կրօնական եւ թէ՛ աշխարհական գործառնութեանց, կը հակառակի այս գաղափարին²⁶²:

Երբ Նազլեան Գերապայծառ փակել կուտայ պատրիարքարանի բոլոր սենեակները ու բանալիները իր քովը կ'առնէ, ընդդիմադիրները բռնի կերպով ներս կը մտնեն, կը գրաւեն շէնքը, կը յարձակին ու կ'ապտակեն Նազլեան Գերապայծառը²⁶³:

Այս դէպքէն վերջ Նազլեան Գերապայծառ կ'երթայ Հռոմ ու կը մասնակցի Պապին նախագահած Եպիսկոպոսական ժողովին: Հայ Կաթողիկէ ընդդիմադիրներու ընդհանուր ժողովը օգտուելով Նազլեան Գերապայծառի բացակայութենէն, նիստ գումարելով ձեռամբարձ քուէարկութեամբ եւ միաձայնութեամբ կ'ընտրէ Պատրիարքական աշխարհական Տեղապահ մը՝ Յովհաննէս Պէյ Ալիքսանեան: Ապա բոլոր ժողովականներու ստորագրութեամբ կը պատրաստուի պատճառաբանեալ գրութիւն (մագալաթա) մը, որով Պոլսոյ Կուսակալութեան կը հաղորդուի Նազլեան Գերապայծառի պաշտօնանկ ըլլալը, Յովհաննէս Պէյ Ալիքսանեանի ազգապետ ընտրուած ըլլալն ու կը խնդրուի պաշտօնի վաւերացումը²⁶⁴:

²⁶² Նոր Լուր, 30.IV.1927:

²⁶³ Յառաջ, 5.IV.1927:

²⁶⁴ Նոր Լուր, 17.V.1927:

Այսպես, տարօրինակ կացութիւն մը կը ստեղծուի Կաթողիկէ համայնքէն ներս: Կղերն ու Նազլեան Գերապայծառի փոխանորդը կը պնդեն, թէ Գերապայծառը պաշտօնանկ չէ եղած իսկ աշխարհական վարչութեան կուսակիցները կը յայտնեն, թէ Ան պիտի չվերադառնայ Հոռմէն: Պատրիարքարանի երկրորդ յարկը հաստատուած կ'ըլլայ Կաթողիկոսական դիւանը, բայց առաջին յարկը ձեռք կ'անցնեն վարչայինները²⁶⁵:

Երբ աշխարհական գործոց նախագահ Յովհաննէս Պէյ Ալիքսանեանի պաշտօնը կը հաստատուի, կուսակալութիւնը գրութիւն մը կը դրկէ ոստիկանութեան, որպէսզի ազդարարէ նախորդ Թաղական Խորհուրդներուն ու հոգաբարձութիւններուն յանձնել իրենց մօտ գտնուող գոյքերն ու հաշիւները²⁶⁶: Նախորդ վարչութեան անդամները կը յայտարարեն, թէ որպէս օրինական մարմին չեն ճանչնար նոր վարչութիւնը եւ չեն յանձներ գոյքերն ու հաշիւները, որովհետեւ անոնք կը գտնուին ժողովրդապետներուն քով: Իսկ ժողովրդապետները կ'ըսեն, թէ ունին հոգեւոր պետ մը, կամովի չեն յանձներ գոյքերն ու հաշիւները:

Երբ ընտրուած նոր վարչական մարմինը ձեռք կը դնէ Սուրբ Յակոբ հիւանդանոցին եւ նման կարգ մը հաստատութեանց վրայ, յայտնի կը դառնայ թէ Սուրբ Յակոբ հիւանդանոցը ունի սեփական 22-ի չափ խանութներ, հողամասեր եւ զանազան խաներու մէջ բաժիններ, որոնցմէ ոչ մէկ վարձք կը զանձէ հիւանդանոցը, տումարներու մէջ գոյութիւն չունի ռեւէ արձանագրութիւն²⁶⁷: Մինչ այդ Նազլեան Գերապայծառ գոյութիւն ունեցող շարժումին հակակրօն գոյն տալով կը յաջողի համոզել Պապը: Այսպէս, 7 Յունիս 1927-ին այս շարժումին կուսակիցներն ու անոնց հետեւորդները կը բանադրուին: Հոռմի մէջ գումարուած Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսնե-

²⁶⁵ Նոր Լուր, 22.V.1927:

²⁶⁶ Նոր Լուր, 24. V.1927:

²⁶⁷ Նոր Լուր, 29. V.1927:

րու Մինոդը կ'որոշէ իր նախնական օրրանը՝ Պէյրուֆ փոխադրել Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը եւ Պոլսոյ մէջ հաստատել Արքեպիսկոպոսութիւն մը՝ Թուրքիա բնակող Հայ Կաթողիկէ հասարակութեան կրօնական գործերով զբաղելու համար²⁶⁸:

Իսկ ի՞նչ է պատմութիւնը Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան...:

1740-ին առաջին անգամ Լիբանանի Քրէյմի վանքին մէջ կաթողիկոսութեան տիտղոս կ'առնէ Հալէպի առաջնորդ Աբրահամ Եպիսկոպոս Արծիւեան, որ Պետրոս անունը աւելցնելով իր անունին վրայ կ'ըլլայ Աբրահամ Պետրոս Ա.:

Արծիւեան Եպիսկոպոս, որ աւելի առաջ եղած է Տրապիզոնի Հայոց առաջնորդ, 4 Օգոստոս 1715-ին հռնկէ կը մեկնի, Լիբանան ապաստանելու համար: 1716-ին Կ.Պոլսոյ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը զինքը պաշտօնէ կը հեռացնէ:

Աբրահամ Եպիսկոպոս 1720-ին կ'ապաստանի Լիբանանի Անտոնեան Միաբանութեան²⁶⁹, ուրկէ կը վարէ Հալէպի Հայ Կաթողիկէ առաջնորդութեան պաշտօնը եւ Կիլիկիոյ Հայ Կաթողիկոսութեան ընդդէմ Կաթողիկոսութիւն մը կը ձեռացնէ: 8 Դեկտեմբեր 1742-ին Հռոմի Պենետիկոդո ժԴ. Պապը իրեն կը շնորհէ պատրիարքական տիտղոս, աստիճան եւ պալիումով մը կը նուիրագործէ այս կաթողիկոսութիւնը:

1748-ին Լիբանանի մէջ կը մեռնի Աբրահամ Եպիսկոպոս եւ իրեն կը յաջորդէ Յակոբ Եպիսկոպոս, որ իր բնակութիւնը կը հաստատէ Լիբանանի Չմմառու Մարենայ վանքը, ուր մինչեւ 1866 իրարու կը յաջորդեն ուրը կաթողիկոսներ: Չմմառու Կաթողիկոսութիւնը անուանական անազդեցիկ պաշտօն մը կ'ըլլայ, գրեթէ զուրկ ռեւէ իրաւասութենէ, ունենալով իրեն բարոյական իշխանութեան ներքեւ Կիլիկիոյ եւ Սուրիոյ Հայ Կաթողիկէները միայն: Իսկ Կ.Պոլսոյ եւ Փոքր Ասիոյ աւելի բազմաթիւ, ուժեղ ու ազդեցիկ Հայ

²⁶⁸ Նոր Լուր, 11.VII.1928:

²⁶⁹ Անտոնեան Միաբանութիւնը հիմնուած է 1716-ին:

Կաթողիկէները Կ.Պոլիս հաստատուած Պապական նուիրակին հոգեւոր իրաւասութեան ներքեւ կ'ըլլան: Կառավարութիւնը զանոնք կը ճանչնայ Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ եւ իրենց քաղաքային իրաւասութիւններու վերաբերեալ գործառնութիւնները կը կատարուին Հայոց Պատրիարքարանին մէջ: 5 Յունուար 1831-ին է, որ Հայ Կաթողիկէները իբր առանձին հասարակութիւն կը ճանչցուին²⁷⁰:

Պաշտօնապէս իբր ուրոյն հասարակութիւն ճանչցուելէ վերջ Հայ Կաթողիկէներուն հոգեւոր եւ քաղաքային իշխանութիւնները կ'ըլլան.

ա - Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ Բերիոյ, Մարտինի, Տիգրանակերտի, Ատանայի, Մարաշի եւ Ամասիոյ Արքեպիսկոպոսական թեմերով,

բ - Կ.Պոլսոյ Նախագահ-Արքեպիսկոպոսութիւնը, անկախ առաջինէն,

գ - Կ.Պոլսոյ Պատրիարքութիւնը (Բաթրիքութիւն), որ լոկ աշխարհիկ գործերուն տեսչութիւնը կ'ունենայ եւ կախում չ'ունենար վերոյիշեալ հոգեւոր իշխանութիւններէն:

Կ. Պոլսոյ Հայ Կաթողիկէ Պատրիարքները կ'ըլլան միշտ պարզ քահանաներ եւ կ'ընտրուին աշխարհականներու կողմէ: Այս երեք իշխանութիւնները գոյութիւն կ'ունենան իրարմէ անջատ կերպով մինչեւ 1766²⁷¹:

Կ. Պոլսոյ առաջին նախագահ-Արքեպիսկոպոսը կ'ըլլայ Գերապայծառ Անտոն Նուրիճանեան (1830-1838): Երրորդ Նախագահը՝ Անտոն Հասուն, որ արդէն իր նախորդին՝ Գերապայծառ Պօղոս Մարուշեանի օգնական անուանուած կ'ըլլայ Անարգաքայի Եպիսկոպոս տիտղոսով, պաշտօնի կը կոչուի 1846-ին:

²⁷⁰ Ալպոյաճեան Ա., Հայ Կաթոլիկ Նուիրապետութիւնը, Նոր Լուր, 27.VII.1928:

²⁷¹ Ալեմշահ Մ., Հայ Կաթոլիկ Գործեր, Նոր Լուր, 24.VIII.1928:

Հասուն, Ջմմառու վանքը նստող Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսի մահէն յետոյ, 14 Սեպտեմբեր 1866-ին Եկեղեցական Սինոդով մը ինքզինքը Կաթողիկոս ընտրել կուտայ եւ կը ստանայ Անտոն Հասուն Պետրոս Թ. Անունը: Այսպէս Կ.Պոլսոյ Արքեպիսկոպոս-Նախագահի պաշտօնը կը միանայ Ջմմառու մէջ գոյութիւն ունեցող Կիլիկիոյ Կաթողիկոս-Պատրիարքութեան անուանական պաշտօնին եւ Աթոռը կը փոխադրուի Կ. Պոլիս:

Լեւոն ԺԳ. Պապը 13 Դեկտեմբեր 1880-ին Կարտինալ կ'անուանէ Հասուն Եպիսկոպոսը, որ կը մեկնի Հռոմ ու վերջ կը գտնէ իր պաշտօնը: Հասունին կը յաջորդէ 4 Օգոստոս 1881-ին Ստեփանոս Պետրոս Ժ.: Կ.Պոլսոյ Աթոռը ահա այդ թուականներէն սկսեալ մինչեւ 1927, կրկին Պէրյութ փոխադրուիլը, կը կառավարուի Առաքելական Նուիրակ եւ Տեղապահ տիտղոսով եպիսկոպոսներով²⁷²:

1934-ին Կաթողիկէ հասարակութեան մէջ կրկին կը ծագին անհամաձայնութիւններ, որոնց հետեւանքով երկու խումբերու կը բաժնուի հասարակութիւնը: Խումբերէն մեկը կը հաւարուի Հայ Կաթողիկէ Վարչական Ժողովի ատենապետ եւ Ս. Յակոբ Հիւանդանոցի բժշկապետ Տրթ. Վենսան Գասապեանի, իսկ ինքզինքը վարչական ժողով նկատող երկրորդ խումբը՝ Փօլ Ալանի շուրջ, որ ազդարարագրեր կ'ուղղէ Ս. Յակոբ Հիւանդանոցի կալուածներու վարձակալներուն եւ նաեւ պայմանագրութիւններ կը կնքէ մէկ քանիին հետ: Վարչական Ժողովը բողոք կը յայտնէ կառավարութեան, որ յետ քննութեան ապօրէն հոչակելով վերջ կուտայ Փօլ Ալանի զլիաւորութեամբ կազմուած մարմնին գործունէութեան²⁷³:

²⁷² Ալպօյաճեան Ա., Հայ Կաթողիկէ Նուիրապետութիւնը, Նոր Լուր, 27.VII.1928:

²⁷³ Նոր Լուր, 27.XI.1934:

ՓՈՔՐ ԱՍԻԱ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅԵՐՈՒ ՊՈԼԻՍ ԱՔՍՈՐՈՒԻԼԸ

14 Յունիս 1934 թուական եւ 2510 համար «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Բնակեցման Օրէնք»ի գործադրութեան դրուելէն շուրջ վեց ամիս առաջ միջին Փոքր Ասիա գտնուող Հայերը անգամ մը եւս կ'աքսորուին, այս անգամ Պոլիս: ԱՄՆ-ու Դեսպան Ռոպերտ Սքինլերի կողմէ 2 Մարտ 1934-ին ԱՄՆ-ու Արտաքին Գործոց նախարարութեան ուղարկուած յոյժ գաղտնի տեղեկագրի²⁷⁴ արդիւնքով յայտնաբերուած այս գործադրութեամբ²⁷⁵ տարւոյն սկիզբները, երկու ամսուան մէջ զանազան քաղաք եւ գիւղերէ Պոլիս արքսորուած 600 Հայեր, հոն կը տեղաւորուին Եկեղեցիներու, դպրոցներու, կայաններու, Օրթագիւղ, Ենիգիւղ ու նման թաղերու լքեալ տուններուն մէջ: Անոնք արքսորուելէ առաջ նախ տեղի իշխանութիւններուն կողմէ ճնշման կ'ենթարկուին, որպէսզի գաղտնի մնայ այս գործին պետական բնոյթը: Ապա, Թուրք ռաւիկանը կը ջանայ տեղւոյն իսլամները գրգռել Հայերուն դէմ, ըսելով թէ «կեավուր»ները վոնտողները պիտի ըլլան տեղացի ժողովուրդ, վայելելով այդ կարգավիճակին բոլոր առաւելութիւնները: Կտրուկութեան այս փորձը յաջողութեամբ չի պսակուիր: Ըստ Ամերիկեան Դեսպանատան՝ ասոր պատճառը տեղացի Թուրքերու եւ Հայերու միջեւ հաստատուած լաւ յարաբերութիւնն է: Նման փորձ մը կը կատարուի Պալքաններէն եկող գաղթականներուն եւ Հայերուն յարաբերութիւնները խանգարելու համար, բայց նոյնպէս չի յաջողիր: Ասկէ վերջ, Հայերուն կը հրահանգուի անմիջապէս գաղ-

²⁷⁴ Robert P. Skinner, Embassy of the United States of America, Ankara. 2.III.1934. No.151 (Յտւելում 2):

²⁷⁵ Okuran Ç., նշծ. աշխ., էջ 250:

թել Պոլիս, արտօնելով վաճառել իրենց գոյքերը: Արտօնութիւնը սակայն խաբուսիկ կ'ըլլայ, քանի որ գործողութիւնը տարբերութիւն չ'ունենար ապաստփականացումէն²⁷⁶:

«Բնակեցման Օրէնք»ի նպատակներէն մէկը կ'ըլլայ գուցէ ուշացումով, իրաւական գետնի վրայ յենարան մը գտնել Հայերուն Միջին Փոքր Ասիայէն դրկուելուն, մէկը կ'ըլլայ Թուրքիոյ մէջ «ագգային» հիմքերու վրայ հաստատում մը իրականացնել, իսկ մէկն ալ՝ պատերազմի հաւանականութեան դէմ ռազմագիտական կարեւորութիւն ունեցող շրջաններու մէջ ապրող փոքրամասնութիւնները փոխադրել ուրիշ տեղեր:

Հայոց իրենց ծննդավայրէն տեղահանուիլը կը շարունակուի նաեւ մինչեւ 1930-ական տարիներու վերջերը: Այսպէս Նախարարներու Ժողովը 6 Սեպտեմբեր 1938-ին կը վաւերացնէ, Ներքին Գործոց նախարարութեան առաջարկով ու Սպայակոյտի նախագահութեան հաւանութեամբ տեղահանուիլը՝ Կեսարիոյ Կէսի գաւառակի Էֆքերէ գիւղի Հայ բնակիչներուն²⁷⁷:

²⁷⁶ Güven D., նշծ. աշխ., էջ 132:

²⁷⁷ Başbakanlık Cumhuriyet Arşivi, B.C.A. 030.18.01.02.84798 (Յաւելումած 3):

ՀԱԹԱՅՆ (ԱԼԵՔՍԱՆԴՐԵԹԻ ՄԱՆՃԱԿ)

Հաթայը (Ալեքսանդրեթի սանճակ), որ կը մնայ Սուրիոյ կազմին մէջ, 1920-ին կ'անցնի Ֆրանսայի հոգատարութեան (մանդատ), իսկ 1937-էն սկսեալ՝ ձեռակալութեան մնալով հանդերձ այսպէս, կ'անցնի համատեղ հսկողութեան տակ Ֆրանսայի եւ Թուրքիոյ: 5 Յուլիս 1938-ին հոն կը ստեղծուի Հաթայի ինքնավար պետութիւնն ու խորհրդարանը²⁷⁸: Երբ 23 Յունիս 1939-ին, Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ ստորագրուած պայմանագրով Հաթայը կը կցուի Թուրքիոյ, Հաթայի Հայերը մեծամասնութեամբ կը գաղթեն Սուրիա եւ Լիբանան:

²⁷⁸ Հայկական Հարց Հանրագիտարան, էջ 23:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱԳՐՃՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

ՎազրՖը այն սեփականությունն է, որ տիրոջ կողմէ տրուած է կրօնական կամ բարեսիրական կարիքներու համար համայնքին, պետութեան կամ մասնաւոր անձի մը: ՎազրՖը, իսլամ աստուած-պետական (շէր'ի) տեսութիւններէն ծագում առած, արեւելեան իրաւագիտութեան յատուկ ընկերային հարց մըն է²⁷⁹:

Լօզանի դաշնագրէն առաջ, Օսմանեան Կայսրութեան շրջանին գոյութիւն չ'ունենար «կտակ»ի վերաբերեալ որոշ եւ վճռական օրէնք մը եւ ոչ-իսլամներու կրօնական եւ աշխարհիկ բոլոր գործերուն նման վազրՖներու (կտակային) գործերն ալ ֆերմաններով կը ղեկավարուէին:

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, Կեդրոնական վարչութեան ձեռներէցութեամբ եւ մասնագէտներու մասնակցութեամբ 24 Ապրիլ 1893-ին «Կտակի, Նուէրի եւ ՎազրՖի վերաբերեալ ինչ-ինչ օրինական ընդհանուր տրամադրութիւնք» անուան տակ կը պատրաստէ ուսումնասիրութիւն մը, կը պատշաճեցնէ զայն ընդունուած եւ ակնկալուած տեսակէտներուն ու վարչական տնօրինութիւններուն եւ գործադրութեան կը դնէ, որ սակայն Թուրքիոյ Քաղաքացիական նոր օրէնքով (4 Հոկտեմբեր 1926) կը ջնջուի²⁸⁰: Ասկէ

²⁷⁹ Գույումճեան Լ., ՎազրՖներու Օրէնքը եւ գործադրութեան ձեւը, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փրկիչ Հիւանդանոցի, Մտամպուլ, 1948, էջ 211:

²⁸⁰ 4 Հոկտեմբեր 1926-էն առաջ «վազրՖ»ի մը օրինաւորութիւնը հաստատելու համար պայման էր կրօնաւոր դատաւորի վճռագիրը (վազրՖնամ): ունենալ:

գատ 1 Դեկտեմբեր 1893-ին կը հրատարակուի նաեւ Սատակարարութիւն Ազգային Վազըֆներու» հրահանգը²⁸¹:

Իսկ Լօզանէն վերջ Հանրապետական կառավարութիւնը ոչ-խալամական վազըֆներու գործունէութեան մասին 12 տարիներ առանց որեւէ կանոնաւորում կատարելու, հարցերը կը լուծէ օրուան պէտքերուն կապուած քաղաքական որոշումներով²⁸²:

Ազգապատկան կալուածները կը բաժնուին երկու խումբի²⁸³

1. - Բարենպատակ հաստատութեանց վազըֆները,
2. - Որոշ կտակի ենթակայ, կալուած կամ հողեր, որոնց սեփականութիւնը ազգին տրամադրուած է:

Յարաճուն դէպքերու տեղի կուտայ երկրորդ խումբը: 1328-էն (1912) առաջ այդ կալուածները ստիպեալ կ'արձանագրուին անհատական անուններու եւ ըստ այնմ սեփականաթուղթերը կը պատրաստուին:

«Բարոյական անուններու փոխանցման օրէնք»ին հրատարակութենէն (16 Փետրուար 1912) վերջ, անոր տրամադրութիւններուն հետեւելով կը ներկայացուին ազգային բարեսիրական հաստատութիւններու ցանկերը եւ դիմումներ կը կատարուին արձանագրութիւնները փոխանցելու համար սլատկանած հաստատութիւններու անուան: Ազգայիններու անուան արձանագրուած այդ կալուածները, իրենց կամ ժառանգորդներուն դիմումով՝ երբեմն վարչական տնօրինութեամբ, երբեմն դատական որոշումով ազգին կ'անցնին: Բայց կարելոր թիւով անշարժ գոյքերու գործողութիւններ անաւարտ կը մնան վրայ հասնող պատերազմին ու 1915-ի

²⁸¹ Գոլյումճեան Լ., Կտակ եւ Յատկացում, Կ.Պոլիս, 1934, էջ 4:

²⁸² Macar E., Başbakanlık Cumhuriyet Arşivi Belgelerine Göre Tek Parti Döneminde Cemaat Vakıflarının Sorunları, www.bolsohays.com, Makale köşesi.

²⁸³ Ազդարար, 2.V.1927:

պատահարներուն պատճառաւ եւ յառաջիկային Կալուածներու վարչութիւնը ազգապատկան շատ մը կալուածներ «մահիլ» (անտեր) նկատելով որպէս «լքեալ գոյք» կը գրաւէ:

Թուրքիոյ Քաղաքացիական նոր օրէնքով (4 Հոկտեմբեր 1926) կ'ընդունուի նոր Վազըֆներու հիմնադրուիլը, բայց այս կարգադրութենէն դուրս կը ձգուին փոքրամասնութեանց համայնքային հաստատութիւնները: Այսպէս Քաղաքացիական օրէնքով արգիլուած կ'ըլլայ ոչ-իսլամներու նոր վազըֆ հիմնադրելը²⁸⁴, հակառակ որ բոլորովին ներհակ է Լօզանի Դաշնագրին: Նոյնպէս 1930-ի «Քաղաքապետութեանց Օրէնք»ն ալ իրաւականօրէն չի ճանչնար համայնքային գերեզմանատուներու վազըֆները:

13 Մարտ 1934-ին հրատարակուած 2387 թիւ «վազըֆ կալուածներուն, հողերուն եւ հասոյթներուն, վարձակալութեան եւ մատակարարութեան վերաբերեալ օրէնք»ով եւ 24 Մայիս 1934-ին գործադրութեան դրուած 28 յօդուածներէ բաղկացած կանոնագրով կը ճշդուին վազըֆ գոյքերուն մատակարարութեան եւ վարձակալութեան պայմանները: Այս օրէնքի տրամադրութիւններուն համաձայն վարձակալութեան պայմանագրութիւնները կը կնքուին աճուրդով, որ կը կատարուի Վազըֆներու տնօրէնութիւններուն կողմէ կազմուած յանձնաժողովներու միջոցաւ եւ կտակակատարներու (միւրեվէլլի) ներկայութեամբ: Աճուրդը կը կատարուի կամ հրապարակային եւ կամ գոց պահարանի դրութեամբ²⁸⁵:

²⁸⁴ ՅՕԴՈՒԱԾ 74(2) Օրէնքի, բարոյականութեան եւ ազգային շահերու հակառակ եղող կամ քաղաքական ռեւէ գաղափար կամ որոշ ազգ կամ համայնքի պատկանողներուն նեցուկ կանգնելու նպատակով հիմնադրուող վազըֆները օրինական բնոյթ չեն գտներ:

²⁸⁵ Գույումճեան Լ., Վազըֆներու Մատակարարութիւնը (Գ), Ազդարար, 4.VI.1936:

13 Յունիս 1935-ին Քաղաքացիական Օրենքի գործադրութենէն (4 Հոկտեմբեր 1926) 9 տարի վերջ կը հրատարակուի «Վազըֆներու Օրենքը», որ համայնքային վազըֆները օրինականացնելու բնոյթը կ'ունենայ, գործադրութեան կը դրուի 13 Դեկտեմբեր 1935-ին «2762 թիւ օրենք» անունով: Այս օրենքին ա. յօդուածը որոշապէս կը ճշդէ, որ օրենքին տրամադրութիւնները յատուկ են միայն 4 Հոկտեմբեր 1926-էն առաջուան վազըֆներուն:

Իսկ 1 Օգոստոս 1936-ին 2/5042 թիւ որոշումնագրով գործադրութեան դրուած Վազըֆներու կանոնագիրը²⁸⁶ կը ճշդէ վազըֆներուն եւ անոնց հաստօթաբեր կալուածներուն տեսակները եւ արձանագրութեան ու մատակարարութեան ձեւերը²⁸⁷:

Օրենքը հաստատութեան թուականին համաձայն երկու կարգի կը բաժնէ վազըֆները.

1. - Քաղաքացիական Օրենքին (Թիւրք Գանուն ը Մետենիսի) գործադրութեան թուականէն (4 Հոկտեմբեր 1926) առաջ հաստատուած վազըֆներ

2. - Քաղաքացիական Օրենքին գործադրութեան թուականէն (4 Հոկտեմբեր 1926) վերջ հաստատուած վազըֆներ, որոնց հիմնադրամ (foundation) անունը կը տրուի եւ մասնաւոր տրամադրութիւններ կը պարունակեն վազըֆի համար²⁸⁸: Այս վազըֆները ենթակայ կ'ըլլան Քաղաքացիական օրենքին տրամադրութիւններուն:

Օրենքը երկու խումբի կը բաժնէ նաեւ համայնքային վազըֆները.

1.- Պետականացուած (մազպուօթ)

²⁸⁶ Ըստ Կանոնագրի 39. յօդուածի ա. հատուածին կ'արգիլուի կտակակատարութիւնը օտարահպատակներուն, դատապարտուածներուն եւ յոռի անցեալ ունեցողներուն, նոյնիսկ եթէ աւանդութիւնները թոյլատու ըլլան:

²⁸⁷ Գոյումճեան Լ., Հայ Համայնքային Բարենայատակ Հաստատութիւնները, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փրկիչ Հիւանդանոցի, 1938, Ստամպուլ, էջ 24:

²⁸⁸ Վազըֆներու Նոր Օրենքը, Նոր Լուր, 22. VI.1935, թիւ 5165:

Ուղղակի Վազըֆներու վարչութեան ներքեւ գտնուող վազըֆներ
2.- Մասնատր (Միւլիագ) (Յարակից)

Առանձին մատակարար մարմին (միւթելվելի) ունեցող վազըֆ-
ներ, որոնց կարգին կը գտնուին նաեւ հասարակութեանց վազըֆներ
ը (Ճեմաաթ վազըֆլարը):

Միւլիագ վազըֆները երեք տեսակ են.

ա - Վազըֆնամէներուն մէջ որդուց որդի միւթելվելի նշանակու-
ածներ

բ - Համայնքներու կողմէ մատակարարուող վազըֆներ

գ - Կարգ մը արհեստի տէրերուն յատկացուածներ, որոնք նախ-
կին դրութեան համաձայն կը մատակարարուին իրաւասու անձերու
կամ մարմիններու կողմէ:

Հաստատ եկամուտ ունեցող վազըֆ կալուածներէն զատ, զլիա-
տր վազըֆները կը բաժնուին երեք խումբի.

1. - Կրօնական վայրեր՝ եկեղեցիներ, մատուռներ, վանքեր.

2. - Բարեսիրական հաստատութիւններ՝ հիւանդանոցներ, զե-
րեզմանատուներ, հոգեճաշի խոհանոցներ, աղքատները խնամելու
յատկացուած վայրեր

3. - Համայնքին պատկանող հաւաքավայրեր՝ վարժարաններ,
որբանոցներ, թաղային խորհրդարաններ, մատենադարաններ, ար-
հեստանոցներ եւ աշխատանոցներ:

Օրէնքը իր տեսակին մէջ առաջինն է, որ Թուրքիոյ համայնքնե-
րուն (Ճեմաաթ) վազըֆները օրինականացնելու բնոյթ կ'ունենայ:
Ազգային կալուածներուն հետ սերտ առնչութիւն ունենալուն
պատճառաւ Ազգային վարչութիւնը վեց իրաւագէտներէ բաղկա-
ցած յանձնաժողով մը կ'ընտրէ, որպէսզի հրատարակուած նոր
օրէնքը եւ զայն լուսարանող՝ 2/5042 թիւ որոշումնագրով 1 Օգոս-

տոս 1936-ին գործադրութեան դրուած կանոնագիրը²⁸⁹ ուսումնա-
սիրելով անհրաժեշտ թելադրութիւնները ընէ Վարչութեան:

Վազըֆներու Օրէնքով փոքրամասնութեանց վազըֆները կ'ընդունուին որպէս «միւլիագ», այսինքն առանձին մատակարար մարմին (միւթէվէլլի) ունեցող վազըֆներ: Այսպէս համայնքները կարելիութիւն կ'ունենան ըստ աւանդութեան իրենք ընտրել իրենց վազըֆներու վարչայինները: Օրէնքով վազըֆ կը նկատուին այն ազգապատկան կալուածները, որոնք համայնքներու կողմէ առնուազն 15 տարի գործածուած են իբրեւ «վազըֆ»:

Հայ համայնքին 53 վազըֆներն են՝ եկեղեցիները, գերեզմանատուները եւ անոնց յարակից հիւանդանոց, որբանոց, արհեստանոց, վարժարան եւ նման բարեսիրական հաստատութիւնները, որոնց գոյութիւնն ու օրինաւորութիւնը հաստատած է 2762 համար օրէնքը (կանոնագիր, յօդուած 15)²⁹⁰:

1936-ին, Վազըֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը, յենելով 2762 համար օրէնքին, բոլոր միւթէվէլլիներէն եւ մատակարար մարմիններէն կը պահանջէ պատրաստել ազգային հաստատութիւններու անշարժ գոյքերու ցուցակը պարունակող յայտարարագիր²⁹¹ (սլէյաննամէ) եւ ներկայացնել մինչեւ 12 Մարտ 1936, ստանալու համար վկայագիր²⁹²: Առանց այս վկայագիրին՝ որ կը տրուի Ատենապետին, կարելի չ'ըլլար համայնքային իրաւունքները պաշտպանելու համար առարկութիւններ ներկայացնել:

²⁸⁹ Գույումճեան Լ., Հայ Համայնքային Բարեկատակ Հաստատութիւնները, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փրկիչ Հիւանդանոցի, 1938, Ստամպուլ, էջ 24:

²⁹⁰ Գույումճեան Լ., Վազըֆներու Օրէնքը, Ընդարձակ Տարեգիրք Ս.Փրկիչ Հիւանդանոցի, Ստամպուլ, 1937, էջ 50:

²⁹¹ Կը ստանայ «1936-ի յայտարարագիր» անունը:

²⁹² Ազդ.արար, 29.II.1936:

Քաղաքական ժողովը կը կազմէ մնայուն «Վազըֆներու Յանձնաժողով», որ դրացի համայնքներու ներկայացուցիչներուն հետ սերտօրէն խորհրդակցելով կ'աշխատի: Յայտարարագրերը կը պատրաստուին այս Յանձնաժողովի հսկողութեան տակ եւ պայմանաժամին կը ներկայացուին պատկան մարմիններուն²⁹³:

Վազըֆներու տնօրէնութիւնը շրջաբերականով մը կը յայտնէ, թէ կալուածական հասոյթներէն աւելցած գումարները, ինչպէս նաեւ կալուածներու վաճառքէն գոյացածները «Վազըֆներու Դրամատան» մօտ ի պահ պիտի մնան, հասութաբեր վիճակի վերածուելու համար, պիտի գործածուին միայն անոնց տոկոսները: Կը յայտնէ նաեւ, թէ Վազըֆներու Տնօրէնութեան արտօնութիւնը պիտի առնուի շինութեան եւ նորոգութեան 25 ոսկիէ աւելի ծախսերու համար²⁹⁴:

7 Ապրիլ 1937-ին կը հրատարակուի Հրահանգ²⁹⁵ մը, որ նպատակ կ'ունենայ որոշելու ոչ-խլամ վազըֆներու կտակակատարներուն (միւթէվէլլի) նշանակումի ձեւերը: Հրահանգը կը հաստատէ նշանակովի «անհատ մատակարար»ի դրութիւնը, որ բռնորովին տարբեր է Օրէնքի այն տրամադրութենէն, ուր կը վերահաստատուէր «ընտրեալ մարմինի» դրութիւնը:

Օրէնքի եւ հրահանգի միջեւ գոյութիւն ունեցող այս հակասութեան վերջ կուտայ Ազգային Մեծ ժողովի 1938-ի առաջին նստաշրջանին հրատարակուող եւ 2762 համար Վազըֆներու Օրէնքին 1. եւ 18. յօդուածները բարեփոխող 3513 համար Օրէնքը, ուր կ'որդէգրուի «անհատ մատակարար»ի դրութիւնը:

²⁹³ Գուրամճեան Լ., Հայ Համայնքային Անցուղարձեր 1927-1950, Իսթանպուլ, 1950, էջ 57:

²⁹⁴ Ազդարար, 19.V.1936:

²⁹⁵ Օրինական սկզբունքներու համաձայն Կանոնագիրն ու Հրահանգը չկրնար փոխել Օրէնքին տրամադրութիւնները, այլ կը ճշդէ Օրէնքին գործադրութեան եղանակը:

Այսպես, ազգային հաստատությունները կը սկսին մատակարարուիլ Վազըֆներու հակակշռին ներքեւ «անհատ մատակարարներու»²⁹⁶ կողմէ, որոնք պաշտօնի կը կոչուին կառավարութեան կողմէ, կատարուած քննութեան մէջ յաջողութիւն արձանագրելէ յետոյ²⁹⁷:

Վազըֆներու Օրէնքով ոչ-իսլամ փոքրամասնութեանց բոլոր հաստատություններուն տնօրինումը կը տրուի Վազըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան, այսինքն Պետութիւնը կը միջամտէ փոքրամասնութեանց հաստատություններուն ներքին գործերուն, ինչ որ բոլորովին կը հակասէ Լօզանի Դաշնագրին 40. յօդուածին²⁹⁸:

1960-ական թուականներուն երբ Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ կը ծագի Կիպրոսի հարցը, Վազըֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը ոչ-իսլամ համայնքային վազըֆներէն կը պահանջէ ներկայացնել՝ իրենց անշարժ գոյքերուն կտակագրերը (վազֆիյէ) եւ քանի որ անոնք հիմնադրուած ըլլալով Օսմանեան կայսրութեան շրջանին, չեն ունենար նման կտակագրեր, որպէս կտակագիր կ'ընդունուին 1936-ին պատրաստուած յայտարարագրերը, ուր բնականաբար գոյութիւն չ'ունենար որեւէ յօդուած այս հաստատություններուն յետագային ձեռք բերելիք անշարժ գոյքերուն մասին:

²⁹⁶ Նոր Լուր, 25.VIII.1938:

²⁹⁷ Macar E., Cumhuriyet Döneminde Istanbul Rum Patrikhanesi, Istanbul, 2003, s. 164.

²⁹⁸ Յօդուած 40.- Ոչ-իսլամ փոքրամասնութեանց վերաբերող Թուրք հպատակներուն համար կիրարկուած նոյն գործառնութիւններէն եւ ապահովութիւններէն պիտի օգտուին: Ասոնք մասնաւորաբար – ծախքը իրենցմէ ըլլալու պայմանաւ- բարենպաստակ, կրօնական եւ ընկերային ամէն տեսակ հաստատություններ հիմնելու, վարելու եւ հսկելու, եւ այս տեղերուն մէջ իրենց լեզուն ազատօրէն գործածելու եւ կրօնական արարողութիւնները ազատօրէն կատարելու մասին, հաւասար իրաւունքներ պիտի վայելեն:

ՎազրՖներու Ընդհանուր Տնօրէնութիւնը օգտուելով այս բնական պակասութենէն կ'որոշէ, թէ այս ազգային հաստատութիւնները իրաւունք չունին տիրանալու որեւէ անշարժ գոյքի 1936-էն վերջ:

Ուստի, այդ թուականէն վերջ գնելով, ժառանգութեամբ, նուիրատութեամբ կամ կտակով ձեռք բերուած բոլոր կալուածները 1974-ին կ'առնուին իրենց ձեռքէն²⁹⁹ եւ կը վերադարձուին նախորդ տէրերուն կամ անոնց ժառանգորդներուն իսկ այս վերջիններու բացակայութեան պարագային կ'անցնին ՎազրՖներու Ընդհանուր Տնօրէնութեան, Պետական գանձին կամ Պետական կալուածի, որոնց փոխարէն ոչ մէկ հատուցում կը կատարուի համայնքին:

1936-ի յայտարարագրերը, որոնց պահանջը կը բացասարուի Հանրապետական կառավարութեան կալուածահամարի աքձանագրութիւններու կարգաւորումով, երկար տարիներ ետք պատճառ կը հանդիսանան մեծ թիւով ազգային կալուածներու կորուստին: Այսպէս՝ 53 ազգային վազրՖի 661 անշարժ գոյքը կ'ապասեփակնացուի, որոնց 143 հատը վերջին 10 տարուայ ընթացքին կատարուող օրինական փոփոխութիւններու արդիւնքով կը վերադարձուին³⁰⁰: Ասոնց կարգին է նաեւ Թուրքիայի Հայկական ճամբարը (Գամփ Արմէն)³⁰¹, որուն 8552 քառակուսի մէթր տարածքը 1961-ին գնուած է Հայ բողոքական եկեղեցիի հիմնադրամի կողմէ եւ ծառայած՝ որպէս ամառային ճամբար Կէտիկփաշայի Հայկական վարժարանի որբ ու չքաւոր սաներուն:

²⁹⁹ Վճռաբեկի 8 Մայիս 1974 թուակիր որոշումը կ'ըլլայ հետեւեալը. «Ոչ-իսլամներու կազմած բարոյական անձնատրութիւններուն արգիլուած է ձեռք բերել անշարժ գոյք»:

³⁰⁰ Koptaş Rober, *En büyük mülk iadesi*, Agos, 7.II.2014.

³⁰¹ Այս ճամբարը Հայ համայնքին վերադարձուեցաւ 27 Հոկտեմբեր 2015-ին. բողոքի լայնածաւալ միջոցառումներու եւ հերթապահութեան շնորհիւ:

ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Հայերը 1100-էն շատ առաջ մինչեւ իսկ դեպի Հնդկաստան, Սեւ Մով եւ Միջերկրական առետրական գործունէութիւն ծաւալած են: Իսկ այդ թուականէն սկսեալ առետուրի համար կանոնաւոր կերպով կ'երթեւեկեն դեպի Ղրիմ, Լեհաստան եւ Կ. Պոլիս: Հայոց առետրական գործունէութեան ամենագորաւոր կեդրոնը կ'ըլլայ ընդհանրապէս Թուրքիա, մասնաւորապէս Կ.Պոլիսը, ուր հինգ դար շարունակ կը զբաղին առետուրով: 1830-էն սկսեալ Կ. Պոլսոյ մէջ կը հիմնուին աւելի քան 100 առետրական երեւելի տուներ, որոնցմէ կարելի է նշել Քափամաճեան, Յակոբեան, Պէշիկթաշլեան, Էսաեան, Աստարճեան, Թօփալեան, Իբրանոսեան, տպածոյի գործի մէջ առաջնատար՝ Գարակէօզեան եւ արտածումի վաճառականութեան զարկ տալով Կ.Պոլսոյ առետրական հրապարակին վրայ բարձր դիրքի հասած՝ Կիւլպէնկեան առետրական տուները: 1830-էն ասդին Հայեր կարեւոր դիրք կը զբաւեն նաեւ Իզմիրի, Պրուսայի, Էտիրնէի եւ Տրապիզոնի առետրական հրապարակներուն վրայ³⁰²: Այսպէս՝ Օսմանեան կայսրութեան Հայ վաճառականները երկրին մէջ առաջ կը տանին վաճառականութիւնը մինչեւ 1914-ի Համաշխարհային պատերազմը, տիրապետելով առետուրի եւրոպական մեթոտներուն եւ դառնալով Թուրք-Եւրոպական առետուրի միջնորդներ: ԺԹ. դարուն պոլսահայութեան հիմնական հատուածը կը կազմեն արհեստաւորները՝ սեղանաւոր, ոսկերիչ, հացագործ, ժամագործ, կօշկակար, շղարշի վաճառական, մետաքսագործ եւլն: Հայ արհեստաւորները մինչեւ Հանրապետութեան շրջան բազմաթիւ բնագաւառներու մէջ չեն ունենար մրցակիցներ:

³⁰² Ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1935, Ա. Տարի, էջ 110:

Թուրքիոյ Հանրապետական կառավարութիւնը հակառակ իր գերազանց ճիգերուն, չի յաջողիր ձեռք բերել տնտեսական անկախութիւն, որ կատարեալ անկախութեան գլխաւոր յայտարարնշանն է: Կառավարութիւնը անտանելի ըլլալու աստիճան ծանր տուրքերու կ'ենթարկէ ժողովուրդը, որ այդ պատճառաւ տնտեսապէս կը փճանայ: Երկրին, այս կարգին նաեւ Պոլսոյ տնտեսական կեանքը կը խորտակուի, հակառակ այն բոլորն ջանքերուն զոր կ'ընեն կառավարութիւնը մղում տալու համար վաճառականութեան եւ արհեստներուն: Իրար կը յաջորդեն սնանկացումներ: Բնականաբար սնանկացումներէն իրենց բաժինը կը ստանան նաեւ քաղաքի Հայ, Յոյն եւ Հրեայ տարրերը, որոնք վաճառականութեան վարժ ու ընդունակ տարրերն են երկրին: Այս վիճակին պատճառը կ'ըլլայ Թուրք վաճառականները քաջալերելու եւ նպաստաւորելու համար այլացեղ վաճառականներու դէմ կառավարութեան կողմէ յարուցուած դժուարութիւնները:

Հայ վաճառականները՝ զրկուած ըլլալով Փոքր Ասիա երթելէկելու իրաւունքէն, չեն կրնար գործակցիլ այդտեղի առետրականներու հետ, ուր միայն Թուրքերը կը գործեն: Շահատուրքի քմահաճ որոշումներու հետեւանքով ալ Թուրքիոյ Հայոց մնացորդ տնտեսութիւնը արագօրէն կը փճանայ: Անբաղդատելի կերպով բարձր կ'ըլլան Հայ խանութպաններուն վճարած տուրքերը՝ կրկնապատիկը կամ եռապատիկը Թուրքերէն գանձուածներուն: Այսպէս՝ Հայ առետրականը ճնշուած եւ տնտեսական հալածանքի մատնուած կը մնայ Պոլսոյ մէջ: Իսկ միւս կողմէ, 31 Մարտ 1926-ի պաշտօնաթերթին մէջ հրատարակուած 778 համար «Պաշտօնէից Օրէնք»ի 4. յօդուածի տրամադրութեան համաձայն պետական պաշտօնէայ ըլլալու համար նախապայման կ'ըլլայ «Թուրք» ըլ-

լալ³⁰³: Հայերը ինչպես նաև միւս փոքրամասնութիւնները, պետական պաշտօններէն բոլորովին կը վտարուին: Մյս օրէնքը կը գործադրուի մինչեւ 1965³⁰⁴: Կառավարութիւնը կը հարկադրէ բոլոր Երոպական ընկերութիւնները, վարչութիւններն ու հաստատութիւնները պաշտօնէ հեռացնել իրենց Հայ եւ Յոյն պաշտօնեաները եւ անոնց տեղ առնել Թուրքերը: Հարիւրաւորներ այսպէս կը գրկուին իրենց պաշտօնէն:

1927-ին Երոպական երկիրներու հետեւելով, կը հրատարակուի «Դեղարաններու եւ Դեղագործներու Մասին Օրէնք»ը, որուն գործադրութեան ընթացքին մեծ թիւով Հայ դեղագործներ պարտաւոր կ'ըլլան փակել իրենց դեղարանը³⁰⁵:

25 Յունիս 1927 թուական եւ 1149 համար «Ապահովագրութեան եւ ապահովագրական ընկերութիւններու քննութեան մասին օրէնք»ի 23. յօդուածին համաձայն նախապայման կ'ըլլայ Թուրք ըլլալը օտար ապահովագրական ընկերութիւններու բոլոր պաշտօնեայ եւ աշխատողներուն, բացառելով տնօրէնը: Նոյն պայմանը կը դրուի նաև 28 Մայիս 1927 թուակիր եւ 1055 համար «Ճարտարարուեստը քաջալերելու օրէնք»ին մէջ³⁰⁶:

1929-ին կը սկսի տնտեսական համաշխարհային տագնապ մը, որուն պատճառը կ'ըլլայ Ճարտարարուեստական եւ երկրագործական սպառումի նուազումը: Երոպայի եւ Ամերիկայի Ճարտարարուեստները, որոնք հիմնուած էին շուկայ ունենալով ամբողջ աշխարհի երկիրները, 1929-էն սկսեալ կը ստիպուին բաւականանալ այդ շուկայի մէկ մասովը միայն, կը կորսնցնեն Ռուսիոյ,

³⁰³ Okutan Ç., նշծ. աշխ., էջ 140:

³⁰⁴ Aktar A., նշծ. աշխ., էջ 119:

³⁰⁵ Մոսկու, 21.1.1927:

³⁰⁶ Ulu C., Türkiye Cumhuriyeti'nde Ermeniler, Ankara, 2009, s. 229-230.

Չինաստանի և Հնդկաստանի շուկաները: Թուրքիայ ալ իր յաժի-
նը կը ստանայ այս տագնապէն: Ներածումները կը սահմանափա-
կուին արտածումի քանակութեամբ³⁰⁷: Ազգային տնտեսութիւնը
պաշտպանելու համար «Տագնապի տուրք» կ'առնուի գրեթէ ամ-
բողջ ժողովուրդէն՝ 10-16 % համեմատութեամբ³⁰⁸: Պոլսոյ հայու-
թիւնը բաւական կ'ազդուի մինչեւ 1934 շարունակուող այս տնտե-
սական տագնապէն: Արհեստաւոր դասակարգը քիչ շատ ապ-
րուստ մը կը ճարէ, բայց առեստրական դասակարգը շատ կը նե-
ղուի: Ուստի տնտեսական հարկադրանքով թէ՛ Պոլիսէն եւ թէ՛ գա-
ւառներէն հոսանք մը կը գոյանայ դէպի արտասահման և կը ծա-
ւալի հետզհետէ: Իսկ մնացողները ամէն ջանք կը գործադրեն՝ ա-
պահովելու համար իրենց ապրուստը:

³⁰⁷ Արեւելք, 26.XI.1931:

³⁰⁸ Արեւելք, 23.XI.1931:

ԱՐՉԵՍՏՆԵՐ

Հանրապետութեան շրջանին Հայ վաճառականներու թիւը անհամեմատելի չափով կը նուազի: Բայց եւ այնպէս ճարտարարուեստի շատ մը ճիւղերուն մէջ իրենց առաջատար դիրքը կը պահեն Հայ վաճառականներ: Պոլսոյ հիսուածեղէնի հրապարակին վրայ ամենէն փայլուն դիրքը կը գրաւեն Հայեր, որոնք անընկճելի կերպով կը մրցին Հրեայ կարող վաճառականներու խմբակին հետ:

Թուրքիոյ մէջ ռուսական հիսուածեղէնի արտադրութեանց վաճառման միակ ներկայացուցիչը կ'ըլլայ Արմենակ Շէքերեան վաճառատունը, իսկ շղարշի (թիւլպենտ) վաճառականութիւնը, եազմայի եւ զանազան արժէքաւոր կերպասներու առետուրը եւս ամբողջութեամբ կ'ըլլայ Հայերուն ձեռքը: Նշանակելի գործունէութիւն կ'ունենան նաեւ կաշեգործութեան, կաշիի գործարանատիրութեան, կօշկակարութեան, շինանիւթերու առետուրին մէջ: Հայեր կ'ըլլան նաեւ մանածի եւ բուրդի, մետաքսեղէնի եւ մուշտակի վաճառականներ, վառելանիւթի, մթերանոցներու եւ դեղագործական արտադրութիւններու շտեմարանատէր:

Երկաթեղէնի հրապարակին վրայ եւս Հայեր գործունէութիւն կ'ունենան կազմելով Թուրքիոյ երկաթի առետուրի փառքը³⁰⁹: Տեղական վառարանի արտադրութեան գործը կը զարգացնեն, նաեւ Եւրոպական եւ տեղական վառարաններու ապառման գործին առաջնութիւնը կը մնայ Հայերու ձեռքը: Անոնք կը զբաղին նաեւ ջերմսբաշխի շինութեամբ, կ'ունենան ելեկտրական նիւթերու եւ երկրագործական գործիքներու հաստատութիւններ³¹⁰: Հայերը

³⁰⁹ Ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1938, էջ 62:

³¹⁰ Ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1939, էջ 98:

կ'ըլլան արտասահմանեան նշանաւոր ֆիրմաներու (լուսանկարչական եւ երաժշտական գործիքներու, ժամացոյցներու, հեծանիւի եւլն) Պոլսոյ ներկայացուցիչները, շոգենաւային եւ օդանաւային գործակալներ, ադանդերավաճառներ, պահածոյի եւ օղիի գործարանատէրներ, համբաւաւոր դերձակներ, տպագրիչներ, փորագրիչներ, ատաղձի ինչպէս նաեւ մեքենաներու եւ աշխատասեղաններու վաճառականներ, ծաղկավաճառներ եւ սակարանի գործակալներ: Ճաշարանապետութեան եւ պանդոկատիրութեան մէջ եւս Հայերը կը հասնին բարձրութեան աստիճանի մը, որուն զլիսաւոր օրինակը կը հանդիսանայ Թորատլեան Պանդոկը³¹¹: Առողջապահական գործունէութեանց մէջ եւս օգտաշատ դեր կը կատարեն Հայ բժիշկներ ու դեղագործներ, ինչպէս նաեւ դեղերու առեստորով զբաղող վաճառականներ³¹²: Ճաշակաւոր ու գեղեցիկ գործեր արտադրող Հայ ճարտարապետներ կը շինեն բաղաքին փայլը աւելցնող շէնքեր: Ապահովագրութեան բնագաւառին մէջ բացառիկ դիրքի կը տիրանայ Հայ մը՝ Սիմոն Գայսերլեան, որպէս տնօրէններէն մէկը Ֆրանսական «Իւնիոն» ապահովագրական հաստատութեան³¹³:

Կարելի չէ թերագնահատել Թուրքիոյ տնտեսական կեանքին մէջ Պոլսահայերու կատարած կարեւոր դերը, որոնք օժտուած ըլլալով ժառանգական յատկութիւններով, կ'ըլլան ճարտարագործ եւ վաճառական համայնք մը:

Ոսկերչութիւնը Թուրքիոյ մէջ կ'ըլլայ հայերուն յատուկ ասպարէզ մը, զոր կը կատարեն մասնագիտութեամբ: Անոնք նախանձախնդիր վարուելով կը ջանան իրենց մասնագիտութիւնը

³¹¹ Ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1937, էջ 101-102:

³¹² Ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1939, էջ 101:

³¹³ Ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1935, էջ 112:

վերապահել ազգականներու եւ ազգակիցներու: Գոց շուկայի Չուխաճը, Վարազը, Զինճիրլի եւ Գըլըճճըլար խաները կ'ըլլան Հայ ոսկերիչներու աշխատանոցները, որոնք կը զբաղին այս արհեստին զանազան ճիւղերով. Ինչպէս՝ աղամանդայոկիչ (էլմասթրաշ), ընդելուզիչ (մըհլայըճը), փորագրիչ (գալէմքետար), փայլագործ (ճիլաճը), կիտուածագործ (մինէճի), զուգաթել ցանցահիւս (թէքքետարի), ձուլիչ (տեօքմէճի) եւլն:

Պոլսահայերը ոսկերչութեան առընթեր իւրացուցած ըլլալով ժամագործութիւնն ալ իրենց հաստատութիւնները կ'ըլլան ժամացոյցի աշխարհահռչակ ներկայացուցիչներ: Այսպէս՝ Ճէզվէճեանները կ'ըլլան «Լոնժին» ժամացոյցներու Թուրքիոյ ընդհանուր ներկայացուցիչը, Նաճառեան եղբայրները կը վաճառեն «Նաճառ» եւ Հիսարլեան Լեւոն «Հիսլոն» ժամացոյցները³¹⁴:

Տառերու յեղափոխութենէն (1 Նոյեմբեր 1928) վերջ խումբ մը երեսփոխաններ կը մտայղանան Մուսթաֆա Քէմալին համար պատրաստել տալ նոր տառերու գեղարուեստական շքեղ ցուցատախտակ մը, ձեռնհաս արուեստագէտի մը:

Լեւոն Մազլմեան արծաթեայ յատակի վրայ համակ ոսկի նոր այբուբենի տառերը եւ շուրջը ոսկի գեղաքանդակ վարդերով յուշատախտակ մը կը պատրաստէ, որուն մասին իր բարձր գոհունակութիւնը կը յայտնէ Քէմալ փաշան: Ազգային մեծ ժողովը Լեւոն Մազլմեանին կը դրկէ զնահատման պաշտօնազիւր մը:

³¹⁴ Շատտուրեան Վ., Ուրուագիծ Թրքահայ ոսկերչութեան պատմութեան, Շոդակաթ Տարեկիթ 1974-1976, Իսթանպուլ, 1975, էջ 18-25:

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ (ՀԱՅ ՊԱՆՔԱ)

Առեւտրականներ Յարութին Ասլանեանի, Հեթում Սէթեանի, վաճառականներ՝ Կարապետ Թահթապուրունեանի, Մկրտիչ Մանուկեանի եւ դրամատէր Ա.Կ.Արսէնի միջեւ 11 Յունիս 1911-ին Կ.Պոլսոյ մէջ իւրաքանչիւրը 5 ոսկինոց, կրողին վճարելի 20.000 բաժնէթուղթերու բաժնուած 100.000 Օսմանեան ոսկի դրամագլուխով կը կազմուի Օսմանեան անանուն ընկերութիւն մը, որմէ վերջ 11 Բամագան³¹⁵ 1328-ին(1912), 2 Սեպտեմբեր 1326 (1910) թուակիր Կայսերական իրատէյով կը հիմնուի գուտ հայկական դրամագլուխով հաստատուած առաջին հայկական դրամատունը՝ «Օսմանեան Առեւտրական Դրամատուն»ը³¹⁶: Ընկերութեան գործերը կը վարէ 5-9 անդամներէ բաղկացած Վարչական Խորհուրդ մը, որ կ'ընտրուի «Բաժնետէրերու Ընդհանուր Ժողով»ին կողմէ: Իսկ առաջին երեք տարուան համար բացառաբար Վարչական Խորհուրդի անդամները կ'ըլլան Եղուարդ Գարակեօզեան, Ա. Կ. Արսէն, Կարապետ Թահթապուրունեան, Մկրտիչ Մանուկեան, Յարութին Ասլանեան, Հեթում Սէթեան եւ Սիմոն Գայսերլեան³¹⁷:

Ըստ կանոնագրի, Վարչական Խորհուրդի իւրաքանչիւր անդամ կ'ունենայ 150 բաժնէթուղթ, որոնք Ընկերութեան սնտուկին մէջ իր անունով աւանդ կը մնան իր պաշտօնի բովանդակ տեւողութեան:

³¹⁵ Իններորդ ամիսն է:

³¹⁶ Օսմանեան Առեւտրական Դրամատան Կանոնագիր, Կ. Պոլիս, 1913, Առեւտրական Նոր Տպարան Յովակիմեան, էջ 1:

³¹⁷ Նոյն տեղէն, էջ 6:

Օսմանեան Առեւտրական Դրամատունը (Հայ Պանքա), որուն կեդրոնատեղին կը գտնուէր Կ.Պոլիս Աշըր Էֆէնտի փողոց, Աստարճեան խանի մէջ, կը սնանկանայ³¹⁸ 1922-ին երբ դրամատան բացարձակ լիազօրութիւններու տէր տնօրէնը՝ Թազուր Սիւքեասեան, Վարչական ժողովի անդամ Խախուտեանի աջակցութեամբ պանքայի դրամազլխին մեծ մասը (մօտաւորապէս 200.000 Ոսկի) առնելով արտասահման կը փախի: Բայց նոյն տարուան Դեկտեմբերին Գերմանիոյ Պերլին քաղաքին մէջ ձերբակալուելով կը դրկուի Պոլիս, ուր կը դատուի:

Պոլսոյ պատժական ատեանը գողութեան մէջ անպատասխանատու կը հռչակէ տնօրէնը, բայց դատախազները վերաքննութեան կը դիմեն եւ վճռաբեկ ատեանը կը բեկանէ նախադատ ատեանի վճիռը: Սիւքեասեան երկրորդ անգամ կը սկսի դատուիլ Պոլսոյ պատժական ատեանին առջեւ: Երկարատեւ դատավարութենէ մը վերջ 1928-ի սկիզբը Սիւքեասեան կը դատապարտուի մէկ տարի բանտարկութեան եւ իւրացուցած դրամները վերադարձնելու³¹⁹:

Սիւքեասեանի եւ իր մեղսակիցներուն պատճառաւ ծանր կորուստներու կ'ենթարկուին ո՛չ միայն Հայ առեւտրականներ, այլ նաեւ ազգային հաստատութիւններ, փոքր խնայողներ, որոնք իրենց խնայողութիւնները վստահած էին յիշեալ դրամատան:

³¹⁸ Վերջին Լուր, 12.X.1922:

³¹⁹ Արեւ, 9.I.1928:

ՀԱՅՈՑ «ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐ»Ը

Ի՞նչ է հիմը եւ ուրկէ ծագում առած է «Լքեալ գոյքերու» դրութիւնը, որ կուգայ օրինականօրէն իւրացնել այն բոլոր շարժուն եւ անշարժ գոյքերը, գորս Հայերը կը պարտաւորուին լքել 1915-ի Մեծ եղեռնէն սկսեալ:

23 Յունուար 1913-ին Էնվեր Փաշայի ղեկավարութեամբ կատարուած Պապ-ը-Ալիի յարձակումով կը սկսի Իթթիհատականներու իշխանութիւնը, որ կը շարունակուի անընդհատ մինչեւ 1918: Այդ շրջանին հրապարակուած առժամեայ օրէնքներուն թիւը 100-էն պակաս չէ, որոնց կարգին են նաեւ Հայոց «Տեղահանութեան» եւ «Լուծարման» Օրէնքները: Նախ 13 Ապրիլ 1331(1915)-ին կը հրատարակուի առժամեայ օրէնք մը, ըստ որուն ժողովուրդին ձեռք գտնուող զէնքն ու զինամթերքը կը յանձնուի զինուորականներուն: Օրէնքին առաջին յօդուածը 26 Ապրիլին փոփոխութեան կ'ենթարկուի եւ կ'ըլլայ. «Այն վայրերուն մէջ, ուր հրամանատարութիւնները յարմար կը դատեն, ժողովուրդը բոլոր զինամթերքը զինուորականներուն կը յանձնէ»: Մինչ այդ 2 Ապրիլ 1331-ին(15 Ապրիլ 1915) հրատարակուող կանոնագրութեան համաձայն կը կարգադրուի անձագրային տոմարը, որպէս՝ իսլամ, ոչ-իսլամ եւ օտարական³²⁰:

Տեղահանութեան Օրէնքը կը հրատարակուի 14 Մայիս 1331-ին (27 Մայիս 1915), որուն որոշումը կատարութիւնը կ'ընդունի 30 Մայիս 1331(1915)-ին: Բայց եւ այնպէս Ներքին Գործոց Նախարար Թալեաթ Փաշա, Վանի Կուսակալ Ճելվտէրին եւ Պիթլիսի Կուսակալ Մուսթաֆա Ապտիլիալիքին ուղարկած 26 Ապրիլ 1331-ի (9 Մայիս 1915) հեռագրին մէջ կը գրէ. «Որոշուած է եւ սպտկան իշխանութիւններուն տեղեկացուած, Վանի մէջ խիտ բնակութեան

³²⁰ Onaran N., Emval-i Metruke Olayı, İstanbul, 2010, s. 33-34.

տեր Հայերը դէպի հարաւ արտրել եւ պահանջուած՝ անյապաղ կիրարկել որոշումը: Այս առաքման ենթակայ պիտի ըլլան նաեւ Էրզրումի հարան ու Պիթլիսի մէջ ապրող Հայերը»: Իսկ կառավարութեան ղրկած 13 Մայիս 1331-ի (26 Մայիս 1915) արտօնագրով ան կը տեղեկացնէ, թէ արդէն սկսած է Հայոց փոխադրութիւնը. ուստի պէտք է փութացնել կարգադրութիւնը³²¹: Իսկ 13 Սեպտեմբեր 1331-ին (26 Սեպտեմբեր 1915) կը մշակուի Լուծարման Օրէնքը, որ իր 11 յօդուածներով կուգայ իրաւական շարժառիթ ստեղծել հեռագրի հրահանգներով կատարուած թալանի գործողութիւններուն: Այսպէս, Հայոց գոյքերուն բաժանումէն ու վաճառումէն վերջ միայն Նախարարական հեռագրերով քաղաքներու իշխանութիւններուն կը հրահանգուի կատարել գոյքերուն ապահովութիւնն ու ցուցակագրումը³²²: Առժամեայ Լուծարման Օրէնքը, որ Օսմանեան Խորհրդարանի բացուելէն երեք օր առաջ կը մշակուի ու անմիջապէս կը գործադրուի, Խորհրդարանի նիստերուն մէջ անգամ բանավէճի նիւթ կը դառնայ: Խորհրդարանի 30 Նոյեմբեր 1331-ի (13 Դեկտեմբեր 1915) նիստին Ծերակոյտի անդամ Ահմետ Ռըզա կ'առարկէ: օրէնքի գլխաւոր կէտերուն, հանդէս գալով հետեւեալ յայտարարութեամբ. «Օրէնքին հակառակ է Հայոց հարստութիւնն ու ունեցուածքը որակել «լքեալ գոյք», քանի որ անոնք կամաւոր կերպով չեն լքած իրենց գոյքերը: Անոնք բռնութեամբ տեղահանուած են: Այժմ կառավարութիւնը իրեն պաշտօնէաներուն միջնորդութեամբ կը վաճառէ այդ գոյքերը: Առանց իմ յօժար կամքիս ոչ ոք կրնայ վաճառել իմ ունեցուածքը: Սահմանադրութեան (Քանունը Էսասի) 21. յօդուածը կ'արգիլէ այս բանը: Պէտք չէ ընենք այս բանը,

³²¹ Onaran N., նշծ. աշխ., էջ 42:

³²² Onaran N., նշծ. աշխ., էջ 48:

որ նաեւ անգթութիւն է: Ո՛չ Օսմանեան խիղճը եւ ո՛չ ալ օրէնքը կ'արտօսէ նման բան մը»:

Արտաքին Գործոց Նախարարութեան ուղարկած 4 Նոյեմբեր 1915-ի տեղեկագիրին մէջ Դեսպան Մորկէնթաու եւս կը հաստատէ այս բանավէճը, ինչպէս նաեւ Ահմետ Ռըզայի դէմ Թալէաթի այն սպառնալիքը, որ եթէ ինք շարունակէ այս ուղղութեամբ, Հայերու հանդէպ աւելի խիստ միջոցներու կը ձեռնարկուին: Այդ պատճառաւ ալ Լուծարման Օրէնքը կը մնայ անփոփոխ³²³: 13 Սեպտեմբեր 1331-ի (26 Սեպտեմբեր 1915) օրէնքով, ինչպէս նաեւ այս օրէնքի 8. յօդուածին համաձայն պատրաստուած 26 Հոկտեմբեր 1331-ի (8 Նոյեմբեր 1915) կանոնագրութեամբ կը նախատեսուի կազմել Լուծարման Յանձնաժողովներ՝ հաշուեյարդարի ենթարկելու համար այլուր փոխադրուած անհատական ու բարոյական անձնաւորութիւններու «լքուած գոյքերը», անոնց պարտքերն ու պահանջները: Իսկ կանոնագրութեան մէջ յաւելեալ կը խօսուի նաեւ յանձնախումբի մասին: Յանձնախումբի գործունէութիւնը կը սահմանուի գիւղաքաղաքով, իսկ Լուծարման Յանձնաժողովինը՝ մէկ կամ մի քանի քաղաքներով: Յանձնախումբը տեղահանման հրահանգը ստանալէ վերջ, երեք օրուան մէջ իր գործունէութեան տեղեկագիրը պետք է յանձնէ Լուծարման յանձնաժողովին³²⁴: Ներքին Գործոց Նախարարութեան կապուած Լուծարման յանձնաժողովները կ'ունենան այս նախարարութեան կողմէ նշանակուած նախագահ մը, Արդարադատութեան եւ Ելմտական Նախարարութիւններուն կողմէ ընտրուած երկու անդամներ: Այսպէս կը կազմուին 33 յանձնաժողովներ, որոնցմէ ամէն մէկը կ'ունենայ երկու տեսրակ, ուր

³²³ Dadrian V., *Ermeni Soykırımı Tarihi*, İstanbul, 2008, s. 337-338.

³²⁴ Onaran N., նշծ. աշխ., էջ 65:

գրի առնուած կ'ըլլան տեղահանուած Հայերու «լքեալ գոյքեր»ուն ցանկը, անոնց տեսակը, քանակը, գնահատուած արժէքն ու տիրոջ անունը: Այս տետրակներուն ճակատագիրը այսօր յայտնի չէ դժբախտաբար³²⁵: Հայոց կողոպուտը օրինականացնող այս կանոնագրութեան գործադրութիւնը կապուած կը մնայ Ներքին Գործոց եւ Ելմտական Նախարարութիւններուն, որոնց երկուքն ալ Թաւրիզի կողմէ գլխատրուած է: Այսինքն՝ կողոպուտին կազմակերպիչն ու գործադրողը ինք կ'ըլլայ³²⁶: Ըստ օրէնքի 2. յօդուածին, տեղահանուած անձերու սեփականութեան տակ գտնուող վազըֆ կալուածներն ու հողերը Վազըֆներու Տնօրէնութեան, իսկ մնացած անշարժ գոյքերն ալ Պետական գանձի անունով կ'արձանագրուին: Յիշեալ երկու տեսակի կալուածներուն փոխարժէքը Պետական գանձէն վճարուելով հաշուեյարդարը կատարուելէն ետք, մնացած գումարը կը տրուի տիրոջը³²⁷: Օրէնքի 3. յօդուածին համաձայն «լքեալ գոյքեր»էն անոնք, որոնք առարկելի չեն աճուրդով կը ծախուին եւ գոյացած գումարը սեփականատիրոջ անունով որպէս աւանդ Պետական գանձին կը յանձնուի: Իսկ 9. յօդուածով Վազըֆներու Տնօրէնութեան եւ Պետական գանձին արձանագրուած վազըֆ կալուածներն ու հողերը, ինչպէս նաեւ տարբեր անշարժ գոյքերը «Գաղթականներու վերաբերեալ կանոնագրին» համաձայն, գաղթականներուն ձրի կը փոխանցուին եւ կը տրուին:

³²⁵ Onaran N., նշծ. աշխ., էջ 74:

³²⁶ Վարդան Լ., Հայկական Տասնըփնգը եւ Հայոց Լքեալ Գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 105:

³²⁷ Այս 2. յօդուածին յաւելում մը կը հրատարակուի 22 Սեպտեմբեր 1332 (1916)-ին, ուր կ'ըսէ. «Միայն թէ, այլուր փոխադրուած յիշեալ անձերուն յատկացուած վայրերուն մէջ, իրենց բնակութիւնն ու ապրուստը ապահովելու նպատակաւ, անուէր (մահիլ) եւ Պետութեան կալուածներէն ու հողերէն ձրի բնակավայր եւ հողեր յատկացնելով կտաւաբարութիւնը կրնայ օգնել իրենց»:

Լուծարման յանձնաժողովները 1916 Մայիսին կը կցուին Ելմտական Նախարարութեան: Թէև օրէնքի 3. յօդուածին համաձայն գումարը սեփականատիրոջ անունով որպէս աւանդ Պետական գանձին պէտք է յանձնուի բայց Օսմանեան Կայսրութեան Պետական պիտօջէի (Ելեմուտք) հետեւեալ տուեալներէն ակնյայտ կը դառնայ, թէ օրէնքը չէ գործադրուած, քանի որ Պետական պիտօջէն մեծ աճ կ'արձանագրէ, հակառակ պատերազմի ծանր պայմաններուն եւ կ'ըլլայ

1913-1914 տարեշրջանին 35.329.950 Օսմանեան լիրա

1914-1915 տարեշրջանին 57.841.339 Օսմանեան լիրա

1916-1917 տարեշրջանին 82.980.780 Օսմանեան լիրա:

Նոյնպէս դժուար չէ ենթադրել ակը Իթթիհատականներու 1918-ին հրապարակ հանած 19 միլիոն Օսմանեան Ոսկին: ց արժեթուղթերուն, որ կ'ըլլայ Կայսրութեան պատմութեան մէջ առաջին անգամ³²⁸:

Իթթիհատական կառավարութիւնը չի բաւարարուիր Հայոց Օսմանեան դրամատուններու եւ ապահովագրական ընկերութիւններու մէջ գտնուող աւանդներուն տիրանալով, այլեւ կը փորձէ իւրացնել անոնց ապահովագրական օտար ընկերութիւններու մէջ գտնուող գումարները: Պոլսոյ ԱՄՆ-ու դեսպան Հէնրի Մորկենթաու (H. Morgenthau) իր յուշերուն մէջ կը գրէ, թէ Թալէաթ օր մը իրեն ըսած է. «Երանի օգնես մեզի ձեռք բերել Ամերիկեան ապահովագրական ընկերութիւններու Հայ աւանդատէրերուն ցանկը: Բոլորն ալ մեռած կը համարուին եւ քանի որ ժառանգորդ ալ չունին այդ գումարները կը պատկանին Թուրք Պետութեան»: Դեսպանը կ'աւելցնէ թէ ըսած է. «Ինձմէ այդ տեսակի ցանկ մը չես կրնար

³²⁸ Cetinoglu S., Ermeni Emval-i Metrukeleri uzerine, www.birinkimdergisi.com/birikin/makale, s. 12.

ձեռք բերել» ու հեռացած անոր քովէն³²⁹: Թալեաթ ուրիշ օր մըն ալ դեսպանին կ'առաջարկէ ԱՄՆ-էն Հայ տարագիրներու օգնութեան համար ուղարկուած գումարը յանձնել Թուրքերուն, քանի որ անոնք եւս Հայերու չափ կարիք ունին այդ օգնութեան, եթէ ոչ աւելի³³⁰: Տեղահանուած խումբ մը Հայու վերադարձի խնդրանքով Ներքին Գործոց Նախարարութեան դիմող դեսպան Վոլֆ Մէթերնիխին տրուած պատասխանին մէջ կ'ըսուի. «Կարելի չէ արտօնել անոնց վերադարձը, որովհետեւ իրենց ունեցուածքին արդէն Լուծարման յանձնաժողովը տիրացած է, ուստի իրենք չեն կրնար վերագտնել իրենց կալուածները»³³¹:

Թուրք կառավարութիւնը Հայերէն բռնագրաւած գումարներուն մէկ մասն ալ որպէս աւանդ կը ձգէ իր դաշնակիցներուն՝ Գերմանիոյ եւ Աւստրիոյ դրամատուներուն մէջ: Պատերազմէն վերջ, երբ անոնք կը պարտուին, այդ գումարները կը տնօրինուին Համաձայնութեան տէրութիւններու կողմէ:

Հերպերտ Հէնրի Էսքուիթ (Herbert Henry Asquith) եւ Սթէնլի Պոլտվին (Stanley Baldwin), որոնք տարբեր շրջաններու Վարչապետներն են Մեծ Բրիտանիոյ, 1924 Սեպտեմբերին օրուան Վարչապետ եւ Արտաքին Գործոց Նախարար Ռէմսի Մակ Տոնալտին (Ramsay Mac Donald) ուղղած յուշագրին մէջ կը նշեն, որ մեծ մասամբ՝ կամ հաւանաբար ամբողջութեամբ, հայկական գումարներ են այն 5 միլիոն սթերլինը (թրքական ոսկիով), որ Թուրք կառավարութեան կողմէ 1916-ին Պերլին փոխանցուած է եւ հաշտութեան

³²⁹ Morgenthau H., Büyükelçi Morgenthau'nun Öyküsü, Çeviren Atilla Tuygan, İstanbul. 2005, s. 249.

³³⁰ Նոյն տեղէն, էջ 244:

³³¹ Onaran N., նշծ. աշխ., էջ 20:

պայմանագրի կնքուելէն վերջ Դաշնակցային պետութիւններու կողմէ գրաւուած³³²:

Վերոյիշեալ օրինական կարգադրութիւնները կ'ըլլան 1915-էն մինչեւ 1920, երբ Պոլսոյ կառավարութեան 8 Յունուար 1336-ի (1920) որոշումնագրով ոչ միայն վերջ կը տրուի առժամեայ Լուծարման Օրէնքին գործադրութեան, այլ նաեւ կ'որոշուի 13 Սեպտեմբեր 1331-ի ((26 Սեպտեմբեր 1915) առժամեայ օրէնքով եւ 26 Հոկտեմբեր 1331-ի (8 Նոյեմբեր 1915) կանոնագրութեամբ տեղահանուած անձերու Պետական գանձի եւ Վազըֆներու անունով արձանագրուած գոյքերը նախ սեփականատիրոջ անմիջապէս վերադարձնել, ապա անոնց անունով արձանագրութիւնները կատարել, ուղեւորութեան պաշտօնագրով եւ անցագրով մեկնողներուն գոյքերը լքեալ չնկատել, ժառանգորդ չունեցողներուն եւ մահացածներուն գոյքերուն արժէքը, որք ու աղքատներուն բաժնելու համար համայնքի կրօնապետին յանձնել, աճուրդով վաճառուած գոյքերէն եթէ արժեզրկուում եղած է, Պետութեան կողմէ վնասը հատուցանել, տոկոսով վերադարձնել այն գումարները, որոնք Լուծարման յանձնաժողովներու կողմէ գանձուած են: Այս որոշումնագրին շատ մը յօդուածներուն մէջ կը նշուի, որ տեղահանուածներուն գոյքերը Պետութեան կողմէ ապաստփականացուած են³³³:

Չաւէն Պատրիարք իր յուշերուն մէջ սապէս կը գրէ. «Որոշ խանութներու մէջ ազգապատկան գոյքերու գոյութիւնն իմացանք եւ դիմեցինք միջազգային ոստիկանութեան: Կանչուեցաւ Ալեքահ պէյ անուն պաշտօնեայ մը, որ ընդունելով հանդերձ թէ անոնք Հայոց կը վերաբերին, աւելցուց որ իրեն յանձնուած են, հետեւաբար

³³² Բարսեղով Ե., Հայերի Ցեղասպանութեան համար կոյտական պատասխանատվությունը, Երևան, 1999, էջ 10:

³³³ Onaran N., նշծ. աշխ., էջ 153-157:

պետք է դիմել Ելմտական Նախարարութեան: Գտնուած ազգապատկան բոլոր գոյքերը առնուած են, իսկ Հայոց պատկանող ամբողջ իրեղէնները առնել անկարելիութիւն էր, որովհետեւ մենք անոնց տէր կրնայինք ըլլալ երկու կերպով. կամ օրէնքի ոյժով կամ համաձայնութեան միջոցով: Օրէնքը թոյլատու չէր, իսկ Համաձայնական կառավարութիւնները մերժեցին անհատական գոյքերը առնել: Պատրիարքարանը իր գտած ազգապատկան գոյքերը ոչ միայն հաշուեցուցակի մը վրայ առաւ, այլեւ 3 Յունուար 1306 թուականով (պետք է ըլլայ 1336 (1920), քանի որ Սալիհ Փաշայի դահլիճը 1920 Մարտի 7-ին կը յաջորդէ Ալի Բըզա Փաշային գրած է ինք Չաւէն Պատրիարք- Ա.Ս.Ս.) ընդարձակ յիշատակագիր մը տուաւ. կառավարութեան, որուն մէջ յիշատակելի յետոյ հայկական տեղահանութեան յառաջ բերած բոլոր չարիքները, պահանջեց 200 վանքերու եւ 2000-ի մօտ եկեղեցիներու բոլոր գոյքերը եւ չորս տարուան եկեղեցապատկան հաստատութիւններու հասոյթները: Սալիհ Փաշայի դահլիճը մէկ կողմ դրաւ այս յիշատակագիրը»³³⁴:

Երբ 23 Ապրիլ 1920-ին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի բացումը կը կատարուի, նորակազմ ժողովի կողմէ կազմուած Նախարարներու Խորհուրդի առաջին գործերէն մէկը կ'ըլլայ 18 Յունիս 1336-ի. (1920) որոշումով արգիլել Հայոց երթեւեկելը, որուն զխաւոր պատճառներէն մէկը կ'ըլլայ՝ արգելք հանդիսանալ այն Հայերուն, որոնք տեղահանութենէն վերջ ձեւով մը իրենց կեանքը փրկած են եւ կը փափաքին ծննդավայր վերադառնալով տիրանալ իրենց ունեցուածքին: Իսկ վերադառնալու կարելիութիւն ունեցողներուն մասին անհիմն զրպարտութիւններով կը կիրարկուին

³³⁴ Չաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական Յուշերս, Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 321- 322:

պատժամիջոցներ³³⁵: Սարգիս Չերքեզեան իր «Տիւնեայ Հեփիմիզէ Եթեր» խորագրուած յուշերուն մէջ կը պատմէ, թէ ինչպէս Քարահանի մէջ երբ հայրը Ղազարոս կ'ուզէ ետ առնել որպէս «լքեալ գոյք» ապաստփականացուած իր ստացուածքը, փաստաբանը կ'ազդարարէ, ըսելով թէ Ղազարոս պէտք է նախընտրէ կամ լռութիւնը կամ կախադանը³³⁶:

«Լքեալ գոյքեր»ու նիւթը Մարտ 1921-ին Ազգային Մեծ Ժողովի մէջ օրակարգի կուգայ «Թշնամիի գրաւումէն ազատագրուած վայրերու անտէր մնացած (լքուած) գոյքերու մասին օրէնք»ի նախագիծով, որ կը բաղկանայ 5 յօդուածներէ եւ կը նախատեսէ, որ փախչող կամ անյայտ կորսուող անձերու «լքեալ գոյքեր»ը կառավարութեան կամ տեղական իշխանութիւններու կողմէ աճուրդով ծախուին եւ հասոյթը, ինչպէս նաեւ մշակուած հողերու բերքին եկամուտը ի պահ տրուին Բնչքերու Սնտուկներուն:

Իսկ Հրամանատար Մուսթաֆա Քէմալ 7-8 Օգոստոս 1921-ին «Ազգային Տուրքի Հրահանգ» խորագրով 10 հրահանգներ կը հրապարակէ, որոնց 6.ը կ'ըսէ, թէ այն լքուած բաները, որոնք որպէս սնունդ կամ հագուստ բանակին կը ծառայեն ապաստփականացուած են³³⁷: Այսպէս՝ բանակի կարիքները գոհացնելու պատճառաբանութեամբ կը գրաւեն Հայ գիւղացիներուն ցորենը, զարին, սննդամթերքը, ինչպէս նաեւ Հայերուն պատկանող գործարաններ, հիւանդանոցներ, ջրաղացներ, եկեղեցիներ, վանքեր³³⁸:

³³⁵ Onaran N., նշծ. աշխ., էջ 17-18:

³³⁶ Çerkezyan S., Dünya Hepimize Yeter, İstanbul, 2007 (III.Baskı), s. 59.

³³⁷ Onaran N., նշծ. աշխ., էջ 121-125:

³³⁸ ԱստղյանԱ., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան Կայսրությունում 1915-1923 թթ., «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2010, թիւ 3(31), հուլիս-սեպտեմբեր, էջ X:

«Թշնամիի գրաւումէն ազատագրուած վայրերու անտէր մնացած (լքուած) գոյքերու մասին օրէնք»ի նախագիծը քննարկուելէ վերջ, 20 Ապրիլ 1922-ին կ'ընդունուի 224 համար օրէնքը, ըստ որուն շարժուն գոյքերը օրէնքին յարմար ձեւով կը վաճառուին, վարձքերն ու միւս եկամուտներու ընդհանուր գումարէն ծախսերը հանուելէն վերջ մնացեալ գումարը ի պահ կը տրուի Ինչքերու Սնտուկներուն, վերադարձողներուն յանձնելու վարկածով: Այս օրէնքի գործադրութենէն վեց ամիս վերջ, 1922 Հոկտեմբերին կրկին օրակարգի կուգայ Լուծարման յանձնաժողովներու կազմուիլը, որոնք 1916 Մայիսին կցուած էին Ելմտական Նախարարութեան: Այսպէս՝ 31 Հոկտեմբեր 1922-ի 1954 համար որոշումնագրով փոփոխութեան կ'ենթարկուին 26 Հոկտեմբեր 1331-ի (8 Նոյեմբեր 1915) կանոնագրութեան կարգ մը յօդուածները, Լուծարման յանձնաժողովները կը կազմուին տեղական իշխանութեանց կողմէ նշանակուած Ինչքերու պաշտօնէայի նախագահութեամբ՝ Վարչական եւ քաղաքապետական ժողովներու եւ եթէ գոյութիւն ունի Վաճառականութեան միութեան մէկ մէկ անդամի մասնակցութեամբ: Ուրեմն՝ եօթը տարի վերջ բոլորովին կը փոխուի Լուծարման յանձնաժողովին կազմը³³⁹:

Ազգային Մեծ Ժողովի (Անգարա) կողմէ 14 Սեպտեմբեր 1922-ին նախ գաղտնի ապա հրապարակային նիստի մէջ ընդունուած 284 համար որոշումով եւ 15 Ապրիլ 1923-ի 333 համար օրէնքով վերջ կը տրուի Պոլսոյ կառավարութեան կողմէ ընդունուած 8 Յունուար 1336-ի (1920) որոշումներուն, ինչպէս նաեւ 20 Ապրիլ 1922-ի 224 համար օրէնքին, ինչ որ փաստն է թէ Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովը իրաւական կերպով շարունակութիւնն է Իթ-

³³⁹ Onaran N., նշծ. աշխ., էջ 137-138:

թիհատական իշխանութեան: Այսպէս՝ նախկին առժամեայ օրէնքը որպէս օրէնք կը վերակարգաւորուի: 333 համար օրէնքին 2. յօդուածին համաձայն, գոյքին բացակայ տէրերուն եկամտաբեր անշարժ գոյքերը Վազըֆներու ընդհանուր տնօրէնութեան, իսկ այլ գոյքերը Պետական գանձի անունով կ'արձանագրուին³⁴⁰: Այս օրէնքով ուրեմն, Քէմալական կառավարութիւնը իրական ու իրական ժառանգորդը կը դառնայ Հայոց «լքեալ գոյքեր»ուն: Կը մշակուի բոլորովին նոր 6. յօդուած մը, որ յետագային ճակատագրական դեր կ'ունենայ Հայերու «լքեալ գոյքեր»ու խնդրին մէջ եւ որ հետեւեալն է. «Պատճառն ինչ որ ալ ըլլայ, ոեւէ ձեւով անյայտացող, մեկնող կամ արտասահման, գրաւեալ վայրեր կամ Կ. Պոլիս եւ շրջակայքը փախչողներուն շարժուն եւ անշարժ գոյքերը, ինչպէս նաեւ պարտքերն ու պահանջները 13 Սեպտեմբեր 1331-ի (26 Սեպտեմբեր 1915) առժամեայ օրէնքով եւ ներկայ բարեփոխութիւններով կը կարգադրուին»:

Այս յօդուածի տրամադրութեամբ, օրէնքին հրատարակութենէն տարիներ առաջ, նոյնիսկ կանոնաւոր անցագրով արտասահման մեկնածներուն եւ պաշտօնով կամ գործով Կ. Պոլիս եկած գաւառացիներուն, կամ հինէն ի վեր Կ. Պոլիս գտնուող գաւառացի կամ Պոլսեցի ոչ-իսլամներուն գաւառները ունեցած գոյքերը իբրեւ «լքեալ գոյք» Պետական գանձին կը փոխանցուին³⁴¹: Թէեւ 333 համար օրէնքի թուականը 15 Ապրիլ 1923 է եւ 284 համար որոշումը Ազգային Մեծ Ժողովի կողմէ 14 Սեպտեմբեր 1922-ի նախ գաղտնի ապա հրապարակային նիստին կ'ընդունուի, բայց Կ. Պոլսոյ 5 Յուլիս 1922-ի «Նոր Լուր» օրաթերթէն կը տեղեկանանք որ «Ատանա-

³⁴⁰ Նոյն տեղէն, էջ 172-174:

³⁴¹ Գուլումճեան Լ., «Լքեալ Գոյքեր»ու հարցը, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ. Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1931, էջ 87:

յէն կը գրեն թէ հրահանգ տրուած է դրամատուներուն՝ բացակայ քրիստոնէաներուն կամ քաղաքական պատճառով հեռացած անձերուն ինչքերը ջանձնել ունէ փոխանորդի մը: Անոնք կը դրուին կառավարական գրաման տակ»³⁴²: Այս օրէնքի հիման վրայ հրապարակուած 29 Ապրիլ 1339-ի (1923) 2455 համար որոշումնագիրով ընդունուած կանոնագրութեան 6. յօդուածով կրկին փոփոխութեան կ'ենթարկուի Լուծարման յանձնաժողովներու կազմը, որոնք կը վերակազմուին Ելմտական Նախարարութեան կողմէ նշանակուած նախագահ եւ մէկ անդամ, Արդարադատութեան Նախարարութեան կողմէ ընտրուած մէկ անդամ, ի հարկին Ելմտական Նախարարութեան կողմէ երկրորդ անդամի մը նշանակութեամբ³⁴³:

Թէեւ 333 համար օրէնքի թուականը 15 Ապրիլ (1339)1923 է, բայց եւ այնպէս Հրաչեայ Տէր Ներսէսեան 15 Յունուար 1923-ին Լօզանի մէջ տեսակցութիւն մը կ'ունենայ Տքթ. Բըզա Նուրին հետ, ուր ան կ'ըսէ. «Եթէ Հայերը կ'ուզեն այսուհետեւ Թուրքիոյ մէջ ապրիլ, պէտք է նախ իրենց բարեկամութեան ապացոյցը տան, հրաժարելով որեւէ պահանջէ...: Հայերը որեւէ յոյս ունենալու չեն, որ եթէ Թուրքիա վերադառնան պիտի կարենան վերստանալ իրենց կալուածները եւ հողերը, կառավարութիւնը միջոց ու փափաք չունի հատուցում մը ընելու իրենց»³⁴⁴:

Ելմտական Նախարարութիւնը 21 Հոկտեմբեր 1923-ին Կալուածներու վարչութեան որկած իր հրահանգով կը պահանջէ կա-

³⁴² Աստոյան Ա., նշծ. աշխ., էջ XIX:

³⁴³ Onaran N., նշծ. աշխ., էջ 178:

³⁴⁴ ՀՀ Մ.Մաշտոցի անուան Մատենադարանի Արխիւ, Թղթապանակ 6 – 12/40 4.IV.1951, Օրագրութիւն Լ. Բաշալեանի Միացեալ Հայկական Պատուիրակութեան գործունէութեան մասին:

լուսծագրի գործողութիւններու ընթացքին նկատի առնել 15 Ապրիլ (1339)1923-ի 333 համար օրէնքին տրամադրութիւնները³⁴⁵:

Ոչ «Տեղահանութեան» եւ ոչ ալ «Լքեալ Գոյքերու Լուծարման» առժամեայ օրէնքներուն մէջ նշուած է անունը Հայոց կամ այլ ազգի, բայց Թուրքիոյ նորակազմ Հանրապետութեան խորհրդարանական քննարկումներու ընթացքին Թուրք պատգամաւորներուն կ'ըստի, թէ ընդհանուր ձեւակերպումներ օգտագործուած են որպէսզի Հայերէն թարգմեն օրէնքի իրական նպատակները: Այս փաստը յայտնի կը դառնայ Խորհրդարանի 3 Ապրիլ 1924-ի քննարկման ընթացքին, երբ խորհրդարանական Մուսա Քազըմ կ'առարկէ պիտոջէի նախագծի 2. յօդուածի փոփոխութեան դէմ եւ կը պահանջէ հանել այդ յօդուածէն ոչ-իսլամ փոքրամասնութիւններու մասին գործածուած «ժողովուրդներու քաղաքական մարմին» ձեւակերպումը: Այս առարկութեան դէմ Ելմտական նախկին նախարար Հասան Ֆեհմի կը բացատրէ, թէ խիստ վտանգաւոր կ'ըլլար նախագծի մէջ բացայայտօրէն գրել ոչ-իսլամներու վերաբերեալ գաղտնի ձեւակերպման իմաստը եւ այդ պատճառաւ յանձնաժողովը համաձայնած է Ելմտական Նախարարութեան հետ օրէնքը չկիրարկել իսլամներու: Ան կը պարզաբանէ, թէ նման գործընթաց իրականացած է պատերազմի ժամանակ, երբ կը մշակուէր «Լքեալ Գոյքերու Լուծարման Օրէնքը» եւ ոչ մէկ իսլամի ունեցուածքը չէ բռնագրաւուած³⁴⁶:

Հասան Ֆեհմի Պէյ՝ Ելմտական փոխնախարարը, 18 Յունիս 1924-ին «Անասօլու» թերթին տուած իր հարցազրոյցին մէջ կ'արտայայտուի հետեւեալ կերպով. «Միայն Իզմիրի Յոյներէն 10678

³⁴⁵ Գոյումձեան Լ., Օրէնսդրական եւ վարչական ինտիքներ, Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1933, էջ 143:

³⁴⁶ Dadrian V., նշծ.աշխ., էջ 340-341:

բնակարան, 2173 խանութ եւ գործատեղի, 79 գործարան, 2 բաղնիք եւ 1 հիւանդանոց, իսկ Հայերէն ու Հրեաներէն 1600 բնակարան, 2821 խանութ եւ գործատեղի, 83 գործարան, 2 բաղնիք եւ 1 հիւանդանոց մնացած է»³⁴⁷:

20 Նոյեմբեր 1924-ի շրջաբերականով Տնտեսական Նախարարութիւնը անգամ մը եւս կը շեշտէ անհրաժեշտութիւնը կալուածագրով Պետական գանձի անունին արձանագրութեան այն բոլոր գոյքերուն, որոնք զանազան պատճառներով տակաւին կը մնան Պետական արձանագրութեան տոմարներէն դուրս³⁴⁸:

Լօզանի Դաշնագիրը թէւ օգոստոս 1923-ի Ազգային Մեծ Ժողովի մէջ օրակարգի նիւթ կը դառնայ եւ կ'ընդունուի, բայց եւ այնպէս միջազգային հանգամանքին պատճառաւ վաւերացման թուականը կ'ըլլայ 6 Օգոստոս 1924:

Ազգային Մեծ Ժողովի 18 Յունուար 1925 թիւ եւ 1368 համար որոշումնագրին համաձայն, (որ աւելի կը մանրամասնուի 5 Փետրուար 1925 թիւ եւ 1510 համար որոշումնագրով) Լօզանի Դաշնագրի վաւերացման թուականէն (6 Օգոստոս 1924) վերջ պաշտօնական արտօնութեամբ Կ. Պոլիս, արտասահման կամ Թուրքիոյ Հանրապետութեան սահմաններէն ներս ոեւէ վայր մեկնած անձերու գոյքերը ենթակայ չեն ըլլար բռնագրաւումի, իսկ եթէ պատահած ըլլան նման դէպքեր, այդ գոյքերն ու կալուածները կը վերադարձուին իրենց սեփականատէրերուն: Իսկ 2 Մայիս 1925-ի հրամանագրով կ'աւելցուի նաեւ, թէ բարոյական անձնաւորութիւններու սուսնդին վրայ անցեալի մէջ դրուած արգելքը կը վերցուի ու աւանդը կրկին կը տրամադրուի իր տէրերուն: Բայց 1925-ի ելմը-

³⁴⁷ Arı K., Büyük Mübadele, İstanbul, 2003, s.12.

³⁴⁸ Վաչդան Լ., նշծ. աշխ., էջ 284:

տական տարեշրջանի «Ընդհանուր Հաշուեկշռի Օրենք»ին 23. յօդուածին մէջ կ'աւելցուի հատուած մը՝ համայնքներու եւ բարեսիրական ընկերութիւններու «լքեալ գոյքեր»ուն մասին, որոս համաձայն «բարոյական հաստատութիւններուն «լքեալ անշարժ գոյքերը» բոլոր իրաւունքներով եւ պարտականութիւններով կը փոխանցուին իրենց գտնուած վայրերուն կուսակալութիւններու մասնաւոր վարչութեանց»: Այսպէս կը գրաւուին Կ. Պոլսէն դուրս, գաւառներու մէջ գտնուող եկեղեցի, վանք, վարժարան, որբանոց, միութիւն, հիւանդանոց եւ բարենպաստակ հաստատութիւններու պատկանող գոյքերը, եկեղեցապատկան կալուածները, նոյնիսկ գաւառի եկեղեցիներու Կ. Պոլսոյ մէջ գտնուող կալուածներն ու վագրֆները³⁴⁹ :

Ատանայի Կուսակալութիւնը իբրեւ «Լքեալ Գոյք» վարձու կուտայ տեղւոյն Հայոց Եկեղեցին 8 տարուան շրջանի մը համար, որ կը վերածուի թատրոնի³⁵⁰:

Նախարարներու Խորհուրդին «Լքեալ Գոյքեր»ու մասին 19 Յունիս 1926-ի որոշումնագիրը իբր արժամեայ օրէնք կը հրատարակուի 5 Օգոստոս 1926-ին եւ կը գործադրուի մինչեւ 17 Յուլիս 1927:

Այդ որոշումնագրին համաձայն՝ 6 Օգոստոս 1924-էն վերջ ռեւէ գոյք «լքեալ» չի նկատուիր, եթէ կառավարութիւնը այս թուականէն առաջ պաշտօնապէս տեղեկացած ըլլայ, այդ պարագային «լքեալ գոյք» ըլլալով կը գրաւուին: Եթէ կառավարութիւնը այս թուականէն յետոյ միայն պաշտօնապէս տեղեկացած է «լքեալ գոյք»ի մը գոյութեան եւ տէրը գոյքին գտնուած վայրը ներկայ է անոր կը յանձնուի, իսկ եթէ ներկայ չէ անոր փոխանորդին: Եթէ փոխանորդ չունենայ, գոյքը տիրոջը հաշուին կը յանձանձուի Պետութեան կողմէ:

³⁴⁹ Վարդան Լ., նշծ. աշխ., էջ 284-285:

³⁵⁰ Յառաջ, 12.Մ.1926:

6 Օգոստոս 1924-էն վերջ գրաւուած գոյքերը եթէ գաղթականներուն տրուած են, տեղական մարմինները յանձանձումի օրուան կանխիկ վաճառումի զիններուն համաձայն կ'որոշեն գոյքին արժէքը եւ փոխարժէքը կը վճարուի գոյքին տիրոջը: Եթէ գոյքը ծախուած է, գումարը կը տրուի սեփականատիրոջ: Իսկ եթէ սեփականատէրը դժգոհ մնայ, կրնայ դիմել դատարան:

Եթէ տեղի ունեցած է Պոլիսէն դուրս գտնուող գոյքերու գրաւումը, կը վերադարձուին իրենց սեփականատիրոջ, երբ անոնք կը պատկանին Պոլսոյ մէջ ծնած, բնակած եւ մարդահամարի մէջ արձանագրուած անձի մը, որ բացակայած ալ չէ հոնկէ: Ուեւէ ձեւով թոյլատրելի չէ հաշուեյարդարի օրէնքը գործադրել այնպիսի անձերու նկատմամբ, որոնք իրենց գտնուած տեղէն չեն փախած, չեն անյայտացած կամ չեն հեռացած, բայց ուրիշ վայրի մը մէջ ինչքի եւ կալուածի տէր են: Եթէ օրէնքը սխալ մեկնաբանուած եւ գործադրուած է, այդ սխալները կը սրբագրուին: Ասոնց գոյքերը գրաւուած իսկ ըլլան, կը վերադարձուին տէրերուն: Այս որոշումնագրին համաձայն այդ թուականին իրենց տէրերուն կը վերադարձուին 25-ի չափ կարելոր կալուածներ:

Պատրիարքարանը դիմում կը կատարէ Էնկիւրիի կառավարութեան, խնդրելով որ վերադարձուին բոլոր գրաւեալ եկեղեցիները, դպրոցներն ու եկեղեցապատկան կալուածները, որպէսզի ժողովուրդը իր կրօնական պարտականութիւնները կատարէ, տղաքը գուրկ չմնան դպրոցէ եւ թէ յիշեալ կալուածներու հասոյթով կարելի ըլլայ մատակարարել եկեղեցիներն ու դպրոցները³⁵¹:

Ելմտական Նախարարութեան կողմէ «Լքեալ Գոյքեր»ու տնօրէնութեան դրկուած զեկոյցով 1926-էն սկսեալ «իզալէ ի շու-

³⁵¹ Յառաջ, 25.1.1927:

յու»ի³⁵² ձեռով կը ծախսուին այն լքեալ կալուածները, որոնք անանջատ մասեր ունին³⁵³: Իսկ Իզմիրի թերթերը կը տեղեկացնեն, թէ Իզմիրի մէջ իբրեւ «լքեալ գոյք» գրաւուած են 456 Յոյնի եւ 266 Հայու բնակարաններ³⁵⁴:

882 համար օրէնքը կը հրապարակուի 31 Մայիս 1926-ին, որուն համաձայն՝ որպէս արեան գին, 20.000 լիրա արժէքով հայկական գոյք կ'ընծայուի 12 իթթիհատականի (ներառեալ Թալէաթը, Ճեմալը եւ Պէհաէտտին Շաքիրը) ընտանիքին՝ արգելք դրուելով որ այդ գոյքերը տասը տարի չվաճառուին: Հետաքրքրականն այն է, որ արեան գին ստացող իթթիհատականի ընտանիքներու այդ ցուցակին մէջ գոյութիան չ'ունենար Էնվերի անունը, որ Թալէաթի եւ Ճեմալի նման առաջնորդներէն մէկն էր «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան³⁵⁵:

Նախարարներու Խորհուրդը 17 Յուլիս 1927-ի 5451 համար որոշումնագրով կը բարեփոխէ 19 Յունիս 1926-ի վերոյիշեալ որոշումնագրի երկու յօդուածները.

-13 Սեպտեմբեր 1331 (1915) ու 15 Ապրիլ 1339-ի (1923) օրէնքներուն համաձայն եւ սակայն Լօզանի Դաշնագրին գործադրութեան թուականէն (6 Օգոստոս 1924) առաջ «լքեալ» համարուած անշարժ գոյքերու մասին միեւնոյն ձեռով գործողութիւն կը կատարուի: Իսկ այն թուականէն վերջ ոեւէ գոյք լքեալ չի նկատուիր:

- Իսկ կառավարութեան միջամտութենէն զերծ կը մնան այն գոյքերը, որոնք մինչեւ յիշեալ Դաշնագրին գործադրութեան թուա-

³⁵² «Իզալէ ի շոյու» Օսմաներէն անունն է այն դատերուն, որոնք կը բացուին անանջատ մասեր ունեցող լքեալ կալուածները անջատ մասերու բաժնելու համար:

³⁵³ Յառաջ, 31.III.1926:

³⁵⁴ Նոր Լուր, 22.I.1927:

³⁵⁵ Onaran N., նշծ. աշխ., էջ 243:

կանը կառավարութեան կողմէ տակաւին տիրացուած չեն եւ իրենց վայրերը վերադարձող սեփականատէրերուն կողմէ վերըստացուած եւ յանձանձուած են:

Կը փոխուի նաեւ փոխանորդին վերաբերող յօդուածին առաջին մասը: 17 Յուլիս 1927-ին կառավարութիւնը կ'որոշէ, որ գոյքերը յանձնուին ուղղակի տիրոջը եւ ոչ թէ փոխանորդին: Այսինքն մինչեւ որ արտասահման գտնուող անձը չգայ ու չներկայանայ, կալուածը ետ չի տրուիր: Այսպէս՝ «Լքեալ Գոյքեր»ու Վարչութիւնը կը յայտարարէ թէ «Եթէ սեփականատէրը իր գոյքին գլուխը ներկայ չգտնուի այդ գոյքը իբր լքեալ պէտութեան կը փոխանցուի»³⁵⁶:

2 Փետրուար 1927-ի որոշումնագրով, Պոլսոյ մէջ Հայերէն մնացած 20.000 ոսկի արժէքով անշարժ գոյք կը տրամադրուի Պողազլեանի Դեր-գաւառապետ Քէմալի այրիին ու գաւակներուն: Մայիս 1927-ին կը հրապարակուի՝ Լօզանէն վերջ երկրէն դուրս մնացողներուն քաղաքացիութեան վերջ տրուելուն մասին որոշումնագիր մը: Դեկտեմբեր 1927-ին Հայերէն մնացած գոյքեր կը տրուին նաեւ տեղահանութեան յանցագործներէն՝ Ուրֆայի գաւառապետ Նուսրէթ Պէլին ընտանիքին: Չանքայայի ապարանքը³⁵⁷, որ Հանրապետութեան խորհրդանիշը կը հանդիսանայ, կը կառուցուի Հայերէն ապաստեփականացուած հողի վրայ³⁵⁸:

1928 Մայիսին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովը յաջորդ տարւան ելեւմուտի (սլիտջէ) նախատեսութիւններու ալ ազդեցու-

³⁵⁶ Գոյլումճեան Լ., Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1931, էջ 88-92:

³⁵⁷ 1983 եւ 2001 թուակիր շրջաբերականներով, ազգային անվտանգութեան պատճառաբանութեամբ արգիլուած է ցոյց տալ 6 Օգոստոս 1924-էն առաջուան կալուածաթուղթի արձանագրութիւնները: Այսպէս պէտութիւնը արգելք կ'ըլլայ բացայայտման Գասապեան ընտանիքին ապարանքի սեփականատիրութեան:

³⁵⁸ Hür A., Ermeni Mallarına Kim Kondu, Taraf Gazetesi, 2 III.2008.

թեամբ 132 նախագիծ կը վերածե օրէնքի, որոնցմէ մէկն ալ կ'ըլլայ «Լքեալ Գոյքերու Եկամուտներուն Պիտօջէի արձանագրութեան» վերաբերողը: Այսպէս՝ 5 յօդուածներէ բաղկացած 1349 համար «Լքեալ Գոյքերու Հաշիւը Պիտօջէին Եկամուտ Արձանագրելու Մասին Օրէնք»ը 24 Մայիս 1928-ին 316 երեսփոխանէ 178-ին մասնակցութեամբ կը քուէարկուի եւ կ'ընդունուի, որմէ վերջ 31 Մայիս 1928-ին «Լքեալ Գոյքեր»ու հաշիւին մէջ գտնուող «չգանձուած գումարները» պիտօջէի մէջ կ'արձանագրուին որպէս եկամուտ³⁵⁹:

1928-1931 տարիներու պիտօջէի արձանագրութիւններէն յայտնի կը դառնայ, թէ «լքեալ գոյքեր»ու վաճառումէն կարելոր գումար մը փոխանցուած է: Այսպէս՝ 207,2 միլիոն լիրանոց 1928-ի սկզբնական պիտօջէի 6,9 միլիոն լիրանոց հաստատութիւններու եկամուտի բաժնին 2,9 միլիոնը կ'ըլլայ կալուածային եկամուտ, իսկ 700.000 լիրան ալ վաճառուելիք գոյքերու փոխարժէք:

1929-ի սկզբնական պիտօջէն կ'ըլլայ 220,5 միլիոն լիրա, որուն 7,8 միլիոն լիրայի հաստատութեանց եկամուտի բաժնին 3,1 միլիոնը կ'արձանագրուի որպէս կալուածային եկամուտ, իսկ 700.000 լիրան ալ վաճառելի գոյքերու փոխարժէք:

222,6 միլիոն լիրանոց 1930-ի սկզբնական պիտօջէի կալուածային եկամուտը կ'ըլլայ 2,9 միլիոն լիրա եւ վաճառելի գոյքերու փոխարժէքը՝ 600.000 լիրա:

186,7 միլիոն լիրանոց 1931-ի սկզբնական պիտօջէին 4,1 լիրան կը պատկանի հաստատութեանց եկամուտի, որուն 1,9 միլիոն լիրան վաճառուած կալուած ու գոյքերու եկամուտը կ'ըլլայ: Ուրեմն՝ բացայայտ կը դառնայ, թէ առնուազն 1928-1931 տարիներուն

³⁵⁹ Onaran N., նշծ. աշխ., էջ 266-267:

«Լքեալ Գոյքերու Հաշիւը» պիտօջէի կարելոր եւ զլխաւոր եկամուտի աղբիւրներէն մէկը եղած է³⁶⁰:

28 Մայիս 1928-ին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի մէջ կ'ընդունուի նաեւ 1331 համար «Սեփականացման Օրէնք»ը, որուն նպատակը կ'ըլլայ օրինաւոր կերպով արգելք ըլլալ «լքեալ գոյքեր»ուն իրենց սեփականատէրերուն վերադարձին: Օրէնքի 7. յօդուածով «13 Սեպտեմբեր 1331 (1915) եւ 15 Ապրիլ 1339-ի (1923) օրէնքներուն համաձայն, եթէ գրաւուած կամ գրաւուելիք անշարժ գոյքերը գաղթականներու յատկացուած կամ պետութեան կողմէ ապաստեփականացուած ըլլան, ասոնց իրաւատէրերը փաստագրով դիմելու պարագային իսկ չեն կրնար զանոնք վերստանալ նոյնութեամբ, այլ որոշեալ փոխարժեքը պետական գանձէն կը վճարուի անոնց»³⁶¹: Իսկ որոշեալ փոխարժեքին սահմանումը իր վերջնական վիճակը կը ստանայ 2 Յուլիս 1929-ին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի մէջ վերոյիշեալ օրէնքին մեկնաբանութեան առթիւ հետեւեալ կերպով. «28 Մայիս 1928-ի 1331 համար Սեփականացման Օրէնքին 7. Յօդուածին եւ 13 Սեպտեմբեր 1331 (1915) եւ 15 Ապրիլ 1339-ի (1923) օրէնքներուն համաձայն գրաւուած կամ գրաւուելիք անշարժ գոյքերը Պետական գանձին արձանագրուած կը նկատուին եւ անոնց տէրերուն իրաւունքը կը վերապահուի միայն 1915-ի սկիզբը արձանագրուած փոխարժեքով: Այդ գոյքերը եթէ յատկացուած, տրուած, ծախուած եւ կամ Պետական գանձին փոխանցուած ըլլան, նոյնութեամբ չեն կրնար սեփականատէրերուն վերադարձուիլ մինչեւ որ Պետական Խորհուրդին կողմէ չստուգուի թէ այդ գոյքերուն համար եղած կարգադրութիւնները ներհակ

³⁶⁰ Նոյն տեղէն, էջ 269:

³⁶¹ Գոյլումճեան Լ., Լքեալ Գոյքերու հարցեր, Ընդարձակ Տարեգիրք Ազգային Հիանդանոցի, Ստամպուլ, 1940, էջ 37:

են 13 Սեպտեմբեր 1331 (1915) եւ 15 Ապրիլ 1339-ի (1923) օրէնքներուն: Նոյնպէս 28 Մայիս 1928-ի օրէնքին հրատարակութենէն առաջ կամ վերջը, եթէ «լքեալ գոյք» մը իրաւատիրոջ վերադարձուելու մասին դատական վճիռ մըն ալ գոյութիւն ունենայ, դարձեալ գոյքերը չեն կրնար իրաւատերերուն տրուիլ, այլ կը տրուի 1915 տարուան սկիզբը արձանագրուած փոխարժէքը»³⁶²:

1331 համար օրէնքը գործադրութենէ կը դադրի 10 Յուլիս 1945-ի 4796 համար օրէնքի հրատարակութեամբ³⁶³: 1 Յուլիս 1928-էն սկսեալ (ըստ օրէնքի) փախստական Հայու եւ Յոյնի կալուածները գաղթականներուն չեն տրուիր, այլ կը ծախուին Պետական գանձի հաշույն³⁶⁴:

Յենելով հրատարակուած բոլոր օրէնքներուն եւ հրահանգներուն, «Լքեալ Գոյքերու» Վարչութիւնը իբր «լքեալ գոյք» կը գրաւէ կալուածները նաեւ այն անձերուն, որոնք Հանրապետական անցագրով եւ նոյնիսկ Լօզանի Դաշնագրին վաւերացման թուականէն վերջ մեկնած են արտասահման, բայց երթեւեկութեան հրահանգին համաձայն չեն կատարած իրենց քաղաքացիական ու հայրենակցական պարտականութիւնները (պետք է բնակավայրը արձանագրել տալ գտնուած վայրի հիւպատոսարանին) եւ եթէ իրենց մեկնած թուականէն մինչեւ մէկ տարի չեն նորոգած իրենց անցագրերը³⁶⁵:

2 Յունիս 1929-ին կ'ընդունուի 1515 համար «Մեփականութեան արձանագրութիւններէն իրաւական անժէքը կորսնցուցած-

³⁶² Ընդարձակ Տարեցոյց, Ստամպուլ, 1932, էջ 261:

³⁶³ Onaran N., նշծ. աշխ., էջ 261:

³⁶⁴ Յառաջ, 14.VIII.1928:

³⁶⁵ Գույումճեան Լ., Ընդարձակ Տարեցոյց Ա.Փ.Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1931, էջ 91:

ներուն լուծարման մասին օրէնք»ը, որ սեփականատիրութիւն կը շնորհէ բոլոր այն անձերուն որոնք անօրէն կերպով տիրացած են Հայոց «լքեալ գոյքեր»ուն: Օրէնքը կ'օրինականացնէ գաղթականներուն յատկացուած կամ Պետութեան կողմէ ապաստեփականացուած գոյքերը գործածողին կալուածաթուղթ տրուիլը: Օրէնքի առաջին յօդուածով այգի, պարտեզ կամ հողամասը վերջին 15 տարին, իսկ այլ անշարժ գոյքը 10 տարի գործածող ու խնամքով պահսպանողներուն կը տրուի կալուածաթուղթ³⁶⁶:

Մինչեւ 1929 դատարանները կ'ընդունին «լքեալ գոյքեր» ու առթիւ բացուած դատերը եւ եթէ որոշում կայանայ եւ գործադրուի, տերը կրնայ վերստանալ իր կալուածը: Իսկ 2 Յունիս 1929-ի մեկնաբանութեան համաձայն դատարաններ չեն կրնար ընդունիլ «լքեալ գոյքեր»ու վերաբերեալ դատ: Ասոր համար պէտք կ'ըլլայ դիմել Պետական Խորհուրդին³⁶⁷: Նախ կալուածը նոյնութեամբ չի տրուի՛ր մինչեւ որ Պետական Խորհուրդը չորոշէ թէ նոյնութեամբ տրուելու է: Դատը շահուած պարագային, կալուածին փոխարժէքը կը վճարուի տարիներ առաջուան սակով, որ մեծ բան մը չէ: Կառավարութեան կողմէ պատկան իշխանութեանց կը հրահանգուի, որ Պոլսոյ եւ Իզմիրի հասութաբեր ազգային կալուածները, որոնք կ'արժեն տասը միլիոն լիրա, փոխանցուին կալուածական դրամատան, իսկ միւս քաղաքներուն ազգային կալուածները ծախուին³⁶⁸: Վազըֆներու վարչութիւնը ձեռք կը դնէ Չարքաքճըլար թաղը գտնուող ազգապատկան «Թիճարէթ» խանին վրայ, նկատելով զայն «լքեալ գոյք», քանի որ Թիճարէթ խանը Պատրիկ Կիւ-

³⁶⁶ Onaran N., նշծ. աշխ., էջ 271:

³⁶⁷ Գոյումճեան Լ., Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիանդանոցի, Ստամպուլ, 1931, էջ92:

³⁶⁸ Մարմարա, 24.XI.1926:

պէնկեանի անուան արձանագրուած է եւ այս վերջինն ալ արտասահման կը գտնուի: Ուստի կ'ազդարարէ վարձակալներուն, որ այսուհետեւ վարձքերը իր վարչութեան վճարեն: Գարակեօզեան Որբանոցի Խնամակալութիւնը՝ որուն մատակարարութեան ներքեւ կը գտնուի սոյն խանը, դիմում կը կատարէ եւ կը բացատրէ թէ, թէեւ խանը Կիւլպէնկեանի անուան արձանագրուած է բայց գոյութիւն ունի Կիւլպէնկեանի ստորագրութեամբ վաւերաթուղթ մը, որով կը յայտնուի թէ խանը որպէս աւանդ իր անունին կը գտնուի եւ թէ ազգին սեփականութիւնն է, այսինքն կատարուած են ազգին փոխանցման գործողութիւնները³⁶⁹: Ճիշտ այդ միջոցին երբ դատարանը վճիռ պիտի կայացնէ, կը հրատարակուի թէ «լքեալ գոյք»ի դատեր պիտի քննուին Պետական Խորհուրդի կողմէ եւ դատը կը փոխանցուի այս ատեանին, որ կը վճռէ ի նպաստ ազգին³⁷⁰:

Թիճարէթ խանը այսպէս կը փրկուի բայց շատ մը ազգային կալուածներ կը գրաւուին իբրեւ «լքեալ գոյք», քանի որ արձանագրութեանց սրբագրութիւնը չէ կատարուած:

Արձանագրութեանց սրբագրութեան սկսած շրջանին վրայ կը հասնի Ընդհանուր պատերազմը: Տիրող բարոյական ու նիւթական ծանր վիճակին պատճառաւ կարելի չ'ըլլար ամբողջացնել արձանագրութեանց սրբագրութեան գործը եւ անհատներէ կամ բարոյական անուններէ ազգին փոխանցել ազգային կալուածները:

«Լքեալ գոյքեր»ու օրէնքի հրատարակութեամբ կը ստեղծուի շատ դժուար վիճակ մը, քանի որ Պոլսէն հեռացած կ'ըլլան ժառանգորդները այդ անձերուն, որոնց անունին արձանագրուած

³⁶⁹ Պայթար, 15.II.1927:

³⁷⁰ Յատագ, 24.IX.1932:

կ'ըլլան ազգային կալուածները³⁷¹: Այնալը Չարշը (Փասաժ Տ'էօրոբ) եւս կը բաժնէ «լքեալ գոյքեր»ու ճակատագիրը, քանի որ սեփակա-նատէրը՝ մահացած եւ ժառանգորդները Պոլսէն փախած են³⁷²:

Պոլսոյ Ազգամ թերթը կը գրէ. «Մինչեւ հիմա Հայերու լքեալ ստուները միայն առժամեայ կերպով կը տրուէին գաղթականնե-րուն: Կուսակալութիւնը Էնկիւրի (կառավարութեան) դիմելով խնդրած է, որ Պոլսոյ մէջ գտնուող այդ կարգի ստուները, որոնք կա-րելոր թիւ մը կը կազմեն, վերջնականապէս տրուին գաղթական-ներուն՝ իբրեւ անոնց սեփականութիւնը»³⁷³: «Լքեալ գոյքեր»ու վար-չութիւնը կը գրաւէ Ֆլորիայի ազարակը (5800 արտավար), շրջա-կայ նոր ազարակը, Էլմաս փաշայի ազարակին կէտը, Ֆլորիայի ծովային բաղնիքները եւ կազինօս, ինչպէս նաեւ շրջակայ բանջա-րանոցներուն (պոսթան) կէտը՝ հաստատուած ըլլալով որ անոնց տէրերը փախստական են³⁷⁴:

Քեմալական կառավարութիւնը նախ զանազան միջոցներով կը պարպէ գաւառահայութիւնը, անոնց տուները առնուելով կը տրուին Քիւրտերուն եւ Հայերը կը ստիպուին հեռանալ իրենց քա-ղաքէն: Ապա գաւառի Հայ հասարակութեան չգոյութեան պատճա-ռաբանութեամբ կը գրաւէ ազգապատկան կալուածները՝ իբրեւ «լքեալ գոյք»: Պատրիարքարանի դիմումները անհետեւանք կը մնան³⁷⁵: 1930-ական տարիներուն Ելմտական Նախարարութեան Ազգային Կալուածներու Տնօրէնութիւնը կը յայտարարէ, թէ Պե-

³⁷¹ Նոր Լուր, 2.VII.1929:

³⁷² Ազգարար, 18.II.1927:

³⁷³ Արեւ, 9.III.1929:

³⁷⁴ Արեւ, 14.IX.1929 («Ազգարար»էն արտատպուած):

³⁷⁵ Արեւ, 4.IX.1929:

տական գանձին յանձնուած «լքեալ գոյքեր»ու մասին տեղեկացնողները պիտի վարձատրուին³⁷⁶:

1930-ական տարիներուն եւս կը շարունակուին թէ՛ ազգային եւ թէ՛ անհատական գոյքերու իւրացումներ: Գատրգիւղի Ս. Լեւոն Եկեղեցիի գերեզմանատունը իբր «լքեալ գոյք» կը փոխանցուի քաղաքապետութեան: Ապարդիւն կը մնայ Եկեղեցւոյ ժողովրդապետութեան դատարան դիմումը եւ Քաղաքապետութիւնը իր անունին սեփականաթուղթ հանելով կը տիրանայ այս գերեզմանատան³⁷⁷: Պէշիկթաշի գերեզմանատունը, իր սեփականատէր քահանային կողմէ իբրեւ գերեզմանատուն նուիրուած ըլլալով ազգին, ունեցած է սեփականութեան թուղթ եւ այս պարագան հաստատուած՝ գերեզմանատան մայր դրան ճակատը գետեղուած մայմարէ յիշատակարանով, բայց եւ այնպէս ըստ «Քաղաքապետութեան օրէնք»ին, որպէս «լքեալ գոյք» կ'անցնի Քաղաքապետութեան³⁷⁸:

Ուրեմն, Հայոց «լքեալ գոյքեր»ուն մէկ մասը տեղացի Թուրք, Քիւրտ եւ Չերքէզ երեւելիներու կողմէ թալանուած, մէկ մասը Պալքաններէն եկող գաղթականներուն տրամադրուած, մէկ մասը Իսլամ-Թուրք դրամատէրերու դասակարգ ստեղծելու համար ճրիաբար կամ չնչին գումարներու փոխարէն Իսլամ անհատ կամ հաստատութիւններու տրուած է: Կարգ մը շէնքեր, արտեր եւ այգիներ վաճառուելով եկամուտը Թուրք բանակին տրամադրուած, կարգ մը շէնքեր որպէս բանտ, դպրոց, հիւանդանոց եւ ոստիկանատուն գործածուած են: Իսկ դրամը գործածուած է որպէս ծախք Հայոց տեղահանութեան, ինչպէս նաեւ իբրեւ հատուցում՝ որոշ շրջաններու մէջ ջարդարար ջոկատներու: Ուստի տրամադրելի գումար չի

³⁷⁶ Onaran N, նշծ.աշխ., էջ 248:

³⁷⁷ Ժամանակ, 28.VII.1936:

³⁷⁸ Նոր Լուր, 23.III.1934:

մնար, որպէսզի վերադարձուի Հայոց: 1914-ի տուեալներով՝ Օսմանեան երկրին մէջ Հայ համայնքը ուներ 2538 եկեղեցի, 451 վանք եւ 2000 դպրոց:

Տեղահանութենէն վերջ հայկական գիւղ եւ քաղաքներ փոխադրուած Իսլամ ժողովուրդին առաջին գործը կ'ըլլայ կեդրոնական եւ գեղեցիկ եկեղեցիները վերածել մզկիթի, իսկ մնացեալները գործածել իբրեւ մթերանոց, ամբարանոց կամ ախոռ: ԻՒՆԷՍԲՕԻ (UNESCO) 1974 թուակիր տեղեկագրին համաձայն մնացած է միայն 913 եկեղեցի եւ վանք, որոնցմէ 464 հատը այդ թուականէն վերջ արդէն փլցուած, 252 հատը իր ճակատագրին լքուած է եւ 197 հատը վերանորոգութեան կարիքն ունի³⁷⁹: Ըստ թրքական Վագրթ թերթին յայտնի է, որ վարչական եւ քաղաքական պատճառներով Պոլսէն հեռացուած, կամովին մեկնած կամ առանց կառավարութեան տեղեկացնելու հեռացած անձերը Պոլսոյ մէջ թողած են 1408 տուն, 213 արտավար հող, իսկ շրջակայքը 3179 տուն եւ 776604 արտավար հող³⁸⁰:

Մինչեւ 1931 «լքեալ գոյքեր»ը կը վաճառուին այն պայմանով, որ գնողները փոխարժէքը վճարեն 8 տարիէն: 1931-ին կառավարութիւնը կը պատրաստէ օրինագիծ մը եւ կ'ընդունուի Ազգային Մեծ ժողովի կողմէ նոյն թուականին, որուն համաձայն գնողներու տրուած պայմանաժամը կը կրկնապատկուի³⁸¹:

Մինա Աքշին՝ «Եիւզ Սորոտա ժէօն Թիւրքլէր վէ Իթթիհաթ վէ Թէրաքքի» (1980) անուն գիրքին հեղինակը, սոյն գիրքին 283. էջին մէջ կը պաշտպանէ այն վարկածը, թէ Հայոց տեղահանութիւնը կատարուած է որպէսզի վերջ տրուի ճարտարարուեստի մէջ եւ ա-

³⁷⁹ Hür A., Ermeni Mallarına Kim Kondu, Taraf Gazetesi, 2 III.2008.

³⁸⁰ Վարդան Լ., նշծ. աշխ., էջ 274:

³⁸¹ Յառաջ, 31.III.1931:

ռևտրական հրապարակի վրայ փոքրամասնութեանց գերիշխանութեան ու մրցակցութեան³⁸²:

Այսպէս՝ Իթթիհատականներու ծրագրած ու սկսած գործը՝ Թուրք դրամատերեր ստեղծելով Հայերու տնտեսական մրցակցութենէն ազատիլ, երկրի տնտեսութեան տէր դառնալ, մինչ այդ Թուրք գաղթականներու բնակութեան հարցը կարգադրել, ինչպէս նաեւ Պետական գանձը լեցնել ի հաշիւ տեղահանուած Հայոց ունեցուածքին, աւարտին կը հասցնեն Քէմալականները:

³⁸² Dadrian V. N., նշծ. աշխ., էջ 340:

ՄԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ ՌԻ ՄԱՆԱՍԱՐԵԱՆ ԽԱՆԸ

Մկրտիչ Աղա Մանասարեան³⁸³ համոզուելով իր խորհրդակա-
նը, գլխունական Կարապետ Եզեանցե³⁸⁴, թե գաւառական յարմա-
րագոյն քաղաքը Կարինն (Էրզրում) է, 1881-ին հոն կը բանայ Մա-
նասարեան անունով վարժարան մը եւ անոր յարատեւութիւնը ա-
պահւ.վելու համար կը կտակէ դրամագլուխ, որ կը կազմէ վարժա-
րանի անձեռնմխելի սեփականութիւնը³⁸⁵:

Մ.Մանասարեանի 10 Յուլիս 1886 թուակիր կտակով կտա-
կակատարներ կ'ըլլան Կ.Եզեանց, Գեորգ Եւանգուլեանց եւ Լեւոն
Տիգրանեանց (ապա կը հրաժարի): Կ.Եզեանց կտակին հիման
վրայ կը պատրաստէ կանոնադրութիւն մը, որ 16 Յուլիս 1892-ին
կը վստերացուի Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ: Այս
կանոնադրութեան համաձայն Պոլսոյ Պատրիարքի նախագահու-
թեամբ, վեց Պոլսահայ անդամներով կը կազմուի Մանասարեան
Խնամակալութիւնը, որուն պաշտօնը կ'ըլլայ հոգ տանիլ վարժա-
րանին անշարժ ստացուածքին, պահպանել եւ արդիւնաւորել ար-

³⁸³ Մկրտիչ Աղա Մանասարեան (Թիֆլիս, 1818 – Փարիզ, 1890) Հիմնադիր
Կարինի Մանասարեան եւ Վանի Սանդիստեան վարժարաններու: Ազգասէր եւ
հեռատես բարերար Մկրտիչ Աղա Մանասարեանի նպատակը կ'ըլլայ քաջալերել
չքաւոր ուսումնասէր երիտասարդները եւ ուսուցիչներ պատրաստել Կովկասի
վարժարաններուն:

³⁸⁴ Կարապետ Եզեանց (1855-1903) Կտակակատար հոգեւոյն Մ.Մանասարեանի:
Օնաձ ու ապրած է Մոսկուա, ուր 19 տարեկանին պաշտօնի կը կոչուի նախ
Ռուսիոյ Ներքին Գործոց նախարարութեան, ապա Լուսաւորութեան
նախարարութեան մէջ: Ան՝ հեռատես ու հայրենասէր անձ մը ըլլալով, Հայ
մեծահարուստներուն մէջ ազգային զգացումներ կ'արթնցնէ եւ զանոնք կը
քաջալերէ ու կ'առաջնորդէ դէպի ազգային բարեգործութիւն:

³⁸⁵ Ընդարձակ Օրացոյց ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1900, էջ 211:

ժեթուղթերը, ընդհանուր պաշտպան հանդիսանալ վարժարանին նիւթական ու բարոյական շահերուն³⁸⁶:

Մ. Սանասարեան իր կտակով կամք կը յայտնէ, որ իր կտակած գումարին կէտը յատկացուի յանուն վարժարանի կալուածներու գնման: Ուստի Խնամակալութիւնը Սանասարեան Խան կտակակատար Կ.Եզեանցի հետ խորհրդակցելով 21 Յուլիս 1899-ին Պետական Դրամատան մէջ գտնուող անձեռնմխելի գումարէն 19.000 Օսմանեան լիրա վճարելով Պոլսոյ մէջ կը գնէ կալուած մը՝ Սանասարեան Խանը³⁸⁷, որուն բերելիք եկամուտը վազըֆ կ'ընէ, այսինքն կը յատկացնէ Սանասարեան վարժարանի աղքատ մանուկներուն սնուցման, զգեստաւորման ինչպէս նաեւ գիտութեան եւ արհեստ սորվելու գործին, կալուածին կտակակատար (միւթէվլլի) կարգելով Թուրքիոյ Հայոց օրուան Պատրիարքը: Խանին ամբողջ տարածութիւնը 2606 քմ. կանգուն միւլք ագար (եկամտաբեր կալուած) ըլլալով կը գնուի եւ վազըֆ կ'ըլլայ վարժարանի անուան: Խանը կ'ունենայ կալուածներ, որոնք կը բաղկանան մթերանոցներէ եւ սենեակներէ, որոնց ամէնն ալ կը վարձուին եւ 1903-ին կ'ապահովեն 1444 Օսմանեան լիրայի հասոյթ³⁸⁸:

Սանասարեան վարժարանը³⁸⁹ կ'ունենայ Կ. Պոլսոյ եւ Կարիինի մէջ 32 կալուած, որոնք մեծ եկամուտ կը բերեն անոր: Ասոնցմէ զատ կ'ունենայ 1.200.000 ֆրանսական Ոսկեղրամ ֆրանքի արժեթուղթեր, որոնք ի պահ կը դրուին Փեթրոկրատի Պետական դրա-

³⁸⁶ Քսանամեայ Տեղեկագիր Սանասարեան Վարժարանի (1881-1901), Կ.Պոլիս, 1903, էջ 8-9:

³⁸⁷ Կ. Պոլիս, Սիրքէճի, Էմիլէր թաղ. Տեմիր-գաբու փողոց, թիւ 5:

³⁸⁸ Քսանամեայ Տեղեկագիր Սանասարեան Վարժարանի (1881-1901), Կ.Պոլիս, 1903, էջ 86-87:

³⁸⁹ Մուսթաֆա Քեմալ այս շէնքին մէջ կը գումարէ Էրզուրումի համաժողովը 23 Յուլիս- 7 Օգոստոս 1919 թուականին:

մատան մեջ, որպէս անձեռնմխելի արժէք, լոկ տոկոսները գանձուելու պայմանաւ³⁹⁰:

Մանասարեան վարժարանը, իր պարիսպանման չորս պատերու մեջ ամփոփուած եւ արտաքին աշխարհէն գրեթէ ամբողջովին կտրուած վիճակով կը ներկայացնէ իր նպատակին ծառայող յարմար միջավայր մը: Վարժարանի գրադարանը կ'ունենայ տարբեր լէզուներով 4806 գիրք: Ասկէ գատ Մ.Մանասարեան վարժարանին կը կտակէ Բեդեսպուրկի իր սեփական գրադարանի 4348 գիրքերը:

Վարժարանին մեջ կը դասաւանդուին կրօն, հայոց լեզու, թրքերէն, թուարանութիւն, աշխարհագրութիւն, բնագիտութիւն, քաղաքա-տնտեսութիւն, Օսմանեան օրէնսդրութիւն, առողջապահութիւն, հայկական եւ եւրոպական երաժշտութիւն, մարմնամարզութիւն, իսկ բարձր դասարաններուն մեջ նաեւ փիլիսոփայութիւն եւ մանկավարժութիւն: Վարժարանը կ'ունենայ նաեւ ձմեռային խաղասենեակներ, նկարչական եւ երաժշտական դահլիճներ: 1903-ին վարժարանի աշակերտութիւնը ուսուցիչներու մասնակցութեամբ կը նախաձեռնէ «Միրտ» կիսամեայ ձեռագիր պարբերականը³⁹¹:

Աշակերտութիւնը ամառնային արձակուրդը կ'անցնէ Սրտասձորի մեջ, վրաններու տակ, շրջագայութիւններ կատարելով դէպի ձորամէջ³⁹²:

³⁹⁰ Հ.Հ. Ազգային Արխիւ, Ֆոնդ 409, Ցուցակ 1, Գործ 3928, էջ 25:

³⁹¹ Գեյլստեան Վ., Մ.Մանասարյանը եւ նրա վարժարանը, Սովետական մանկավարժ, 1971, թիւ 4, էջ 82-83:

³⁹² Թաշճեան Տրթ. Ն.Տ.Ս., Մանասարեանները Դաշնակցութեան մեջ, Հայրենիք Ամսագիր, 1931, թիւ 4, էջ 127:

Սանասարեան վարժարանը 1912-ին կը տեղափոխուի Մեքաստիա, ուր կը բացուի Ս.Նշան վանքի շրջափակին մէջ 24 Սեպտեմբեր 1912-ին, տարեկան շուրջ 2.000 Օսմանեան Ոսկի պիտօղէով³⁹³, իսկ 1915-ին 34 տարիներ իր կրթական եւ մանկավարժական առաքելութիւնը կատարելէ, հայութեան հարիւրաւոր ուսուցիչներ, մտաւորականներ եւ հանրային գործիչներ տալէ վերջ կ'աւերուի³⁹⁴:

Վարժարանը իր բոլոր գոյքերով, գիրքերով եւ գործիքներով կը գրաւուի կառավարութեան կողմէ եւ կը զոհուին պաշտօնէութիւնն ու ամբողջ աշակերտութիւնը: Կը գրաւուին նաեւ վարժարանի սեփականութիւն Կարնոյ քաղաքամէջի հողերը, Կարնոյ շրջակայքը գտնուող Աղվերանի ագարակը: 1915-1920 տարիներուն կարելի չ'ըլլար վերաբանալ վարժարանը, որովհետեւ Ա. Ընդհանուր Պատերազմի ընթացքին կտակակատարը զրկուած կ'ըլլայ Սանասարեան վարժարանի կալուածներէն կարելորագոյնին՝ Սանասարեան Խանի եկամուտներէն, որովհետեւ կառավարութիւնը ձեռք կը դնէ խանին վրայ եւ զայն Պետական սեփականութիւն հռչակելով վրան յարկեր եւ ներքեւն ալ նկուղներ շինելով կը վերածէ Ոստիկանութեան պաշտօնատան³⁹⁵:

Համաձայնական ուժերուն Պոլիս մուտքէն մէկ տարի վերջ, Պատրիարքարանը Բերայի նօտարութեան միջոցաւ Ոստիկանութեան տնօրէնութենէն կը պահանջէ խանին յետնեալ վարձքերը, ինչպէս նաեւ նոյն տարուանը: Տնօրէնութիւնը այնքան պիտօղէ չու-

³⁹³ Հ.Հ.Ազգային Արխիւ, Ֆոնդ 193, Ցուցակ 1, Գործ 351, էջ 2:

³⁹⁴ Աստոյան Ա., Կարնո Սանասարյան վարժարանը, Հայութիւն Շաբաթաթերթ, Երեւան, 1997 Մարտ, թիւ 3:

³⁹⁵ Հ.Հ. Ազգային Արխիւ, Ֆոնդ 409, Ցուցակ 1, Գործ 3928, էջ 24-25:

նենալով խանը կը պարպուի ինքնաբերաբար, որովհետեւ խանը ոչ ապաստեփականացուած եւ ոչ ալ բոլորովին գրաւուած է:

Զաւեն Պատրիարքի օրով (1919-ի վերջերը) խանը վարձու կը տրուի, ինչ որ կը շարունակուի նաեւ Տեղապահ՝ Գեորգ Ասլանեանի եւ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքի օրով³⁹⁶:

1920-1928 տարիներու միջեւ կը գանձուի 140-160 հազար ոսկի վարձք: Բայց դժբախտաբար այս երեք կտակակատարներն (միւթեվլի) ալ ոչ միայն չեն մտածեր բարերարին կամքը կատարելով խանին եկամուտով վերաբանալ Սանասարեան վարժարանը գուցէ այդ շրջանին Պոլսոյ մէջ, այլ նաեւ գանձուած այդ դրամներով չեն գներ նոր հասութեան կալուած մը, ինչ որ կամքն էր բարերարին³⁹⁷:

Սանասարեանի Խնամակալութիւնը 1927-1928 տարեշրջանէն սկսեալ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ կրթական գործին եւ Կեդրոնական վարժարանին նիւթական հոգը կը ստանձնէ, որուն փոխարէն կ'որոշուի Կեդրոնական վարժարանի անունին վրայ աւելցնել նաեւ հանգուցեալ բարերարին անունը³⁹⁸: Կրթական Տնօրէնութենէն արտօնագիրը կուգայ 1931-1932 տարեշրջանին եւ վարժարանին անունը կարճ շրջան մը կը վերածուի Կեդրոնական-Սանասարեանի: Այդ տարեշրջանի ընթացաւարտներուն վկայականները նախ կը սլատրաստուին «Կեդրոնական-Սանասարեան Լիսէ» անունով բայց յետոյ կը փոխուին³⁹⁹, որովհետեւ շարունակուող դատին պատճառաւ Կրթական Տնօրէնութիւնը կը հրահանգէ վերցնել

³⁹⁶ Արեւ, 4.V.1929:

³⁹⁷ Շահնագարեան Յ., Սանասարեան Կտակի Դատը, Իսթանպուլ, 1939 էջ 7:

³⁹⁸ Հայաստանի Կոչնակ, 15.X.1927, թիւ 42:

³⁹⁹ Կոմիկեան Վ., Կեդրոնականը Հանրապետական շրջանին, Շոդակաթ Տարեգիրք 1971-1972, Իսթանպուլ, 1972, էջ 28:

«Մանասարեան» անունը, ինչպէս նաեւ այդ անունով պատրաստուած կնիքները:

1928 Հոկտեմբերին Թուրք կառավարութիւնը պատրուակելով, որ Սանասարեան խանին տէրերը փախստական են եւ խանը փոխանորդաբար կը կառավարուի, շէնքը իբրեւ «լքեալ գոյք»⁴⁰⁰ կը փոխանցէ Պոլսոյ Կուսակալութեան, իբր անոր սեփականութիւնը: Պոլսոյ Կուսակալութեան մասնաւոր ճիւղը (Բտարե-ի Հուսուսիյէ) խանը կը գրաւէ իբրեւ «լքեալ գոյք»՝ առարկելով, թէ բարոյական անձնատրութիւններէ լքուած գոյքերը եւ կրթական մարզի վազըֆները ըստ օրինի կը փոխանցուին իրեն⁴⁰¹: Կը միջամտէ նաեւ Սանասարեան կտակի գործադրութեան, գրաւելով խանին «վազըֆ» եղած եկամուտները⁴⁰² եւ կ'արգիլէ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքին զանոնք զանձել⁴⁰³: Իբրեւ «լքեալ գոյք» Պոլսոյ նահանգային վարչութեան կը փոխանցուի նաեւ Էրզրումի Սանասարեան Վարժարանը⁴⁰⁴:

Պոլսոյ Պատրիարքի նախագահութեամբ, Սանասարեան ինամակալութեան եւ քանի մը իրաւագէտներու մասնակցութեամբ ժողով կը գումարուի ու կ'որոշուի դատարան դիմել: Այսպէս Սանասարեան Խանի ու կտակի դատը կը սկսի 23 Հոկտեմբեր 1928-ին Քաղաքային Բ. Դատարանին առջեւ, ուր խանի կտա-

⁴⁰⁰ 26 Սեպտեմբեր 1915-ին հրատարակուած «Լքեալ Գոյքերու Օրէնք»ին համաձայն «լքեալ գոյք» կ'անուանուին ու օրինակաւօրէն կ'իրացուին այն բոլոր շարժուն եւ անշարժ գոյքերը, որոնք Հայերը կը պարտաւորուին լքել 1915-ի Մեծ Եղեռնէն սկսեալ:

⁴⁰¹ Արեւելք, 29.III.1932:

⁴⁰² Դատին ամբողջ տեւողութեանը 8 տարի, խանին հասոյթները, որ կը հասնի 180.000 Ոսկիի, կը կուտակուի դատական իշխանութեան ձեռքը:

⁴⁰³ Յառաջ, 13.X.1928, արտատպուած՝ 8.X.1928 թուակիր «İkdam» թրքական օրաթերթին:

⁴⁰⁴ Ազդարար, 18.X.1928:

կակատար (միւթեվելլի) Մեսրոպ Նարոյեան Պատրիարքի փոխանորդները կ'ըլլան փաստաբաններ՝ Մ. Նարլեան, Նէճաթի Պէյ եւ Լ. Զիվեր: 20 Ապրիլ 1929-ին Պոլսոյ Քաղաքային Բ. Դատարանը միաձայնութեամբ կ'որոշէ, թէ Նարոյեան Պատրիարք իրաւասու չէ դատ բանալու, որովհետեւ կտակակատարի հանգամանքը չի լրացներ եւ նաեւ Պատրիարքութիւնը իրապէս եւ իրաւապէս գոյութիւն չունի: Պատրիարքարանի փաստաբանները կը դիմեն Վճռաբեկ Ատեանին: Երկու տարի շարունակուող դատերէ վերջ կը հաստատուի, թէ Հայոց Պատրիարքի պաշտօն մը գոյութիւն ունի եւ ան խանին կտակակատարն (միւթեվելլի) ըլլալու հանգամանքով իրաւունք ունի իբրեւ պահանջատէր ներկայանալու: Ապա կուսակալութեան փաստաբանները կը պնդեն, թէ դատը պէտք է տեսնուի Պետական Խորհուրդի առջեւ՝ իբրեւ «լքեալ գոյքերու դատ», ուստի Իրաւական Բ. Ատեանը իրաւասու չէ: Այս կնճիռը եւս կը հարթուի Պատրիարքարանի փաստաբաններուն տեղին պաշտպանողականով, բայց հազիւ երեք տարի վերջ կարելի կ'ըլլայ մտնել խնդրին եւութեան մէջ⁴⁰⁵: Տեղի կ'ունենայ դատական կատաղի պայքար մը անթիւ միջադէպերով, որոնք կ'աւարտին ի նպաստ Պատրիարքին, Իրաւական Բ. Ատեանի 28 Մարտ 1932-ի վճիռով⁴⁰⁶:

Դատը կորսնցնող Իտարէ-ի Հուսուսիէն կը դիմէ Վճռաբեկին պնդելով, թէ կտակը չի գործադրուիր եւ կը բեկանուի վճիռը՝ յանձնարարելով քննել թէ Էրզրումի (ապա Սեբաստիա) Մանասարեան վարժարանը փակուելէ վերջ, գոյութիւն ունի՞ նոյնանուն վարժարան մը, ուր ազգին չքատր մանուկները զիտութիւն կը ստանան եւ

⁴⁰⁵ Արեւելք, 29.III.1932:

⁴⁰⁶ Յառաջ, 3.IV.1932:

արուեստներու կը տիրանան: Քննել նաեւ, թէ կտակագրի տրամադրութիւնները, ըստ կտակին պայմաններուն կը շարունակուի՞ն գործադրուիլ եւ հասոյթները կը գործածուի՞ն կտակին համաձայն, քանի որ կտակին մէջ ըսուած է, թէ վարժարանին դադարման պարագային խանին եկամուտներէն ծախքերը հանուելէն վերջ մնացածը կը պահուի կտակակատարին քով, յարմար եկամտաբեր կալուած մը գնելով նոյն վագրֆին վրայ կ'աւելցուի եւ ան ալ վարձու կը տրուի:

Պատրիարքարանի փաստաբանները բացատրագրով կը պարզեն, թէ կտակին տրամադրութիւնները տառացի կը գործադրուին եւ կը պահանջեն որոշումի սրբագրութիւն, զոր սակայն կը մերժէ Վճռաբեկը: Կուսակալութիւնը եւս կը պահանջէ որոշումի սրբագրութիւն, ուզելով որ բեկանումը ըլլայ վերջնական, այսինքն վճիռ կայանայ թէ Սանասարեան Խանը լքեալ է, ուստի պէտք է փոխանցուի նահանգային իշխանութեան, որ նոյնպէս կը մերժուի Վճռաբեկի կողմէ՝⁴⁰⁷:

Այսպէս՝ 3 Յունիս 1933-ին Պոլսոյ Իրաւական Բ. ատեանին առջեւ կը վերսկսի Սանասարեան Խանի դատը ճշտելու համար, թէ Սանասարեան վագրֆը այդ անունը կրող վարժարանի մը օժանդակութիւն կ'ընէ՞ թէ ոչ: Պատրիարքարանի փաստաբանները 18 Հոկտեմբեր 1933-ին դատարան կը յանձնեն իրենց պատրաստած յուշագիրը, ուր կը բացատրեն թէ Սանասարեան վարժարանը էրզրում եւ Սեբաստիոյ մէջ դադրելէն վերջ վագրֆին հասոյթները յատկացուած են Պոլսոյ Կեդրոնական վարժարանի կարօտ ուսանողներուն եւ այս առթիւ ալ պաշտօնական արտօնութեամբ Սանա-

⁴⁰⁷ Յառաջ, 12.VI.1933:

սարեան անունը կցուած է վարժարանի անունին⁴⁰⁸: Բայց Իտարե-ի Հուսուսիէի փաստաբանները իրենց յուշագրին մէջ կը յայտնեն, թէ Կեղրոնական վարժարանը ռեւէ կապ չունի Սանասարեանի հետ, քանի որ Սանասարեան վարժարանը բացուած է 1881-ին Էրզրում, իսկ Կեղրոնականը՝ 1886-ին Կ. Պոլսոյ մէջ: Գալով Սանասարեան յորջորջման, ան Կեղրոնականի անունին կցուած է դատին սկսելէն վերջ միայն: 1920-1928 տարիներուն, երբ խանին վարձքերը կը գանձուէին գոյութիւն չունէր Կեղրոնական-Սանասարեան բաղադրեալ անունով վարժարան մը⁴⁰⁹:

Դատը կը վերջանայ 15 Մայիս 1935-ին եւ Պոլսոյ Իրաւական Բ. ատեանը կը մերժէ Պատրիարքարանին պնդումները պատճառ ցուցնելով, թէ պաշտօնական արձանագրութեամբ չէ ապացուցուած որ նախապէս գոյութիւն ունեցող Սանասարեան վարժարանը կը շարունակուի Պոլսոյ Կեղրոնական վարժարանին մէջ: Դժբախտաբար, ո՛չ Կեղրոնականը իր ստացած գումարը եւ ո՛չ ալ Պատրիարքարանը իր յանձնածը չեն արձանագրած ըստ օրինի բռնուած տետրակի մը մէջ: Իսկ հայերէն տոմարները կը մերժուին դատարանին կողմէ՝ անարժէք գտնուելով, քանի որ թրքերէն չեն⁴¹⁰: Ուստի՝ Պոլսոյ Իրաւական Բ. ատեանը իր վճիռը կը յայտնէ ի նպաստ Իտարե-ի Հուսուսիէին թէ Սանասարեան Խանը «լքեալ» է եւ կը պատկանի Կուսակալութեան, ինչ որ Վճռաբեկը եւս կը հաստատէ 4 Նոյեմբեր 1935-ին եւ Սանասարեան Խանը վերջնականապէս սեփականութիւնը կը դառնայ Քաղաքապետութեան⁴¹¹:

⁴⁰⁸ Արեւելք, 19.X.1933:

⁴⁰⁹ Շահնագար Յ., նշծ. աշխ., էջ 13-14:

⁴¹⁰ Յուսարէր, 5.VII.1939:

⁴¹¹ Շահնագար Յ., նշծ. աշխ., էջ 15:

Սանասարեան Խանի դատէն կը ծագի նաեւ մեծագումար վնասի հատուցման պահանջի դատ մը: Պոլսոյ Քաղաքապետին կողմէ 388.000 Ոսկիի դատ մը կը բացուի Սանասարեան կտակի միւթելէլլի Նարոյեան Պատրիարքին դէմ, իբր վնասներու հատուցում՝ խանին Ջինադադարի տարիներուն զանձուած վարձքերուն եւ դատական ծախքերուն համար⁴¹²: Պատրիարքին կողմէ պատուիրակութիւն մը (Հ. Օ. Վրդ. Պախթիարեան եւ իրաւագէտ Լ. Գոյումճեան) Անգարա երթալով կը ներկայանան Վարչապետ՝ Րէֆիկ Սայտամին ու առարկութեան անտեղի բնոյթը բացատրող աղերսագիր մը կը յանձնեն Իրեն⁴¹³: Հակառակ որ Վարչապետը կը խոստանայ հետաքրքրուիլ որպէսզի հարցը արագ լուծուի, դատը կը շարունակուի մինչեւ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքի մահը՝ 1944: Յետ մահու կատարուած վերջին դատավարութեան Վարդան Պէկեան կը յայտարարէ, թէ Պատրիարքը վախճանած ըլլալով՝ ինք դատարանին առջեւ իբրեւ փոխանորդ ոեւէ հանգամանք չունի⁴¹⁴: Արժեթուղթերը, որոնք ի պահ դրուած էին Բերթոկրատի Պետական դրամատան մէջ, կը փճանան ռուսական յեղափոխութեան հետեւանքով:

Սանասարեան Խանը, որ կտակին բուն դրամագլուխը կը կազմէ, ոտնձգութենէ զերծ պահելու միակ եղանակը կ'ըլլար Թուրքիոյ մէջ Սանասարեանի անունով վարժարանի մը գոյութիւնը⁴¹⁵, որ կարելի չէ եղած զանազան պատճառներով, որուն հետեւանքով կը փճանայ նաեւ բարերարին կտակը, կը քայքայուի գիտ-

⁴¹² Նոր Լուր, 26.V.1939:

⁴¹³ Ժամանակ, 29.IV.1939:

⁴¹⁴ Ժամանակ, 24.VII.1944:

⁴¹⁵ Մ. Սանասարեան իր կտակին մէջ պայման կը դնէ վարժարանը հաստատել Թրքահայոց մէջ եւ Սանասարեան Խանի հասոյթը յատկացնել Թուրքիոյ մէջ գտնուող Հայ ազգի որբերուն:

նական Եզեանցի եւ քարեւեր Սանասարեանի համախորհուրդ ստեղծած մարդասիրական մեծ գործը եւ «լքեալ գոյքեր»ու ճակատագիրը կը բաժնէ Սանասարեան Խանը:

Պետական գանձին փոխանցուելէ վերջ, խանը «Սանասարեան» անուամբ կը ծառայէ որպէս բանտ, ուր կ'արգելափակուին, չարչարանքներու կ'ենթարկուին երբեմն նոյնիսկ կը մահանան քաղաքական կեանքի կարեւոր դէմքեր եւ մտաւորականներ. ինչպէս՝ Նազլմ Հիքմէթ, Վետաթ Թիրքալի, Աթիլլա Իլիան, Էճէ Այիան, Րուհի Սու եւ բազմաթիւ ուրիշներ:

Աւելի վերջ խանը վարձու կը տրուի եւ գործածութեան կը յանձնուի զանազան ասպարէզներու տէր անձերու, առաւելաբար փաստաբաններու:

Պատրիարքական Ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեան 2012 Յունուարին Վաքըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան մօտ դատ կը բանայ, որպէսզի համայնքը վերատիրանայ Հայ ճարտարապետ Յովսէփ Ազնաւուրի կողմէ կառուցուած Սանասարեան Խանին⁴¹⁶: Այս առթիւ փաստաբան Ալի Էլպէօղլուի կողմէ Պոլսոյ 13-րդ դատարանին մօտ դիմում կը կատարուի եւ դատարանը արգելքի որոշում կը հռչակէ՝ կալուածի փոխանցումն ու վսճառքը կանխելու համար: Բայց Վաքըֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը անտեսելով այս որոշումը Խանը 20 տարիով վարձու կուտայ: Իսկ 2014 Յուլիսին դատարանը անսպասելի վճիռով մը կը մերժէ կատարուած դիմումը⁴¹⁷:

⁴¹⁶ Մարմարա, 12.1.2012:

⁴¹⁷ Ակօս, 11.VII.2014:

ԲԱՆԿԱԼԹԻԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Հայերը ԺԴ. Դարուն բաւական ստուար թիւ մը կը կազմեն Ղալաթիա, ուր կ'ունենան Ս.Սարգիս (կառուցուած 1361-ին եւ անհետ կորսուած)⁴¹⁸ ու Ս.Գրիգոր Լուսաւորիչ (կառուցուած 1391-ին եւ վերանորոգուած 1436-ին)⁴¹⁹ եկեղեցիները եւ իրենց նախնիներուն մարմինները կ'ամփոփեն աղօթատեղիներու բոլորտիքը կամ բնակութեանց սահմանին անմիջապէս մօտ, բացօթեայ եւ օդատուն տարածութիւններու մէջ: Իսկ ԺԶ. դարուն Ղալաթիայէն կը գաղթեն Բերա եւ հետզհետէ կը հաստատուին հոն: Երբ 1560-ի ժանտախտի մեծ համաճարակին, կառավարութիւնը կ'արգիլէ քաղաքի սահմաններուն մէջ թաղում կատարել, Ղալաթիոյ Հայերը այնուհետեւ կը պարտաւորուին իրենց մեռելները թաղել՝ Ս. Յակոբ Անկէլանոցի դիմաց, «Հարպիլէ» անուանեալ գօրանոցի⁴²⁰ քով գտնուող ընդարձակ գերեզմանատան մէջ:

Բանկալթիի Ս.Յակոբ Ազգային Գերեզմանատունը⁴²¹, որ սկզբնաւորութիւն ունեցած է 1560-էն աւելի առաջ⁴²², կ'որմնաւիակուի 1853-ին եւ դրան վրայ արձանագրութիւն մը կը զետեղուի

⁴¹⁸ Միրունի Յ., նշծ.աշխ., Ա. Հատոր, էջ 199:

⁴¹⁹ Նոյն տեղին, էջ 235:

⁴²⁰ Զօրանոցը, որ կառուցուած է 1862-ին Արքունի ճարտարապետ Կարապետ Պալեանի (1800-1866) կողմէ, 10 Փետրուար 1993-ին սկսեալ կը ծառայէ որպէս Զինուորական Թանգարան:

⁴²¹ Սօլախեան Կ., 7 Յունիս 1939 թուակիր «Նոր Լուր»ի յօդուածին մէջ կը տեղեկացնէ, թէ Կանի մէջ իմացած է, թէ Բանկալթիի գերեզմանատան զետիւնը Սուլթան Միւլէմանի (1494-1566) խոհարարապետ Վանեցի Սանուկ Գարասէֆերեանի նուիրուած եւ Հայ ազգին ննջեցեալներուն թաղման յատկացուած է՝ մատուցած ծառայութեանց փոխարէն: Նոյն տեղեկութիւնը կարելի է կարդալ նաեւ Muratoğlu A. Yeni Şafak 5.II.2007« Pamukciyan K. Zamanlar, mekanlar, insanlar, İstanbul« 2003« s. 264.

⁴²² Հանէսեան Մ., 125 ամեայ Յոբելեան Բերայի Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1932, էջ 309-310:

1856-ին⁴²³: Յաջորդ դարերուն, Կ.Պոլսոյ բնակչութիւնը հետզհետէ կը բազմանայ, Բերա թաղը հետզհետէ կ'ընդարձակուի. նախ Բանկալթիի եւ աւելի վերջ Շիշլիի նորագոյն թաղերը կը կազմուին: 1865-ին, երբ կրկին համաճարակ մը՝ հնդկախտը կը սարսափեցնէ Պոլսոյ բնակիչները, կառավարութիւնը՝ վտանգաւոր նկատելով բնակարաններու մօտ ննջեցեալներու թաղումը, համաճարակին առաջքն առնելու համար կ'արգիլէ այս կողմերն ալ այլեւս ննջեցեալներու թաղումը⁴²⁴: Այս թուականէն վերջ որպէս գերեզմանատուն գործածելու համար Հայ հասարակութեան կը տրուին Շիշլիի վերի կողմերը ընդարձակ գետիններ, ուր կը կառուցուի այժմու գերեզմանատունը⁴²⁵:

Բանկալթիի Ս.Յակոբ Ազգային Գերեզմանատան մէջ ննջեցեալներու թաղումը կը դադրի 23 Յուլիս 1865-ին եւ յաջորդ օրն արդէն կը սկսի Շիշլիի Ազգային գերեզմանատան մէջ: 1872-ին կը ձեռնարկուի Բանկալթիի գերեզմանատան զբաւումին, մօտակայ զօրանոցի պէտքերուն գործածելու համար: Նոյն տարուան 22 Դեկտեմբերին Թրակիոյ թեմի առաջնորդ՝ Տ. Թադէոս Եպիսկոպոսի առաջնորդութեամբ Հայ հոգեւորականներ այս ոսնձգութեան դէմ աղերսագիր մը կը մատուցանեն Ապտիլ Ազիզ Կայսեր, որ յատուկ հրովարտակով մը կը հաստատէ Հայերուն իրաւունքը նոյն գերեզմանատան վրայ⁴²⁶:

⁴²³ Թուրլաճեան Բ., Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները, Իսթանպուլ, 1991, էջ 217:

⁴²⁴ Քօւեան Յ. Մ.Վրդ., Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց Կ.Պոլսոյ, Վիեննա, 1931, էջ 8:

⁴²⁵ Նոյն տեղէն, էջ 12:

⁴²⁶ Նոյն տեղէն, էջ 318:

1874-ին Ներսես Պատրիարք Վարժապետեան կայսերական արտօնութիւն կը ստանայ վաղամեռիկ Բիւզանդ Գարակեօզեանի փափաքը իրականացնելու համար իր եղբայրներուն որոշումով, Հայ վաճառականական վարժարան մը հիմնելու Բանկալթիի գերեզմանատան մէջ: Սակայն, առեւտրական հրապարակը ջնջող արժեթուղթերու անկման եւ այլ արգելքներու պատճառաւ կտրելի չ'ըլլար իրականացնել ծրագիրը⁴²⁷:

1909-ին Բերայի Թաղապետութիւնը Բանկալթիի պողոտան լայնցնելու համար կը պահանջէ թողուլ գերեզմանատան փողոցին երկայնքին վրայ գտնուող մասը: Վէճը, որ կը ծագի թաղապետութեան եւ ազգային իշխանութեան միջեւ, լուծում կը գտնէ կառավարութեան միջամտութեամբ, ձգուած հողին արժէքին համապատասխան գումարի մը վճարումով: Պոլսոյ քաղաքապետական ժողովը 11 Փետրուար 1909-ի որոշումով յանձն կ'առնէ 15.000 հնչին ոսկի տալ՝ իբրեւ հատուցում ըլլալիք ծախքերուն (պատի շինութիւն, աճիւններու եւ մահարձաններու փոխադրութիւն) եւ ոչ թէ իբր փոխարժէքը այդ հողին՝ պատճառաբանելով, թէ գերեզմանատունը հանրութեան յատկացուած վայր մըն է եւ կտրելի չէ: Կալուածաթուղթով տիրանալ անոր⁴²⁸:

1926-ին Բերայի Թաղապետութիւնը (Քաղաքապետութիւն) կ'արգիլէ Բերա գտնուող գերեզմանատուներուն մէջ ննջեցեալներու թաղումը եւ կ'որոշէ յարմար տեղ մը փոխադրել Բանկալթիի Հայոց գերեզմանատունը⁴²⁹:

1931-ին Պոլսոյ Քաղաքապետութիւնը Կալուածահամարի վարչութեան դիմելով կը պահանջէ Բանկալթիի Ս.Յակոբ Հայոց

⁴²⁷ Ազատեան Թ., Յուշամատեն Գարակեօզեան Վարժարանի (1913-1948), Իսթանպուլ, 1949, էջ 16:

⁴²⁸ Ազդարար, 5.V.1931:

⁴²⁹ Յատաջ, 21.V.1926:

գերեզմանատան իր անունին փոխանցումը: Քաղաքապետութիւնը կ'ստարկէ, որ գերեզմանատան գետինը կը պատկանի «Սուլթան Պայազիտ Վէլի» անուն վազըֆի մը, որով լքեալ գերեզմանատուն է, ուրեմն «1580 թիւ Գերեզմանատուներու Օրէնք»ին 167-րդ յօդուածին⁴³⁰ համաձայն բոլոր լքեալ գերեզմանատուներու նման պէտք է իրեն յանձնուի⁴³¹: Կալուածաթուղթի վարչութիւնը այս պահանջը կը հաղորդէ Էնկիւրիի (Անգարա) կեդրոնին: Մինչ այդ պաշտօնագրով մը Ս. Երրորդութիւն եկեղեցոյ Թաղային Խորհուրդէն կը պահանջէ ներկայացնել գերեզմանատան կալուածաթուղթը⁴³²: Հայոց Քաղաքական Ժողովը կը դասաւորէ հարկ եղած օրինական թուղթերը եւ Կալուածաթուղթի վարչութեան դիմում կատարելու համար Էնկիւրի կը դրկէ երկու պատուիրակներ (Գ. Թորգոմեան եւ Մ. Լարլեան): Պատուիրակները Կալուածահամարի կեդրոնական վարչութեան դիմելով վաւերագրերով կը բացատրեն թէ Բանկալթիի Հայոց գերեզմանատունը ենթակայ չէ Թուրքիոյ Ազգային Ժողովէն վաւերացեալ «Գերեզմանատուներու Օրէնք»ին նախատեսած գրաման, քանի որ ան ո՛չ անտէր է եւ ո՛չ ալ «լքեալ գոյք», ժամանակին հակառողջական պատճառներով է, որ արգիլուած է հոն ննջեցեալներու թաղումը եւ այդ ատենէն վերջ քազմաթիւ անգամներ հաստատուած է, թէ Հայոց սեփականութիւն է⁴³³:

Հակառակ այս վիճակին Կալուածահամարի կեդրոնէն հրահանգ կը տրուի Պոլսոյ Կալուածաթուղթի վարչութեան՝ ընթացք տալ Քաղաքապետութեան պահանջին եւ գերեզմանատունը անոր

⁴³⁰ 1580 թիւ Գերեզմանատուներու Օրէնքին 167-րդ յօդուածը կ'ըսէ. «Լքեալ, անտէր եւ վազըֆ եղած հանրային գերեզմանատուները, ընդհանուր իրաւունքներով եւ պարտականութիւններով փոխանցուած են թաղապետութիւններու»:

⁴³¹ Արեւելք, I.XII.1931:

⁴³² Հայաստանի Կոչնակ, 17.I.1931, թիւ 3:

⁴³³ Հայաստանի Կոչնակ, 24.I.1931, թիւ 4:

անունով արձանագրել: Քաղաքապետութիւնը կը գրաւէ Բանկալ-
թիի գերեզմանատունը եւ արգելք կը դնէ գերեզմանատան խա-
նութներուն եւ կառատուններուն եկամուտին վրայ: Հայոց Պատ-
րիարքարանը դատ կը բանայ Քաղաքապետութեան դէմ, իբրեւ
դատախազ կը դիմեն Մեսրոպ Նարոյեան Պատրիարք եւ Վարչու-
թեան ատենապետ՝ Գ.Թորգոմեան՝ պնդելով, թէ գետինը լքեալ գե-
րեզմանատուն չէ եւ ունի սեփականատիրութեան իրաւունք: Քա-
ղաքապետութեան փաստաբանը կը պահանջէ Պոլսոյ Քաղաքա-
յին Դ. Ատեանէն դատը յանձնել Պետական Խորհուրդին՝ առարկե-
լով, որ ատեանը այս դատով զբաղելու իրաւասու չէ: Այս առթիւ
Պատրիարքարանի փաստաբանները դատարանին կը յանձնեն
յուշագրեր, որոնք փաստացի կը հերքեն հակառակորդ կողմին ա-
ռարկութիւնները⁴³⁴: Այս յուշագրերու հիման վրայ Պոլսոյ Քաղա-
քային Դ. Ատեանը միաձայնութեամբ կ'որոշէ, թէ ինք իրաւասու է
այս դատով զբաղելու⁴³⁵: Այսպէս Պոլսոյ Քաղաքային Դ. Ատեանին
առջեւ կը շարունակուի դատը, ուր Պատրիարքարանի փաստա-
բաններ՝ Պ. Նարլեան եւ Նեճաթի Պէյ կը պահանջեն կանխարգելիչ
միջոց ձեռք առնել, այսինքն չթողուլ որ մինչեւ դատի վերջանալը
գերեզմանատունը պաշտօնապէս Քաղաքապետութեան սնցնի:
Դատարանը կ'ընդունի այս պահանջը, որուն փոխարէն սակայն
պայման կը դնէ 20.000 թրքական ոսկիի երաշխաւորութիւն⁴³⁶, որ-
պէսզի երբ Քաղաքապետութիւնը ոեւէ վնաս կրէ դատի բերումով
հողին ուշ տիրանալուն եւ հետեւաբար զինի անկումին հետեւան-
քով, հատուցում կատարուի յիշեալ երաշխաւորութեան գումարէն:
Այս Քաղաքապետութեան փաստաբանները կը պնդեն, թէ Հայ

⁴⁴ Ազդարար, 20.III.1931:

⁴⁵ Ազդարար, 22.III.1931:

⁴⁶ Ազդարար, 26.II.1931:

համայնք գոյութիւն չունի Թուրքիոյ մէջ, գոյութիւն չունի նաեւ Հայոց Պատրիարքութիւն: Կ'առարկեն թէ «Նախարարական Խորհուրդին 19 Յուլիս 1915 թուակիր եւ 729 համար կանոնագրով Պատրիարքը Երուսաղէմ քստրուեցաւ, Պատրիարքութիւնն ալ հոն փոխադրուեցաւ, այսօր Պոլսոյ մէջ այդ տեսակ հաստատութիւն մը չկայ: Ուրեմն Նարոյեան Պատրիարք իրաւունք չունի դատ բանալու»⁴³⁷:

Պատրիարքարանի փաստաբանները շատ փաստացի յուշագրեր կը ներկայացնեն դատարանին՝ ի նպաստ Հայ համայնքին գոյութեան, որոնցմէ 18 Հոկտեմբեր 1915 թուակիր եւ 1334 համար կանոնագիրը, որ կը վերահաստատէ Պատրիարքութիւնը, ինչպէս նաեւ Պատրիարքարանի կանոնագիրը, պատասխանը կ'ըլլայ Քաղաքապետութեան փաստաբաններուն առարկութեան⁴³⁸:

Դատարանը կը մերժէ հակառակորդ կողմին պնդումը եւ կ'ընդունի Պատրիարքարանի դատ բանալու իրաւունքը: Այսպէս Քաղաքային Դ. Ատեանին որոշումով իրաւապէս կը հաստատուին երկու կարեւոր սկզբունքներ.

ա. - Հայ համայնք գոյութիւն ունի Թուրքիոյ մէջ իբրեւ իրաւաբանական անձնաւորութիւն, օժտուած անոր յատուկ օրինական բոլոր իրաւունքներով (կալուածի գնում, վաճառում, մատակարարութիւն, հակակշիռ ելն.):

բ. - Այս համայնքին իրաւասու պետն է Նարոյեան Պատրիարքը, որ իբրեւ դատախազ ներկայացած է գերեզմանատան դատին⁴³⁹:

⁴³⁷ Ազդարար, 23.III.1931:

⁴³⁸ Ազդարար, 17.IV.1931:

⁴³⁹ Ազդարար, 26.IV.1931:

Այս սկզբունքներով Քաղաքային Դ. Ատեանը որոշած կ'ըլլայ թէ Պատրիարքը կտակակատարն (միւթեվէլլի) է համայնքային բուլոր կալուածներուն:

Բանկայթիի գերեզմանատան հողամասը, որ 56000 քառակուսի մէթր գետինէ ու 5000 քառակուսի մէթր կալուածներու մասէ կը բաղկանայ⁴⁴⁰, գտնուելով Բերայի ամենամեծ, ամենաընդարձակ ու բանուկ պողոտային վրայ, մեծ արժէք կը ներկայացնէ եւ այդ պատճառաւ բոլորին նպատակը կ'ըլլայ այս կամ այն ձեւով խլել այս գերեզմանատունը Հայ համայնքին ձեռքէն, որուն այդ օջուան արժէքը ըստ Թուրք թերթերու գնահատանքին կը հասնի միլիոններու⁴⁴¹:

Նոյն օրերուն Պոլսոյ Քաղաքապետութենէն զատ, Այազ Փաշայի միւթեվէլլիութիւնն ալ կը պահանջէ այդ հողամասը, առարկելով որ ան կը պատկանի Այազ Փաշայի վազըֆին⁴⁴²: Մինչ դատը կը շարունակուի եւ Քաղաքապետութիւնը կը պնդէ, որ գերեզմանատունը կը պատկանի Սուլթան Պայազիտի վազըֆին, Պատրիարքարանի եւ Քաղաքապետութեան միջեւ տեղի ունեցող վեճը լուծելու համար անհրաժեշտութիւն կը ստեղծուի հին դիւաններ քրքրել եւ վաւերագրեր հանել, սեփականութեան իրաւունքը հաստատելու համար: Դատարանը յարմար կը տեսնէ այդ վազըֆին սահմանաթուղթը պահանջել: Կ'որոշէ նաեւ այս գործը յանձնել փորձագէտներու եզրակացութեան ու կը կազմէ մասնագիտական քննիչ մարմին մը, որուն անդամները կ'ըլլան Քաղաքապետութեան գերեզմանատուներու տնօրէնը, Կալուածատուարի (քատասթո) գիտական գործոց տնօրէնը, պատմաբաններ, թան-

⁴⁴⁰ Նոր Լուր, 14.II.1935:

⁴⁴¹ «Հայրենիք» Ամսագիր, Տասներորդ տարի, Յունուար 1932, թիւ 3:

⁴⁴² Արաքս, 17.X.1931:

գարանի տնօրէնը եւ թափուի պաշտօնատար մը⁴⁴³: Այս քննիչ մարմինը տեղւոյն վրայ քննութիւններ կատարելով իր տեղեկագիրը կը ներկայացնէ դատարանին, սակայն ան աննպաստ կ'ըլլայ Պատրիարքարանին, քանի որ քննիչները կը տեղեկացնեն թէ գերեզմանատունը կը նկատուի Սուլթան Պայագլիտի վազըֆին սահմաններուն մէջ:

Հիմնուելով Թուրք փորձագէտ եւ պատմաբաններու այս եզրակացութեան վրայ Պոլսոյ Քաղաքային Դ. Ատեանը կ'որոշէ, որ Բանկայթիի Հայոց գերեզմանատունը իբրեւ լքեալ կալուած «Գերեզմանատանց Օրէնք»ին համաձայն պետք է փոխանցուի Քաղաքապետութեան⁴⁴⁴:

Պատրիարքարանի փաստաբանները կը դիմեն Վճռաբեկին, խնդրելով որ բեկանէ այս որոշումը: Վճռաբեկ Ատեանը, առանց գործին էութեան թափանցելու, այսինքն առանց քննելու թէ գերեզմանատունը որու կը պատկանի 4 Մարտ 1933-ին կը հաղորդէ իր վճիռը, «քանի որ այդ գետինը եկեղեցապատկան եկամտաբեր կալուած (աքար) չէ, Պատրիարքը իրատուն չունի իբրեւ դատախազ ներկայանալու: «Բարոյական անձնատրութեանց Օրէնք»ին համաձայն համայնքներու պետերը ռեւէ իրաւասութիւն չունին իրենց կրօնական եւ բարեսիրական հաստատութեանց պատկանող, բայց ոչ եկամտաբեր հողերու վրայ»⁴⁴⁵:

Վճռաբեկի այս որոշումէն վերջ Պատրիարքարանը դարձեալ կը դիմէ Վճռաբեկ Ատեանին, պահանջելով վճռի սրբագրութիւն

⁴⁴³ Արեւելք, 16.II.1932:

⁴⁴⁴ Ազդարար, 6.III.1933:

⁴⁴⁵ Ազդարար, 23.X.1934:

(թասհիհ ի գարար), բայց Ատեանը կը պնդէ իր նախկին տեսակէտին վրայ⁴⁴⁶:

Դատական Պաշտօնատունը (ապա կը կոչուի Արդարութեան Պալատ) 3 Դեկտեմբեր 1933 կիրակի գիշերուան հրդեհին բոցերու ճարակ կ'ըլլայ, ուր կը փճանան բոլոր թղթածրարները եւ դիւանաթուղթերը⁴⁴⁷: Թէեւ Բանկայթիի Ս. Յակոբ գերեզմանատան դատին վերաբերեալ թուղթերն ու վաւերագրերը գոյութիւն կ'ունենան Կալուածահամարի (Թափու) կեդրոնին ու Քաղաքապետութեան մէջ, բայց դատը կը յետաձգուի մինչեւ դատարաններու գործունէութեան վերսկսիլը:

Բանկայթիի գերեզմանատան դատավարութիւնը, որ կը սկսի 1 Մարտ 1931-ին, վերջ կը գտնէ 26 Նոյեմբեր 1934-ին: Պատրիարքարանը կը դատապարտուի վճարել դատական ծախքերը եւ իբրեւ փաստաբանական ծախք 150 ոսկի Քաղաքապետութեան փոխանորդին⁴⁴⁸: Ինչպէս նաեւ կը ջնջուի կանխարգել միջոցը:

Դատարանի այս որոշումէն վերջ, նկատելով որ վճիռը ստընչութիւն չունի դատին էութեան հետ, գերեզմանատան համար դատախազ կը կանգնի Բերայի Թաղային Խորհուրդը: Ատենասպետ Փրօֆ. Ճէլալ դիմում կը կատարէ Իրաւական Ա. Ատեանին, եւ կանխարգել միջոց կը պահանջէ: Այսպէս կը սկսի դատավարութեան երկրորդ շրջան մը:

Դատարանը կը հաստատէ ջնջել հողին կանխարգել միջոցը, պահելով միայն իր վրայ շէնք գտնուող հողամասին համար, 10.000 ոսկի երաշխաւորութիւն ցոյց տրուելու պայմանաւ⁴⁴⁹: Մին-

⁴⁴⁶ Յառաջ, 13.IX.1933:

⁴⁴⁷ Յառաջ, 5.XII.1933:

⁴⁴⁸ Ազգաբար, 27.XI.1934:

⁴⁴⁹ Արեւելք, 6.XII.1934:

չեւ դատին վերջանալը ազգին կը մնան գերեզմանատան այն մա-
սերը, որոնց վրայ շէնք գոյութիւն ունի բայց Քաղաքապետութիւնը
առանց սպասելու դատին վերջանալը, հողային մասին սեփակա-
նաթուղթերը հանել կուտայ եւ կը պատրաստէ գերեզմանատան
մասնատման քարտէսները, կը ճշդէ իւրաքանչիւր մէթրին արժե-
քը՝ յառաջամասին համար 90, ետեւի մասին համար 70 ոսկի: Կը
ծրագրէ մաս առ մաս ծախել զայն գործողութեան աւարտին⁴⁵⁰:
Մինչ այդ գերեզմանատան հողամասին համար ալ գնահատումի
քննութեան պահանջով կը դիմէ դատարան, որ ստուգիչ մարմին
մը կը կազմէ եւ 27 Յունուար 1935-ին գնահատման քննութիւն կը
կատարուի ստուգելու համար ներկայ եւ երեք տարի առաջուան
արժէքին տարբերութիւնը: Քաղաքապետութիւնը հատուցում կ'ու-
զէ դիտել տալով, որ գերեզմանատան հողին գինը ինկած է երեք
տարուան ընթացքին: Կը պահանջէ նաեւ համեմատական վարձք
(հարկ) ն երեք տարուան ընթացքին գանձուած վարձքերը)⁴⁵¹:

Քաղաքապետութիւնը կը դիմէ նաեւ Բերայի Կալուածահա-
մարի վարչութեան, որպէսզի իր անունին սեփականութեան
թուղթ տրուի Բանկայթիի գերեզմանատան թափուր հողամասին
համար:

Յաջորդող օրերուն Բերայի Թաղային Խորհուրդը խնդրագիր
մը կուտայ Բերայի Կալուածահամարի վարչութեան, որպէսզի
նման թուղթ մը չտրուի Քաղաքապետութեան, քանի որ գերեզմա-
նատան խնդրին մասին դատի ձեռնարկուած է եւ դեռ չէ կայացած
դատական վճիռ⁴⁵²: Իսկ Գերեզմանատանց տնօրէնութիւնը, գերեզ-

⁴⁵⁰ Յառաջ, 4.I.1935 (արտաստպուած 30.XII.1934 թուակիր «Zaman» թրքական
թերթէն:

⁴⁵¹ Արեւելք, 28.I.1935:

⁴⁵² Արեւելք, 7.II.1935:

մանատան շենքի ու հողի մասերը ճշդելու համար, Քաղաքապետության միջոցով Բերայի կալուածոց հոգաբարձութենն ստիպողաբար կը պահանջէ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ գերեզմանատան միւս շէնքերուն (կառատուններուն եւ խանութներուն) կառուցման արտօնագիրը⁴⁵³:

Հոգաբարձութիւնը բացի Ս. Լուսաւորիչ եկեղեցիէն, բոլորին շինութեան արտօնագրերուն նօտարէ վաւերացեալ օրինակները կը ներկայացնէ: Ս. Լուսաւորիչ եկեղեցին (Ս. Գրիգոր Լուսաւորիչի նուիրուած Խոր Վիրապ եկեղեցի), գերեզմանատան հարաւային ծայրը կը կառուցուի 28 Յուլիս 1865-ին, որպէսզի այնուհետեւ բերուած ննջեցեալները եկեղեցական արարողութիւն կատարուելէ վերջ փոխադրուին Շիշլի եւ ամփոփուին նորահաստատ գերեզմանատան մէջ: Եկեղեցւոյ հրովարտակը, որ տրուած է Սուլթան Ազիզի կողմէ 1865-ին, ի պահ կը դրուի Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ խորհրդարանը, որ կ'այրի 1871-ին Բերայի հրդեհի ընթացքին⁴⁵⁴:

Կալուածահամարի կեդրոնական յանձնաժողովը կ'որոշէ գերեզմանատան գետնին կալուածագիրը տալ Քաղաքապետութեան⁴⁵⁵, ուր կ'ըսուի թէ գերեզմանատան 51968 քառակուսի մետր հողը սեփականութիւնն է Քաղաքապետութեան⁴⁵⁶:

Քաղաքապետութիւնը կը պատրաստէ նոր քարտէս մը, որուն համաձայն կը կատարուի սահմանագծում, որով Ս. Լուսաւորիչ եկեղեցիին անմիջական մաս կազմող սեփական ճամբան, պարտէզը եւ ճամբուն վրայ գտնուող դուռը գերեզմանատան մէջ կ'առ-

⁴⁵³ Նոր Լուր, 26.II.1935:

⁴⁵⁴ Հանէսեան, նշծ. աշխ., էջ 292:

⁴⁵⁵ Նոր Լուր, 29.III.1935:

⁴⁵⁶ Յառաջ, 19.IV.1935:

նուին, թողյով միայն եկեղեցիին կպած խիստ նեղ անցք մը⁴⁵⁷: Գամել կուտան նաեւ դէպի «Հոգեւոր Տիրոջ Դամբարանը» առաջնորդող ցանկապատը⁴⁵⁸:

Դատարանի ստուգիչ մարմինը (փորձագէտներու մարմին) կատարուած մանրակրկիտ քննութեան արդիւնքը կը ներկայացնէ տեղեկագրով մը, որմէ յայտնի կը դառնայ որ Բանկալթիի գերեզմանատան գետնի արժէքը երեք տարուան ընթացքին 10 ոսկի/ քառակուսի մէթրէն իջած է 7.5 ոսկի/ քառակուսի մէթրի: Արժէքին տարբերութիւնը կը գնահատուի 124.000 ոսկի⁴⁵⁹:

Յաջորդող օրերուն կը ջնջուի նաեւ գերեզմանատան դրան ճակատի «Գերեզմանատուն Հայոց» վերտառութիւնը եւ կը վերցուի խաչը⁴⁶⁰:

Քաղաքապետութիւնը դատ կը բանայ Պատրիարքին եւ Բանկալթիի գերեզմանատան երաշխատրներուն դէմ, պահանջելով 180.000 ոսկիի վնասուց հատուցում՝ գերեզմանատան սեփականութեան համար բացուած դատով տեղւոյն վաճառման յապաղումին պատճառած վնասին փոխարէն⁴⁶¹:

Քանի մը ամիս վերջ Բանկալթիի գերեզմանատան մասին խնդիր կը ծագի նաեւ Վազրֆներու տնօրէնութեան եւ Քաղաքապետութեան միջեւ, երբ երկու կողմերն ալ կը պնդեն որ գետինը իրենց կը պատկանի⁴⁶²:

Իսկ համայնքին ու Քաղաքապետութեան միջեւ երկար տարիներ շարունակուող խնդիրը կը կարգադրուի՝ Ներքին գործոց Նա-

⁴⁵⁷ Նոր Լուր, 17.IV.1935:

⁴⁵⁸ Նոր Լուր, 1.V.1935:

⁴⁵⁹ Նոր Լուր, 14.V.1935:

⁴⁶⁰ Նոր Լուր, 23.V.1935:

⁴⁶¹ Նոր Լուր, 2.VII.1935:

⁴⁶² Նոր Լուր, 6.X.1935:

խարարութեան հրամանով, վարչական եղանակով ու իրաւախո-
հութեամբ: Կուսակալ Մուկիտտին եւ Բերայի Թաղային Խորհուր-
դին լիազօրը՝ Տրթ. Ա.Սուրենեան կը ստորագրեն համաձայնագիր
մը, որով վերջ կը գտնեն գերեզմանատան սեփականութեան եւ
վնասուց հատուցման դատերը: Այսպէս՝ շէնքերը կը թողուին հա-
մայնքին (մօտ 6.000 քառակուսի մէթր) եւ մնացեալ հողամասն ալ
(50000 քառակուսի մէթր) կ'անցնի Քաղաքապետութեան: Իսկ կա-
լուածներուն եւ եկեղեցւոյ մէջտեղը գտնուող 1287.5 քառակուսի
մէթր գետինը կը բաժնուի կարգ մը անձերու միջեւ: Հաշտարար ե-
ղանակով վերջացած դատին համար, իբր դատական ծախք 3200
ոսկի կը պահանջուի համայնքէն⁴⁶³:

Քաղաքապետութիւնը 1938-ի սկիզբը կ'որոշէ Բանկալթիի Ս.
Յակոբ գերեզմանատունը թափուր հողամասի վերածել եւ յետա-
գային այնտեղ շինել բնակարաններ, խանութներ ինչպէս նաեւ
հանրային պարտէզ մը: Ուստի, կը զեկուցէ շահագրգռուողներուն
վերցնել գերեզմանները, տալով 15 օր ժամանակամիջոց⁴⁶⁴:

Ս. Նարոյեան Պատրիարք կը գրէ Պէօղլուի Թաղային Խոր-
հուրդին, որպէսզի հոգելոյս Յակոբ Դ. Կաթողիկոս Ջուղայեցիի
(վախճանած է 2 Օգոստոս 1680-ին Կ.Պոլսոյ մէջ) դամբարանը (Հո-
գեւոր Տէր)⁴⁶⁵, Բանկալթիի գերեզմանատունէն Ս. Երրորդութիւն ե-
կեղեցւոյ շրջափակը փոխադրելու համար հարկ եղած դիմումը կա-
տարեն պատկան իշխանութեան մօտ⁴⁶⁶: Հոգեւոր Տիրոջ դամբարա-

⁴⁶³ Ժամանակ, 7.Մ.1937:

⁴⁶⁴ Արեւելք, 9.Մ.1938:

⁴⁶⁵ Հոգեւոր Տիրոջ գերեզմանը, ուր ամփոփուած է Յակոբ Դ. Կաթողիկոսի մար-
մինը եւ անոր վրայ դրուած երկաթ վանդակներով շրջապատուած մարմարինէ:
Չլիխը մեծ ուխտատեղի կը դառնայ ինչպէս Հայերուն, նոյնպէս նաեւ բազմաթիւ
Թուրքերուն:

⁴⁶⁶ Արեւելք, 10.Մ.1938:

նը, որ այդ օրերուն փոխադրուած է, այժմ եւս կը պահպանուի Պէ-
յօղլու Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակը:

Բանկայթիի Ս. Յակոբ Հայոց գերեզմանատունը, հակառակ
պաշտօնական վաւերագրերու ներկայութեան (սեփականութեան
թուղթեր, շինութեան արտօնագրեր, ուրիշ վագրՖ գոյութիւն չունե-
նալու մասին արձանագրութիւններ, միւլք ըլլալուն վերաբերեալ
գրութիւններ), որոնք տարակոյս չեն թողուր անոր սեփականու-
թեան մասին, 8 տարուան երկար, լարուած դատավարութենէ մը
վերջ, 1939-ին ամբողջական ապաստեփականացման կ'ենթարկուի,
կը փլցուի Ս.Գրիգոր Լուսատրիչի նուիրուած Խոր Վիրապ եկեղե-
ցին:

Քաղաքապետութիւնը Հանրային պարտեզի աստիճաններու
շինութեան, ինչպէս նաեւ մեծ մասով Էմինէօնիի հրապարակին
նորոգութեան⁴⁶⁷ կը գործածէ գերեզմանատան անտէր շիրմաքարե-
րը, որոնք այսօր եւս անձայն վկաները կը հանդիսանան «լքեալ գոյ-
քեր»ու ճակատագիրը բաժնած եւ մոռացութեան ենթարկուած եր-
բեմնի գերեզմանատան:

⁴⁶⁷ Pamukciyan K, Zamanlar Mekanlar İnsanlar, İstanbul, 2003, s. 266.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՄԱՅՆՔՆ ՈՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՒՒՆՆԵՐԸ

Կ. ՊՈԼՍՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՒՒՆԸ

Կ. Պոլսոյ Հայերը գիտակցելով, որ գոհողութիւնը, բարեսիրութիւնն ու նուիրումը ազգապահպանման գործին համար խիստ կարեւոր են, թե՛ անհատական եւ թե՛ հաւաքական առումով ԺԸ. Դարէն սկսեալ կը բանան դպրոցներ, կը կառուցեն եկեղեցիներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւ ամէն ջանք կը գործադրեն, որպէսզի կանգուն պահեն զանոնք: Նոյնպէս իրենց մարդասիրական ու ազգասիրական ոգին դրսեւորելով՝ ամէն ջանք կը գործադրեն 1915-ի եղեռնի օրերէն սկսեալ յառաջացող տասնեակ հազարաւոր Հայ որբերն ու գաղթականները պահպանելու եւ անոնց սատարելու համար:

Ա. Համաշխարհային պատերազմէն վերջ, երբ ներգաղթի պատճառաւ Պոլսոյ թաղերուն մէջ կը գտնուին ազգին պաշտպանութեան եւ օժանդակութեան կարօտ հազարաւոր գաղթականներ ու որբեր, զանազան թաղերու մէջ կը կազմուին «Տարագրելոց Յանձնախումբեր»: Այսպէս, 15 Նոյեմբեր 1918-ին կը կազմուի «Ղալաթիոյ Տարագրելոց Յանձնախումբը»՝ 7-800 տարագիրներու պատասպարման համար իբրեւ կայան գործածելով Ղալաթիոյ Ռուսական Վանքը, Գատըզիլի ազգայիններու կողմէ կը կազմուի «Տարագրելոց Գատըզիլի Խնամակալութիւնը», որ 1000 տարագիրներ կը զետեղէ տեղւոյն Ազգային Արամեան վարժարանին մէջ, իսկ 10 Նոյեմբեր 1918-ին, «Գումգաբուի Չորս Թաղերու Տարագրելոց Յանձնախումբ» անուան տակ Կէտիկփաշայի, Գումգաբուի,

Գումգաբուի Դրսի եւ Ենիգաբուի թաղեցիներէ բաղկացած մարմին մը, Գումգաբու Մայր Եկեղեցոյ տաճարներէն մէկուն մէջ կը գետնէ տարագիրներ⁴⁶⁸:

Մինչ այդ, 5 Նոյեմբեր 1918-ին 40-ի չափ Հայ առեւտրականներ հաւաքուելով կը կազմեն «Հայ Որբախնամը», տէր կանգնելու համար 14 տարեկանէն փոքր հազարաւոր երկսեռ Հայ տղոց:

Հայ Որբախնամը զանազան թաղերու մէջ (Առնաւուտգիւղ, Բերա, Կէտիկփաշա, Նառլըգաբու, Շիշլի, Պէշիկթաշ, Պալաթ, Սկիւտար, Օրթագիւղ, Գատըղգիւղ, Մաքրիգիւղ (այժմ Պաքըրգիւղ), Ռումելի Հիսար եւլն.) կը կազմէ մասնաճիւղեր, որոնք իրենց թաղին մէջ որբանոցներ բանալով կը խնամեն Հայ որբերը⁴⁶⁹:

Թաղային այս կազմակերպութիւններէն վերջ, Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ նշանակուած ազգայիներ կը կազմեն «Հայ Տարագրելոց Կեդրոնական Յանձնաժողովը», որ կ'ունենայ չորս յանձնախումբեր՝ Նպաստահաւաք, Ելեւմտից եւ Մատակարարական, Տեղաւորման եւ Առաքման, Առողջապահական: Հայ Տարագրելոց Կեդրոնական Յանձնաժողովը համարատու ըլլալով Ազգային Կեդրոնական Վարչութեան, կը զբաղի զանազան վայրերէ դէպի Կ.Պոլիս դիմելով իրենց ծննդավայրը դառնալու հետամուտ տարագրեալներու, գաւառային զանազան վայրերու մէջ ժամանակաւոր հաստատուած տարագրեալներու, գաւառացի չքաւոր ու աշխատելու անկարող, արձակուած զինուորներու պէտքերով՝ մօտաւոր կամ հեռաւոր գաւառներու մէջ ունենալով իրեն ենթակայ մասնաճիւղեր⁴⁷⁰:

⁴⁶⁸ Ազգային Խնամատարութիւն, Ընդհանուր Տեղեկագիր Ա. Վեցամսեայ (1 Մայիս 1919 – 31 Հոկտեմբեր 1919), Կ.Պոլիս, 1920, էջ 10-21:

⁴⁶⁹ Նոյն տեղէն, էջ 51-56:

⁴⁷⁰ Նոյն տեղէն, էջ 25:

Տարագիրներու, մանաւանդ որբերու առողջապահական սպասարկութիւն ապահովելու ձգտումով, Հայ Որբախնամէն եւ Տարագրելոց Յանձնաժողովէն անկախ, գոյութիւն կ'ունենայ նաեւ «Հայ Կարմիր Խաչ»ը, որ իր հաշույն կը հիմնէ դարմանատուներ՝ հասոյթի աղբիւր ունենալով ժողովուրդին նուիրատուութիւնները:

Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, Տարագրելոցի, Որբախնամի եւ Հայ Կարմիր Խաչի անջատ գործունէութիւններուն վերջ տալու, ասոնց աշխատակցութիւնը համակարգելու, ինչպէս նաեւ հանգանակութեան գործը դիւրացնելու համար կ'որոշէ ստեղծել համապարփակ կազմակերպութիւն մը: Այսպէս՝ 1919 Յունուարին Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական ժողովի որոշումով, Բերայի Ազգային մատենադարանին մէջ տեղի կ'ունենայ խորհրդակցական ժողովներ, մասնակցութեամբ Տարագրելոցի, Որբախնամի եւ Հայ Կարմիր Խաչի վարչութիւններուն: Կ'որոշուի միացնել Տարագրելոցն ու Որբախնամ մարմինները: 28 Փետրուար 1919-ին կը յայտարարուի կազմութիւնը «Հայ Ազգային Խնամատարութեան», համագործակցութեամբ երեք յարանուանութիւններու:

Ընդհանուր ժողովի կը հրաւիրուին 32 անդամներ, որոնցմէ 4-ը կ'ըլլան Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի, 4-ը Բողոքական Հայերու Ազգապետարանի ներկայացուցիչներ, իսկ մնացեալ 24-ը Լուսաւորչական Հայեր⁴⁷¹:

Ազգային Խնամատարութեան կեդրոնը կը գտնուի Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ, ուր Վարչական ժողովը կը գումարուի շաբաթը երկու անգամ 12 անդամներով:

Ազգային Խնամատարութեան պաշտօնատունը կ'ունենայ 8 դիւաններ՝ Տարագրելոց, Որբերու, Առողջապահական, Համարա-

⁴⁷¹ Նոյն տեղէն, էջ 64- 66:

կալուքեան, Թղթակցութեան եւ Մամլոյ, Վիճակագրութեան, Տեղեկատուութեան, Մթերապահութեան: Այս դիւանները իրենց գործունէութեանց մէջ հաշուետու կ'ըլլան Ընդհանուր Տնօրէնութեան, որ կ'ընտրուի ի դիմաց Վարչական Ժողովի կատարելու Ազգային Խնամատարութեան գործառնութիւնները⁴⁷²:

Ազգային Խնամատարութիւնը, որուն ամենամեծ չափով կ'օժանդակէ «Ամերիկեան Նպաստամատոյցը», իր մէջ միացնելէ վերջ Տարագրելոց եւ Որբախնամ Յանձնաժողովները, կը բանայ կայաններ Սամաթիոյ, Օրթագիւղի, Պէշիկթաշի, Խասգիւղի, Գումգարուի, Ղալաթիոյ, Սկիւտարի եւ Գատըզիւղի մէջ:

1922 Սեպտեմբերին Պոլսոյ մէջ գոյութիւն կ'ունենան ուղղակի Խնամատարութեան ենթակայ 9 որբանոցներ՝ 3-ը աղջկանց եւ 6-ը մանչերու, 2500-է աւելի որբերով: Ասոնցմէ զատ գոյութիւն կ'ունենան նաեւ 11 օժանդակեալ որբանոցներ, 6-ը աղջկանց եւ 5-ը մանչերու, մօտ 1100 որբերով: Այս որբանոցներէն 4 հատը կ'ունենան նաեւ արհեստանոցներ՝ աղջիկներու համար կար ու ձեւ, ձեռագործ, գուլպայի շինութիւն իսկ մանչերու համար կօշկակարանոց, ատաղձագործարան, դերձակատուն, ուր որբերը հետզհետէ կատարելագործելով իրենց արհեստը, ինքնաբաւ կը դառնան⁴⁷³:

15 Սեպտեմբեր 1922-ին Գուլէլիի Կեդրոնական Որբանոցը ուղղակի Ամերիկեան Նպաստամատոյցի մատակարարութեան տակ կը դրուի՝ ամեն որբի համար վճարելով ամսական 5 ոսկի: Ապա Պոլսոյ կեանքի սուղութեան եւ պարագաներու բերմամբ Խնամատարութեան հասոյթներու նուազման պատճառաւ այս որբանոցի որբերուն մատակարարման գործը ամբողջովին կը յանձ-

⁴⁷² Նոյն տեղէն, էջ 79-80:

⁴⁷³ Ընդարձակ Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1924, էջ 139:

նուի Ամերիկեան Նպաստամատոյցին՝ վճարելով անոնց համար ծախսուած գումարին կէսը, շուրջ 10.000 տոլար:

Ամերիկեան Նպաստամատոյցը 1922 Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներուն որբերը ամբողջութեամբ կը փոխադրէ Յունաստան, իր խնամքին տակ պահելով նոյնպէս զանոնք: Այսպէս կը դադրի Խնամատարութեան որբախնամ գործը:

1923-1924-ին տիրող տնտեսական տագնապի պատճառաւ գաղթականական շարժումը գաւառներէն դէպի Պոլիս եւ Պոլիսէն դէպի արտասահման կը պահէ իր կարելորութիւնը: Ազգային Խնամատարութիւնը աշխատանք կը տանի գաղթականներուն Պոլիս ժամանումին եւ տեղաւորման գործին մէջ, ինչպէս նաեւ արտասահման մեկնող գաղթականներուն անցագրի պատրաստութեան եւ ճամբորդութեան արթիւ անհրաժեշտ դիրութիւնները ընծայելու գծով՝ պարագաներուն եւ նիւթական միջոցներուն ներած չափով:

Ասոնցմէ զատ Պոլսոյ գաղթականաց կայաններուն մէջ պատասպարուող գաղթականներուն ապաստարան, ուտելիք, հիւանդներուն դէղ ու դարման կը հայթայթէ: Երբ գաւառներէն Պոլիս կը հասնին նոր որբեր, հակառակ իր նիւթական անձուկ վիճակին, Ազգային Խնամատարութիւնը կը հարկադրուի բանալ Սկիւտարի մէջ որբանոց մը, ուր կը պատասպարուին շուրջ 250 որբեր, որոնցմէ 200-ը 1923 Ապրիլին կը փոխադրուին Ռումանիա եւ կը յանձնուին տեղոյն Հայերուն խնամքին⁴⁷⁴: 31 Օգոստոս 1923-ին Պոլսոյ 13 կայաններուն մէջ կը պատասպարուին 6385 գաղթականներ, որոնց համար կը ծախսուի 93.678.08 ոսկի⁴⁷⁵: Խնամատարութիւնը, հակա-

⁴⁷⁴ Ընդարձակ Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1924, էջ 140-141:

⁴⁷⁵ Նոյն տեղէն, էջ 142:

ռակ Պոլսոյ մէջ տիրող տնտեսական սուր տագնապին, կը յաջողի ընդառաջել գաղթականաց առօրեայ պետքերուն, նոյնիսկ աշխատութիւն ճարել անոնցմէ ոմանց, ղեկավարել գաղթականներուն հոսանքը գաւառներէն դէպի Պոլիս եւ Պոլսէն դէպի արտասահման (մեծ մասամբ Ֆրանսա):

Կայաններու մէջ պատասպարուող գաղթականներու առօրեայ զանազան պահանջներուն կարելորագոյններէն կ'ըլլայ կայանի երկսեռ փոքրիկները գերծ պահել զանազան վտանգներէ ու կրթել զանոնք: Խնամատարութիւնը կը ձեռնարկէ կայաններու մէջ մասնաւոր դասընթացքներ կազմակերպելու, իսկ այն կայաններուն մէջ, ուր կարելի չըլլար նման դասընթացքներ կազմակերպել, կայանի փոքրիկները վճարովի կը դրկէ թաղային վարժարաններ⁴⁷⁶:

Երբ Կրթական եւ Առողջապահական նախարարութիւններու հրահանգներով կը փակուին գաղթականաց կայաններու մէջ Խնամատարութեան կողմէ որբերուն համար բացուած դպրոցները, Խնամատարութիւնը չըողելով որ որբերը փողոցները թափարին, կը խնդրէ մօտակայ թաղերու Թաղային Խորհուրդներէն ու համեստ վճարումներու փոխարէն 1924-ի վերամուտին կը տեղաւորէ զանոնք թաղային վարժարաններու մէջ⁴⁷⁷:

1924-ին Պոլիս կ'ունենայ 11 կայաններ, ուր կ'ապրին 1200 կին, 2016 այր, 1456 մանչ եւ 1364 աղջիկ, ընդամենը 7036 պատասպարեալներ⁴⁷⁸: Այս գաղթականներուն համար կը ծախսուի 102.990 ոսկի:

Խնամատարութիւնը կը հոգայ նաեւ 1000-է աւելի գաղթական դպրոցական տղոց դաստիարակութեան եւ ուսման պետքը: Խնա-

⁴⁷⁶ Նոյն տեղէն, էջ 144.:

⁴⁷⁷ Առատօտ, 1.XI.1924:

⁴⁷⁸ Յուսաբեր, 10.V.1924:

մատարութեան միջոցաւ անցազիր ստանալով արտասահման մեկնող գաղթականներուն թիւը կը հասնի 7057-ի:

Նոյն տարին Ամերիկեան Նպաստամատոյցը կ'որոշէ միայն որբերով սահմանափակել իր գործունէութիւնը եւ կը դադրեցնէ գաղթականներուն տուած իր նպաստը: Պատրիարքական Տեղապահ՝ Գեորգ Ասլանեան գաղթականներու փոխադրութեան գործին մէջ Ազգային Խնամատարութեան օգնութիւն ապահովելու համար շրջաբերականներով օրինականացնելու կը ձեռնարկէ հասարակութեան եւ պաշտօնական մարմիններու նպաստի վճարումը՝ ուշադրութեան հրաւիրելով Թաղային Խորհուրդները⁴⁷⁹: Սանասարեան կտակի Խնամակալութիւնը եւս իր նիւթական աջակցութիւնը չի խնայեր կայաններու տոնց կրթութեան գործին:

31 Օգոստոս 1925-ին Պոլսոյ 8 կայաններու մէջ բնակող գաղթականներու թիւը կ'ըլլայ 4016⁴⁸⁰: Իւրաքանչիւր կայանի համար ընտրովի կը կազմուի 5-7 հոգինոց «Կարգապահական Մարմին» մը, որուն պարտականութիւնը կ'ըլլայ օգնել կայանի հսկիչներուն՝ կարգապահական, մատակարարական եւ մաքրութեան գործերու մէջ⁴⁸¹:

Կայանաբնակ գաղթականներու համար կը տարուի նաեւ առողջապահական աշխատանք: Բազմամարդ կայանները կ'ունենան մէկ մէկ մնայուն հիւանդապահ, որոնք կ'օգնեն այցելու բժիշկներուն: Առողջապահական հարցերու մէջ իր նպաստը կը բերէ նաեւ Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցը, դարմանման գործին մէջ այն հիւանդներուն, որոնք կարելի չ'ըլլար դարմանել կայաններու մէջ⁴⁸²:

⁴⁷⁹ Արեւ, 26.XI.1924:

⁴⁸⁰ Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի 1926, Կ.Պոլիս, 1927, էջ 81:

⁴⁸¹ Նոյն տեղէն, էջ 71:

⁴⁸² Նոյն տեղէն, էջ 73:

1926 Յուլիսին կայաններու մատակարարութիւնը կը յանձնուի նոր ինամատար մարմինի մը, որուն առաջին գործը կ'ըլլայ կարէնոր թաղերու մէջ 10-ի չափ թաղային մասնաճիւղեր վերակազմել:

Գաղթականաց գործին իրենց օժանդակութիւնը կը բերեն Ադրատայնամ Մարմինները, հոգը ստանձնելով նպաստի եւ բժշկական ինամքի ենթակայ բազմաթիւ կարօտեալներուն:

1927-ին թէւ կը նուազի կայաններու թիւը, բայց կարելի չ'ըլլար բոլորովին փակել զանոնք: 3 կայաններու (Մամաթիա, Օրթագիւղ եւ Գուրուչէշմէ) մէջ կ'ապրին 700 գաղթականներ⁴⁸³: Ազգային Խնամատարութեան 1927 տարուան պիտօջէն կը կազմէ 1500 ոսկի, որուն 500 ոսկին սնունդի, 600-ը գաղթական տղոց ուսման, 200 ոսկին 25 որբերու յատուցում եւ մնացեալն ալ պաշտօնելութեան ծախքը կ'ըլլայ⁴⁸⁴:

Բացի Սլիւտարի Ազգային Որբանոցէն, Խնամատարութիւնը կ'ունենայ նաեւ սաներ Մամաթիոյ Ս. Աննա եւ Շիշլիի Գարակեօզեան Որբանոցներուն, ինչպէս նաեւ Պաքըրգիւղի Պէզազեան գիշերօթիկ վարժարանին մէջ, որոնց համար կը վճարէ պատուպարագին: Ասոնցմէ զատ կը հոգայ նաեւ գաղթական կարօտ տղոց ուսման ծախքը, որոնք կը յաճախեն տարբեր թաղային վարժարաններ՝ Խնամատարութեան կողմէ եղած ամսական վճարումի մը փոխարէն⁴⁸⁵:

1929-էն սկսեալ կը տիրէ համաշխարհային տնտեսական ծանր տագնապ մը, որուն պատճառաւ հետզհետէ կը դժուարանայ բարեսիրական հաստատութիւններու, որոնց կարգին նաեւ Ազգա-

⁴⁸³ Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1928, էջ 400:

⁴⁸⁴ Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1927, էջ 419:

⁴⁸⁵ Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1930, էջ 129:

յին Խնամատարութեան գործը: Զգալի կերպով կը նուազին արտասահմանէն ստացուած օժանդակութիւնները ինչպէս նաև ժողովուրդին կատարած նուիրատուութիւնները: Թաղային Խնամատարական մասնաճիւղերու ներկայացուցիչները կը կիրարկեն հասոյթ ապահովելու տարբեր եղանակներ՝ պարահանդէս, թէյասեղան, նուիրատուն եւլն:

Ազգային Խնամատարութիւնը միւս բարեսիրական հաստատութիւններու նման որոշ ելմտացոյց մը չի կրնար ունենալ, որովհետեւ չ'ունենար կալուածական հասոյթ եւ այլ յատկացումներ: Անկայուն մուտքի դէմ կ'ունենայ հաստատուն ելք: Ուստի 1931-ին, տարեկան շուրջ 30.000 ոսկիի պիտօջէն 5.000 ոսկիի բաց կ'ունենայ⁴⁸⁶:

Վարչական Ժողովը, խնայողութեան պատճառաւ տնօրէնութեան պաշտօնը կը ջնջէ Խնամատարական կեդրոնին: Իսկ երկու տարի ետք, 1933-ին խնայողութիւններով պիտօջէն կը գեղջուի 20.000 ոսկիի⁴⁸⁷:

Ազգային Խնամատարութիւնը ամսական 120 ոսկի կը տրամադրէ Սամաթիոյ կայանին⁴⁸⁸ եւ հոն ուսում ստացող 85 գաղթական աշակերտներուն համար ամէն ամիս 60 ոսկի կը վճարէ Սահակեան վարժարանին⁴⁸⁹:

1934-1935 տարեշրջանի պիտօջէն կ'ըլլայ 18.000 ոսկի, Սամաթիոյ կայանին մէջ կը պատասպարուին 600 իսկ Օրթագիւղ՝ 300 գաղթականներ: Խնամատարութիւնը կը հոգայ 102 որբեր⁴⁹⁰:

⁴⁸⁶ Արեւելք, 11.XII.1931:

⁴⁸⁷ Նոր Լուր, 9.IV.1933:

⁴⁸⁸ Սամաթիոյ երբեմնի Նունեան Մարրոմեան Աղջկանց վարժարանի եռայարկ տախտակաշէն շէնքը 1920-էն սկսեալ կը վերածուի գաղթականներու կայանի, որուն բոլոր սենեակներն ու սրահները լեցուած կ'ըլլան:

⁴⁸⁹ Բանբեր, 27.IV.1933:

⁴⁹⁰ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1935, էջ 370:

Իսկ յաջորդ տարի պիտոջեն կը յանգի 13.500 ոսկիի եւ գաղթականներուն թիւը՝ Սամաթիա 380, Օրթագիւղ 265: Ազգային վարժարաններ կը յաճախեն խնամատարական 450 սաներ, իսկ որբերու թիւը 91 կ'ըլլայ⁴⁹¹:

1936 Մայիսին Վարչութիւնը կը թելադրէ Ազգային Խնամատարութեան, հաշուեյարդարի ենթարկել գաղթականական գործը եւ պատրաստել ծրագիր մը՝ Սկիւտարի Որբանոցը պահելու եւ զանազան ազգային վարժարաններ յաճախող գաղթական տղոց թոշակը եւ ուրիշ անհրաժեշտ պէտքերը հոգալու մասին⁴⁹²: Խնամատարութիւնը իր պիտոջեն 12.500 ոսկիէն կը կրճատէ 11.000 ոսկիի⁴⁹³:

1938-ին, երբ Սկիւտարի Խնամատարական Որբանոցն ու Գարակեօզեան Ազգային Որբանոցը կը միանան, կը մտածուի վերջ տալ Խնամատարական գործին, Բայց Ազգային Խնամատարութեան աշխատանքը կը շարունակէ պահել իր կարելորութիւնն ու տարողութիւնը, որովհետեւ չափահաս դարձած որբերուն կը յաջորդեն գաւառներու մէջ տնտեսական տազնապի հետեւանքով անգործութեան եւ ջքաւորութեան մատնուած, հիւանդութիւններու հետեւանքով իրենց ծնողները կորսնցուցած նոր որբեր, ինչպէս նաեւ Պատրիարքարան ու Ազգային Խնամատարութեան կը դիմեն ապաստան ու խնամք փնտռելու համար գաւառէն Պոլիս հասնող նոր գաղթականներ: Վարչութիւնը կը հարկադրուի իր օրինական մեծամասնութիւնը կորսնցուցած Խնամատարութիւնը վերակազմել եւ որոշել աշխատութեան ուղեգիծ մը: Բայց եւ այնպէս Որբա-

⁴⁹¹ Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1936, էջ 171:

⁴⁹² Ժամանակ, 6.VIII.1936:

⁴⁹³ Ժամանակ, 30.VIII.1936:

նոցներու միացումէն վերջ կը դադրին ժողովուրդին կողմէ Խնամատարութեան եղած նուիրատուութիւնները:

1939-ին Օրթագիւղի եւ Սամաթիոյ երկու գաղթակայաններուն մէջ կը գտնուին շուրջ 500 գաղթականներ եւ 200-է աւելի տղաք, որոնց ուսման եւ դաստիարակութեան գործին կ'օժանդակէ Ազգային Խնամատարութիւնը, հակառակ որ բոլորովին պարսապ կ'ըլլայ իր սնտուկը: Ուստի, եկամուտ ձեռք բերելու համար կը տպագրէ ու հրատարակ կը հանէ «Պատի օրացոյցներ», Ամանորի առթիւ կը պատրաստէ ու մասնաճիւղերուն օժանդակութեամբ կը տարածէ «Գոց Պահարաններ», ժողովուրդէն նուիրատուութիւն ստանալու համար: Վարչական ժողովը կոչ կ'ուղղէ հանրութեան եւ մամուլը կը յորդորէ ժողովուրդին զօրակցիլ՝ Ազգային Խնամատարութեան⁴⁹⁴:

Այսպէս, Խնամատարութիւնը գրեթէ ամէն տարի կը մատնուի դժնդակ կացութեան, բայց իր անխոնջ աշխատութիւններուն շնորհիւ կը յաջողի կանգուն պահել ստանձնած ծանր գործը մինչեւ 1940 Մայիս ամիսը, երբ կառավարութեան կողմէ վերջ կը տրուի անոր գործունէութեան, առարկելով որ առանց արտօնութեան գործող մարմին մըն է⁴⁹⁵:

⁴⁹⁴ Նոր Աւր, 4, 5.XII.1939:

⁴⁹⁵ Ժամանակ, 11.V.1940:

ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Պոլսահայ պաշտօնական առաջին հիւանդանոցը կը շինուի այժմու Նառըզաբու Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցիի տեղը, որուն ֆերմանը կ'առնուի Նալեան Պատրիարքի խնդրանքով 1743-ին, բայց շէնքը կը շինուի հազիւ 1750-ին, ուր կը դարմանուին տարեկան 24 հիւանդներ: 1794-ին հիմնովին մեծ ու ընդարձակ նոր շէնք մը կը կառուցուի 100-120 հիւանդի համար, իսկ 1807-ին այս շէնքին վրայ կ'աւելցուի եկեղեցին:

Այս հիւանդանոցը կը գործածուի մինչեւ 1834, երբ արդէն կը կառուցուի Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցը:

Պոլսահայ երկրորդ հիւանդանոցը կ'ըլլայ Բերայինը, ժամանակակից առաջինին, կը շինուի ժանտախտի աղէտեալներուն համար այսօրուան Էսսեան վարժարանին տեղը: Այս շէնքն ալ 1834-ին կը դադրի իբրեւ հիւանդանոց ծառայելէ ու պատսպարեալները կը փոխադրուին Ետիգուլէի նորակառոյց փայտաշէն հիւանդանոցը⁴⁹⁶:

Հիւանդանոցի հողը կը գնուի Սուլթան Պայագիտ մզկիթի վազըֆներէն 18.000 կանգուն տարածութեամբ, որ կայսերական հրամանով եւ պատշաճ վճարումներով կը վերածուի «մութաթայ զեմին» վիճակի, այսինքն ազատելով կրկին վազըֆին պատկանելու վտանգէն, կը դառնայ ազգային սեփականութիւն:

⁴⁹⁶ Գալուստեան Շ.Արք., նշծ. աշխ., էջ 91:

Շինութեան ճարտարապետը կ'ըլլայ Կարապետ Ամիրա Պալեան⁴⁹⁷, օգնականներ՝ Յովհաննէս Ամիրա Սերվերեան ու գործապետ՝ Պօղոս Աղա Օտեան (հայրը Գրիգոր Օտեանի):

Շինութեան տարածութիւնը կ'ըլլայ 4000 քառակուսի կանգուն, որուն համար կը ծախսուի իւրաքանչիւրը հինգ օսմանեան հնչիւն ոսկիի հաշուով 4000 քսակ⁴⁹⁸:

Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցը, որուն Կայսերական հրովարտակին համար խնդրագիր կը ներկայացնէ Ստեփանոս Աղաւնի Պատրիարք⁴⁹⁹ եւ բարերարը կ'ըլլայ Գազազ Յարութիւն Ամիրա Պէզճեան⁵⁰⁰, իր հիմնարկութեան թուականէն սկսեալ, նոյնիսկ ամենատազնապալի շրջաններուն կ'ըլլայ Թուրքիոյ եւ արտասահմանի Հայութեան հոգածութեան եւ գուրգուրանքին առարկայ հաստատութիւն մը:

⁴⁹⁷ Կարապետ Ամիրա Պալեան (1800-1866) Պալեաններու ընտանիքին հոչակաւոր ներկայացուցիչներէն մէկն է: Իրերայաջորդ Մահմուտ Բ., Ապտիւլ Մէճիտ եւ Ապտիւլ Ազիզ սուլթաններու ժամանակաշրջանին եղած է արքունի ճարտարապետ: Կարապետ Պալեան, մօտաւորապէս 30 տարուան իր աշխատութեան շրջանին, ծրագրած ու կառուցած է 7 պալատ, 4 գործատուն, զօրանոց մը, մզկիթ մը, 2 հիւանդանոց, 3 դպրոց, 2 ջրաթումբ, 7 եկեղեցի եւ շատ մը բնակարաններ: Ճարտարապետն է նաեւ Տոլմապահչէ Պալատին, Պէշիկթաշի Ս.Աստուածածին եկեղեցոյ, Սէմերճեան-Ճեմարան վարժարանին եւլն:

⁴⁹⁸ Քէօսէան Վ., Յուշամատեն Սուրբ Փրկիչ Հայոց Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1994, էջXII:

⁴⁹⁹ Ստեփանոս Աղաւնի Պատրիարքի (1777-1853) շրջանին (1831-1839) Պոլսոյ մէջ Ս.Փրկիչ Ազգ. Հիւանդանոցն գատ շինուած կամ նորոգուած են 16 եկեղեցիներ, ինչպէս նաեւ դպրոցներ:

⁵⁰⁰ Գազազ Յարութիւն Ամիրա Պէզճեան (1771-1834), 1825-էն մինչեւ իր մահը՝ 1834, կ'ըլլայ Ազգապետ (Ընդհանուր եւ Վարչական ժողովներու ատենապետ), ինչպէս նաեւ Պետութեան Փողերապետ եւ օրուան սուլթան Մահմուտ Բ.ի խորհրդական: Իր մարմինը ամփոփուած է Մայր Եկեղեցոյ կից Ս.Յարութիւն տաճարը, իր կենդանութեան շրջանին պատրաստուած դամբանին մէջ:

Փայտակերտ շենքը կը բաղկանայ չորս անջատ հատուածներէ. Հիւանդանոց, Յիմարանոց, Պատասպարան եւ Եկեղեցի, որոնց յետագային կ'աւելցուին ուրիշ մասեր ալ⁵⁰¹: Սուրբ Փրկիչ Հիւանդանոցը, որուն պաշտօնական բացումը կը կատարուի 31 Մայիս 1834-ին՝ Համբարձման տօնին օրը, սկիզբէն մինչեւ 1848 կը կառավարուի ու կը մատակարարուի առանձին Միւթվելլիներու (հոգաբարձու, մատակարար) դրութեամբ, ապա մինչեւ 1860 Գերագոյն Ժողովէն նշանակուած հոգաբարձութիւններով, իսկ Սահմանադրութեան հաստատումէն վերջ Ազգային Վարչութենէն նշանակուած հոգաբարձութեամբ⁵⁰²:

Սահմանադրութեան հռչակումէն ետք, սովորութիւն կը դառնայ ամէն աշնան, առետրական դասակարգէն յարգուած անձնաորութիւններէ կազմել յանձնախումբ մը եւ սարքել պարահանդէս, ի նպաստ հիւանդանոցին, հաւասարակշռելու համար անոր տարեկան պիտօջէն⁵⁰³:

Ստեփանոս Աղաւնի Պատրիարք 19 Մարտ 1834-ին, տակաւին Հիւանդանոցը չբացուած Պատրիարքարանի մէջ Ամիրաներու եւ Էսնաֆներու մասնակցութեամբ ժողով մը կը գումարէ, ուր կ'ընտրուին ազգային գործերը վարելու համար տասը անձեր: Ասոնցմէ, Յարութիւն Ամիրա Պեգճեանի գլխաւոր գործակից Միքայէլ Ամիրա Փիշմիշեան կ'ըլլայ առաջին առանձին Միւթվելլին, որ կը ստանձնէ Հիւանդանոցի վարչութիւնը (1834-1839): Փիշմիշեան կ'ըլլայ նաեւ առաջին անձը, որ հիւանդանոցին կը նուիրէ անշարժ կալուած եւ ուրիշները կը յորդորէ հետեւիլ իր օրինակին⁵⁰⁴:

⁵⁰¹ Քեօսէեան Վ., նշծ. աշխ., էջ 26:

⁵⁰² 1961 թուականէն սկսեալ, պետական հրահանգով, հոգաբարձութիւնները կ'ընտրուին Պոլսահայ համայնքին կողմէ:

⁵⁰³ Առաւօտ, 29.X.1924:

⁵⁰⁴ Քեօսէեան Վ., նշծ. աշխ., էջ 29-31:

9 Մայիս 1847-ին, Մատթեոս Պատրիարքի օրով կ'ընտրուին Ազգային Հոգևոր եւ Գերագոյն ժողովները: Գերագոյն ժողովը կ'որոշէ Հիւանդանոցի մատակարարութիւնը յանձնել ժողովի մը, որուն անդամները հաւաքաբար պատասխանատու կը հանդիսանան այս գործին: 1863-ի Սահմանադրութեամբ հոգաբարձուներու ընտրութիւնը կ'ընէ Քաղաքական ժողովը, որովհետեւ Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կ'առնուի Տեսուչ Խորհուրդներու կարգին մէջ⁵⁰⁵:

1898-ին, երբ ներքին ու արտաքին աննպաստ պայմաններու պատճառաւ ժողովուրդը տնտեսապէս անկում կ'ապրի, Մաղաքիա Օրմանեան Պատրիարքի թելադրանքով Հոգաբարձութեան աւտենպետութիւնը կը ստանձնէ Պատրիկ Կիւլպէնկեան (1898-1907) եւ ներքին բարեկարգութեան եւ յառաջդիմութեան կարեւոր քայլեր կ'առնէ Հիւանդանոցը: Վիստեցուցիչ պայմաններու մէջ գործի ձեռնարկող Կիւլպէնկեանի Հոգաբարձութեան գլխաւոր ջանքերէն մէկը կ'ըլլայ հասոյթի հաստատուն աղբիւրներ գոյացնել: Սովորութիւն կը դարձնեն ամէն տարի նուագահանդէս մը կազմակերպելով տարեկան որոշ հասոյթ մը ապահովել: Նախաձեռնութիւնը կ'ունենան 1900-էն սկսեալ հրատարակելու «Ընդարձակ Օրացոյց» մը, հատորի ձեւով, զոր մինչեւ 1910 կը խմբագրեն՝ Հրանդ Ասատուր, Տրք. Տաղաւարեան, Դ. Խաչկոնց, Տ.Արփիարեան եւ Արշակ Ալպոյսաճեան: Կիւլպէնկեանի Հոգաբարձութեան շրջանին կը կատարուի նաեւ Պոլսոյ երկրաշարժէն վնասուած շէնքերու նորոգութիւնն ու կարգ մը շէնքերու վերաշինութիւնը, որոնց հիմնարկէքը կատարուած կ'ըլլայ արդէն իսկ 27 Յուլիս 1898-ին, Պատրիկ Կիւլպէնկեանի Հոգաբարձութեան պաշտօնի ձեռնարկէլէն քանի մը օր առաջ եւ կ'աւարտին 1900-ին⁵⁰⁶: Հաստատութեան բուն հիւանդարանի յարկաբաժինները կը կառուցուին 1905-1906 տարիներուն⁵⁰⁷: Սուրբ

⁵⁰⁵ Նոյն տեղէն, էջ 51:

⁵⁰⁶ Քեօսէան Վ., նշծ. աշխ., էջ 97-106:

⁵⁰⁷ Ընդարձակ Տարեցոյց, Կ.Պոլիս, 1926, էջ 48-51:

Փրկիչ եկեղեցին ու դեղարանն ալ կը կառուցուին նոյնպէս 1906-ին⁵⁰⁸:

Նոգաբարձութիւնը 1899-1900 շրջանին Արիեստանոցի կը վերածէ Հիւանդանոցի համալիրին մէջ գտնուող Սուրբ Փրկիչ Որբանոցը, ուր աշակերտները կը սորվին կօշկակարութիւն ու դերձակութիւն, մինչեւ 1913, մանչերուն Շիշլիի նորակառոյց Գարակեօզեան Որբանոց փոխադրուիլը:

1915-ին անոնք կրկին կը փոխադրուին Սուրբ Փրկիչ ուր կը մնան մինչեւ 1919-ի սկիզբը, որովհետեւ Ա. Համաշխարհային պատերազմի տարիներուն Գարակեօզեանը կը փոխանցուի զինուորական իշխանութեան:

Այդ շրջանին զինուորական իշխանութեան կը տրամադրուի նաեւ Հիւանդանոցի Յակոբեան յարկաբաժինը, ուր մինչեւ զինադադար կը դարմանուին վիրաւոր զինուորներ:

Իսկ Սուրբ Փրկիչ Որբանոցի որբուհիներուն համար Օրթագիւղի մէջ կը վարձուի յարմար շէնք մը: Անոնց համար ես կը կազմուի առանձին Խնամակալութիւն մը՝ ատենապետուհի Տիկին Աղանի Գարակեօզեանի գլխաւորութեամբ⁵⁰⁹:

1920-1930 տարիներու միջեւ հոգաբարձութիւնները կը հարկադրուին յաճախ իրենց մատակարարութեան շրջանները բացով աւարտելու, հակառակ որ ամէն ջանք ի գործ կը դնեն դրամ ճարելու համար: Ահա այդ պատճառաւ այդ տասնամեակի ընթացքին տասնի չափ՝ եթէ ոչ ասելի, հոգաբարձութիւններ իրար կը յաջորդեն⁵¹⁰:

Նախկին Պոլսահայ Պոսթոնաբնակ (Ա.Մ.Ն.) 10 տիկիններ 6 Հոկտեմբեր 1920-ին կը յղանան գաղափար մը ու 1921-ի սկիզբը 50-ի

⁵⁰⁸ Բէօւէեան Վ., նշծ. աշխ., էջ 127:

⁵⁰⁹ Բէօւէեան Վ., նշծ. աշխ., էջ 142-143:

⁵¹⁰ Նոյն տեղէն, էջ 150:

չափ երկսեռ անդամներով կը կազմուի «Ազգային Հիանդանցի Օժանդակ Միութիւն» անունով ընկերութիւն մը:

1924-1925 շրջանի Հոգաբարձութիւնը պաշտօնական նամակով մը կը հաստատէ այս միութիւնը եւ զայն կը նկատէ իր ներկայացուցիչը Ամերիկայի մէջ: Նոյն հոգաբարձութիւնը 14 տարուան ընդհատումէ մը վերջ 1924-ին վերստին կը ձեռնարկէ Տարեցոյցներու հրատարակութեան, որ կը շարունակուի մինչեւ 1949 թուականը: Այդ թուականէն սկսեալ «Սուրբ Փրկիչ Ամսաթերթ Հայոց Հիանդանցի» անունով, որպէս ամսագիր լոյս կը տեսնէ մինչեւ այսօր, որ 1980-էն ի վեր կը խմբագրէ Մարմարա օրաթերթի փոխխմբագիր Մաքրուի Պ.Յակոբեան:

1925-ի վերջերը Սուրբ Փրկիչ Հիանդանցի օժանդակ մարմիններ կազմելու աշխատանքներ կը տարուին նաեւ Կ. Պոլսոյ թաղերուն մէջ: Առաջին օժանդակ մարմինը կը կազմուի 11 Դեկտեմբեր 1925-ին Գատըզիւղի մէջ, որուն 1926-ին կը յաջորդեն Պալաթի, Գումգաբուի, Բերայի, Ֆերիզիւղի, Եշիզիւղի, Սլիւտարի միացեալ, Օրթագիւղի եւ Առնաուտզիւղ-Պեպէթի Օժանդակ մասնախումբերը:

15 Փետրուար 1926-ին Արթիւր Մաղաքեան-Սիրուն Տիոնեան Հոգաբարձութիւնը ոյժ կուտայ այս գաղափարին ու քանի մը ամսուան ընթացքին կը կազմուին նոր օժանդակ մասնախումբեր՝ շուրջ 10 թաղերու մէջ, որոնք մեծ նեցուկ կ'ըլլան Հոգաբարձութեան: Հիանդանցի հոգաբարձութիւնը օժանդակ մասնախումբերու պաշտօնը, պարտականութիւններն ու յարաբերութիւնները ընդգրկող, 10 յօդուածներէ բաղկացած կանոնագիր մը կը պատրաստէ, որ 1 Յուլիս 1926-ին կը վաւերացուի Քաղաքական ժողովի կողմէ եւ գործադրութեան կը դրուի: Մինչեւ 1930 տեղական օժանդակ մասնախումբերու թիւը կը հասնի 16-ի:

1930-ին, Հիւանդանոցին եղած նուիրատուութեանց համար 3 տարուան տուրք կը պահանջուի: Հոգաբարձութիւնը կը ջանայ փաստերով ցոյց տալ, թէ այդ գումարները կարօտ անձերու համար տրուած դարմանագին եւ պատասպարութեան վարձքեր են, բայց ջանքերը ապարդիւն կը մնան⁵¹¹:

Տքթ. Հրանդ Փէշտիմալճեանի Հոգաբարձութիւնը թէւ երկու տարուան շրջանի մը համար կ'ընտրուի 1933-ին, բայց Կեդրոնական Վարչութեան եւ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքի խնդրանքներուն տեղի տալով կը շարունակէ իր պաշտօնը մինչեւ 1949, ամբողջ 16 տարիներ: Այդ շրջանին կը հրատարակուի «Վազըֆներու Օրէնքը», որուն համաձայն փոքրամասնութեանց հաստատութիւնները կը կառավարուին «անհատ մատակարար»ի (թէք միութեւլլի) դրութեամբ, որ ընդհանուր առմամբ համայնքի շահերուն մեծ վնաս կը պատճառէ:

Առողջապահական Նախարարութիւնը 8 Օգոստոս 1934-ին կը հրատարակէ «Մասնաւոր Հիւանդանոցներու Կանոնագիրը», որ կը պարունակէ կարգ մը նոր տնօրինութիւններ: Օրէնքը, մասնաւոր հիւանդանոցները կը բաժնէ երեք կարգի. 150-է աւելի անկողին ունեցողները Ա. կարգի, 150 անկողին ունեցողները միջին կարգ եւ անկէ պակաս անկողին ունեցողներն ալ Գ. Կարգի հիւանդանոց կը յայտարարէ, իւրաքանչիւրին համար սահմանելով իրեն յատուկ բաժիններ եւ աշխատանոցներ:

Փէշտիմալճեանի Հոգաբարձութիւնը, Հիւանդանոցը աստիճանաբար կը պատշաճեցնէ օրինական նոր պայմաններուն: Հիւանդանոցը կ'ըլլայ միջնակարգ, չունենալով Ա. կարգի նկատուելու հարկաւոր պայմանները, ինչպէս նաեւ փոփոխութիւններ կատարելու համար պէտք եղած գումարը:

⁵¹¹ Նոր Լուր, 30.V.1930:

Օրէնքը կը պարտադրէ, որ Հիւանդանոցի Պատասխանատու Տնօրէնը ըլլայ բժիշկ մը եւ ըլլայ միակ պատասխանատու անձը: Բժշկապետը առժամաբար կը ստանձնէ այս պաշտօնը, որ է՝ հսկել հիւանդներու անթերի դարմանումին եւ հոգ տանիլ անոնց կատարեալ առողջութեան, վարել Հիւանդանոցը վարչային եւ մատակարարական տեսակէտէ⁵¹²:

1935-1936-ին Առողջապահական Տնօրէնութեան պահանջով կը պատրաստուի «Մասնաւոր Հիւանդանոցներու Կանոնագիր»ին համաձայն Ներքին կանոնագիր մը եւ կը յղուի պատկան վարչութեան, որ 1937-ին վաւերացուած ըլլալով կը վերադարձուի ու կը գործադրուի Հոգաբարձութեան կողմէ:

Հոգաբարձութիւնը դիմում կը կատարէ պատկան իշխանութեան եւ ըստ «Մասնաւոր Հիւանդանոցներու Կանոնագիր»ին 1938-ին կը ստանայ արտօնագիր: Ծերանոցը, հիւանդանոցէն անջատ ըլլալուն պատճառաւ նոր կանոնագիրը անոր համար նոր տրամադրութիւններ չի նախատեսեր: 1936-ին հրատարակուած 2762 համար «Վազըֆներու Օրէնք»ին⁵¹³ համաձայն նոյն տարին Վազըֆներու Տնօրէնութեան կը յանձնուի հիւանդանոցի բոլոր կալուածներուն ցուցակը պարունակող յայտարարագիր մը⁵¹⁴: Սուրբ Փրկիչ Հիւանդանոցն ալ, բոլոր միւս ազգային հաստատութիւններուն նման կ'ենթարկուի Վազըֆներու Տնօրէնութեան հակակշռին:

⁵¹² Նոր Լուր, 13.VII.1933:

⁵¹³ 2762 համար «Վազըֆներու Օրէնք»ին համաձայն ոչ-իսլամ փոքրամասնութեանց բոլոր հաստատութիւններուն տնօրինումը կը տրուի Վազըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան:

⁵¹⁴ Քէօսէան Վ., նշծ. աշխ., էջ 168-173:

ԳԱԼՖԱԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

Սրբուհի Մայրապետ Գալֆաեան⁵¹⁵, 1850-ական թուականներուն Խասագիւղի մէջ կը բանայ համեստ արհեստանոց մը, ուր աղքատ աշակերտուհիներուն կը սորվեցնէ ոսկեթել գործուածքի (սըրմայ) ձեռարուեստը:

1866-ին Ներսէս Եպսկ. Վարժապետեանի թելադրանքով եւ Պօղոս Պատրիարք Թագթագեանի հաստատումով Սրբուհի Մայրապետ կը հիմնէ «Կանանց Կրօնատրական Միաբանութիւն» մը եւ 1871-ին գնելով Տագէսեաններու ընդարձակ ապարանքը, հոն կը հաստատուի որբերով: Հաստատութիւնը այդ թուականէն սկսեալ կը կոչուի Գալֆաեան Որբանոց⁵¹⁶:

Գալֆաեան կ'ըլլայ Պոլսոյ աղջկանց միակ որբանոց-արհեստանոց-կրթարանը, որ նախախնամական դեր կը կատարէ ծնողագուրկ, անպաշտպան եւ աղքատ աղջկանց համար, կը պատրաստէ ապագայ Հայ կիներն ու մայրը:

Երանուհի Մայրապետի գործունէութեան շրջանին՝ 1902-ին, երբ հաստատութիւնը գուրկ կ'ըլլայ պաշտօնական համակիր-գործակիցներէ, Օրմանեան Պատրիարքի կարգադրութեամբ Որբանոցի մատակարարութիւնը նախ ձեռք կ'առնեն Պատրիարքարանի Դիւանապետներ՝ Բ.Թէլեան եւ Կ.Խաչատուրեան, ապա կը կազ-

⁵¹⁵ Գալֆաեան Որբանոցի հիմնադիր Սրբուհի Մայրապետ Գալֆաեան ծնած է 17 Փետրուար 1822-ին, Կ.Պոլսոյ Գարթալ թաղը եւ հազիւ 18 տարեկան պարմանուհի 1840-ին, որոշած՝ մայրապետ ըլլալ: Վախճանած է 4 Յուլիս 1889-ին:

⁵¹⁶ Գալուստեան Շ. Արք., *ևշծ. աշխ.*, էջ 93:

մուի «Տիկնանց Խնամակալութիւն»⁵¹⁷ մը, որ նոյնիսկ ամենատագնապալի շրջաններուն կը գործէ մեծ եռանդով⁵¹⁸:

Գալֆաեան Որբանոցին մէջ 1923-ին կը գտնուին 70 սանուհիներ՝ երկու բաժիններով.

ա - Մանկապարտէզ

բ - 4 կարգերով նախակրթարան:

Որբանոցը կը մատակարարուի գլխաւորաբար նուիրատուութիւններով: Հասութաբեր կ'ըլլան նաեւ պատրաստուած ձեռագործները, բաժանորդագրութիւններն ու պաշտպանեալ սանուհիներու թոշակները: Շրջանի Տնօրէնուհի մայրը կ'ըլլայ Աղանի Մայրապետ Քէօսէան, իսկ ուսումնապետը՝ Հմայեակ Շիշմանեան:

Հաստատութիւնը կ'ունենայ երեք մայրապետներ. Մարիամ Մայրապետ Քէօսէան (քարտուղար- հաշուակալ), Նէվրիկ Մայրապետ Բամանեան (ընդհանուր հսկիչ), Արուսեակ Մայրապետ Մխիթարեան (օգնական ուսուցչուհի): Իսկ կրօնքի, բարոյագիտութեան եւ հայերէնի դասերը կ'աւանդուին Մեսրոպ Եպակ. Նարոյեանի կողմէ:

Պոլիսէն եւ արտասահմանէն կարգ մը բարեսէր անձերու նուիրատուութիւններով Խասգիւղի Որբանոցը, ինչպէս նաեւ հաստատութեան մատուորը կը նորոգուի 1923 թուականին⁵¹⁹:

Հաստատութիւնը 1924-ին Հանրապետական նոր օրէնքներով կը վաւերացուի Գալֆաեան Ուխտի Քոյրերուն անուան կրկնակ

⁵¹⁷ 1961 թուականէն սկսեալ 5404 համար օրէնքի տրամադրութիւններուն համաձայն, համայնքային թուէրկութեամբ տեղի կ'ունենայ Գալֆաեան Որբանոցի Խնամակալութեան ընտրութիւնը:

⁵¹⁸ Չինար Յակոբ- Էրզիեան Պերճ, Հարիւրամեայ Յիշատակարան Գալֆաեան Տան, Իսթանպուլ, 1966, էջ 87:

⁵¹⁹ Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1924, էջ 124:

արտօնագրով իբրև Որբանոց եւ իբրև Նախակրթարան⁵²⁰: Իսկ 1926-ին հիմնադրութեան 60-ամեակին առթիւ Որբանոցը կը վերաշինուի ու կ'ընդարձակուի Խնամակալութեան եւ Քոյրերու ջանքերով, բարերարներու աջակցութեամբ ու ճարտարապետ Սիմոն Մելքոնեանի աշխատութեամբ:

1928-ին Եռուսեան եղբայրները Գալֆաեանին կը նուիրեն Եռուսեան Խանի 1/10 բաժինը⁵²¹: Բայց երբ հաստատութեան կատարուած նուիրատուութիւններէն որոշ տասանորդ մը որպէս շահատուրք կը պահանջուի, Որբանոցին համար ծանր կացութիւն կը ստեղծուի, քանի որ անոր պիտոջէն արդէն իսկ վտիտ կ'ըլլայ: Անհետեւանք կը մնան կատարուած դիմումները⁵²²:

1934-ին Սիմոն Գայսէրլեան Սկիւտարի մէջ ընդարձակ գետին մը կը նուիրէ Որբանոցին՝ կառուցանելով երկյարկանի բնակարան մը, որպէս ամարանոց Միաբանութեան ու սանուհիներուն⁵²³:

1938 Յունիսին Ազգային Վարչութիւնը նկատի ունենալով պիտոջէի անձկութիւնը, կ'առաջարկէ Գալֆաեան Որբանոցը միացնել Սկիւտարի Խնամատարական Որբանոցին, սակայն այս առաջարկը կարելի չ'ըլլար ընդունիլ, քանի որ ըստ Գալֆաեան Ուխտի կանոնագրութեան, անկարելի կ'ըլլայ Որբանոցը միացնել ուրիշ համանուն հաստատութեան մը⁵²⁴: Բայց 1938-1939 տարե-

⁵²⁰ Չինար Յակոբ- Էրզիեան Պերճ, նշծ. աշխ., էջ 213:

⁵²¹ Նոյն տեղէն, էջ 184:

⁵²² Նոյն տեղէն, էջ 94-95:

⁵²³ Նոյն տեղէն, էջ 97:

⁵²⁴ Նոյն տեղէն, էջ 99:

շրջանին, երբ կը միանան Գարակեօզեան Որբանոցն ու Սկիւտարի Խնամատարական Որբանոցը, 13 որբուհիներ կ'ընդունուին Գալֆաեան⁵²⁵:

Գալֆաեանը, 1975-ին կը փոխադրուի Սկիւտարի ամարանոցի շէնքը, երբ Վոսփորի կամուրջի շինութեան պատճառաւ կ'ապասեփականացուի Խասգիւղի շէնքը:

Իսկ 1999-2000 տարեշրջանին Գալֆաեան կը միանայ Ճեմարան վարժարանին հետ ու կը փոխադրուի Ճեմարանի շէնքը:

⁵²⁵ Նոր Լուր, 3.1.1939:

ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԶԵՍՏԱՆՈՑ-ՈՐԲԱՆՈՑ

Պոլսահայ կրթական եւ բարեսիրական հաստատութիւններու կարեւորագոյններէն մէկուն՝ Գարակեօզեան Ազգային Արեւստանոց-Որբանոցի հիմնարկութիւնը տեղի կ'ունենայ 1912 թուականին Շիշլիի բարձունքին վրայ, ըստ ողբացեալ բարերար Տիգրան Էֆէնտի Գարակեօզեանի⁵²⁶ կտակին:

Հաստատութիւնը, որ նախախնամական դեր կը կատարէ ծնողազուրկ եւ անպաշտպան հարիւրաւոր Հայ պատանիներու, կը մատակարարուի Խնամակալութեան մը կողմէ:

Տիգրան Գարակեօզեանի մահէն (11 Յունուար 1896) վերջ, մեջտեղ կ'ելլէ իր 1891 թուակիր կտակը, ուր ան իր սեփական հարըստութեան մէկ երրորդը կը թողու վաճառականական վարժարանի մը կառուցման ու պահպանման համար:

Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ կ'ընտրուի «Կտակայի՛ն Յանձնաժողով» մը: Կը գնուի Շիշլիի բարձունքին վրայ, Ռուս բժիշկ՝ Տքթ. Բլէքոֆի կողմէ որպէս բուժարան կառուցանել տրուած եւ թերաւարտ մնացած շէնք մը: Հայր եւ որդի ճարտարապետներ՝ Աւետիս եւ Սարգիս Բէքմէզեաններու կողմէ կը պատրաստուի յատակագիծ մը եւ երոպական յախճապակիներով, արդիական ձեւով կը կատարուի ներքին յարդարանքը:

⁵²⁶ Տիգրան Էֆէնտի Գարակեօզեան (1834-1896), Մերձատր Արեւելքէն դէպի Արեւմուտք ծաւալող Հայ գաղթականական շարժումի ընթացքին Պոլիս հաստատուած սրմաբէշ Յովհաննէս Աղայի չորրորդ զաւակն է: Բացի Սանասարեան Խնամակալութեան անդամակցութենէն (1893-1896), չէ ունեցած ոեւէ հանրային գործունէութիւն: Եղբօրը՝ Կարապետի հետ հիմնած է առեւտրական եւ սեղանաւորական Տուն մը, որ պատուաբեր դիրք մը գրաւած է միջազգային առեւտրական հրապարակին վրայ:

Լոյսի, ջեռուցումի, ջուրի եւ բաղնիքի սարքաւորումները եւ ամբողջ շինութիւնները կ'աւարտին 1913-ի վերջերը: Վարժարանի պաշտօնական բացումը կը կատարուի 20 Դեկտեմբեր 1913 Կիրակի, նախագահութեամբ Զաւէն Պատրիարքի:

Խնամակալութեան որոշումով տնօրէնութեան պաշտօնին կը կոչուի Էսաեան Վարժարանի նախկին տեսուչ Գրիգոր Մարգարեան⁵²⁷:

Շիշլիի Գարակեօզեան Որբանոցը կարելի է շարունակութիւնը համարել Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցի շրջափակին մէջ գոյութիւն ունեցող «Սուրբ Յակոբայ Ազգային Երկսեռ Որբանոց»ին⁵²⁸, քանի որ Գարակեօզեանի առաջին սաները կ'ըլլան այդ Որբանոցի աշակերտներէն 85-ը, որոնց Շիշլի փոխադրութիւնը տեղի կ'ունենայ պաշտօնական բացումէն առաջ, Սեպտեմբեր 7-ին:

Գարակեօզեանը զինուորական գրաւման կ'ենթարկուի Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին եւ աշակերտները կրկին կը փոխադրուին Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոց, ուր կը մնան մինչեւ 1919-ի սկիզբը:

1923-ին, երբ համայնքային ու կրթական բոլոր հաստատութիւնները անմիջական վերահսկողութեան ենթակայ կ'ըլլան Կրթական Տնօրէնութեան եւ կը հրահանգուի իւրաքանչիւր վարժարանի համար նշանակել ներկայացուցիչ մը, որուն պաշտօնը կ'ըլլայ յանուն վարժարանի յարաբերուիլ Կրթական Տնօրէնութեան

⁵²⁷ Ազատեան Թ., Յուշամատեան Գարակեօզեան Ազգային Որբանոցի (Շիշլի) (1913-1948), Բարձրագույն, 1949, էջ 16-32:

⁵²⁸ Ըստ Բիզանդ Քէլեանի (Պատմութիւն Ա.Փ. Հիւանդանոցի Հայոց ի Կ.Պոլիս, 1888), 1851-ին Գերագոյն Ժողովի որոշումով Ետիգուլէ կը հաստատուի նախ վարդապետանոց մը, որ 1858 -ին «Ժառանգաւորաց Ճեմարան» անունը կը ստանայ, յետոյ 1870-ին կը կոչուի «Պէճեան վարժարան», իսկ 1878-էն վերջ՝ «Սուրբ Յակոբայ Ազգային Երկսեռ Որբանոց»:

հետ, Գարակեօզեան Որբանոցի հիմնադրի ներկայացուցիչ կը ներկայանայ Եդուարդ Գարակեօզեան⁵²⁹:

Գարակեօզեան հաստատութիւնը նախակրթութեան հետ տողոց կուտայ նաեւ արհեստագիտական կրթութիւն:

Հաստատութեան զլխաւոր նպատակը կ'ըլլայ ընթացաւարտները տեղաւորել իրենց նախատեսած գործերուն մէջ եւ ինքնաբաւ դառնալէ յետոյ միայն արձակել:

Նպատակը իրագործելու համար կը բացուին մէկէ աւելի աշխատանոցներ (կօշիկի, գուլպայի), հիւսարան, ատաղձագործարան, էլեկտրականութեան եւ ապակեղէնի գործարան, բանջարանոց, գոմ, հանոց եւլն., որպէսզի տղաքը կարելիութիւն ունենան հետեւելու արհեստաւորական, երկրագործական եւ գիւղատնտեսական աշխատութիւններու⁵³⁰:

Արհեստանոցը առեստրական տուներու համար խաւաքարտէ տուփեր, կանացի ձեռագործի պահպանակներ եւ այլ ապսպրանքներ կ'ընդունի ու կը պատրաստէ եւ այսպէս հասոյթ կ'ապահովուի Որբանոցին:

Վարժարանի օդատուն եւ ամէն առաւելութիւն ունեցող շէնքը կը շրջապատուի 10.000 քառակուսի կանգուն տարածութեամբ զետիկնով մը, որ կը ծառայէ իբրեւ պարտեզ եւ կը մշակուի աշակերտներուն կողմէ:

⁵²⁹ Եդուարդ Գարակեօզեան (1870-1945), Ռուկերթ Գոլէճի ընթացքը աւարտելէ վերջ իր եղբօր՝ Տիգրանի նման կ'ընդգրկէ սեղանաւորական ասպարէզը, ունենալով նաեւ հանրանուէր գործօն զանազան ծառայութիւններ: Կազմակերպիչներէն կ'ըլլայ Ղալաթիոյ Դպրաց Դասին, 1906-ին կ'անդամակցի Նպաստից Յանձնաժողովին. իսկ 1907-ին Կեդրոնականի Խնամակալութեան: Անդամը կ'ըլլայ Գարակեօզեանի Կտակային Յանձնաժողովին ինչպէս նաեւ Խնամակալութեան եւ կը նշանակուի հիմնադրի ներկայացուցիչ Կրթական Տնօրէնութենէն:

⁵³⁰ Ընդարձակ Տարեցոյց, Կ.Պոլիս, 1926, էջ 136-137:

Այս հաստատութեան համար միւս կրթական հաստատութիւններէն տարբեր, առանձին ծրագիր մը կը ներկայացուի Կրթական Տնօրէնութեան: Այս ծրագրին համաձայն Որբանոց-Արհեստանոցը չորս տարուան շրջան մը կ'ունենայ: Ուսանողները երեկոյան դասընթացքներու կը հետեւին՝ իրենց ուսումը եւս կատարելագործելու համար⁵³¹:

Գարակեօզեանի ընթացաւարտներուն մեծագոյն մասը կը հետեւին արհեստներու, որոնցմէ շատեր ապագային կը հիմնեն առանձին գործեր:

1934-ին պիւտջէի անձուկ պայմաններու հետեւանքով կը նուազի աշակերտներու թիւը եւ կը ջնջուի Ա. դասարանը, իսկ 1935-ին Գ. Դասարանը եւ նոյն կարգի աշակերտները կը դրկուին Ֆերիզիլի Մերամէթճեան Ազգային վարժարանը:

1938-1939 տարեշրջանին կը միանան Գարակեօզեան եւ Սկիւտարի Որբանոցները: Սկիւտարի սաները կը փոխադրուին Գարակեօզեան եւ աշակերտներու թիւը կը բարձրանայ 96-ի, կը վերաբացուին նախակրթարանի հինգ դասարանները⁵³²:

⁵³¹ Ընդարձակ Տարեցոյց, Կ.Պոլիս, 1927, էջ 89-91:

⁵³² Նոր Լուր, 2.X.1939:

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿ

Ուսումնական Խորհուրդի գործունեությունը կը սկսի 1853-ին, սակայն անոր դերն ու իրաւասութիւնները կը ճշտուին 1860-ին՝ Սահմանադրական Օրէնքով: Նոյնպէս, ազգային կրթական մշակներուն ապագան ապահովելու եւ անոնց վիճակը բարելաւելու բուն գաղափարը, որ աւելի վերջ մարմին կ'առնէ «Ուսուցչաց Օգնութեան Սնտուկ»ի հաստատումով, ծագում կ'առնէ Ազգային Սահմանադրութենէն (Նիզամնամէ ի Միլլէթ ի Էրմէնիեան):

1886-ին Կարապետ Իրփիւճեանի ատենապետած Ուսումնական Խորհուրդը, ուսուցիչներու վիճակը բարելաւելու նպատակով կը ձեռնարկէ հիմնել «Ուսուցչական Միութիւն» մը, նոյնիսկ Ռ. Պէրպէրեանի կողմէ կը պատրաստուի ծրագիր-կանոնագիր մը, սակայն աշխատութիւնները դրական արդիւնքի մը չեն հասնիր:

1891-ին, Ուսումնական Խորհուրդը՝ որուն կ'ատենապետէ Ռ. Պէրպէրեան, ընդհանուր առմամբ շատ արդիւնատու գործունեություն կ'ունենայ, բայց հիմնական կարգադրութիւն մը չի կրնար ընել ուսուցիչներու նիւթական վիճակի բարւոքման, ինչպէս նաեւ ապագայի ապահովութեան միջոցներու ձեռնարկելու համար⁵³³:

28 Նոյեմբեր 1892-ին «Հայրենիք» օրաթերթին մէջ «Մուրացիկ Վարժապետը» խորագրով կը նկարագրուի Խասգիւղի մէջ մուրալը նախկին վարժապետի մը, որ իր կուրծքին կախած է վրան «Հայ վարժապետ մը» գրուած ցուցանակ մը: Իսկ երկու օր վերջ Արփիար Արփիարեան նոյն օրաթերթի մէջ գրի կ'առնէ խմբագրական մը, ուր որպէս լուծում կ'առաջարկէ, որ Պատրիարքարանը ունենայ վարժապետներու համար հանգստեան թոշակի սնտուկ մը:

⁵³³ Ագատեան Թ., Յիշատակարան Ուսուցչաց Օգնութեան Սնտուկի (1900-1930), Իսթանպուլ, 1930, էջ 12-14:

Երբ խնդիրը կը տարուի ուսուցչական ժողովի, ուսուցիչներ հանրագրութեամբ մը կը դիմեն Ռ.Պերպլերեանի ատենապետած Ուսումնական Խորհուրդին, որ 6 Դեկտեմբեր 1892-ին Խ. Աշրգեան Պատրիարքի նախագահութեամբ բացառիկ նիստ գումարելով կ'որոշէ «Հանգստեան Սնտուկ» մը հաստատել եւ ծրագիր մը սլատրաստելով կը ներկայացնէ Ազգային Կեդրոնական Վարչութեան, որ սակայն կը մնայ անգործադրելի⁵³⁴:

Գաղափարը, որ կը ներշնչուի 1860-ական տարիներուն եւ ատեն ատեն կ'արծարծուի, կ'իրականանայ 40 տարի վերջ, Մաղաքիա Օրմանեան Պատրիարքի շրջանին: Ուսումնական Խորհուրդը կը յաջողի հիմնել «Ուսուցչաց Օգնութեան Սնտուկ»ը: 3 Մարտ 1901-ի նիստի որոշումով կը ձեռնարկուի ծրագրի մը նախապատրաստութեան եւ պաշտօն կը յանձնուի Հրանդ Ասատուրի՝ գրի առնել կանոնագիր մը, 1886-ին Ռ. Պերպլերեանի պատրաստած ծրագրին հետեւողութեամբ:

20 Ապրիլ 1901-ին Օրմանեան Պատրիարքի նախագահութեամբ գումարուած նիստին Հ.Ասատուրի կողմէ պատրաստուած կանոնագիրը վերջնական ձեւ կը ստանայ եւ 27 Ապրիլին կը յղուի Ազգային Կեդրոնական Վարչութեան: Քաղաքական Ժողովը կը վաւերացնէ եւ Ուսումնական Խորհուրդը 15 Յունիսի իր նիստին կ'որոշէ գործադրութեան դնել զայն 1 Յուլիս 1901-էն սկսեալ⁵³⁵:

Քաղաքական Ժողովը Օգնութեան Սնտուկի մատակարարութիւնը կը յանձնէ 5 անդամներէ բաղկացած Հոգաբարձութեան մը, որ Ուսումնական եւ Տնտեսական Խորհուրդներէ համաձայնութեամբ առաջարկուած անուններէն կ'ընտրուի Քաղաքական Ժո-

⁵³⁴ Նոյն տեղէն, էջ 14-17:

⁵³⁵ Ազատեան Թ., նշծ.աշխ., էջ 20-23:

դովի կողմէ եւ պաշտօնը կը տեւէ 5 տարի: Կազմուած առաջին Հոգաբարձութեան ատենապետ կ'ընտրուի Ռ. Պերպէրեան:

Ուսումնական Խորհուրդի ձեռնարկած «Ուսուցչաց Օգնութեան Սնտուկ»ի գործառնութիւնները մինչեւ Հանրապետութեան շրջան յաճախակի ընդհատումներով կը շարունակուին: Սնտուկը ընդհատումներով գոյութիւն կ'ունենայ Թուրքիոյ Հանրապետական շրջանին եւս, նպատակ ունենալով օգնութեան կարիք ունեցող ուսուցիչ եւ ուսուցչուհիներուն վիճակը բարելաւել:

1924 Փետրուարին, երբ գործունէութենէ դադրած կ'ըլլայ Ուսուցչաց Օգնութեան Սնտուկը (1921-ին), թէեւ Ազգային Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Մեսրոպ Եպսկ. Նարոյեանի ատենապետութեամբ կը կազմուի Յանձնաժողով մը՝ ստանձնելու համար կարօտ մտաւորականներու օժանդակութեան հոգը, սակայն ան կը դադրի գործունէութենէ 24 Յունիս 1925-ին: Ընդհատման այս շրջանին անկար ուսուցիչներու յաճախակի դիմումներու հետեւանքով, 1926 Յունուարին կը վերակազմուի Ուսուցչաց Օգնութեան Սնտուկը⁵³⁶:

Քաղաքական Ժողովը 9 Նոյեմբեր 1926-ի նիստին կը վաւերացնէ «Պոլսոյ Հայ Ուսուցչաց Օգնութեան եւ Խնայողական Սնտուկի Կանոնագիր»ը եւ այսպէս գործունէութեան նոր շրջան մը կը բացուի Ուսուցչաց Օգնութեան Սնտուկի Հոգաբարձութեան առջեւ, ատենապետութեամբ Գ.Մալաթեանի: Կանոնագրի համաձայն 5 տարուան շրջանի մը համար պաշտօն ստանձնող Հոգաբարձութեան 7 անդամներէն 2 հատը կ'ըլլան ուսուցիչներ: Հոգա-

⁵³⁶ Նոյն տեղէն, էջ 57-59:

բարձրօրինը իր գործունեության համարատուօրինը ամէն տարի կը ներկայացնէ Տնտեսական Խորհուրդի վաւերացման⁵³⁷:

1927 եւ 1928-ին, հրատարակութեան կը յանձնուի մանկական մատենաշարի գրքոյկներ՝ ի նպաստ Օգնութեան Սնտուկի, սակայն Հոգաբարձրօրինը կ'ընդհատէ հրատարակութեան գործը, երբ կը տեսնէ որ կրթական վարիչներն ու ծնողքները այդ գրքոյկներու սպառման համար անհրաժեշտ գոհողութիւնը կը զլանան⁵³⁸:

Հոգաբարձրօրինը, որ կրկին ընդհատումէ մը վերջ 1929 Փետրուարին Տօթթ. Վ. Հինդլեանի ատենապետութեամբ⁵³⁹ կը վերակազմուի, կը ջանայ գտնել հասոյթի նոր միջոցներ եւ աղբիւրներ, երբ տիրոջ տնտեսական տագնապի պատճառաւ կը դժուարանայ Օգնութեան Սնտուկի մատակարարութիւնը եւ ասոր փոխարէն կը շատնան նպաստի դիմումները⁵⁴⁰: Ապա կրկին կ'ընդհատուի անոր գործունեութիւնը:

Ուսուցչաց Օգնութեան Սնտուկը 1926-1932 թուականներու միջեւ 5.000 Թրքական Ոսկիի օժանդակութիւն կ'ընէ համայնքին անկար եւ պաշտօնագուրկ ուսուցիչներուն⁵⁴¹:

⁵³⁷ Նոյն տեղէն, էջ 74:

⁵³⁸ Արեւելք, 18.II.1932:

⁵³⁹ Ընդհանուր Տարեցոյց Մ.Փ.Հիւանդանոցի, Վ.Պոլիս, 1930, էջ 131:

⁵⁴⁰ Արեւելք, « 23.XII.1931:

⁵⁴¹ Արեւելք, 18.II.1932:

ԹՈԳԱՏԼԵԱՆ ՊԱՆԴՈԿԸ

Գոց շուկայի խոհարարներին Մկրտիչ Թոքատլեան 1909-ին Բերայի մեջ ազգապատկան հողի մը վրայ կը կառուցէ սեփական շէնք մը եւ մեջտեղ կը բերէ մեծ ու գեղեցիկ պանդոկ մը: 160 սենեակներ ունեցող այս փառահեղ պանդոկին պողոտայի կողմը նայող նոյնքան հրաշալի սրճարանը տասնեակ տարիներ ժամադրավայրը կ'ըլլայ տեղացի եւ օտար բարձր դասակարգին:

Պանդոկը, որ կ'ունենայ նաեւ մասնաճիւղ մը Թարապիայի մեջ իբրեւ հիւրանոց եւ ընդունելութեան կիսապաշտօնական վայր մեծնաշնորհեալ կ'ըլլայ նաեւ Քեմալական շրջանին, դառնալով վաճառանիշ մը ծանօթ ամբողջ աշխարհի:

Ս. Համաշխարհային պատերազմի եւ յաջորդող օրերուն, երբ համալսարանականները ցոյցեր կը կատարեն դաշնակիցներու դէմ ապակէփեղկերը կը փշրեն Թոքատլեանի, նկատելով որ տերը ուսահապատակ է: Այդ պատճառաւ Մկրտիչ Թոքատլեան 1919-ին շէնքը կը փոխանցէ իր աստրախպատակ փեսային՝ խրուատ Նիզոլա Միտովիչին ու ինք կը հաստատուի Ֆրանսայի Նիս քաղաքը:

Մկրտիչ Թոքատլեան 29 Յուլիս 1929-ին հաստատութիւնը կը կտակէ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ⁵⁴²: Պանդոկը, որպէս Բերայի Կալուածոց հոգաբարձութեան ենթակայ հաստատութիւն մը, կ'ապահովէ տարեկան մօտ 4.000 ոսկիի հաստոյթ մը, որուն շնորհիւ կանգուն կը մնան Բերայի եկեղեցիները եւ 1200 աշակերտներով Էսսեան վարժարանը: Պատրիարքարանն ալ կը ստանայ ամէն ամիս 300 ոսկի:

Սակայն Հանրապետութեան շրջանին կառավարութեան պահանջած զանազան ծանր տուրքերու ու տնտեսական տազնապի

⁵⁴² Արեւ., 14.IX.1929:

հետեանքով կը դժուարանան գործերը եւ երբ կարելի չ'ըլլար վճարել 10.000 ոսկի եկամուտի տուրքը, արգելքի տակ կ'առնուին ու աճուրդով կը վաճառուին գոյքերը, որմէ յետոյ 1939-ին կը փակուի պանդոկը⁵⁴³:

Թորատլեան 1950-ական թուականներուն կը վերածուի խանի:

⁵⁴³ Յառաջ, 20.X.1939:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ ՀԻՒԱՆՂԱՆՈՑ

(Կաթողիկե Հայոց)

1830-ական թուականներուն, երբ ժանտախտի համաճարակ կը տիրէ Պոլսոյ մէջ, Աղքատաց Հոգաբարձութենէն Արքին Սաքատեան կը գնէ 30000 կանգուն հողամաս, որուն վրայ անմիջապէս կը կազմուի վրանայարկ հիւանդանոց մը, պատասպարելու համար ժանտախտատրները:

Սուրբ Յակոբ Հիւանդանոցի եւ անոր յարակից մատրան շինութիւնը կը սկսի 1 Օգոստոս 1836-ին եւ կ'աւարտի 1 Օգոստոս 1837-ին⁵⁴⁴: 1839-ին Ս.Յովհան Ոսկեբերան Եկեղեցոյ Հիւանդանոց-Աղքատանոցի հիւանդանոցի բաժինը Բանկայլթի փոխադրուելով կը միանայ Սուրբ Յակոբ Հիւանդանոցին:

Հիւանդանոցը, որուն կառուցման համար կը ծախսուի մօտաւորապէս 1.200 քսակ⁵⁴⁵, մինչեւ 1860 կը գործէ որպէս հիւանդանոց, իսկ այդ թուականէն սկսեալ կ'անուանուի Սուրբ Յակոբ Հիւանդանոց-Անկէլանոց⁵⁴⁶:

Հիւանդանոցի շէնքը կը փլցուի 1952-ին, տեղը կառուցելու համար օրուան պահանջներուն պատշաճ արդիական հիւանդանոց մը, որուն հանդիսատր բացումը կը կատարուի 15 Դեկտեմբեր 1968-ին:

Սուրբ Յակոբ Հիւանդանոց-Անկէլանոցի այս շէնքն ալ կը փլցուի 2 Մայիս 2014-ին: Այժմ կը շարունակուի կառուցման աշխատութիւնները 50 սենեականոց, տարրալուծարաններով եւ ախտաճանաչման կեդրոնով օժտուած արդիական նոր շէնքի մը, որուն համար կը նախատեսուի ծախսել 400 միլիոն տոլար⁵⁴⁷:

⁵⁴⁴ Չոլսքեան Յ.Արք., Մեր Պատմական Ս.Յակոբ Հիւանդանոցը Երէկ Եւ Այսօր, Իսթանպուլ, 2004, էջ 11-13:

⁵⁴⁵ Մէկ քսակը հաւասար է 500 դահեկանի:

⁵⁴⁶ Չոլսքեան Յ. Արք., նշձ.աշխ., էջ 18-19:

⁵⁴⁷ Ակօս, 23.VI.2014:

ԳԼՈՒԽ ՇԻՆԳԵՐՈՐԴ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԵՐԸ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Կ. Պոլսոյ գլխաւոր եկեղեցիները ընդհանրապէս ԺԸ. Դարու վերջերն է, որ կը սկսին կառուցուիլ կամ վերակառուցուիլ, մեծ մասով արքունի ճարտարապետ Պալեաններու, կամ իրենց դպրոց-աշխատանոցներէն հասած ու նոյն դպրոցի ուղղութեան հետեւած գծագրիչ ճարտարապետներու եւ վարպետներու ձեռքով⁵⁴⁸:

Իսկ Կ. Պոլսոյ ամենահին եկեղեցին է Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, զոր կառուցանել կուտայ Կաֆայէն Կ. Պոլիս եկող Հայ վաճառական մը՝ Կոմս (կամ Կոզմաս) 1391-ին, զոր 1436-ին Կաֆացի Հայ վաճառականներ կը վերաշինեն: 1731-ին հրդեհի հետեւանքով հրոյ ճարակ կը դառնայ եւ 1733-ին Կոլոտ Պատրիարքի օրով կը վերաշինուի, որուն կառուցման ծախքերը կը հոգան Ակնցի Մահտեսի Սեդրոս Ամիրա Երեսանէնց եւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք, որուն ձեռքով պաշտամունքի կը բացուի եկեղեցին:

1771-ին կրկին հրոյ ճարակ դարձող եկեղեցիին վերաշինութիւնը կը կատարուի 1799-ին: 1958-ին քաղաքի բարեզարդման աշխատանքներուն պատճառաւ եկեղեցին կը քանդուի եւ հողին մեծ մասը կը յատկացուի պողոտայի ընդարձակման: Մնացեալ հողին վրայ 1962-ին կը կառուցուի կաթողիկէ գմբէթով այժմու Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ պաշտամունքի կը բացուի Շնորհք Պատրիարքի ձեռքով 1966-ին:

⁵⁴⁸ Հանէսեան Մ., նշծ.աշխ., էջ 38:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Կ.Պոլսոյ մէջ հայ դասական ոճով կառուցուած եկեղեցիներէն է, որուն ներքնայարկը կը գտնուի Ամենափրկչի Մատուռը եւ հոն տեղադրուած է Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի դամբարանը:

Եկեղեցին, նորոգութեան ենթարկուած եւ պաշտամունքի վերաբացուած է 2005-ին Մեսրոպ Բ. Պատրիարքի ձեռքով⁵⁴⁹:

Հանրապետութեան հռչակումէն յետոյ վերաշինուող առաջին եկեղեցին կ'ըլլայ Ֆերիզիւղի Սուրբ Վարդանանց եկեղեցին, որուն մասին 12 Յունուար 1929 թուակիր «Հայաստանի Կոչնակ»էն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնը.

«Լերքին գործավարութենէն (նախարարութիւն) եկած արտօնութեան համաձայն Ս. Ծնունդէն անմիջապէս վերջ պիտի ձեռնարկուի Պոլսոյ Ֆերիզիւղ Սուրբ Վարդանանց եկեղեցիին ընդարձակման եւ վերաշինութեան գործին: Արդէն իսկ Թաղապետութենէն հրահանգ տրուած է այս մասին եւ թոյլատրուած՝ որ փափաքուած ձեւով եւ ոճով (գմբէթաւոր կամ սովորական) տեղի ունենայ շինութիւնը: Ճարտարապետներ՝ Տիարք Աւետիս Սարաֆեան եւ Սարգիս Թաշճեան պատրաստած են յատակագիծ մը, որուն համեմատ շուրջ 15.000 ոսկիի գնահատութիւն մը եղած է ծախսերուն համար: Թաղային Խորհուրդը ոգի ի բոյն նուիրուած է գործի: Ժողովուրդի ոգեւորութիւնն ու զոհողութիւնը քաջալերական են եւ շատ գնահատելի: Ոմանք պատրաստակամութիւն յայտնած են շինանիւթեր նուիրելու»⁵⁵⁰:

⁵⁴⁹ Turkiycermenileripatrikligi.org

⁵⁵⁰ Հայաստանի Կոչնակ, 12.1.1929:

Իսկ Հանրապետության հռչակումէն յետոյ վերաշինուող վերջին եկեղեցին կ'ըլլայ Պալըքը Հայոց Գերեզմանատան Սուրբ Սարգիս Մատուռը (1985):

Շրջանի Հայ Առաքելական Եկեղեցիները՝ որոնք այսօր գոյութիւն չունին հետեւեալներն են⁵⁵¹.

1. - Ընծայման Սուրբ Աստուածածին (Գալֆաեան Ուխտի Մատուռ ի Խասգիւղ) կ'ապաստեփականացուի Գալֆաեան Որբանոցին հետ միասին 1975-ին՝ կամուրջի շինութեան պատճառաւ:

2. - Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Օքմէյտանը Անկէլանոցին պարտեզին մէջ) գոյութիւն ունի, բայց հաստատութեան վարչութիւնը զայն վերածած է սինակոլի:

3. - Սուրբ Աստուածածին Հայ Ասորական Եկեղեցի (Բերա-Կալաթասարայ), 1963-ին Ասորիներու կողմէ կը նորոգուի ու իբր Մայր Եկեղեցի կը գործածուի մինչեւ հիմա:

4. - Սուրբ Ստեփանոս Եկեղեցի (Խասգիւղ), 1975-ին կամուրջի շինութեան պատճառաւ կը փլցուի:

5. - Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ (Խոր Վիրապ) Եկեղեցի (Բանկալթի), 1939-ին Բանկալթիի Սուրբ Յակոբ գերեզմանատան ապաստեփականացումով կը փլցուի:

6. - Սուրբ Նշան Եկեղեցի (Ալեմտաղ), 1922-ին մգկիթի կը վերածուի:

Շրջանի Հայ Առաքելական Եկեղեցիները՝ որոնք այսօր եւս գոյութիւն ունին հետեւեալներն են⁵⁵².

- Սուրբ Աստուածածին Մայր Եկեղեցի (Գումգաբու) Պատրիարքանիստ,

⁵⁵¹ Թուղլաճեան Բ., Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները, էջ 78-95:

⁵⁵² Նոյն տեղէն, էջ 96-207

- Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Օրթագիւղ),
- Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Պեշիկլաւ)
- Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Ենիգիւղ)
- Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Էյիւս)
- Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Պաքըրգիւղ)
- Սուրբ Կարապետ Եկեղեցի (Սկիւտար-Պաղլարպաշը)
- Սուրբ Խաչ Եկեղեցի (Սկիւտար)
- Երեւանի Սուրբ Խաչ Եկեղեցի (Գուրուշէշմէ)
- Սուրբ Յակոբ (Գլխաղիք) Եկեղեցի (Սամաթիա-Ալթըմէրմէր)
- Սուրբ Յարութիւն Եկեղեցի (Թաքսիմ)
- Սուրբ Յարութիւն Եկեղեցի (Գումգաբու-Դրսի)
- Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ Եկեղեցի (Նաուրգաբու)
- Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ Եկեղեցի (Կետիկփաշա)
- Սուրբ Հրեշտակապետ Եկեղեցի (Պալաթ)
- Սուրբ Հովսէփիմեանց Եկեղեցի (Պիլիպստէրէ)
- Սուրբ Ստեփանոս Եկեղեցի (Եշիլգիւղ)
- Սուրբ Գեորգ Եկեղեցի (Սամաթիա)
- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի (Ղալաթիա)
- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի (Գուզկունճուք)
- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի (Գնալը կղզի)
- Սուրբ Նիկողայոս Եկեղեցի (Թօփգաբու)
- Սուրբ Նիկողայոս Եկեղեցի (Պեքոզ)
- Սուրբ Նշան Եկեղեցի- Խնդրակատար (Գարթալ)
- Սուրբ Փրկիչ Եկեղեցի (Ետիգուլէ-Գազըշէշմէ)
- Սուրբ Սանդուխտ Եկեղեցի (Ըումեյլիիսար)
- Սուրբ Թագաւոր Եկեղեցի (Գատըրգիւղ)
- Սուրբ Թաղեւ եւ Բարթողիմէոս Եկեղեցի (Ենիգաբու)
- Սուրբ Վարդան (Սրբոց Վարդանանց) Եկեղեցի (Ֆերիգիւղ)

- Սուրբ Եղիա Եկեղեցի (Էյիւպ-Տէֆթերտար)
- Սուրբ Երկոտասան Առաքելոց Եկեղեցի (Գանստիլլի)
- Սուրբ Երից Մանկանց Եկեղեցի (Պոյաճըզլիլ)
- Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի (Կալաթասարայ-Պէօղլու):

Պոլսոյ Հայկական եկեղեցիներուն մէջ իբրեւ ճարտարապետական արժէքաւոր կառոյց կը յիշատակուի Պէշիկթաշի Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ կը կառուցուի 1838-ին արքունի ճարտարապետ Կարապետ ամիրա Պալեանի կողմէ: Այս եկեղեցին դասական ձևի նմոյշ մը կ'ըլլայ իր խաչաձև յատակագծով եւ չորս կամարներու վրայ բարձրացող գմբէթով:

Դասական ձևի նմոյշ մը կ'ըլլայ նաեւ Գուզկունճուքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, 1835-ին կառուցուած արքունի ճարտարապետ Յովհաննէս ամիրա Մերվերեանի կողմէ, քառակուսի յատակագծով եւ չորս աղէղներու վրայ բարձրացող գմբէթով մը, որ արտաքին կողմէ ալ ներքինին համապատասխան գմբէթածածկ ձևեր կը պահէ⁵⁵³:

Պոլսոյ Հայ Կաթողիկէ համայնքը կ'ունենայ 12 եկեղեցիներ, որոնք են⁵⁵⁴.

- Անարատ Յղութիւն Եկեղեցի (Սամաթիա)
- Անարատ Յղութիւն Եկեղեցի (Բանկալթի)
- Սուրբ Անտոն Եկեղեցի (Թարապիա)
- Սուրբ Աստուածածին Մայր Եկեղեցի (Պէօղլու- Սագըզաղաճը)
- Սուրբ Աստուածածին Եկեղեցի (Մեծ Կղզի)
- Սուրբ Պօղոս Եկեղեցի (Պիւլիստերէ)

⁵⁵³ Տէր Յակոբեան Վ., Իսթանպուլի Հայ Եկեղեցիները հայ ոճի հանդէպ, Ընդարձակ Տարեցոյց Ս.Փ.Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1943, էջ 112-115:

⁵⁵⁴ Թուղլաճեան Բ., նշծ.աշխ., էջ 208-3061:

- Սուրբ Յովհաննէս Սկրտիչ Եկեղեցի (Ենիգիւղ)
- Սուրբ Յովհան Ոսկեբերան Եկեղեցի (Թաքսիմ)
- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի (Օրթագիւղ)
- Սուրբ Յիսուս Փրկիչ Եկեղեցի (Ղալաթիա)
- Սուրբ Լեւոն Եկեղեցի (Գատըզիւղ)
- Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի (Պէյօղլու)

Իսկ Բողոքական Հայերը կ'ունենան հինգ ժողովարաններ⁵⁵⁵

- Հայ Աւետարանական Սուրբ Երրորդութիւն Ժողովարան (Պէյօղլու- Այնալըչէշմէ)
- Էմմանուէլ Ժողովարան (Էմիննէօնի- Ֆինճանճըլար)
- Հայ Աւետարանական Սուրբ Նահատակաց Ժողովարան (Կէտիկփաշա-Լանկա)
- Հալըճըօղլուի Ժողովարան (Խասգիւղ-Հալըճըօղլու)
- Սկիւտարի Ժողովարան (մինչեւ 1950):

⁵⁵⁵ Նոյն տեղէն, էջ 315-322:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԵՐ

Կ. Պոլսոյ Հայոց հնագոյն գերեզմանատուներն են՝⁵⁵⁶ Պալքքլըի գերեզմանատունը, Տավուտփաշայի մէջ, Թօփգաբուի դիմաց նոյն դրան ներսի կողմը բնակող աղքատ հայերու գերեզմանատունը, Էտիրնէգաբուի, Պալաթի, Սկիւտարի եւ Բանկալթիի Ս.Յակոբ գերեզմանատուները:

1923-1939 տարիներուն Հայ Առաքելական համայնքը Պոլսոյ մէջ կ'ունենայ 17 գերեզմանատուներ՝ Պալքքլը, Պաքրըզիւղ, Պոյաճըզիւղ, Էտիրնէգաբու, Խասզիւղ, Գատըզիւղ, Գանտիլլի, Գընալը, Րումելիիիսար, Շիշլի, Սկիւտար, Օրթագիւղ, Պէշիկթաշ, Գուրուչէշմէ, Բանկալթի, Ենիզիւղ եւ Եշիւզիւղի մէջ, որոնց վերջին վեց հասրը այսօր գոյութիւն չունին⁵⁵⁷:

Պալքքլը գերեզմանատունը Հայոց սեփականութիւնը կը դառնայ 1554-ին, Շէրիի վճռագրով մը: Առաջին որմնափակումը կը կատարուի 1903-ին, երբ նաեւ գերեզմանատան մէջ ճամբայ մը բացուելով կը բաժնէ զայն երկու մասի՝ Մեծ ու Փոքր Պալքքլը անուններով:

Գերեզմանատան հնագոյն արձանագրութիւնը կը կրէ 1618 թուականը: 1919-ին կը պատրաստուի գերեզմանատան յատակագիծը եւ 1923-1925 տարիներուն կը նորոգուին զայն շրջափակող պատերը:

1985-ին Պալքքլը գերեզմանատան մէջ կը կառուցուի Սուրբ Սարգիս մատուղը:

⁵⁵⁶ Ատիլ Գ., Գասպարեան Տ., Խոշեան Հ., Ազգային Գերեզմանատուն Հայոց Շիշլիի, Կ.Պոլիս, 1922, էջ 7:

⁵⁵⁷ Թուրլաճեան Բ., նշծ.աշխ., էջ 213-258:

Պալըքը գերեզմանատան մեջ թաղուած են Պատրիարքներ՝ Կիրակոս Երեւանցի, Ստեփանոս Մեղրեցի, ինչպէս նաեւ Սոյգ Կարողիկոս Թորոս Սեբաստացի, Կոմիտաս Քինյ. Քեօմիւրճեան, Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, Պաղտասար Դպիր, ծնծղայագործ Զիլճեան ընտանիքը, Արքունի ճարտարապետ Յակոբ Խալֆա, Միսաք Մեծարեւց, Կարպիս Ճանճիկեան, Հրանդ Տինք եւ ուրիշներ: Գերեզմանատան արեւմտեան կողմը կը գտնուի յուշարձան մը, «Յուշարձան Նահատակաց (1895-1908)» արձանագրութեամբ, որ գետեղուած է Բ. Սահմանադրութեան (Մէշրութիյէթ) հռչակման ատրի. 1908-ին⁵⁵⁸:

Շիշլիի Հայոց Գերեզմանատունը կը սկսի գործածուիլ 1865-էն սկսեալ, երբ կառավարութիւնը Բերայի Թաղային Խորհուրդին ցոյց կուտայ Ապիտէ ի Հիւրիյէթ բարձունքին վրայ 50000 կանգուն տարածութեամբ այս գետինը, որպէսզի օգտագործուի ննջեցեալներու թաղման համար, արգիլելով թաղում կատարել Բանկալթիի Հայոց Գերեզմանատան մէջ: Գերեզմանատան յարդարանքը կը կատարուի եւ Ներսէս Վարժապետեան Պատրիարքի կողմէ հաստատուած կանոնագիրը գործադրութեան կը դրուի 25 Յուլիս 1884-ին, իսկ որմնափակումը կը կատարուի 1912-ին⁵⁵⁹:

Գերեզմանատան հոգեւորականներու յատուկ բաժնին մէջ թաղուած են Պատրիարքներ՝ Խորէն Աշըգեան, Մաղաքիա Օրմանեան, Մեսրոպ Նարոյեան, Գարեգին Խաչատուրեան, Շնորհք Գալուստեան, Գարեգին Գազանճեան, Պատրիարքական Տեղապահ Գեորգ Ասլանեան, Գարեգին Սրուանձտեանց եւ այլ բարձրաստիճան հոգեւորականներ:

⁵⁵⁸ Նոյն տեղէն, էջ 231-232:

⁵⁵⁹ Ատիլ Գ., Գասպարեան Տ., Խտշեան Հ., նշծ.աշխ., էջ 14-31:

Շիշլիի գերեզմանատունը կը հանգչին նաեւ Հրանդ եւ Զապէլ Մաստուր, Բիզանդ Քէչեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Աշոտ Մատաթեան, Մարտիրոս Մնակեան, Յակոբ Մարթաեան, Յակոբ Մնձուրի, Բագարատ Թեւեան, Երուանդ Ոսկան, Վարդան Կոմիկեան, Սիրվարդ Գարամանուկ, Զարեհ Եալտրզճեան (Զահրատ), Յակոբ Այվազ, Արթօ Ճիւմպիւշեան (Զարեհ Խրախունի) եւ այլ մտաւորական ու արուեստագէտներ, որոնց մեծ մասը թաղուած են «Պանթէոն՝ Մտաւորականներու եւ Արուեստագէտներու» կոչուած բաժնին մէջ⁵⁶⁰:

Սկիւտարի Հայոց գերեզմանատունը, որ գոյութիւն կ'ունենայ ԺԶ դարու երկրորդ կէսէն սկսեալ, կը գտնուի Պաղլարպաշը բարձունքին վրայ: Գերեզմանատան ընդհանուր տարածութիւնը կը հասնի 14000 քառակուսի մետրի, հնագոյն տապանաքարը կը կրէ 1637 թուականը:

Սկիւտարի գերեզմանատունը բաժնուած է երկու մասի, որոնցմէ հիւսիսայինը կը պատկանի Սուրբ Խաչ Եկեղեցոյ, իսկ հարաւայինը՝ Սուրբ Կարապետ Եկեղեցոյ:

Այս գերեզմանատան մէջ կը հանգչին Պատրիարքներ՝ Զաքարիա Վանեցի, Յովհաննէս Չամաշըրճեան, Կարապետ Պալատեցի, Սարգիս Գոյումճեան, Արքունի ճարտարապետ Պալեաններ, Ռէթէոս Պերպերեան, Պետրոս Դուրեան, Մատթէոս Զարիֆեան, Յովհաննէս Հինալեան եւ ուրիշներ⁵⁶¹:

Կաթողիկէ Հայերը Պոլսոյ մէջ կ'ունենան միայն մէկ սեփական գերեզմանատուն՝ Շիշլի Պիլիպոսերէ պողոտային վրայ, ուր կը սկսին թաղում կատարել 1865-էն սկսեալ: Իսկ այդ թուականէն

⁵⁶⁰ Թուղլաճեան Բ., նշծ.աշխ., էջ 240:

⁵⁶¹ Նոյն տեղէն, էջ 254-255:

առաջ մինչև Բանկալթիի գերեզմանատան մեջ ննջեցեալներու թաղման արգիլումը, անոնք եւս իրենց ննջեցեալները կը թաղէին սոյն գերեզմանատան մեջ⁵⁶²:

Իսկ Բողոքական Հայերը Պոլսոյ մեջ չեն ունենար, այժմ եւս չունին, իւրայատուկ գերեզմանատուն մը: Իրենց ննջեցեալները կը թաղեն Ֆերիզիւղի Բողոքականներու Գերեզմանատան Հայերու յատկացուած բաժնին մեջ:

⁵⁶² Թուրլաճեան Բ., նշծ. աշխ., էջ 307-309:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ
ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Թուրքիոյ հանրապետական վարչաձեւը, իր հաստատումէն սկսեալ յառաջդիմութիւններ կ'արձանագրէ նաեւ կրթական մարզին մէջ: «Ձրի եւ պարտաւորիչ նախակրթութիւն» դրութեան շնորհիւ կրթութիւնը կը տարածէ երկրին մինչեւ հեռաւոր անկիւնները: Մինչ այդ կրթական օրէնքներով եւ հրահանգներով իր միջամտութիւնը հետզհետէ աւելի կ'ընդարձակէ բոլոր ոչ-խլամ վարժարաններէն ներս, ինչ որ կը ստեղծէ կնճոտ կացութիւն եւ պատճառ կ'ըլլայ վարչական ու տնտեսական տագնապներու: Կրթական տնօրէնութիւնը (Մէարիֆ) կարգ մը շրջաբերականներով կը սեփականացնէ շատ մը իրաւունքներ: Ազգային վարժարաններու ներքին կեանքը տխուր երեսակներ կը պարզէ եւ հետզհետէ յուսահատական վախճանի մը կը դիմէ:

1923-ին Կ.Պոլսոյ մէջ հայերը կ'ունենան 47 վարժարաններ, ուր ուսում կը ստանան 5865 աշակերտներ⁵⁶³: Նոր վարչակարգի գրեթէ առաջին միջամտութիւնը կ'ըլլայ փոքրամասնութեանց վարժարաններուն համար անուանել Թուրք ուսուցիչներ թրքերէն դասերուն համար՝ վճարումները ձգելով սակայն դպրոցներու վարչութիւններուն⁵⁶⁴:

1924-ի աշնան Հայ վարժարաններու տնօրէնութիւնները, հրահանգ կը ստանան Պոլսոյ կրթական տնօրէնութենէն, որ թրքերէն լեզուով աւանդէն Թուրքիոյ պատմութեան ու աշխար-

⁵⁶³ 75. Yıl Tertip Heyeti, նշծ. աշխ., էջ 33:

⁵⁶⁴ Ժողովուրդի Չայնը, 27.XII. 1923:

հագրութեան դասերը, առանց նկատի առնելու աշակերտներուն թրքերէն լեզուի ծանօթութեան աստիճանը: Կը հրահանգուի նաեւ երեք ամիսը անգամ մը տեղեկագրով իմացնել Կրթական տնօրէնութեան, թէ ի՞նչ չափով կ'աւանդուին թրքերէն լեզուի, պատմութեան եւ աշխարհագրութեան դասերը եւ աշակերտները որքա՞ն յառաջդիմութիւն ցոյց կուտան այս ճիւղերուն մէջ⁵⁶⁵:

Հանրապետութեան առաջին տարիներուն Նառըզարուի ազգային Խորէնեան վարժարանը կը փակուի նիւթական միջոցներու չգոյութեան պատճառաւ⁵⁶⁶:

Պեզճեան Մայր վարժարանը, որ 1790 թուականին կ'ըլլայ Պոլսահայ առաջին թաղային դպրոցը, 1894-ի երկրաշարժին պատճառաւ մեծ վնաս կը կրէ: Օրմանեան Պատրիարքի անձնական դիմումներով 1914-ին կը ձեռնարկուի վարժարանի վերաշինութեան, բայց վրայ հասնող Համաշխարհային Պատերազմի պատճառաւ ձեռնարկը կիսատ կը մնայ: 1923-ին Պատրիարքական Տեղապահ Գեորգ Եպսկ. Ասլանեանի կրկին դիմումով այդ տարին կը ձեռնարկուի վերաշինութեան եւ 24 Յուլիս 1925-ին տեղի կ'ունենայ վարժարանի հանդիսատր բացումը: Ազգային վարժարաններու տնօրէնութիւնները «Ուսման Օրէնք»ին յենելով 3 Մարտ 1924-ի շրջաբերականով կ'ազդարարուին Կրթական տնօրէնութեան կողմէ, ոեւէ յարաբերութիւն չունենալ Ուսումնական Խորհուրդի⁵⁶⁷ հետ, շեշտելով որ անոր իրաւասութիւնը օրինա-

⁵⁶⁵ Յուսարէր, 11.X.1924:

⁵⁶⁶ Յուսարէր, 13.III.1924:

⁵⁶⁷ Ուսումնական Խորհուրդը ըստ Ազգային Սահմանադրութեան Քաղաքական ժողովի ենթաբաժիններէն մէկը կ'ըլլայ, որ առաջին անգամ կը կազմուի 1853-ին Ազգային հոգեւոր եւ գերագոյն ժողովներու համաձայնութեամբ եւ իրաւասու ու

կան բնոյթ չունի⁵⁶⁸: Այսպէս վերջ կը գտնէ այն դրութիւնը, ուր կառավարական 1911 թուականի որոշման համաձայն ուսման ծրագիրներու պատրաստութեան ու ուսուցիչներ վկայելու իրատունքը տրուած էր պատրիարքարանի Ուսումնական Խորհուրդին⁵⁶⁹: 21 Յուլիս 1925 թուակիր Պոլսոյ թերթերը կը ծանուցեն Ուսումնական Խորհուրդի հրաժարականը (առաջին անգամ տեսուչ խորհուրդ մը կը հրաժարի արտաքին պատճառներու բերումով):

1924 աշնանամուտին Կրթական եւ Առողջապահական նախարարութիւններու հրահանգներուն համաձայն կը փակուին «Գաղթականաց կայաններ»ու մէջ որք տղոց ուսում ջամբելու համար Ազգային Խնամատարութեան կողմէ բացուած դպրոցները: Խնամատարութեան նախաձեռնութեամբ համեստ վճարումի մը փոխարէն այս տղաքը կը յաճախեն մօտակայ ազգային վարժարաններ⁵⁷⁰:

Կրթական տնօրէնութիւնը փոքրամասնութեանց վարժարաններուն կը հաղորդէ Կրթական նախարարութեան հրահանգը, որով այդ վարժարանները պարտաւոր կ'ըլլան մինչեւ 1925-1926-ի վերամուտը վաւերացնել իրենց արտօնագրերը, ինչպէս նաեւ կարգել Թուրք պատասխանատու տնօրէն մը, որուն ընտրութիւնը կ'ենթարկուի Կրթական նախարարութեան վաւերացման:

Վաւերացման կ'ենթարկուին նաեւ տնօրէններու եւ ոչ-իսլամ ուսուցիչներու վկայականները, որոնց համար քննութենէ կ'անց-

պատասխանատու կ'ըլլայ համայնքի կրթական հաստատութիւններու եւ ազգային կրթութեան կապուած բոլոր գործունէութիւններէն:

⁵⁶⁸ Արեւ, 14.VII.1925:

⁵⁶⁹ Özdoğan G, G.Ustel F., Karakaşlı K., Kentel F, նշծ.աշխ., էջ 193:

⁵⁷⁰ Առաւօտ, 1.XI.1924:

նին բոլորը⁵⁷¹: Բանկալթիի Մխիթարեան վարժարանը կ'ըլլայ առաջին հայկական դպրոցը, որ Կրթական տնօրէնութենէն կը ստանայ դաստանդութեան արտօնագիր⁵⁷²:

Կառավարութիւնը իր ուզած չափով Թուրք ուսուցիչներ կը պարտադրէ հայկական դպրոցներուն, վճարումը ազգին ձգելով բայց ինք որոշելով անոնց թոշակները, դասաժամը բարձրագոյն կարգերու համար 150 դրուշ, իսկ նախակրթարաններու համար 75 դրուշ: Իսկ թրքերէնի պահերը կը բարձրանան շաբաթական 4-էն 6-ի: Փոքր մանուկներն անգամ, որոնք հազիւ գիտեն թոթովել իրենց մայրենի լեզուն, օրական երկու ժամ թրքերէնի դաս կ'առնեն՝ դասաւանդութեամբ Կրթական տնօրէնութեան նշանակած ուսուցիչին: Այս նորատեսակ հարստահարութիւնը, որ կը ձգտի թրքացումը փութացնել, պատճառ կ'ըլլայ Պոլսահայ կրթական կեանքի մէջ տագնապի:

Դպրոցները կ'ենթարկուին ճնշումի: Ամէնէն չքաւոր դպրոցն անգամ ամսական 80-90 ոսկի կը վճարէ Թուրք ուսուցիչին, երբ Հայ տնօրէնները հազիւ 50-60 ոսկի թոշակ կ'ունենան, իսկ ուսուցիչները՝ 30-40 ոսկի:

Քննութեան կ'ենթարկուին տնօրէնները թրքերէնով, որոնցմէ ձախողածներուն տեղ կը ծրագրուի տեղաւորել Թուրք ուսուցիչներ: Բարեբախտաբար, բոլոր ազգային վարժարաններու տնօրէնները կը յաջողին:

Պոլսոյ Կրթական տնօրէնութիւնը Ազգային վարժարաներու տնօրէնութիւններուն ուղղած վիճակագրական հարցարանով կ'ուզէ իրաքանչիւր վարժարանի շէնքին, տարողութեան, սեփա-

⁵⁷¹ Նոր Լուր, 17.IV.1925:

⁵⁷² Հայաստանի Կոչեակ, , 3.I.1925, թիւ 1:

կանութեան, գոյքերուն, հասոյթներուն, ծախքերուն, ուսուցիչներուն ու աշակերտներուն, նոյնիսկ ծնողներուն հետեւած ասպարեզներուն մասին մանրամասն տեղեկութիւններ⁵⁷³: Կ'արգիլուի Ուսումնական եւ Թաղային Խորհուրդի անդամներուն մուտքը՝ իրենց վարած դպրոցներէն ներս⁵⁷⁴:

1926-ին պաշտօնին վերջ կը տրուի Ամերիկեան վարժարաններուն մէջ պաշտօնավարող Հայ եւ Յոյն ուսուցիչներուն: Կրթական նախարարութիւնը կը պատրաստէ դպրոցական գիրքերու մասին հրահանգ մը, ուր կը տեղեկացնէ թէ

- Ուել դասագիրքի մէջ Թուրք ազգին ներկային եւ անցեալին վերաբերեալ միջադէպի մը եւ Թուրքիոյ սովորութիւններուն ու օրէնքներուն մասին - նոյնիսկ փոքր բառի մը ձեւին տակ - անարգական եւ հեզնական լեզուով խօսուած պիտի չըլլայ: Ընդհանրապէս դասագիրքերուն մէջ Թուրքիոյ աշխարհագրութեան, պատմութեան եւ կեանքին վերաբերեալ սխալ տեղեկութիւններ պիտի չգտնուին:

- Այս գիրքերուն մէջ պիտի չգտնուի նոյնպէս մէկ հատիկ բառ, որ Թուրքիոյ հողին վրայ ոչ-թուրք ազգերու յաւակնութիւններու մասին խօսի եւ անոնց ակնարկութիւն ընէ:

- Թուրքիոյ քարտէսները Լօզանի դաշնագրին որոշած հայրենիքի մասերը ճշտութեամբ պիտի ցուցնեն: Անոր մէջ ուել օտար ազգի ակնարկութիւն ընող բառ մ'իսկ պիտի չգտնուի:

- Չեն կրնար կարդացուիլ այնպիսի գիրքեր, որոնք տարբեր կրօնքի պատկանող տղոց ուրիշ կրօնքի մը վերաբերեալ ներշնչ-

⁵⁷³ Արեւ, 1.X.1925:

⁵⁷⁴ Յառաջ, 18.X.1925:

չումներ ընելու, գայն հրապուրիչ եւ գեղեցիկ ցուցնելու հանգամանք ունին⁵⁷⁵:

Շրջաբերականով կը հրահանգուի, որ կարգ չփոխեն այն աշակերտները, որոնք յաջողութիւն չեն արձանագրած թրքերէն, Թուրքիոյ աշխարհագրութեան եւ պատմութեան քննութիւններուն մէջ, եթէ նոյնիսկ անոնք յաջող ըլլան միւս բոլոր ճիւղերուն մէջ⁵⁷⁶:

Ուղարկուած յաջորդ հրահանգին համաձայն վարժարաններու կնիքներուն եւ պաշտօնական բոլոր թուղթերուն վրայ պարտալիւր կ'ըլլայ գործածութիւնը միայն թրքերէնի, առանց աւելցնելու ուրիշ ռեւէ լեզուով բան մը: Պարտադիր կ'ըլլայ նաեւ վկայականները պատրաստել միայն թրքերէն⁵⁷⁷:

1926-1927 տարեշրջանին Պոլսոյ 24 ազգային վարժարաններուն մէջ ուսում կը ստանան 4480 աշակերտներ: Այս ազգային վարժարաններէն 5-ը (Ըումէլիհիսար, Կէտիկփաշա, Գումգալու, Աոնաուտագիւղ եւ Թօփգաբու) կը մատակարարուին առանց թաղային սնտուկի օժանդակութեան: Նոյնպէս երկու Որբանոցներ կը մատակարարուին իրենց հասոյթներով եւ նուիրատուութիւններով: Ազգային կրթարաններու մէջ կը պաշտօնավարեն 240 ուսուցիչ եւ ուսուցչուհիներ, որոնց 60-ը Թուրք, 65-ը այր, իսկ 43-ը մանկապարտիզպանուհիներ են:

Այս կրթարաններուն ամսական ընդհանուր պիւտջէն կ'ըլլայ 12.451 ոսկի, որուն 2181 ոսկին կը տրուի պետութեան կողմէ նշանակուած Թուրք ուսուցիչներուն:

⁵⁷⁵ Յտուագ, 16.VII.1926:

⁵⁷⁶ Յտուագ, 10.II.1927:

⁵⁷⁷ Յտուագ, 2.III.1927:

Բացի այս ազգային վարժարաններէն, Պոլիս կ'ունենայ նաեւ 7 անհատական վարժարաններ՝ Պէզազեան լիսէ, Նոր Դպրոց, Պէրպէրեան, Թորոսեան (մանկապարտէզ - նախակրթարան), Սուլթանեան (Տիպար կրթարան), Մոմճեան (մանկապարտէզ - նախակրթարան - բարձրագոյն ուսումնարան) եւ Բագրատունի (մանկապարտէզ - նախակրթարան - ուսումնարան ի Բանկալթի), ուր կ'ունանին շուրջ 750-800 երկսեռ աշակերտներ:

Գրեթէ նոյնքան աշակերտութիւն մը կը յաճախէ օտար վարժարաններ (Ըոպլերո Գոլէճ, Սկիւտարի եւ Կէօզթէփէի Ամերիկեան հաստատութիւնները, Ֆրանսական, Իտալական եւ Անգլիական վարժարաններ) եւ Վիեննական, Վենետիկեան, Աղքատասէր Տիկնանց, որով Պոլսոյ Հայ աշակերտութեան թիւը կը հասնի 6000-ի, ներառեալ պետական վարժարաններ յաճախող սակաւաթիւ աշակերտները: Թաղային վարժարաններու մէջ ցրուած կ'ըլլան 300-ի մօտ գաղթական տղաներ, որոնց ուսման եւ սնունդի ծախքերը կը հոգայ Ազգային Խնամատարութիւնը⁵⁷⁸:

1926-1927 տարեշրջանի վերջաւորութեան Պէրպէրեան վարժարանը կը փակուի Կրթական տնօրէնութեան կողմէ: Թրքական «Ճումհուրիէթ» օրաթերթը, փակման իբրեւ պատճառ կը յիշէ, թէ Թուրք ուսուցիչներուն ամսականները չեն վճարուած եւ նաեւ գաղտնի դասարաններ կ'ազմուած են⁵⁷⁹:

Կրթական նախարարութեան արտօնութեամբ 1927-1928 տարեշրջանին Կէտիկփաշա Բնճիրտիպիի Միսս. Պըրճըսի շէնքին մէջ կը վերաբացուի Հայ Աւետարանական Ազգային վարժարան:

⁵⁷⁸ Հայաստանի Կոչնակ, 21.V.1927:

⁵⁷⁹ Հայաստանի Կոչնակ, 2.VII.1927:

նը⁵⁸⁰, որուն հիմնադիրը կ'ըլլայ Վերապատուելի Ս. Պ. Մանուկեան: Վարժարանը կ'ունենայ մանկապարտեզ ու նախակրթարանի բաժիններ, ուր երկսեռ աշակերտութեան թիւը կ'ըլլայ 80:

Շէնքի հակառոտողական հանգամանքի եւ Թուրք ուսուցիչի թոշակի պատճառաւ Կրթական տնօրէնութեան կողմէ փակուած Ենիգաբու Հայկանոյշեան վարժարանի Թաղային Խորհուրդի անդամները եկեղեցապատկան տուն մը նորոգելով վարժարանի կը վերածեն ու վերաբացման արտօնութիւն կը ստանան Կրթական տնօրէնութենէն: Այսպէս՝ 1 Մարտ 1927-ին 44 աշակերտներով կը վերսկսին դասաւանդութիւնները, ունենալով միայն մանկապարտեզ եւ առաջին երկու դասարանները⁵⁸¹:

1928-ին Կեդրոնական վարժարանը Կրթական նախարարութեան կողմէ կը հաստատուի իբրեւ լիսէ, որ մինչ այդ ընդունուած կ'ըլլայ իբրեւ երկրորդական վարժարան: Այս կարգադրութեամբ Կեդրոնականի ընթացաւարտները առանց քննութեան կրնան ընդունուիլ պետական համալսարան կամ մասնագիտական վարժարան⁵⁸²:

1927-1928 տարեշրջանին Սանասարեան Խնամակալութիւնը նիւթական կարելոր օժանդակութիւն կ'ընէ Կեդրոնական վարժարանին եւ անոր փոխարէն հանգուցեալ բարերարին անունը

⁵⁸⁰ Յուշամատեան Հարիւրամեակի Հայց. Աւետարանական Եկեղեցոյ Կէտիկփաշայի (Նախկին Լանկա) 1850-1950 Իսթանպուլ, 1950, էջ 41: Ընդարձակ Տարեցոյց 1928, էջ 365:

⁵⁸¹ Ազդարար, 18.II.1927:

⁵⁸² Մշակ, 13.I.1928:

կ'աւելցուի վարժարանի անունին վրայ, կ'ըլլայ «Կեդրոնական Սանասարեան Վարժարան», թէև ժամանակաւոր⁵⁸³:

Բանկալթիի Մխիթարեան վարժարանն ալ Կրթական նախարարութեան 4 Նոյեմբեր 1928-ի որոշումով կը ստանայ լիակի վերածուելու արտօսութիւն եւ Դեկտեմբեր 1928-էն սկսեալ կ'ընդունուի որպէս լիսէ⁵⁸⁴:

1929-1930 տարեշրջանին Հայ Կաթողիկէ համայնքը Պոլսոյ մէջ կ'ունենայ հետեւեալ վարժարանները.

- Բանկալթիի Վիեննական Մխիթարեան Լիսէ (կ'ունենայ նաև գիշերօթիկ սաներ)

- Սազըզադաճի Վենետիկեան Մխիթարեան վարժարան

- Անարատ Յղութիւն Քոյրերու վարժարաններ

ա - Մայր վարժարան (Սազըզադաճ)

բ - Աղջկանց վարժարան (Բանկալթի)

գ - Աղջկանց վարժարան (Գատըզիդ)

դ - Սուրբ Աննա Որբանոց (Սազըզադաճ)

ե - Սուրբ Աննա Որբանոց (Մամաթիա)

Պոլսոյ Կրթական տնօրէնութիւնը կ'արգիլէ աղօթել դպրոցներուն մէջ: Կը հրահանգուի նաև մարզանքի դասաժամէջուն հրամանները տալ թրքերէնով: Իսկ Պոլսոյ կառավարական հարկահաւաք մասնաճիւղերը հայկական վարժարաններուն կը յանձնարարեն իրենց ներկայացնել մէկ ցանկը վարժարանին եղած նուիրատուութիւններուն, ինչպէս նաև դպրոցապատկան շէնքերուն⁵⁸⁵:

⁵⁸³ Ընդարձակ Տարեցոյց, 1928, էջ 395:

⁵⁸⁴ Հայաստանի Կոչնակ, 14.VII.1929, թիւ 28:

⁵⁸⁵ Հայաստանի Կոչնակ, 8.III.1930, թիւ 10:

1930 Յուլիսին Քաղաքական ժողովի Տնտեսական Խորհուրդը անհրաժեշտ տեսնելով վարժարաններու միացման ծրագիրը, կ'որոշէ որ Օրթագիւղի եւ Առնաուտգիւղի նախակրթարանները չպահեն իրենց բարձրագոյն երկու դասարանները ու այս դասարաններու աշակերտները դրկեն Պէշիկթաշ, որ կը պահէ ամբողջական կարգեր⁵⁸⁶:

30-ական տարիներուն Պոլսահայ վարժարանները հիմնական խնդիրներ կ'ունենան նաեւ թաղականի եւ տնօրէնի փոխադարձ անհասկացողութեան եւ վստահութեան պակասի, ինչպէս նաեւ անվարչազիտութեան, անձեռնհասութեան, յոռի մատակարարութեան եւ կառավարական պատճառներով յառաջացած եւ քրոնիկ վիճակ ստացած նիւթական տագնապի պատճառաւ⁵⁸⁷: Իսկ վարժարաններու պիւտջէն, աշակերտներու թռչակներուն աստիճանաբար նուազման, կալուածական եւ եկեղեցական հատոյթներու պակսելուն հետեւանքով, հետզհետէ կը խանգարուի:

Կրթական նախարարութիւնը շրջաբերականով կը տեղեկացնէ, թէ 1931-1932 տարեշրջանէն սկսեալ փոքրամասնութեան լիսէի շրջանաւարտներ որպէսզի համալսարան ընդունուին պէտք է կամ պետական լիսէի քննութիւններու մասնակցելով յաջողութիւն արձանագրեն եւ կամ իբր առժամեայ աշակերտ արձանագրուին համալսարան, տարի մը հոն պատրաստուելով «պաքալորիայի» քննութեան յաջողութիւն արձանագրեն⁵⁸⁸:

Էսաեան վարժարանը 1932 Յունիսին կը սկսի ազգին պարգեւել լիսէի շրջանաւարտուիլներ, որոնք մեծ դեր կը կատարեն Հայ

⁵⁸⁶ Ազդարար, 16.VII.1930:

⁵⁸⁷ Արևելք, 6.IX.1932:

⁵⁸⁸ Արևելք, 12.XI.1931:

իզական սեռին բարձրացման եւ ապագայ սերունդներուն դաս-տիարակութեան գործին մէջ⁵⁸⁹:

Գնալը կղզին, նաւամատոյցին մօտակայ շուկային մէջ 1932 Փետրուարին կը ծագի հրդեհ մը եւ կ'այրի Ներսէսեան Ազգային վարժարանը, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ կալուածներէն Թատրոնը⁵⁹⁰: Ազգային բարերար Տիգրան Գազազեան ազգին կը նուիրէ շէնք մը, որպէսզի գործածուի իբրեւ վարժարան: Այսպէս՝ 30 Սեպտեմբեր 1932 Ուրբաթ վերաբացումը կը կատարուի Գնալի Ներսէսեան վարժարանին, որ նախախնամական դեր կը կատարէ կղզեբնակ տղոց համար⁵⁹¹:

Իսկ մինչեւ այդ թուականը դասախօսութիւնները Կրթական տնօրէնութեան արտօնութեամբ կը շարունակուին Թաղային Խորհրդարանին մէջ⁵⁹²:

Կրթական տնօրէնութիւնը 6 Մայիս 1933 թուակիր եւ 3961/51 թիւ շրջաբերականով կը ճշտէ ամավերջի քննութեան օրերը, քննութեան ցուցակներու պատրաստութեան կերպը, քննութեան քննիչներու մասին կատարուելիք կարգադրութիւնները ու կը յայտնէ հանդէսի կամ մրցանակաբաշխութեան համար նախապէս արտօնութիւն առնելու անհրաժեշտութիւնը⁵⁹³:

Կրթական տնօրէնութիւնը խիստ քննութեան կ'ենթարկէ հայերէն լեզուով գրուած բոլոր դասագիրքերը եւ չ'արտօներ գործածութիւնը այն գիրքերուն, որոնք չեն վաւերացուած Կրթական նա-

⁵⁸⁹ Արեւելք, 3.VII.1932:

⁵⁹⁰ Հայաստանի Կոչնակ, 9.IV.1932:

⁵⁹¹ Արեւելք, 1.X.1932:

⁵⁹² Արեւելք, 27.II.1932:

⁵⁹³ Օրագրութիւն Գարակէօզեան Ազգային Որբանոցի Խնամակալութեան (1.04.1933-31-01-1936), Կ.Պոլիս, 1933, էջ 13:

խարարութեան կողմէ: Կ'արգիլէ նաեւ վերոյիշեալ գիրքերու Ուսումնական Խորհուրդի կողմէ վաւերացումը՝ շեշտելով, թէ ան օրինաւոր իրաւասութեան տէր չէ: Այս նպատակով 5 Յունիս 1934-ի 5059/2223 համար շրջաբերականը կ'ուղարկէ Գարակէօզեան Ազգային որբանոցի տնօրէնութեան, հրահանգելով ջնջել գիրքերու կազմ ու տիտղոսաթերթերէն «վաւերացուած՝ Պատրիարքարանի Ուսումնական Խորհուրդի կողմէ» նախադասութիւնը⁵⁹⁴:

Այս շրջաբերականէն երկու տարի վերջ, երբ դեռ գործածութեան մէջ կը գտնուին Ուսումնական Խորհուրդի կողմէ վաւերացուած դասագիրքերը, Կրթական տնօրէնութիւնը 25 Սեպտեմբեր 1936 թուական եւ 67160/2780 համար գրութեամբ «Յատուկ դպրոցներու կանոնագրութեան» 39. յօդուածին համաձայն կը դատապարտէ Գարակէօզեանի տնօրէնութիւնը եւ կը նախազգուշացնէ, որ հրահանգին չանսալու պարագային պիտի ենթարկուի աւելի ծանր պատիժի⁵⁹⁵:

1934 Սեպտեմբերին Կրթական նախարարութիւնը շրջաբերականով մը վերջ կուտայ օտար եւ փոքրամասնութեանց վարժարաններու (լիսէներու) վկայական տալու իրաւունքին: Այս վարժարանները յաճախած, ընթացաւարտութեան թեկնածու ուսանողներ, վկայական ստանալու համար իրենց վարժարանին մէջ տեղի ունեցած աւարտական քննութիւններէն վերջ կը պարտաւորուին նաեւ մասնակցիլ ու յաջողիլ պաշտօնական «պարա-

⁵⁹⁴ Գարակէօզեան Ազգային որբանոցի անմշակ արխիւ, Կրթական տնօրէնութեան 5 Յունիս 1934 թ. եւ 5059/2223 համար հրահանգը (Յաւելուած 4):

⁵⁹⁵ Գարակէօզեան Ազգային որբանոցի անմշակ արխիւ, Կրթական տնօրէնութեան 25 Սեպտեմբեր 1936 թ. եւ 67160/2780 համար գրութիւնը (Յաւելուած 5):

լորիայի» քննութեան, որմէ վերջ միայն Կրթական նախարարութեան կողմէ վկայական կը տրուի իրենց⁵⁹⁶:

Ելմտական նախարարութեան մասնաճիւղերը 1934-ի «Եկամտուտի տուրքի նոր օրէնք»ին համաձայն շահատուրք կը պահանջեն ազգային վարժարաններէ, պետական ծրագիրը չգործադրելու պատճառաւ ընդունելով զանոնք իբր յատուկ վարժարաններ: Տնօրէններ գրաւոր կերպով կը բացատրեն իրենց պատկան ելմտական մասնաճիւղերուն, թէ համայնքային վարժարաններ ըլլալով, օրէնքին պարտադրած նախակրթութիւնը համայնքի տղոց տալու համար բացուած հաստատութիւններ են եւ ոչ թէ շահ կը մտածեն⁵⁹⁷: Ելմտական նախարարութիւնը երկար քննութիւններ կատարելէ վերջ, 1935-ին որոշում կը կայացնէ, թէ փոքրամասնութեան ազգային վարժարանները չըլլալով առեստրական հաստատութիւններ ընդունուած են իբր բարեսիրական հաստատութիւններ եւ այդ պատճառաւ զերծ կը մնան շահատուրք վճարելէ⁵⁹⁸:

Սկիւտարի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Թաղային Խորհուրդը 1930-ականներու սկիզբը նիւթական դժուարութեան մատնուելով նախ մանկապարտեզի կը վերածէ Սուրբ Խաչ վարժարանը, որ պատմական համբաւ կ'ունենայ, ապա բոլորովին կը փակէ զայն: Իսկ Ճեմարան վարժարանը, որ Պոլսոյ անդրանիկ կանոնաւոր արդիական կրթարանը կը հանդիսանայ, անելի կը մատնուի ու կ'ու-

⁵⁹⁶ Արեւելք, 28.XII.1934:

⁵⁹⁷ Ազդարար, 16.IV.1934:

⁵⁹⁸ Ազդարար, 27.III.1935:

ներայ միայն մէկ մանկապարտէզ ու մէկ դասարան, Սուրբ Խաչ վարժարանի շէնքին մէջ⁵⁹⁹:

Ազգային վարժարանները շատ լուրջ տագնապ կ'ապրին: Ուսուցիչներ ամիսներով թոշակ չեն կրնար ստանալ եւ քանի որ վերջին տարիներու ընթացքին կարելի ամէն խնայողութիւն կատարուած կ'ըլլայ, 1935-ին ուսուցիչներ կ'արձակուին զանգուածօրէն՝ հակառակ որ հրապարակին վրայ ուսուցիչի սով կը տիրէ:

Կրթական նախարարութիւնը 8 Փետրուար 1934 թուակիր եւ 2004 համար հրահանգով կը ջնջէ Էսսեան վարժարանի անգլերէնի դասերը, Բերայի Թաղային Խորհուրդի կողմէ խնայողական նկատառումներով «Կրթական Նախարարութեան Ուսումի եւ Դաստիարակութեան Յանձնաժողովին» կատարուած դիմումին պատճառաւ⁶⁰⁰:

1934-ին Կեդրոնական վարժարանն ալ մեծապէս կը ցնցուի, կորսնցնելով իր նիւթական աղբիւրներուն մեծագոյն մասը, ինչպէս նաեւ ազգընտիր խնամակալութեան մը ներկայութիւնը: Վարչութիւնը Էսսեանի լիսէի կարգերը կը միացնէ Կեդրոնականին⁶⁰¹: Այսպէս Կեդրոնական կ'ըլլայ երկսեռ լիսէ մինչեւ 1953-1954 տարեշրջանը⁶⁰²:

1935-ին, բացարձակապէս անհրաժեշտ նկատուելով Ազգային Խնամատարական Որբանոցի եւ Գարակէօզեան Որբանոցի մատակարարական եւ վարչային միացումը, Վարչային ժողովը

⁵⁹⁹ Նոր Լոյս, 2.VIII.1934:

⁶⁰⁰ Ազդարար, 15.II.1934:

⁶⁰¹ Ազդարար, 3.VII.1935:

⁶⁰² Կումիկեան Վ., Կեդրոնականը Հանրապետութեան Շրջանին, Շողակաթ 1971-72, Իսթանպուլ, 1973, էջ 28:

խորհրդակցութեան կը հրաւիրէ երկու հաստատութեան ղեկավարները⁶⁰³: Բայց այդ շրջանին ապարդիւն կը մնան ջանքերը:

Կրթական նախարարութեան որոշումով լիսէներու եւ միջնակարգ վարժարաններու ուսուցիչները շաբաթը առաւելագոյն 24 ժամ դասաւանդելու եւ այս ժամերը առաւելագոյն երկու դպրոցի յատկացնելու իրաւունք կ'ունենան⁶⁰⁴:

Կրթական տնօրէնութեան հրահանգով եւ կրթական քննիչի մը նախագահութեամբ Հայ դպրոցներու տնօրէններէ բաղկացած յանձնաժողով մը հայկական նախակրթարաններու ուսումնական եւ կարգապահական միօրինակութիւնը ապահովելու համար կը պատրաստէ «միօրինակ կանոնագիր եւ ուսման ծրագիր» մը, որ 1937-ին Կրթական նախարարութեան կողմէ կը հաստատուի «Հայ Վարժարաններու Յատուկ Հրահանգ» (Իսթանպուլ Էրմէնի Օգուլլարը Թալիմաթնամէսի) վերտառութեամբ: Այս ծրագրով կը ճշդուին Հայ վարժարաններու արձանագրութեան պայմանները, իւրաքանչիւր դասարանի կրթական մակարդակը, արձակուրդի օրերը եւն⁶⁰⁵:

Նոր կանոնագրի եւ ուսման ծրագրի ամբողջական գործադրութիւնը կը սկսի 1937-1938 տարեշրջանին⁶⁰⁶:

Կրթական տնօրէնութեան ղեկավարութեամբ պատրաստուած այս հասարակաց կանոնագիրին համաձայն վարժարաններու մէջ թրքերէն լեզուով կը դասաւանդուին թրքերէն եւ թուրք

⁶⁰³ Ազդարար, 25.V.1935:

⁶⁰⁴ Ժամանակ, « 28.VIII.1936:

⁶⁰⁵ Ժամանակ, 4.VIII.1936:

⁶⁰⁶ Հինդլեան Յ., Իսթանպուլի Հայ վարժարաններուն Յատուկ միօրինակ կանոնագիրը եւ ուսման ծրագիրը, Տարեցոյց Ս.Փրկիչ Ազգային Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1938, էջ 127:

մշակութային դասերը (Թուրքիոյ պատմութիւն, աշխարհագրութիւն եւ քաղաքացիական կրթութիւն)⁶⁰⁷: Այս կանոնագրութեան համաձայն օտար լեզուներու ուսուցումը կը սկսի նախակրթարաններու երրորդ դասարանէն⁶⁰⁸:

Վազըֆներու տնօրէնութիւնը Թաղային Խորհուրդներէ կը պահանջէ վարժարաններու պիտօջէն, անոնցմէ գանձելու համար 5% բաժին⁶⁰⁹: Իսկ Կրթական տնօրէնութիւնը շրջաբերականով մը կը հաղորդէ բոլոր վարժարաններու տնօրէններուն եւ հիմնադիրներուն հրաման մը, որով կը պահանջէ Թաղային Խորհուրդներու կողմէ Վազըֆներու տնօրէնութեան տրուած պիտօջէին նման պիտօջէ մը ներկայացնել իրեն յառաջիկայ 1938-1939 տարեշրջանէն սկսեալ, մանրամասնօրէն ցոյց տալով թոշակներէ, նուիրատութիւններէ եւ Թաղային Խորհուրդի յատկացումներէ գոյացած գումարները, նաեւ մանրամասն մէկ ցուցակը ծախքերուն եւ հասոյթներուն⁶¹⁰:

Կրթական տնօրէնութեան հրահանգով 1936-1937 տարեշրջանին փոքրամասնութեանց լիսէներու Թուրք ուսուցիչներէն մէկը կ'ընտրուի իբրեւ «փոխ-տնօրէն», որպէսզի օգնէ տնօրէնին՝ կրթական տնօրէնութեան հետ պաշտօնական յարաբերութիւններուն եւ թղթակցութեան մեջ⁶¹¹: Իսկ յաջորդ տարեշրջանին Կրթական տնօրէնութեան կողմէ նախակրթարաններու համար «փոխ-տնօրէն» կը նշանակուի նոյն վարժարանի թուրք մշակոյթի կամ թրքերէն լեզուի ուսուցիչներէն մէկը: Կը հրահանգուի նաեւ ունե-

⁶⁰⁷ Հայաստանի Կոչնակ, 25 .XII.1937, թիւ 52:

⁶⁰⁸ Նոյն Լուր, « 9.VIII.1937:

⁶⁰⁹ Հայաստանի Կոչնակ, 21.VIII.1937, թիւ 43:

⁶¹⁰ Արեւելք, 19.III.1938:

⁶¹¹ Հայաստանի Կոչնակ, 22.V.1937, թիւ 21:

նալ տղոց յատուկ, թրքերէն գիրքերով պատրաստուած մատենադարան մը եւ հանդիսութիւնները կատարել կամ թրքերէն լեզուով եւ կամ հանդէսի նիւթերը թարգմանել ու ներկայացնել Կրթական տնօրէնութեան, հանդէսէն ամիս մը առաջ՝ արտօնութիւն ստանալու համար:

1937-1938 տարեշրջանին Պոլսոյ Հայ համայնքը կ'ունենայ 37 կրթական հաստատութիւններ (ազգային եւ անհատական), որոնց երկու հատը կ'ունենան միայն մանկապարտեզ, մէկը միայն միջնակարգ, իսկ երեք հատը՝ միջնակարգ եւ լիսէի բաժիններ: Նոյն տարեշրջանին համայնքը կ'ունենայ 177 ուսուցչուհիներ եւ 110 ուսուցիչներ⁶¹²: Լիսէի շրջանաւարտները պետական ծրագրին համաձայն աւարտական քննութիւններու յաջողելէ վերջ կ'ընդունուին համալսարան⁶¹³:

1938-ին կրկին օրակարգի նիւթ կ'ըլլայ Սկիւտարի Խնամատարական եւ Գարակէօզեան Որբանոցներու միացման հարցը, որ վերջին տարիներուն միշտ կը զբաղեցնէ հանրային կարծիքը: Երկարատեւ բանակցութիւններէ եւ խորհրդածութիւններէ վերջ, կ'իրականանայ այս երկու որբանոցներու միացումը: Կը հրաժարին Գարակէօզեանի եւ Խնամատարական որբանոցի խնամակալութիւնները եւ կ'ընտրուի Գարակէօզեան-Խնամատարական միացեալ Որբանոցի նոր խնամակալութիւն մը, աստենապետութեամբ Գ. Թորգոմեանի:

Կը պատրաստուի միացեալ որբանոցի ներքին կանոնագիրը, որ կը սկսի գործադրուիլ 1938-1939 տարեշրջանին: Սկիւտար

⁶¹² Ազատեան Թ.-Գօչունեան Մ., Արմաղան՝ Թուրքիոյ Հանրապետութեան 15. ամեակին առթիւ, Իսթանպուլ, 1938, էջ 32:

⁶¹³ Ընդարձակ Տարեգիրք Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939, էջ 51:

Խնամատարականի որբերը 18 Հոկտեմբեր 1938-ին կը փոխադրուին Շիշլի Գարակեօզեան որբանոցի շէնքը, ուր կը միանան Գարակեօզեանի որբերուն: Իսկ Սկիւտարի 13 որբուհիները կը դրկուին Խասգիւղի Գալֆաեան անղջկանց որբանոցը⁶¹⁴:

Ռումելիիսարի Թադէոսեան ու Գնայը Կոզլի Ներսէսեան վարժարանները կը փակուին 1938-ին⁶¹⁵:

Հետեւելով վերոյիշեալ փաստերուն ու տեղեկութիւններուն, կարելի է պատկերացնել թէ Պոլսահայ կրթական կեանքը Հանրապետութեան 20-30-ական թուականներուն զանազան գործօններու ազդեցութեամբ կ'ապրի հետզհետէ ծանրացող հոգեվարքի վիճակ մը, որուն հետեւանքները տեսանելի են եւս մեր օրերուն:

⁶¹⁴ Արեւելք, 18.X.1938:

⁶¹⁵ Արեւելք, 19.X. 1938:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պոլսահայերը կը կազմեն աւելի քան 350 մշակութային ընկերութիւններ, որոնց գլխաւոր նպատակը կ'ըլլայ ծառայել Հայ ժողովուրդի մտաւոր զարգացման ու կրթական վերելքին: Անոնք կը հիմնեն ու կը բարեկարգեն դպրոցներ, կը բանան հրատարակչատուններ, լսարաններ, թանգարաններ եւ գրադարաններ՝ ամբապնդելով ազգին մէջ ընկերական կապն ու փոխադարձ վստահութիւնը, որոնք սակայն, ընդհանրապէս երկար չեն կրնար պահել իրենց գոյութիւնը եկամուտի անկայունութեան պատճառաւ: Մինչեւ 1810 Հայ Ընկերութիւնները կը կոչուին «եղբայրութիւն», 1810-1908 թուականներու միջեւ «ընկերութիւն» իսկ 1908-էն սկսեալ մեծ մասով կը կրեն «միութիւն» տիտղոսը¹⁶:

Իբր գուտ մշակութային ընկերութիւն «Արշարունեաց Ընկերութիւնը» կ'ըլլայ առաջինը Պոլսահայ մշակութային ընկերութիւններու, հիմնուած՝ 1812-ին Յովհաննէս Չէլէպի Տիւզեանի կողմէ Գուրուչէշմէի մէջ, նպատակ ունենալով ազգին լուսաւորութեան համար գիրքեր տպագրել եւ ընթերցասիրութիւնը տարածել: Այս ընկերութիւնը օրինակ կը հանդիսանայ համայն հայութեան մշակութային գետնի՝ վրայ հաւաքական աշխատութեան եւ միութենական գործունէութեան մինչեւ 1819¹⁷:

Կ.Պոլսոյ մշակութային ընկերութիւններու կարգին կարելի է նշել՝

- Օրթագիւղի Սուրբ Թարգմանչաց Ընկերութիւնը (1844),

¹⁶ Պողոսեան Հ.Ե., Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Հանդէս Ամսօրեայ 1950-1951, Վիեննա, էջ 538-546:

¹⁷ Պողոսեան Հ.Ե., Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Հանդէս Ամսօրեայ, 1952-1953, Վիեննա, էջ 626-628:

- Համազգեաց Ընկերութիւնը (1846),
- Մեսրոպեան Ընկերութիւնը (1847),
- Բարեգործական Ընկերութիւնը (1860),
- Քնար Հայկական Ընկերութիւնը (1861),
- Արարատեան Ընկերութիւնը (1876),
- Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը (1879),
- Միացեալ Ընկերութիւնք Հայոցը (1881),
- Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութիւնը (1884) եւ ուրիշներ:

Կ. Պոլսոյ կարեւորագոյն եւ ամենաերկարակեաց ընկերութիւններէն մէկը կ'ըլլայ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը (ապա Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն), որուն հիմնադիրները կ'ըլլան Ս. Տիւսար, Ն. Վահան, Թ. Պալթազարեան, Զ. Ֆընտըքլեան եւ Ն. Սիմէոնեան:

1 Սայիս 1879-ին կազմուող Ընկերութիւնը, որ նպատակ կ'ունենայ օգնել Հայազգի իգական սեռի դաստիարակութեան եւ զաւանդելու համար ուսուցչուհի պատրաստել, կ'ունենայ երկու ժողովներ՝ Ընդհանուր եւ Գործադիր:

Ընկերութիւնը իր անդրանիկ վարժարանը կը բանայ 5 Նոյեմբեր 1879-ին Օրթագիւղի մէջ, ապա կը փոխադրէ զայն Գումգարու 1889-ին: Դպրոցասէր Տիկնանց Վարժարանը նախ 1922-ին Սելանիկ, ապա 1924-ին Մարսելլ եւ չորս տարի վերջ Փարիզի արուարձան Ռէնսիի մէջ կը հաստատուի⁶¹⁸: 1948-ին Ֆրանսական կառավարութիւնը զայն կ'ընդունի որպէս միջնակարգ վարժարան (այժմ երկսեռ):

⁶¹⁸ Պողոսեան Հ.Ե., Պատմութիւն Հայ Սշակութային Ընկերութիւններու, Հանդէս Ամսօրեայ, 1952-1953, Վիեննա, էջ 607-622:

ՊՈԼՍԱՀԱՅ ԲԱՐԲԱՌԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Պոլսահայը մնայուն բարբառ մը չ'ունենար երբեք, քանի որ գոյութիւն չ'ունենար Պոլսահայ մնայուն գաղութ մը: Ամէն անգամ, որ գաղթի նոր կարաւաններ կը հոսին Պոլիս եւ իրենց կնիքը կը դնեն տեղոյն. բարբերուն, սովորութիւններուն եւ բարբառին վրայ, գաղութն ու իր բարբառը դիմագիծ կը փոխեն: Պոլիս, որպէս Հայ ժողովուրդի արեւմտեան հատուածի գերագոյն կեդրոն, գրեթէ ամբողջ դար մը կը մաքառի՝ ստեղծելու համար իր լեզուն եւ իր գրականութիւնը:

Պոլսոյ գլխաւոր արժանիքներէն մէկը կ'ըլլայ իր կատարած դերը արեւմտահայ աշխարհաբարի կազմութեան մէջ: Գրական աշխարհաբարը, որ ռամկօրէնին վրայ կը հիմնէ իր քերականութիւնը, ԺԹ. Դարուն ծնունդ կ'առնէ Պոլսոյ մէջ որպէս գրական ու կրթական լեզու, հետզհետէ կը զարգանայ ու կը դառնայ նաեւ խօսակցական բարբառ⁶¹⁹:

⁶¹⁹ Միրունի Յ., նշծ.աշխ., Ա.Հատոր, էջ 44:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԳՐԱՏՊՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՍՈՒԼԸ

Կ. Պոլիս ԺԹ. Դարու կեսերէն սկսեալ ամբողջ կէս դար եւ աւելի կ'արձանագրէ հսկայ զարթօնք մը գրական եւ առհասարակ գեղարուեստական բոլոր մարզերու մէջ:

Սակայն Ա. Աշխարհամարտէն սկսեալ պարագան կը փոխուի: Արեւմտահայ մտաւոր կեանքը մեծ չափով կը կորսնցնէ իր ընտրանին պատերազմի ընթացքին կատարուած ոչնչացման հետեւանքով:

Հանրապետութեան հռչակման հետեւող տասնեակ տարիներու ընթացքին Պոլսահայ գրականութիւնը հետզհետէ կը կորսնցնէ իր հմայքը, կը պակսի հաւաքական արտայայտութիւնը, միայն անհատական նախաձեռնութիւններու արդիւնքով կը հրատարակուին որոշ երկեր:

Ժողովուրդի անտարբերութեան պատճառաւ չեն կրնար ծաւալիլ հանդէսները եւ հրատարակիչներ մեծ մասամբ կը պարտաւորուին վերջ տալ իրենց գործունէութեան⁶²⁰:

Մինչեւ Ա. Համաշխարհային պատերազմ, երբ Կ. Պոլիս կ'ըլլայ Հայ ժողովուրդի հոգեկան երկու մեծ կեդրոններէն մէկը, կը գրաւէ առաջին տեղը իր տպած գիրքերու թիւով⁶²¹: Հայ տպագրութիւնը Կ.Պոլիս մուտք կը գործէ 1567 թուականին Աբգար Դպիր Թորատցիի միջոցաւ: 1677-ին Երեմիա Չէլէպի կը հիմնէ Կ. Պոլսոյ մէջ երկրորդ Հայ տպարանը, ուր կը հրատարակէ իր կրօնական քերթուածներու հաւաքածոն եւ Երուսաղէմի սուրբ Տեղեաց մասին գրքոյկ մը: 1694-ին Գրիգոր Մարգուանցի հիմը կը դնէ Պոլսոյ

⁶²⁰ Պալեան Տ., Էօզեր Ա., Եանըզեան Ա., Քիւրքճեան Յ., Համայնապատկեր Հանրապետական շրջանի Իսթանպուլյահայ գրականութեան, Իսթանպուլ, 1957, էջ 3:

⁶²¹ Միրունի Յ., նշծ.աշխ., Ա.Հատոր, էջ 46:

երրորդ Հայ տպարանին, որ գոյութիւն կ'ունենայ ամողջ 40 տարիներ⁶²²:

ԺԸ. Դարուն սկիզբը, 1701-ին Մխիթար Սեբաստացի իր միաբանութիւնը կը հաստատէ Բերայի մէջ: Տպարաններ կը բացուին եւ կը տպագրուին «Բուրաստան» (1704), «Տումար» (1709), «Ժամագիրք» (1712) եւ «Աստուածաշունչ» (1705)⁶²³:

Կոլոտ Պատրիարքի շրջանին (1715-1741) կը գործէ Աստուածատուր Դպիր Արապօղլուի տպարանը, որ Կ. Պոլսոյ մէջ գործող Հայ տպարաններէն ամենաբեղունը կ'ըլլայ եւ անընդհատ կը գործէ 50 տարի: Իր շառաւիղները որդւոց որդի լման մեկուկէս դար կը մնան տպագրական արուեստի պատնէշին վրայ: Այս սերունդէն ամենանշանաւորը կ'ըլլայ Պօղոս Արապեան, որ նաեւ կարեւոր ծառայութիւն կը մատուցէ Օսմանեան պետութեան, հնարելով թրքերէն «Նեսիհ» եւ «Թալիք» գիրերը, որոնք կը յորջորջուին «Արապօղլու»⁶²⁴:

Հանրապետութեան շրջանին, մինչեւ 1939 Պոլիս կ'ունենայ հետեւեալ տպարանները. –Սեթեան, Մելքոն Յովակիմեան (Առետրական), Մ.Տէր-Սահակեան (Ազիւն), Արեւ, Պէճիտեան եղբայրներ, Թագուր Մարտիրոսեան, Յակոբ Աբրահամեան, Գ.Փալագաշեան, Ֆ.Ճարեան, Դանիէլ Յովհաննէսեան (Սէլամէթ),

⁶²² Միրունի Յ., նշծ.աշխ., Ա.Հատոր, էջ 65:

⁶²³ Հանէսեան Մ., Հարիւրբասնեւիկնց ամեայ Յոբելեան Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ, Կ.Պոլիս, 1932, էջ 18:

⁶²⁴ Գալուստեան Շ. Արք., նշծ.աշխ., էջ 10:

Յ. Ասատուրեան Որդիք, Ազգարար, Ն. Ե. Ս. Թերզեան, Արթուն, Ս. Ասլանեան, Արեւելք եւ ուրիշներ⁶²⁵:

Կ. Պոլսոյ առաջին լրագիրը «Լրոյ Գիր Մեծի Տէրութեան Օսմանեան» կը հրատարակուի 1832-ին, որ թարգմանութիւնը կ'ըլլայ «Թագվիմ ի Վագայի» թրքերէն թերթին: Նոյն թերթը լոյս կը տեսնէ 1840-ին «Թագվիմ ի Վագայի» անուան տակ, հայատառ թրքերէն լեզուով, իսկ 1843-ին «Յայտարար Գիր Լրոյ Մեծի Տէրութեան Օսմանեան» անունով եւ հայերէն լեզուով: 1846-ին Պատրիարքարանը կը նախաձեռնէ հրատարակել «Հայաստան» շաբաթաթերթը, իւմբագրութեամբ Յովհաննէս Պատուելի Չամուրճեանի (Տէրոյենց) եւ Մկրտիչ Աղաթօնի, որ կը դադրի 1852-ին⁶²⁶:

ԺԹ. Դարու կէսէն սկսեալ լրագրութիւնը հսկայ թափ մը կ'առնէ եւ Կ.Պոլսոյ մէջ կը հրատարակուին բազմաթիւ օրաթերթ, շաբաթաթերթ եւ երկշաբաթաթերթեր, ամսաթերթեր. Ինչպէս՝ Նոյեան Աղանի շաբաթաթերթ (1852-54), Արծուի Վասպուրականի ամսաթերթ (1855-1856, Կ.Պոլիս, 1858-1864 Վան, 1872-1874 Կ. Պոլիս), Մեղու երկշաբաթաթերթ (1856-1865, 1870-1874) եւլն⁶²⁷:

Հանրապետական շրջանին Պոլիս կ'ունենայ բազմաթիւ թերթեր, որոնցմէ ոմանք արդէն սկսած են հրատարակուիլ Ի. Դարուն, մասնաւորաբար 1908-ի Սահմանադրութեան հռչակումէն վերջ. Ինչպէս՝ Ազգակ (1908-1909), Ժամանակ (1908-1936, 1945-

⁶²⁵ Բամպուրճեան Գ., Մատենագիտութիւն Հանրապետական Յիսնամայ Շրջանի, Շողակաթ 1978, էջ 9-32: Seropyan V., Ermeni Basimevleri, Istanbul Ansiklopedisi Cilt III., Istanbul, 1994, S. 181-183.

⁶²⁶ Բաբոյան Մ.Ա., Հայ Պարբերական Մամուլը. Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), Երեւան, « 1986, էջ 25-26:

⁶²⁷ Նոյն տեղէն, էջ 28-29:

մինչև այսօր)⁶²⁸, Կավրոշ (1908-1927՝ այս թուականն է վերջ Փարիզ), Ազատամարտ (1909-1914, 1918-1924), Առաւօտ (1909-1924), Ճակատամարտ (1918-1924), «Մարմարա» (1924-1926), Վերջին Լուր (1914-1930), Ժողովուրդի Չայնը (1919-1920), Լոր Լուր (1924-1954), Աւետիս (1924-1925), Յաղթանակ (1925), Անուշապուր (1925), Դիտակ (1925-1933), Արեւ (1926), Ազդակ (1927-1937), Ազդարար (1927-1936), Մեղու (1927-1928), Արծիւ (1928), Շեփոր (1928-1929), Ազատ Թուրքիա (1928), Շարժում (1930-1931), Կիթառ (1930), Արձագանգ (1930-1931), Արեւելք (1931-1939), Արշալոյս (1931-1932), Զարթօնք (1932-1933), Մամուլ (1932), Լոր Լոյս Շաթաթաթերթ (1933-1934), Թուրքիա (1935), Լոր Յոյս (1935-1936), Բանբեր Շաթաթաթերթ (1933-1934), Ոսփոր Երգիծական Շաթաթաթերթ (1933), Նկար Երգիծաթերթ (1933-1934)⁶²⁹:

1932 թուականին Պոլսահայ Օրաթերթերու Տպաքանակը ⁶³⁰	
Թերթ	Տպաքանակ
Ազդարար	3366
Ժամանակ	3600
Լոր Լուր	2766

⁶²⁸ 1920-1924 տարիներուն լոյս կը տեսնէ «Ժողովուրդի Չայնը-Ժամանակ», իսկ 1935-ին «Ժամանակ-Թուրքիա» խորագրով:

⁶²⁹ Կիրակոսյան Ա., Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն (1794-1967). Համահավաք ցանկ, Երեւան, 1970, էջ 35-147:

⁶³⁰ Bali R., Gazete Tirajları, Tarih ve Toplum Mayıs 2005 sayı 221, s. 19.

1924-ին կառավարութիւնը կը դադրեցնէ «Վերջին Լուր», «Ժողովուրդի Չայնը» եւ «Ճակատամարտ» օրաթերթերու հրատարակութիւնը՝ իրենց արտօնատէրերուն Պոլիսէն բացակայութեան պատճառաւ⁶³¹: «Ճակատամարտ»ի տեղ կը հրատարակուի «Առաւօտ» եւ «Վերջին Լուր»ի տեղ «Ժամանակ» օրաթերթերը նոյն ուղղութեամբ եւ բովանդակութեամբ, միայն անունի եւ արտօնատիրոջ փոփոխութեամբ: Իսկ յաջորդ տարի Նախարարներու խորհուրդին որոշումով Պոլսոյ ոստիկանութեան կողմէ կը փակուի «Յաղթանակ» շաբաթաթերթը, անյայտ մնալով փակման շարժառիթը⁶³²:

Պոլիս նոյն շրջանին կ'ունենայ նաեւ հանդէսներ ու տարեցոյցներ, որոնք մեծապէս կը ցոլացնեն շրջանի կենցաղը. Այսպէս՝ Տ.Զարմայր Ա.Քահանայ Կէզիւրեանի «Հայ Խօսնակ» կրօնաբարոյական ամսաթերթը (1924-1939), «Հայ Կին» (1919-1933), զոր կը խմբագրէ Հայկանոյշ Մառք, «Հայ Պատանիներու Տարեցոյցը» (1926), Բագարատ Թեւեանի «Երջանիկին Տարեցոյցը» (1928-1967), Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյցը» (1909-1929), «Վանականին Տարեցոյցը» (1928) եւ «Ընդարձակ Տարեցոյց Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի»: Այս օրաթերթ, հանդէս եւ տարեցոյցներուն շուրջ կը խմբուին շրջանի հին ու նոր դէմքերը՝ Յ. Մրմրեան, Յ. Մարթեան, Յ. Մնձուրի, Հ. եւ Չ. Ասատուր, Մ. Զարիֆեան, Բ. Թեւեան, Բ. Քէչեան, Թ. Ազատեան, Գ. Թրենց, Հարմակ (Մ. Նարոյեան), Զոհական եւլն⁶³³:

⁶³¹ Ժամանակ, « 23.X.1924:

⁶³² Արեւ, « 26.VIII.1925:

⁶³³ Պալեան Տ., Էօզէր Ա., Եանըզեան Ա., Քիւրքճեան Յ., նշծ.աշխ., էջ 4-5:

Նոյն շրջանին կարելուր թիւ մը կը ներկայացնեն օտար հեղինակներէ թարգմանուած գրական գործերը, ինչպէս նաեւ արժեքաւոր հեղինակութիւններու վերհրատարակութիւնները: Կը վերհրատարակուին Սրբուհի Տիւսաբի, Յակոբ Պարոնեանի, Երուանդ Օտեանի, Գրիգոր Զօհրապի, Զապէլ Եսաեանի եւ ուրիշներու գործերը: 1931-ին լոյս կը տեսնեն Յ. Մնձուրիի «Երկրորդ Ամուսնութիւնը» վէպը, որ նախապէս կը հրատարակուի իբր թերթօն Ազգարար օրաթերթին մէջ եւ Գ. Իւթիւճեանի «Խաւարած Ընտանիքը» վէպը, երկուքն ալ պոլսական կէանքէն: Կը վերհրատարակուի նաեւ Վ.Փափագեանի «Պատմութիւն Հայոց Գրականութեան»ը: Կոմիտաս Վարդապետի ծննդեան 60-ամեակի տօնակատարութիւններուն առթիւ 1932-ին կը հրատարակուի Թ.Ազատեանի «Կոմիտաս Վարդապետը»⁶³⁴:

1933-ին կը հրատարակուի Ա.Տիրազանի «Երրորդի Ստուերով» բանաստեղծութիւններու հաւաքածոն եւ Թ. Ազատեանի «Աղբիւր Անմահութեան»ի երրորդ շարքը⁶³⁵: 1936-ին լոյս կը տեսնէ Թ.Ազատեանի «Զմրուխտէ Պատմութեան»ը, իսկ 1938-ին Թ.Ազատեանի եւ Մ.Գօշունեանի աշխատութիւնը՝ «Արմաղան Թուրքիոյ Հանրապետութեան 15-ամեակին առթիւ»⁶³⁶, 1939-ին կը հրատարակուի Գէորգ Սիմքէշեանի կողմէ պատրաստուած «Թրքահայ Գործնական Նոր Բառարան»ը, որ կը բովան-

⁶³⁴ Ազգարար, 4.1.1933:

⁶³⁵ Թէօլէեան Մ., Գրական Տարին Դ. Պոլիս, Ազգարար, 8.1.1934:

⁶³⁶ Բամպուքճեան Գ., Մատենագիտութիւն Հանրապետական Յիսնամեայ Շրջանի, Շողակաթ Տարեգիրք, 1978, Իսթանպուլ, 1977, էջ 30-31:

դակե թրքերեն-հայերեն բառեր ու ասութիւններ⁶³⁷, ինչպէս նաեւ Միպիլի «Քերթուածներ»ը⁶³⁸:

Գրեթէ իւրաքանչիւր թաղ հետամուտ կ'ըլլայ իր եկեղեցիին կամ վարժարանին հիմնարկութեան տարեդարձը կամ յոբելեանը տօնելու եւ այդ առթիւ պատմական «Յիշատակարան» մը լոյս ընծայելու⁶³⁹:

⁶³⁷ Նոր Լուր, 28.VI.1939:

⁶³⁸ Բամպուքճեան Գ., նշծ.աշխ., էջ 32:

⁶³⁹ Ազատեան Թ.-Գօչունեան Մ., նշծ.աշխ., էջ 40:

ԹԱՏՐՈՆ

Հանրապետության շրջանին, մինչև 1946 կը շարունակուի հայերէն բեմադրութեան արգելքը, որ կը դրուի 1922-ին կառավարութեան կողմէ, քաղաքական վերիվայրումներու պատճառաւ: Պոլսահայ թատերախումբերը, որոնք մինչև այդ թուականը թատերասէրներով լեցուն, ամառները բացօթեայ պարտէզներու, իսկ ձմեռները թատերական սրահներու մէջ կը ներկայացնէին հայկական ընտիր թատերախաղեր, կամ կը ցրուին եւ կամ կը պարտատրուին ծառայել Թուրք թատրոնին, իրենց ուրոյն տեղը գրաւելով թուրք թատերական աշխարհի մէջ:

«Պոլսահայ Տրամաթիկ Թատերախումբը, գոր 1916-ին կը կազմեն Մկրտիչ Ջանան, Ատրիսէ Ջանան, Երուանդ Թօլայեան (Կավոօշ), Վահրամ Փափագեան, Հրաչեայ Ներսեսեան, Էլիզա Պիննէմէճեան, կատակերգակ Եղուարդ Չափրաստ, Տիգրան Պօղոս Երկաթ, Գրիգոր Յակոբեան, Միրանոյշ Ալիքսանեան եւ բեմադրիչի պաշտօնը կը վստահին Աշոտ Մատաթեանին, կը քայքայուի 1922-ին, հայերէն բեմադրութեան արգելքին պատճառաւ: Անդամներուն մէկ մասը խոյս կուտան արտասահման, մէկ մասն ալ կը հաստատուին Հայաստան: Իսկ մնացողները կը շարունակեն իրենց արուեստը ներկայացնել թրքերէն խաղերով, ինչպէս նաեւ զանթօներով եւ զուգերգներով⁶⁴⁰:

Պոլսահայ թատրոնը Հանրապետութեան շրջանին եւս կ'ունենայ բազմաթիւ արուեստագէտ ու արուեստագէտուհիներ, որոնք իրենց գործով մեծ ծառայութիւն մատուցած են Հայ մշակութիւնն նախահանրապետական շրջանէն սկսեալ:

⁶⁴⁰ Այվազ Յ., Վերոյիշումներ եւ բեմընկերներս, Արաս Հրատարակչութեան արխիւ (անտիպ) էջ 49:

Աշոտ Մատաթեան (1882-1965), որ Հայ եւ Թուրք թատրոնին կը ծառայէ, կը հասցնէ բազմաթիւ արուեստագէտներ ու արուեստաօգետուհիներ, կը բեմադրէ արժէքաւոր թատերախաղեր, կը կազմէ «Մթիւտիօ» թատերախումբը, 1935-ին թրքերէնի կը թարգմանէ Սունդուկեանի «Պէպօ»ն, որ կը բեմադրուի անմիջապէս: Թուրք եւ Հայ թատերական պատմութեան բացառիկ անուններէն մէկը կ'ըլլայ Քնար Սվաճեան (1876-1950), որ կ'ունենայ 50 տարուան բեմական բեղուն գործունէութիւն մը: Սիրանոյշ (Սիսի) Երեցեան (1903-1971) եւ ամուսինը Եղուարդ Երեցեան (1903-1963) կը կազմեն «Երիտասարդաց» թատերախումբը ու Սիսի կ'ըլլայ խումբին միակ գլխաւոր դերակատարուհին: Հայկ Արամ Թաշճեան (1877-1943) նաեւ արուեստագէտ արձանագործ մը ըլլալուն կը պատրաստէ Պոլսոյ հոգելոյս Մաղաքիա Օրմանեան Պատրիարքի ու լրագրող Բ. Քէչեանի դիմաքանդակները, որոնք այսօր եւս գոյութիւն ունին Շիշլիի Ազգային Գերեզմանատան մէջ անոնց շիրիմներուն վրայ:

1946-ին կրկին կ'արտօնուին հայերէն լեզուով ներկայացումները, Մարմարա օրաթերթի հիմնադիր Սուրէն Շամլեանի եւ Ժամանակ օրաթերթի աւագ խմբագիր Մարտիրոս Գօշունեանի ջանքերուն շնորհիւ⁶⁴¹:

Հանրապետական շրջանի Պոլսահայ թատրոնի պատմութեան մէջ կարեւոր անուն մը կ'ըլլայ նաեւ Յակոբ Այվազ (1911-2006), որ ոչ միայն որպէս արուեստագէտ ծառայած է Հայ եւ Թուրք թատրոնին, այլ նաեւ 1946 թուականէն սկսեալ անխափան 50 տարիներ հրատարակած է «Քուլիս» թատերական հանդէսը:

⁶⁴¹ Նոյն տեղէն, էջ 38:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նախահանրապետական շրջանի Պոլսահայ երաժշտութեան իր կնիքը կը դնէ Կոմիտաս Վարդապետն ու իր 300 անդամ ու անդամուկիներէ կազմուած «Գուսան» երգչախումբը (1910-1915), որուն ելոյթները կ'ըլլան Պոլսահայ երաժշտական կարեւորագոյն համերգները:

1920-ին Պոլսոյ մէջ կը կազմուի «Հայ Եկեղեցեաց Երաժշտական Միութիւն»ը եւ կը վաւերացուի Խառն ժողովէն, որուն նպատակը կ'ըլլայ հոգ տանիլ՝ Պոլսահայ եկեղեցիներու երգեցողութեանց կանոնաւորութեան ու զարգացման, օգնել՝ վկայեալ երաժիշտներուն յառաջդիմութեան եւ պաշտպանել անոնց օրինաւոր շահերը: Միութեան կ'անդամակցին Պոլսոյ Հայ երաժիշտները⁶⁴²:

Հանրապետութեան հռչակումէն վերջ առաջին երգչախումբը կը կազմուի Գումգաբուի Մայր Եկեղեցոյ Դպրաց Դասի կարգ մը անդամներուն կողմէ «Գողթան» անունով 1924-ին: Նոյն թուականին Եշիլգիւղի մէջ ալ կը կազմուի «Սահակ-Մեսրոպ» երգչախումբը, որուն վարիչը կ'ըլլայ Փրօֆ. Էտկար Մանաս⁶⁴³ (1875-1964):

1925-ին կը կազմուի Պէշիկթաշի «Նարեկացի» երգչախումբը: 1925-1926-ին Ներսէս Խիւտավերտեանի երաժշտապետ նշանակումով վերջ կը գտնէ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ Ասողիկ Դպրաց Դաս երգչախումբին կազմալուծեալ վիճակը: 1926-1927-ի շրջաններուն Կէտիկփաշայի մէջ Օ.Քիւրքճեանի ղեկավարութեամբ կը կազմուի բազմաձայն երգչախումբ մը, 1928-ին

⁶⁴² Ընդարձակ Տարեցոյց 1925, էջ 138:

⁶⁴³ Թուրքիոյ ազգային օրհներգի գործիքաւորումը կատարած է Փրօֆ. Էտկար Մանաս:

Գաւրըզիւղի երգչախումբը, իսկ 1929-ին Մամաթիոյ մէջ «Սուրբ Գեորգ»ը⁶⁴⁴ եւ 1930ին Պաքըրզիւղի մէջ «Քառասուն Մանկանց»ը⁶⁴⁵:

1930-ական տարիներուն Պոլսոյ մէջ կը ստեղծուի երաժշտական ոգետը շարժում մը, առարկայ դառնալով հանրութեան հետաքրքրութեան: Հայ ինքնուրոյն երաժշտութեան հիմնադիր Կոմիտաս Վարդապետի ծննդեան 60-ամեակի հանդիսութիւններուն առթիւ Կոմիտաս, Գողթան, Ֆամինէօր երգչախումբերու, ինչպէս նաեւ Սլիւտարի եւ Բերայի Դպրաց Դասերու օժանդակութեամբ կը կազմուի «Կեդրոնական Երգչախումբ» մը: Երգչախումբը, Վարդապետի ծննդեան 60-րդ տարեդարձին առթիւ 27 Նոյեմբեր 1931-ին, Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ կատարուած Պատարագի ընթացքին Մաեսթրօ Էտկար Մանասի ղեկավարութեամբ կ'երգէ Վարդապետի դաշնաւորած իսկական եղանակով: Ասիկա իր նախկին սաներուն կողմէ որպէս մեծարանքի արտայայտութիւն կ'ըլլայ «Կոմիտասի Օր»⁶⁴⁶:

Արձանագրուած կատարեալ յաջողութենէն յետոյ կ'որոշուի խումբը մնայուն դարձնել: Հրաւեր կ'ուղղուի Պոլսահայ բոլոր երգչախումբերուն: Խմբավար կը նշանակուի Փրօֆ. Էտկար Մանաս եւ 150 հոգիւնց զուտ արական երգչախումբը իր առաջին Պատարագը կ'երգէ Պէտղոսի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ 125ամեակին առթիւ 10 Յունիս 1932-ին: 1934-1935-ի շրջանին երգչախումբին ղեկավարը կ'ըլլայ Վահրամ Միւհէնտիսեան⁶⁴⁷:

⁶⁴⁴ Շողակաթ 1962, Յուլիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 110: Շողակաթ տարեգիրք 1973, Ստամպուլ, 1974, էջ 72-73:

⁶⁴⁵ www.turkiyeermenileripatrikligi.org

⁶⁴⁶ Արեւելք, 26.XI.1931:

⁶⁴⁷ Վահրամ Միւհէնտիսեան, ջութակահար եւ ջութակի ուսուցիչ, նուագախումբի ղեկավար: Ան կ'ըլլայ առաջին Հայը, որ Պոլսոյ մէջ իր աշակերտներով Միւսթանիկ

1936-ին կը կազմուի Կէտիկփաշա Սուրբ Յովհաննէս Եկեղեցոյ «Ձուարթնոց» Դպրաց Դաս երգչախումբը:

Հանրապետական շրջանի Պոլսահայ երաժիշտներու կարգին պէտք է յիշել նաեւ, թէ՛ որպէս յօրինող եւ թէ՛ որպէս նուագող եզակի անուն մը, ուտահար Հրանդ Քէնքիլեանը (1901-1978) ինչպէս նաեւ ջութակահար՝ Նուպար Թէքեայը (1905-1955) եւ քանոնահար Արթաքի Ճանտանը⁶⁴⁸:

նուագահանդէսներ կուտայ: Տարեցոյց Ս.Փ.Ազգային Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1935, էջ 356-357:

⁶⁴⁸ Özdoğan G. G., Üstel F., Karakaşlı K., Kentel F., նշծ.աշխ., էջ 88:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Համայն աշխարհի իրենց գոյութիւնը փաստելու ջանացող Թուրք ճարտարապետական շրջանակները կը վրդովէ այդ պարագան, թէ ընդհանրապէս վերջին երեք դարերուն՝ մասնաւորաբար՝ 150-200 տարիներու ընթացքին Թուրքիոյ ճարտարապետական գործունէութիւնը մեծ մասամբ կը կատարուին Հայ եւ Յոյն ճարտարապետներու կողմէ:

Բայց ամենէն առաջ պէտք է յիշել Արքունի ճարտարապետ Միմար Սինանը (1490-1588), որ անկասկած Օսմանեան ճարտարապետութեան գագաթնակէտը կ'ըլլայ:

Պալեան գերդաստանի ճարտարապետները ԺԸ. Դարէն սկսեալ ամբողջ երեք դար պետական պատուէրներով իրենց կառուցած ու գեղազարդած բազմաթիւ մզկիթներով, դամբարաններով, պալատներով, ապարանքներով եւ գործարաններով Կ. Պոլսոյ դիմագիծը կը փոխեն ու անոր կը նուիրեն հոյակապ նոր դիմագիծ մը:

Պալեաններէ գատ ԺԹ. եւ Ի. դարերու Պոլսահայ անուանի ճարտարապետներ կ'ըլլան Յովսէփ Ազնաւուր, Պետրոս Զօպեան, Յովհաննէս Սէրվերեան, Մկրտիչ Չաքըրեան, Պետրոս Նեմցէ, Միհրան Ազարեան, Լեւոն Կիւրեղեան, Գեղամ Գաւաֆեան եւ ուրիշներ⁶⁴⁹:

Իթթիհատականներու ազգային տնտեսութիւն ստեղծելու ջանքերն ու քաղաքականութիւնը կը զգացուի նաեւ ճարտարապետութեան գծով: Ուստի Օսմանեան կայսրութեան շրջանին ոչ-իսլամ ճարտարապետներու զլխաւոր գործատուն եղող պետու-

⁶⁴⁹ Արեւմտականացող Իսթանպուլի Հայ ճարտարապետները, Իսթանպուլ, 2010, էջ 10:

թինը Հանրապետական շրջանին կ'անտեսե՛ գանոնք, պետական պատուէր չէն կրնար ստանալ:

Այդ շրջանին է, որ շատ մը հոյակապ շէնքեր անճաշակ նկատուելով կը քանդուին պետութեան կողմէ:

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Հանրապետական շրջանին մինչեւ 1940 նկարչական կեանքը մեռեալ վիճակ մը կ'ունենայ: Այդ շրջանին կանգուն կը մնայ միայն Պոլսոյ Գեղարուեստական Ազատեմին, ուր կ'ուսանին նաեւ քանի մը Հայ երիտասարդներ⁶⁵⁰:

⁶⁵⁰ Հագորեան Վարդ, Թրքահայ Նկարչութիւնը և նկարիչները, Շողակաթ Տարեգիրք 1973, էջ 58:

ՎԵՐՉԱԲԱՆ

Կ. Պոլսոյ Հայ համայնքի 1923-1939 տարիներու հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կեանքին ուսումնասիրութիւնը կը յանգեցնէ հետեւեալ եզրակացութիւններուն.

- Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հիմերը կը դրուին 1461-ին Մէհմետ Բ-ի (Ֆաթիհ) նախաձեռնութեամբ, որուն առաջին եւ գլխատր դերը կ'ըլլայ որպէս միութեան կեդրոն ծառայել Փոքր Ասիոյ մէջ ցրուած Հայ համայնքներուն: Օսմանեան կայսրութեան շրջանին Պոլսոյ Պատրիարքները պետական հովանաւորութեամբ եւ պաշտպանութեամբ զօրացած, ազատ կերպով կրնան իշխանութիւն կիրարկել իրենց անմիջական շրջանակին մէջ, թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ հոգեւորականութեան վրայ:

- Արեւմտահայութեան մտաւորական վերածնունդը կը սկսի Յովհաննէս Կոլոտ Պատրիարքով: Յովհաննէս Կոլոտ (1715-1741), Յակոբ Նալեան (1741-1748, 1752-1764) եւ Զաքարիա Կաղզուանցի (1773-1781, 1782-1799) Պատրիարքները կարեւոր դեր կը կատարեն Պոլսահայոց մտաւոր եւ բարոյական զարգացման մէջ:

- Ազգային Սահմանադրութիւնը, որ կ'ընդունուի 24 Մայիս 1860-ին Կ.Պոլսոյ մէջ եւ կը հաստատուի 17 Մարտ 1863-ին Բարձր դրան կողմէ «Հայոց Ազգային Կանոնադրութիւն» (Նիզամնամէ-ի միլլէթ-ի էրմենիեան) անունով, ժողովուրդին մէջ կ'արթնցնէ հաւաքական գիտակցութիւնը, ազգը կը ձեռքագատէ մեծամեծներու կամայական տնօրինութենէն եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը կը ճանչնայ որպէս «ազգի ղեկավար» եւ միջնորդ՝ Պետութեան եւ Հայ ժողովուրդի միջեւ:

Ազգային Սահմանադրութիւնը կը ջնջուի կառավարութեան 19 Յուլիս 1332-ի (1916) կանոնագրով, իսկ Մոնտրոսի Դաշնագ-

րեն վերջ 18 Նոյեմբեր 1334-ին (1918) հրապարակուող կանոնագրութեամբ կրկին ոյժի մէջ կ'ըլլայ մինչեւ 1934:

- Հանրապետութեան հիմնադրամար օսմանեան կայսրութեան «բազմազգ համակարգը» իր տեղը կը թողու «ազգ-պետութեան»: Քէմալական պետութեան հիմնական ծրագիրը կ'ըլլայ կազմել «միատարր եւ միաձոյլ Թուրքիա» մը:

Հանրապետութեան առաջին տարիներէն սկսեալ երկրի ամբողջ բաղկացուցիչ տարրերը թրքացնելու համար կը մշակուի ու կը գործադրուի «թրքացման քաղաքականութիւն», որ կը հետապնդուի կանոնաւոր կերպով եւ յատկանշական է ոչ-իսլամ փոքրամասնութեանց նկատմամբ իր խտրական որոշումներով:

- Քէմալական Հանրապետութիւնը իր «ազգ-պետութեան» նպատակը իրականացնելու համար կը գործածէ փոքրամասնութիւններու ձուլման եւ թրքացման, գաղթի ու բնակեցման, ինչպէս նաեւ տնտեսութիւնը ազգայնացնելու քաղաքականութիւն:

Թուրքիոյ Հանրապետութեան շրջանին կը հրատարակուին նախամտածուած երեք օրէնքներ, որոնցմէ առաջինը կ'արգիլէ արտասահման մեկնող Հայերուն վերադարձը, երկրորդը կը ջնջէ քաղաքացիական իրաւունքները՝ որոշ ժամանակ Թուրքիա չգտնուողներուն, իսկ երրորդը կ'ապաստփականացնէ ունեցուածքը՝ քաղաքացի չեղողներուն, այսինքն քաղաքացիական իրաւունքները կորսնցնողներուն:

2 Յուլիս 1924 թուակիր Երթեւեկի Օրէնքին համաձայն Հայերուն կ'արգիլուի վերադառնալ իրենց ծննդավայրը: Թուրքիոյ 24 Ապրիլ 1924 թուակիր Նոր Մահմանադրութեամբ Թուրքիա չեն կրնար վերադառնալ եւ իրենց թրքահպատակութիւնը կը կորսնցնեն:

ցնեն բոլոր այն Հայերը, որոնք տարագրուած կամ փախած են Թուրքիայէն: Իսկ անոնց ունեցուածքը կ'ապաստեփականացուի «լքեալ գոյքեր»ու մասին իրարայաջորդ օրէնք, հրահանգ եւ շրջաբերականներով:

- Հայոց «լքեալ գոյքեր»ուն մէկ մասը կը թալանուի հրատարակուած օրէնք եւ հրահանգներով՝ տեղացի Թուրք, Քիւրտ եւ Չերքէզ երեւելիներու կողմէ, մէկ մասը կը տրամադրուի Պալքաններէն եկող գաղթականներուն, մէկ մասը ճրիաբար կամ չնչին գումարներու փոխարէն իսլամ անհատ կամ հաստատութիւններու կը տրուի՝ իսլամ-թուրք դրամատէր դասակարգ վը ստեղծելու համար:

- Թուրքիոյ Հանրապետական վարչաձեւը իր հաստատումէն սկսեալ կրթական օրէնքներով եւ հրահանգներով իր միջատութիւնը հետզհետէ աւելի կ'ընդարձակէ բոլոր ոչ-իսլամ վարժարաններէն ներս, որ կը յառաջացնէ կնճռոտ կացութիւն եւ պատճառ կ'ըլլայ վարչական ու տնտեսական տագնապներու:

Ահա ապրուած այս տագնապներու ծանր հետեւանքն է, որ այժմ Պոլսահայ համայնքը կ'ապրի մայրենի լեզուի տկարացման, ինչպէս նաեւ ազգային վարժարաններու աշակերտութեան թիւի յարածուն նուազման նեղութիւնը, ինչ որ մտահոգութիւն կը պատճառէ համայնքի ապագային նկատմամբ:

- 1929-ին սկսող աշխարհատարած տնտեսական տագնապը, որուն պատճառը կ'ըլլայ ճարտարարուեստական եւ երկրագործական սպառումի նուազումը, կը շարունակուի մինչեւ 30-ական թուականներու վերջերը: Տագնապի ազդեցութիւնը հետզհետէ աւելի զգալի կ'ըլլայ համայնքային կեանքին մէջ, պատճառ ըլլալով նաեւ ազգային հաստատութիւններու հասոյթ-

ներու նուազման: Բոլոր ազգային հաստատություններու էլմտական կացութիւնը կը խանգարուի եւ կ'ունենան պիտոճէի յարաճուն բաց:

- Կառավարութիւնը 1933 Յունիսին փոքրամասնութիւններու ներքին գործերը վարելու համար օրինագիծ մը կը պատրաստէ, որ աւելի կը կրճատէ այն իրաւասութիւնները, զորս կը վայելէին ոչ-իսլամ փոքրամասնութիւնները: Այս օրինագիծին համաձայն հիւանդանոցներ ու դպրոցներ կը կառավարուին «Բարեսիրական ընկերութեանց օրէնք»ին համաձայն պատկան մարմիններու ձեռքով, կը ջնջուին Ազգային եւ քաղաքական ժողովները, Ուսումնական եւ Թաղական խորհուրդները, դպրոցական հոգաբարձութիւնները: Պատրիարքներն ու Խախամապետն ալ կը դառնան պարզապէս հոգեւոր հովիւներ:

- 14 Յունիս 1934 թուակիր եւ 2510 համար «Գաղթականներու եւ ապաստանեալներու բնակեցման օրէնք»ի նպատակներէն մէկը կ'ըլլայ՝ թէեւ ուշացումով, իրաւական գետնի վրայ յենարան մը գտնել Հայերուն Միջին Փոքր Ասիայէն դրկուելուն, մէկը կ'ըլլայ Թուրքիոյ մէջ «ազգային» հիմքերով հաստատում մը իրականացնել, իսկ մէկն ալ՝ պատերազմի հաւանականութեան դէմ ռազմագիտական կարեւորութիւն ունեցող շրջաններու փոքրամասնութիւնները փոխադրել ուրիշ տեղեր:

- 2762 թիւ Վազըֆներու օրէնքով ոչ-իսլամ փոքրամասնութիւններու բոլոր հաստատութիւններուն տնօրինումը կը տրուի Վազըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան, այսինքն Պետութիւնը կը միջամտէ այս հաստատութիւններու ներքին գործերուն, հակառակ որ այս մէկը բոլորովին խոտոր կը համեմատի Լօզանի Դաշնագրի 40. յօդուածին:

1936-ին բոլոր կտակակատարներին (միութեւի) եւ մատակարար մարմիններին կը պահանջուի ներկայացնել՝ ազգային հաստատութիւններու անշարժ գոյքերու ցուցակը պարունակող յայտարարագրեր:

Այս յայտարարագրերը երկար տարիներ վերջ 1974-ին պատճառ կը հանդիսանան 1936 թուականէն վերջ գնելով, ժառանգութեամբ, նուիրատուութեամբ կամ կտակով ձեռք բերուած բոլոր ինչքերուն կորուստին: 53 ազգային վազըֆի 661 անշարժ գոյքը կ'ապաստփականացուի, որոնց 143 հատը վերջին 10 տարուայ ընթացքին կատարուող օրինական փոփոխութիւններու արդիւնքով կը վերադարձուին:

- 3512 թիւ «Հաւաքականութեանց (Ընկերակցութեանց) Օրէնքը», որ կը սկսի գործադրուիլ 1939 Յուլիսին, չ'արտօներ կրօնական հանգամանք ունեցող ոչ մէկ ընկերութեան գոյութիւնը: Կրօնական եկեղեցիներու մատակարարութեան համար հիմնուած կազմակերպութիւնները: Խորասանճեանի ատենապետած Վարչական ժողովը մտավախութեամբ ինքզինքը «լուծեալ» կը հռչակէ 15 Յուլիս 1939-ին:

- Թուրքիոյ Հանրապետութեան 1923-1939 տարիներու քաղաքական, տնտեսական ու մշակութային վերոյիջեալ իրադարձութիւններու ծանր ազդեցութիւնը զգալի է նաեւ Պոլսահայ համայնքի ներկայ վիճակին վրայ:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒ ԵՒ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1.- Սկզբնաղբիւրներ

1.1. ՀՀ Ազգային Արխիւ, Ֆոնդ 193 (Պերպերյան Հ. Ֆոնդ), Ցուցակ 1, Գործ 351 (Տեղեկագիր Սանասարյան վարժարանի), էջ 2:

1.2. ՀՀ Ազգային Արխիւ, Ֆոնդ 409 (Էջմիածնի Գերագոյն Հոգեվոր Խորհուրդի Ֆոնդ), Ցուցակ 1, Գործ 3928 (Սանասարեան կտակի, Սանասարյան վարժարանի եւ Խնամակալության մասին) Գաբրիէ Լորատունկեանի մեքենագիր նամակը ուղղուած Գեորգ Ե. Կաթողիկոսին, էջ 25:

1.3. ՀՀ Ե.Չարենցի անուան Գրականութեան ու Արուեստի Թանգարանի Արխիւ, Գեորգ Բամպուքճեանի Ֆոնդ (47), Գալուստեան Շ. Արք., Յովհաննէս Կոլոտ Պատրիարք Արեւմտահայ Պատմութեան մէջ, Յուշամատեան Յ.Կոլոտ Պատրիարքի ծննդեան 300-ամեակին առթիւ, էջ 6:

1.4. ՀՀ Մ.Սաշտոցի անուան Մատենադարանի Արխիւ, Թղթապանակ 6-12/40 4.IV.1951, Օրագրութիւն Լ.Բաշալեանի Միացեալ Հայկական Պատուիրակութեան Գործունէութեան մասին:

1.5. Ազատեան Թ., Յուշամատեան Գարակէօզեան Ազգային Որբանոցի (Շիշլի) 1913-1948, Իսթանպուլ, Պէճիտ Տպարան, 1949, 151 էջ:

1.6. Ազգային Խնամատարութիւն, Ընդհանուր Տեղեկագիր Առաջին Վեցամսեայ (1 Մայիս 1919 - 31 Հոկտեմբեր 1919), Կ.Պոլիս, Ֆ.Ճարեան Տպարան, 1920, 512 էջ:

1.7. Այվազ Յ., Վերյիշումներ եւ բնմընկերներս, Արաս հրատարակչութեան անմշակ արխիւ, Իսթանպուլ (անտիպ), 143 էջ:

- 1.8. Անասյան Հ.Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1957, 150 էջ:
- 1.9. Գարակեօզեան Ազգային Որբանոցի անմշակ արխիւ: Կրթական Տնօրէնութեան 5 Յունիս 1934 թիւ եւ 5059/2223 համար հրահանգը (Յաւելուած 4):
- 1.10. Գարակեօզեան Ազգային Որբանոցի անմշակ արխիւ: Կրթական Տնօրէնութեան 25 Սեպտեմբեր 1936 թիւ եւ 67160/2780 համար գրութիւնը (Յաւելուած 5):
- 1.11. Զաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, Նոր Աստղ տպարան, 1947, 424 էջ:
- 1.12. Կարապետեան Պ., Հնգդարեան Յիշատակարան Սամաթիոյ Ս.Գեորգ Եկեղեցոյ, Իսթանպուլ, Տպարան Թերզեան Եղբայրք (Ենի Թիւրքիէ), 1935, 352 էջ:
